Ոստիկանության արձագանքը ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործություններին.

Վերապատրաստման ծրագիր ոստիկանության ծառայողների արհեստավարժ աշխատանքն ապահովելու համար

Հեղինակներ՝
Ջոաննա Պերրի
Պոլ Ֆրեյնի

Խմբագրում և համակարգում՝
Յուրի դե Բուր
Եվգենիա Գիակումոպուլու

Թարգմանությունը համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Ոստիկանության արձագանքը ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործություններին. վերապատրաստման ծրագիր ոստիկանության ծառայողների արհեստավարժ աշխատանքն ապահովելու համար

Սույն նյութը պատրաստվել է «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրի շրջանակներում:

Սույն ձեռնարկը կազմվել և տպագրվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատու են բացառապես հեղինակ(ներ)ը: Այստեղ արտահայտված տեսակետները չեն կարող համարվել Եվրոպական միության կամ Եվրոպայի խորհրդի պաշտոնական կարծիք:

Սույն թարգմանությունը պատրաստվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակությունը բացառապես Եվրոպայի խորհրդի պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Քաղվածքների վերարտադրումը (մինչև 500 բառ) թույլատրվում է, բացառությամբ կոմերցիոն նպատակների, քանի դեռ պահպանվում է տեքստի ամբողջականությունը, հատվածը չի օգտագործվում համատեքստից դուրս, չի տրամադրում թերի տեղեկատվություն կամ այլ կերպ չի մոլորեցնում ընթերցողին՝ տեքստի բնույթի, շրջանակի կամ բովանդակության վերաբերյալ:

Աղբյուրի տեքստը միշտ պետք է նշվի հետևյալ կերպ՝ «©Եվրոպայի խորհուրդ, հրատարակման տարի»: Փաստաթղթի ամբողջական կամ մի մասի վերարտադրման/թարգմանության հետ կապված բոլոր այլ հարցումները պետք է ուղղվեն Եվրոպայի խորհրդի Հաղորդակցության տնօրինությանը (F-67075 Ստրասբուրգ կամ publishing@coe.int):

Սույն փաստաթղթի հետ կապված բոլոր այլ հարցումները պետք է ուղղվեն Եվրոպայի խորհրդի Հաղորդակցությունների տնօրինություն, Եվրոպայի պողոտա F-67075 Ստրասբուրգ, Ֆրանսիա:

Սույն ձեռնարկի անգլերեն բնօրինակը պատրաստվել է 2017 թվականին:

Էլ-հասցե՝ dpc_pgg@coe.int

Խմբագիր՝ Ջոաննա Փերի

Համահեղինակներ՝

Դավիդ Մարտին Աբիանա
Մայքլ Բոյլ
Մոնիկա Դինիժ
Նիկ Գլինո
Թինաթին Խաչվանի
Յոաննա Փերի
Մարհարիտա Ժեշկո

Համակարգումը և վերահսկումը Եվրոպայի խորհրդի «Ատելության խոսքի բացառման և համագործակցության» բաժնի Ներառման և հակախտրականության ծրագրերի ստորաբաժանման կողմից:

Շապիկի դիզայն, ձևավորում, գրաֆիկա և պատկերազարդումներ՝
Ջոնաթան Բրենեան
Aptalops.com / info@aptalops.com

Լուսանկարներ՝

Council of Europe, © Shutterstock

© Եվրոպայի խորհուրդ, մարտ, 2025թ.
Բոլոր իրավունքները պաշտպանված են.
Լիցենզավորված է Եվրոպական միությանը՝

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ և ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ 5

ԱՄՓՈՓԱԳԻՐ 7

ՄՈԴՈՒԼ 1. Ի՞ՆՉՆ Է ՄԵՋ ԲԵՐԵԼ ԱՅՍՏԵՂ 9

ՄՈԴՈՒԼ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 25

ՄՈԴՈՒԼ 2(Ա) ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ՝ ԼԳԲՏԻ ՀԱՄԱՅՆՔ. ՀՈՄՈՖՈԲԻԱ, ՏՐԱՆՍՖՈԲԻԱ, ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ և ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 26

ՄՈԴՈՒԼ 2 (Բ). ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ՝ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ 38

ՄՈԴՈԼ 3. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ ԼԳԲՏԻ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԱՀԵՆ և ՀԱԿԱԽՏՐԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ 50

ՄՈԴՈՒԼ 4. ԼԳԲՏԻ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ 67

ՄՈԴՈՒԼ 5. ԱՇԽԱՏԱՆՔ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՉՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՔՀԿ) ՀԵՏ 108

ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐ. ՔԱՐՏԵՂԱԳՐԵԼՈՎ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՐ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՋԱՆԱԿԸ 121

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՕՐԱԿԱՐԳԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ ՄԵԿՕՐՅԱ և ԵՐԿՕՐՅԱ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ 127

Ներածություն և ընդհանուր ակնարկ

Ոստիկանությունը գտնվում է քրեական արդարադատության համակարգի առաջնագծում և ատելության հիմքով հանցագործությունների բազմաթիվ տուժողների կարիքներին արձագանքման առաջնային օղակն է[1]: Չունենալով ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունները բացահայտելու և հետաքննելու համար անհրաժեշտ կարողունակություններ, ոստիկանությունը չի կարողանա ապահովել տուժողների համար արդարադատությունն ու նրանց պաշտպանությունը, ձեռք բերել համայնքների վստահությունը, նպաստել ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ ազգային օրենքների արդար և թափանցիկ կիրառմանը:

Եվրոպայի խորհուրդը երկար ժամանակ աշխատել է թիրախավորված բռնության, այդ թվում՝ ռասիստական, կրոնական, գենդերային, հոմոֆոբ և տրանսֆոբ հիմքով հանցագործությունների մասին իրազեկության բարձրացման ուղղությամբ: Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի, ինչպես նաև Խորհրդարանական վեհաժողովի հիմնական բանաձևերը և հանձնարարականներն ընդգծում են ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ խտրականության և հանցագործությունների առանձնահատուկ վնասն ու ազդեցությունը, ինչպես նաև տուժողներին աջակցելու, քաղաքացիական հասարակության հետ համագործակցելու, ինչպես նաև իրավապահ մարմինների և քրեական արդարադատության ոլորտի այլ դերակատարներին վերապատրաստելու կարևորությունը[2]: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով կարևորվում է ատելության հիմքերի և հոմոֆոբ շարժառիթների «քողազերծումը» և հստակ ուղերձ է հղվում այն ձախողելու հետևանքների մասին. «նախապաշարումով պայմանավորված հանցագործություններն անխուսափելիորեն կդիտարկվեն նման երանգավորում չունեցող սովորական գործերի հետ հավասար հիմունքներով, ընդ որում դրա արդյունքում ցուցաբերած անտարբերությունը հավասազոր կլիներ ատելության հիմքով հանցագործությունների նկատմամբ պաշտոնական հանդուրժողականությանը կամ նույնիսկ թողտվությանը»[3]:

Այս ձեռնարկը նախատեսված է Եվրոպայի խորհրդի տարածաշրջանի երկրներում ոստիկանության ծառայողների վերապատրաստման դասընթացավարների, քննիչների, ղեկավարների, ատելության հիմքով հանցագործությունների դեմ պայքարող ոստիկանության ծառայողների և այդ պայքարի առաջնագծում գտնվող ոստիկանության ծառայողների համար: Դրա նպատակն է օգնություն, տեղեկատվություն և համապատասխան գործիքներ տրամադրել՝ ԼԳԲՏԻ անձանց դեմ ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ վերապատրաստում անցկացնելու համար: Այն հիմնված է Եվրոպայի խորհրդի չափանիշների, հատկապես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան դատական պրակտիկայի, ինչպես նաև մարդու իրավունքների այլ միջազգային չափանիշների և իրավապահ մարմինների համար արդեն իսկ մշակված վերապատրաստման նյութերի վրա:

Ձեռնարկը կազմվել է առաջնորդվելով մարդու իրավունքների սկզբունքներով՝ փորձագետների կողմից ներկայացված նյութերի հիման վրա: Առաջին հերթին այն անդրադառնում է տուժողների և համայնքի շահերին՝ գիտակցելով, որ իրավապահ մարմինների նկտմամբ նրանց վստահությունը և համագործակցությունը այդ հանցագործությունների հետաքննության հաջողության գրավականն է:

Ոստիկանության ծառայողների վերապատրաստումը ատելության հիմքով հանցագործությունների դեմ պայքարի համապարփակ մոտեցման միայն մեկ տարրն է: Ոստիկանության՝ հանցագործությունների արձանագրման համակարգերը պետք է թույլ տան գրանցել ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների բոլոր կողմերը, ընդ որում հետաքննությանը պետք է օժանդակեն պաշտոնական գործելակարգերը և ուղեցույցները: Դատախազության աշխատակազմը, որը

1. Եվրոպայի խորհուրդը լավատեղյակ է, որ ատելության հիմքով հանցագործությունների ենթարկված բազում անձինք չեն ընդունում «տուժող» եզրույթը: Նման դեպքերում մարդիկ նախընտրում են « վերապրած անձ» եզրույթը, քանի որ այն ավելի լավ է արտացոլում նրանց հետ կատարվածը: «Տուժող» բառն այս ձեռնարկում օգտագործվում է այն պատճառով, որ այն համապատասխանում է ատելության հանցագործության թիրախում հայտնված անձի իրավական և տեխնիկական կարգավիճակին, ով շփման մեջ է ոստիկանության և քրեաիրավական մարմինների հետ: Ինչպես բազմիցս նշվում է ձեռնարկում, ոստիկանության ծառայողները պետք է զոհակենտրոն մոտեցում ցուցաբերեն և ճշտեն թիրախավորված անձից, թե ինչպես նա կուզենա, որ իրեն դիմեն և, հնարավորության դեպքում, հետևեն նրա ցանկությանը:
2. Տե՛ս, մասնավորապես, անդամ պետություններին ուղղված Նախարարների կոմիտեի CM/Rec(2010)5 հանձնարարականը սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության դեմ պայքարի միջոցների մասին և Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 2048 (2015) բանաձևը Եվրոպայում տրանսգենդեր անձանցնկատմամբ խտրականության մասին:
3. Տե՛ս Identoba v Georgia:

ոստիկանության առանցքային գործընկերն է, նույնպես պետք է վերապատրաստում անցնի՝ ատելության հիմքով հանցագործությունների հաջող և արդարացի քրեական հետապնդման նախապատրաստման և իրականացման համար: Ի վերջո, քաղաքական ղեկավարությունը պետք է գիտակցի ԼԳԲՏԻ անձանց դեմ ատելության հիմքով հանցագործություններից բխող առանձնահատուկ վնասը և հանձնառու լինի միջոցներ տրամադրել վերապատրաստման լիարժեք իրականացման համար:

Ձեռնարկը հիմնված է ատելության հիմքով հանցագործությունների և խտրականության դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի չափանիշների, ինչպես նաև Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության ստորաբաժանման աշխատանքի և փորձագիտական կարողության վրա՝ աջակցելու անդամ պետություններին ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունները բացահայտելու, հետաքննելու և քրեորեն հետապնդելու, հանցագործությունների տուժողներին պաշտպանելու համար արդյունավետ քաղաքականությունների, օրենսդրության և գործնական միջոցառումների իրականացմանը:

Ամփոփագիր

Սույն ձեռնարկը բաղկացած է հինգ մոդուլից և «Հետագա քայլեր» բաժնից: Մոդուլները կազմված են տարբեր, գործնական բնույթի վարժություններից, որոնք բաժանված են հստակ քայլերի, ներառյալ կոնկրետ ժամանակային ցուցումները և ցանկացած նախապատրաստական աշխատանքի վերաբերյալ հրահանգները:

Մոդուլ 1-ը կենտրոնանում է ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ ոստիկանության հաջող վերապատրաստման համար ոստիկանության առաջնորդության և հանձնառության կարևորության, դիտարկում է ԼԳԲՏԻ անձանց վրա ատելության հիմքով հանցագործությունների ազդեցությունըև մասնակիցներին հնարավորություն է ընձեռում ավելի խորը պատկերացում կազմել Եվրոպայի խորհրդի տարածաշրջանում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ խտրականության և նախապաշարումների ավելի լայն համատեքստի վերաբերյալ:

Մոդուլ 2-ն օգնում է մասնակիցներին ավելի լավ պատկերացնել հիմնական հասկացությունները, ներառյալ՝ «սեռական կողմնորոշում», «գենդերային ինքնություն», «սեռական հատկանիշներ», «ատելության հիմքով հանցագործություն», «հոմոֆոբիա», «տրանսֆոբիա», «կարծրատիպեր» և «խտրականություն» եզրերը: Դա հիմք է հանդիսանում Չորրորդ մոդուլում ներկայացվող ատելության հիմքով հանցագործությունների հետաքննության ավելի տեխնիկական կողմերի ուսումնասիրության համար:

Երրորդ մոդուլում ներառված են վարժություններ, որոնք կօգնեն իրավապահ մարմինների աշխատակիցներին, ԼԳԲՏԻ անձանց դեմ ատելության հիմքով հանցագործությունները արդյունավետ հետաքննելիս, հաշվի առնել մարդու իրավունքների չափանիշներն և սկզբունքները: Մոդուլի ներքո համապարփակ ձևով ներկայացվում են համապատասխան միջազգային չափանիշները և դրանց գործնական կիրառումները, որոնք պետք է հիմք հանդիսանան ԼԳԲՏԻ անձանց դեմ ատելության հիմքով հանցագործությունների դեմ իրավապահ մարմինների արդյունավետ պայքարի համար:

Չորրորդ մոդուլը կենտրոնանում է ԼԳԲՏԻ անձանց դեմ ատելության հիմքով հանցագործությունների հետաքննության հարցում զոհակենտրոն մոտեցման և ատելության հիմքով հանցագործությունները այլ հանցագործություններից տարբերող հիմնական բաղադրիչի՝ կողմնակալ շարժառիթների վերաբերյալ ապացույցներ հավաքելու համար անհրաժեշտ հիմնական հմտությունների վրա: Հատուկ անդրադարձ է կատարվում հանցագործության տրանսգենդեր տուժողների յուրահատուկ կարիքներին: Վերջում, մասնակիցներին առաջարկվում է անդրադառնալ տեղական ԼԳԲՏԻ համայնքի հետ իրենց ներկայիս փոխհարաբերությունների համատեքստին:

Հինգերորդ մոդուլն օգնում է մասնակիցներին ավելի լավ հասկանալ ՔՀԿ-ների աշխատանքը և այն, թե ինչպես կարող է ոստիկանությունը լավագույնս աշխատել նրանց հետ՝ տուժողների կարիքներին արձագանքը բարելավելու համար: Այն պարունակում է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների անմիջական մասնակցությունը, որոնք ներկայացնում են իրենց ծառայությունները, հավաքած տվյալները և այն գիտելիքը, որ նրանք ձեռք են բերել ԼԳԲՏԻ տուժողների կարիքների վերաբերյալ: Մասնակիցները հնարավորություն կունենան համատեղ աշխատել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ՝ բացահայտելու բարելավման ոլորտները և միասնական գործողությունների հնարավորությունները:

«Հետագա քայլերը» կամընտիր վերջին բաժինն է, որի նպատակն է աջակցել մասնակիցներին բացահայտելու այն խնդիրները, որոնք կարող են խոչընդոտել ազգային մակարդակում նման վերապատրաստում անցկացնելուն, և արդյունավետ մոտեցում որդեգրել այդ հարցում: Մասնակիցներին առաջարկվում է քարտեզագրել իրենց ազգային համատեքստը, ներառյալ բացթողումները և հնարավորությունները՝ կենտրոնանալով ատելության հիմքով հանցագործությունների նկատմամբ համապարփակ մոտեցման հիմնական բաղադիչների վրա, այդ թվում՝ իրավական դաշտը, ատելության հիմքով հանցագործությունների արձանագրման համակարգերը, ուղղորդման և ուղեցույցների առկայությունը կամ բացակայությունը, վերապատրաստումները և տուժողների աջակցության մասնագիտական ծառայությունները:

ԱԿՆԱՐԿ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՔՀԿ) ՄԱՍԻՆ

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ) ԼԳԲՏԻ անձանց դեմ ատելության հիմքով հանցագործությունները հասկանալու և դրանց արդյունավետ արձագանքելու հարցում ոստիկանության կարևոր գործընկերն են: Ճանաչելով նրանց առանցքային դերը ատելության հիմքով հանցագործությունների մշտադիտարկման և տուժողներին աջակցելու գործում՝ Եվրոպայի խորհուրդը այս ձեռնարկի նախագծման և պատրաստման աշխատանքներում ներգրավել է առաջատար ՔՀԿ-ների, որոնց մենք երախտապարտ ենք աջակցության համար:

ՔՀԿ-ները ոստիկանության համար կարևոր ռեսուրս են հետևյալ առումներով՝ որպես տուժողների աջակցության ծառայություն, ոստիկանության վերապատրաստման գործընկեր և ատելության հիմքով հանցագործություններիտարածվածության և ազդեցության վերաբերյալ տվյալների և տեղեկատվության կարևոր աղբյուր: Այդ նպատակով յուրաքանչյուր մոդուլ ներառում է ուղեցույց այն մասին, թե ինչպես ոստիկանությունը կարող է օգտվել այդ ոլորտում մասնագիտացված քաղաքացիական հասարակության կազմակերպությունների փորձագիտական կարողությունից և աջակցությունից: Մոդուլ 5-ը դիտարկում է, թե ինչպես լավագույնս աշխատել ՔՀԿ-ների հետ՝ արդյունավետ կերպով բացահայտելու և հետաքննելու ատելության հիմքով հանցագործությունները և աջակցելու տուժողներին:

ՔՀԿ-ները նույնպես այս ձեռնարկի կարևոր թիրախային լսարան են, քանի որ այն կարող է ծառայել որպես ջաղագովության ռեսուրս՝ խրախուսելու ազգային և տեղական ոստիկանական ուժերին իրականացնել վերապատրաստման դասընթացներ ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործություններին արձագանքելու և հետաքննելու վերաբերյալ:

ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵԼ ԱՅՍ ՁԵՌՆԱՐԿԻՑ. ԱՆՀԱՏԱԿԱՆԱՑՎԱԾ ՄՈՏԵՑՈՒՄ

Այս ձեռնարկը դասընթացավարների համար նախատեսում է առավելագույն ճկունություն: Վարժությունները և մոդուլները պետք է ընտրվեն հաշվի առնելով մասնակիցների կազմը, ընդունող կազմակերպության կարիքների և այլ կոնկրետ համատեքստային պահանջները, մասնավորապես՝ ժամանակային սահմանափակումները: Խորհուրդ է տրվում, որ դասընթացավարը ուշադիր կարդա վերը նշված ձեռնարկի ընդհանուր ակնարկը, ինչպես նաև հատուկ մոդուլները, վարժությունները և դասընթացավարի նշումները՝ գնահատելու համար, թե որ մոդուլներն ու վարժություններն են առավել համապատասխանում խմբի կարիքներին:

Ի աջակցություն վերապատրաստման ծրագրի կազմակերպիչներին Հավելված 1-ում ներկայացված են մեկ և երկօրյա դասընթացների օրինակելի օրակարգերը: Վերապատրաստման հիմնական նպատակներին բավարար ժամանակ և ներգրավվածություն ապահովելու համար խորհուրդ է տրվում հետևել երկօրյա ծրագրի օրակարգին: Դասընթացավարներին նաև խորհուրդ է տրվում նախքան օրակարգը վերջնական տեսքի բերելն ուշադիր ընթերցել ձեռնարկը՝ համոզվելու, որ ընտրված են իրենց տեղական համատեքստի համար առավել համապատասխան մոդուլներն ու վարժությունները:

Մոդուլ 1.
Ի՞նչն է մեզ բերել այստեղ

ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Այս մոդուլում ներկայացվում է դասընթացի ընդհանուր նկարագիրը, այն, թե ինչու է վերապատրաստումը կարևոր և ինչ կտա այն մասնակիցներին (ոստիկանության աշխատակիցներին): Մոդուլը ծավալվում է ոստիկանության ղեկավար անձի կողմից ներկայացվող նյութի շուրջ, որտեղ ընդծվում է ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործություններըճիշտ ընկալելու և դրանց դեմ պայքարելու կարևորությունը և ներկայացվում է այն ակնկալիքը, որ մասնակիցները կնվիրվեն վերապատրաստմանը և դրա հետ կապված ուսուցման գործընթացին : Դասընթացից քաղված դասերի երկարաժամկետ պրակտիկ օգուտի համար կարևոր է, որ ոստիկանության ավագ ղեկավարությունը հանձնառու լինի ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների արդյունավետ հետաքննությանը: Մասնակիցների համար կարևոր է լսել այդ ուղերձը անմիջապես իրենց վերադասներից: Խնդրի կարևորության մասին ոչ միայն դասընթացավարից, այլ նաև անմիջական ղեկավարից լսելու կարևորությունը անգնահատելի է:

Մոդուլի երկրորդ կարևոր բաղադրիչը քաղաքացիական հասարակության կազմակերպության կողմից տուժողի տեսակետը ներկայացնելն է, տուժողների և նրանց համայնքների վրա ատելության հիմքով հանցագործությունների ծանր հետևանքների մասին մասնակիցներին տեղյակ պահելը: Վերջում, մասնակիցներին հնարավորություն է տրվում ծանոթանալ ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների ավելի լայն համատեքստին և իմանալ, որ ատելության հիմքով հանցագործությունները Եվրոպայի խորհրդի երկրներում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ խտրականության և նախապաշարումի միայն մեկ դրսևորումն է:

ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Մասնակիցները՝

- կհասկանան, թե ինչու են ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունները և այլ բռնությունները պահանջում հատուկ և որոշակի մոտեցում,
- կգիտակցեն, որ այս ոլորտում բարելավումները պետք է աջակցվեն ոստիկանության ղեկավարության կողմից,
- կպատկերացնեն ԼԳԲՏԻ համայնքների նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների և այլ բռնության, ներառյալ ընտանեկան բռնության տարածվածությունն ու ազդեցությունը,
- կարժևորեն ոստիկանության հիմնական պարտականությունը՝ պաշտպանել, հետաքննել հանցագործությունները և ապահովել հավասար և հարգալից ծառայություն:

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Վարժություն 1.1 Ավագ ղեկավարի ելույթը՝ դասընթացի միջավայրի ձևավորման նպատակով
- Վարժություն 1.2 ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործության պատմությանների կայացում
- Վարժություն 1.3 ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ բռնության և խտրականության վիճակագրության ակնարկ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1.1 ԱՎԱԳ ՂԵԿԱՎԱՐԻ ԵԼՈՒՅԹԸ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

Դասընթացից առաջ փորձեք հանդիպել ոստիկանության ներկայացուցչի հետ, հեռախոսով կամ էլեկտրոնային փոստով քննարկել նրա կողմից ներկայացվող նյութի հիմնական կետերը: Քննարկման ընթացքում ոստիկանության ներկայացուցիչը հավանաբար կներկայացնի իր տեսակետը, թե ինչի մասին է պետք խոսել մասնակիցների հետ: Դասընթացավարն այդ առնչությամբ կարող է նաև առաջարկել հետևյալը.

- Ընդգծել, որ ոստիկանության ծառայողները պետք է առանց խտրականության հավասար ծառայություն մատուցեն բոլոր համայնքներին՝ արժանապատվորեն և հարգանքով վերաբերվելով բոլոր տուժածներին՝ անկախ նրանց սոցիալական ծագումից: Դա ոստիկանության ծառայության կարևորագույն սկզբունք է, որը որևէ շեղում չի ենթադրում:
- Ներկայացնել ԼԲԳՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների առանձնակի վնասակար ազդեցությունը, ընդգծելով կողմնակալության փաստերն արդյունավետ հետաքննելու անհրաժեշտությունը, հանցագործությունները քրեորեն հետապնդելու և քրեաիրավական դաշտը արդյունավետ կիրառելու նպատակով դատախազության հետ համագործակցությունը:
- Խոսել այն մասին, թե ինչ արդյունքներ պետք է ակնկալեն մասնակիցները դասընթացից՝ ատելության հիմքով հանցագործություններն արդյունավետորեն հետաքննելու և բացահայտելու, համապատասխան համայնքների հետ աշխատելու հմտությունները և գիտելիքները (հնարավորության դեպքում՝ այլ շահակիցների հետ գործընկերությամբ), ինչպես նաև հանցագործությունների արձանագրումը, տուժողների վստահությունը շահելու կարողությունը՝ նման բարդ և նուրբ հարցերի շուրջ ոստիկանության հետ համագործակցելու համար:
- Ընդգծել, որ ոստիկանության ծառայողներին ԼԳԲՏԻ համայնքների դեմ կատարված միջադեպերի համար մեղադրելու դեպքերը լիարժեք քննվելու են և հանգուցալուծվելու ըստ հստակ ընթացակարգերի:
- Բացատրել, թե ինչպես է ոստիկանության ղեկավարությունը մշտադիտարկելու վերապատրաստման արդյունքները և ապահովելու, որ վերապատրաստում անցկացվի ծառայության ողջ ընթացքում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1.2 ԼԳԲՏԻ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏՈՒԺՈՂԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Դասընթացից առաջ որոշ ժամանակ հատկացրեք բացահայտելու քաղաքացիական հասարակության այն կազմակերպությունները, որոնք աշխատում են ատելության հիմքով հանցագործությունների մշտադիտարկման և/կամ տուժողներին ազգային կամ տեղական մակարդակումուղղակի աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ: Կարևոր է համագործակցել ԼԳԲՏԻ համայնքի բոլոր խմբերի հետ աշխատող ՔՀԿ-ների հետ: Դասընթացին մասնակցող ոստիկանության աշխատակիցը պետք է պատկերացում ունենա, թե որ ՔՀԿ-ներն են ակտիվ իրենց տարածքում: Ձեր տարածքում ակտիվ ՔՀԿ-ները գտնելու համար կարող եք նաև օգտվել hatecrime.osce.org կայքից և որոնել ՔՀԿ-ների մասին բաժինը կոնկրետ երկրի էջում[4]: Կարող եք նաև խնդրել ILGA-EUrope[5] կամ TGEU[6] կազմակերպություններին կամ Եվրոպայի խորհրդի ՍԿԳԻ բաժանմունքին ձեզ տրամադրել համապատասխան ՔՀԿ-ի կապի տվյալները: Փորձեք հանդիպել ՔՀԿ ներկայացուցչի հետ կամ հեռախոսով կամ էլ. փոստով նրա հետ քննարկել ներկայացվելիք նյութի հիմնական կետերը: Գործընկերոջը համառոտ ներկայացրեք վերապատրաստման մոդուլները, հրավիրելով նրա ուշադրությունը այն փաստի վրա, որ ոստիկանության և ՔՀԿ-ների միջև համագործակցությունը մանրամասն քննարկվում է հինգերորդ մոդուլում:

Խնդրեք ՔՀԿ-ի ներկայացուցչին վերապատրաստման մասնակիցներին պատմել իր կազմակերպության մասին և, թե ինչպես ոստիկանությունը կարող է կապ հաստատել և աշխատել նրանց հետ: ՔՀԿ-ի ներկայացուցիչը, անշուշտ, կունենա սեփական պատկերացումները, թե ինչի մասին է խոսելու: Կարող եք նաև առաջարկել հետևյալը.

- Մասնակիցներին ներկայացնել տուժողի տեսակետը՝ ԼԳԲՏԻ անձի նկատմամբ ատելության հիմքով հանցագործության մասին կոնկրետ պատմության օրինակով կամ տրամադրել ատելության

4. Օրինակ, Իսպանիայում ատելության հիմքով հանցագործությունները մշտադիտարկող ՔՀԿ-ները կարելի է գտնել՝ ոլորելով http://hatecrime.osce.org/spain?year=2015 կայքի «Քաղաքացիական հասարակության մասին տեղեկատվություն» բաժինը:
5. www.ilga-europe.org/who-we-are/contact-us
6. http://tgeu.org/about: Անդամ կազմակերպությունների ցանկն ըստ երկրների գտնելու համար՝ ներառյալ նրանց կոնտակտային տվյալները, ոլորման սլաքի օգնությամբ անցեք դեպի էջի ստորին մասը:

հիմքով հանցագործությունների ազդեցության մասին ընդհանուր ակնարկ, ելնելով սեփական աշխատանքային փորձից:

- Ընդգծել ատելության հիմքովհանցագործության տուժողների կարիքները, և թե ինչու է նրանց համար դժվար միջադեպերի մասին հաղորդել ոստիկանությանը:
- Արժևորել դասընթացի անցկացումը և ՔՀԿ-ի դերակատարությունը և ներդրումը, ընդգծելով այն փաստը, որ ՔՀԿ-ների ներգրավումը լուսաբանվում է գրեթե ողջ դասընթացի ընթացքում՝ մասնավորապես հինգերորդ մոդուլում:
- Ներկայացնել մի քանի կոնկրետ և իրատեսական առաջարկություն (նույնիսկ եթե դրանք պարզապես փոքր քայլերի տեսքով են) այն մասին, թե ինչպես կարող է ոստիկանությունը բարելավել հարաբերությունները ՔՀԿ-ների և համապատասխան համայնքների հետ:

Եթե ձեզ չհաջողվի ՔՀԿ-ներ ներգրավել դասընթացին, մասնակիցներին ի սկզբանե հայտնեք, որ ՔՀԿ-ները զգալի դեր են ունեցել ձեռնարկի/դասընթացի պատրաստման գործում: Կարևոր ուղերձը հետևյալն է՝ «Մենք այս մոդուլը ստեղծելիս սերտորեն աշխատել ենք ՔՀԿ-ների հետ և դուք նույնպես պետք է աշխատեք նրանց հետ այն իրականացնելիս»:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1.3 ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

Կա մի քանի եղանակ, որոնցով կարող եք ներկայացնել ատելության հիմքով հանցագործությունների և ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ բռնության և խտրականության վերաբերյալ վիճակագրությունը: Դուք կարող եք օգտագործել այս բաժնի տվյալները՝ սահիկաշարստեղծելու համար կամ որպես խմբային քննարկման հիմք օգտագործել 1.3 և 1.4 օժանդակ նյութերը:

Այս մասը տևում է մոտ 10 րոպե: Այն կարող է զուգակցվել 1.2 գործողության հետ:

1. Դասընթացից առաջ որոշ ժամանակ տրամադրեք 1.3 և 1.4 օժանդակ նյութերի ընթերցմանը, որտեղ ներառված են կարևոր միջազգային զեկույցներից վերցված վիճակագրական տվյալները և տեղեկատվությունը: Արդյո՞ք կարող եք ավելացնել լրացուցիչ տեղեկություններ ազգային կամ տեղական համատեքստի մասին՝ հիմնվելով հասանելի տեղեկատվության վրա: Տեղեկատվության հետագա աղբյուրների և կոնկրետ դեպքերի ուսումնասիրության համար օգտագործեք այս մոդուլի վերջում թվարկված հրապարակումները: Արդյո՞ք ազգային մակարդակում կա որևէ վիճակագրություն ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով կատարված հանցագործությունների վերաբերյալ: Որո՞նք են աղբյուրները՝ պաշտոնական աղբյուրները, ինչպիսիք են ոստիկանության հաղորդումները, ազգային և տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, միջազգային զեկույցները և այլն: Կարևոր է ընդգծել տեղեկատվության աղբյուրների արժանահավատ լինելու փաստը, որպեսզի մասնակիցների մոտ այդ առումով որևէ կասկած չառաջանա: Օրինակ՝ կարելի է օգտագործել ՔՀԿ-ների տվյալները, սակայն հաշվի առեք, որ ոստիկանությունն կարող է չընդունել նման տվյալները որպես ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների իրավիճակի պաշտոնական արտացոլում: Վերապատրաստման ընթացքում ցանկալի է ոստիկանության ծառայողների հետ վիճաբանության մեջ չմտնել նման հարցերի շուրջ, միևնույն ժամանակ ընդգծելով, որ.

- ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ տվյալները կարող են առկա լինել մի շարք աղբյուրներում,
- թեև ՔՀԿ-ների տվյալները կարող է ոստիկանությանը հասած չլինեն, դրանք լավ ընդհանուր բնույթի նյութեր են ԼԳԲՏԻ անձանց փորձառությունները հասկանալու համար,
- վերապատրաստումը կնպաստի ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ տեղեկատվության այլ աղբյուրների բացահայտմանը և այդ հարցի շուրջ տեղեկատվության պաշտոնական աղբյուրների բարելավման ուղղությունների սահմանմանը:

Ներպետական համատեքստին առնչվող տեղեկատվությունը և վիճակագրությունը ուսումնասիրելիս օգտվեք 1.5 օժանդակ նյութում թվարկված ռեսուրսներից:

2. Դասընթացը մեկնարկեք՝ բացատրելով, որ ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների մասին վիճակագրության հետ առնչվելիս կարևոր է հաշվի առնել հետևյալը՝ նախ, ԼԳԲՏԻ անձանց բռնության և խտրականության ենթարկվելու ռիսկն ավելի մեծ է, քան ընդհանուր բնակչությանը, և երկրորդը՝ ԼԳԲՏԻ անձինք ավելի պակաս հավանական է, որ կհայտնեն ոստիկանությանն ատելության հիմքով հանցագործության տուժող լինելու մասին: Նշեք նաև, որ

դա դժվարացնում է ոստիկանության ծառայողների աշխատանքը՝ նրանք պետք է համոզեն ԼԳԲՏԻ անձանց հաղորդել հանցագործությունների մասին, խրախուսեն նրանց որքան հնարավոր է շատ տեղեկատվություն տրամադրել միջադեպի մասին՝ հնարավոր ամենապահով միջոցերով: Այնուհետև ոստիկանության ծառայողները պետք է ապահովեն համապատասխան գործողությունների անխափան ընթացքը:

3. Տեղեկացրեք խմբին, որ թեև դուք նախատեսում եք թվային և վիճակագրական տվյալներ ներկայացնել, սակայն չպետք է անտեսել, որ յուրաքանչյուր դեպք վերաբերում է կոնկրետ մարդկանց, ինչպես օրինակ՝ նախորդ դասընթացում քննարկված դեպքը: Կարևոր է հասկանալ, թե ինչ է թաքնված ատելության հիմքով հանցագործությունների տվյալների հետևում, ընդ որում ոչ պակաս կարևոր է հասկանալ այն հետևանքները, որոնց հանգեցնում են նման հանցագործությունները:

4. Այժմ անցեք ատելության հիմքով հանցագործությունների և խտրականության տարածվածության և ազդեցության վերաբերյալ առանցքային կետերին՝ որպես քննարկման հիմք ընդունելով 1.3 և 1.4 օժանդակ նյութերը: Որպես այլընտրանք, դուք կարող եք այդ հարցի վերաբերյալ սահիկաշար պատրաստել:

5. Վերջում բաժանեք 1.5 օժանդակ նյութը: Բացատրեք, որ այն կարող է օգտագործվել մասնակիցների կողմից, երբ նրանք հետագայում վերապատրաստման դասընթացներ անցկացնեն իրենց գործընկերների համար:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹ 1.3. ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

Թեև Եվրոպայի խորհրդի տարածաշրջանում ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ տեղեկատվությունը և վիճակագրությունը շատ սահմանափակ է, սակայն կան բազմաթիվ փաստեր, որոնք ցույց են տալիս, որ ԼԳԲՏԻ անձանց մեծ տոկոսը ենթարկվում է ատելության հիմքով հանցագործությունների: Միջազգային կարևոր զեկույցներից քաղվածքները կարևոր տեղեկատվություն են պարունակում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների և խտրականության մասին, որը կարող է օգտագործվել ձեր համատեքստում նման միջադեպերի տարածվածության և ազդեցության մասին պատկերացում կազմելու համար: Կարևոր է արձանագրել, որ երկների միջև առկա են զգալի տարբերություններ, ինչը անհրաժեշտ է հաշվի առնել դասընթացն իրականացնելիս:

Եվրոպայի խորհրդի տարածաշրջանում բազմաթիվ քաղաքացիական հասարակության կազմակերպություններ տվյալներ են հավաքում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելությամբ հիմքով հանցագործությունների վերաբերյալ, ընդ որում պաշտոնական հաղորդումների թիվը համեմատաբար փոքր է: Ստորև ներկայացված պատկերը ցույց է տալիս, որ ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) կողմից կազմակերպվող ատելության հիմքով հանցագործությունների մասին 2015 թվականի ամենամյա հաշվետվության համար ատելության հիմքով միջադեպերի մասին հայտնել են 24 երկրներ ներկայացնող ՔՀԿ-ներ, մինչդեռ պաշտոնական տվյալներ ներկայացրել են միայն 12 երկրներ:

Եթե ունեք համացանցին հասանելիություն, ժամանակ տրամադրեք ուսումնասիրելու ԼԳԲՏԻ անձանց և նրանց համայնքների դեմ հարձակումների մասին հարյուրավոր հաղորդումներ, որոնց կարելի է ծանոթանալ http://hatecrime.osce.org/what-hate-crime/bias-against-lgbt-persons հղումով: Դուք նաև այնտեղ կգտնեք պաշտոնական և ՔՀԿ-ների տվյալները՝ ըստ առանձին երկրների:

Participating States

Albania	Andorra	Armenia	Austria	Azerbaijan	Belarus
Belgium	Bosnia and Herzegovina	Bulgaria	Canada	Croatia	Cyprus
Czech Republic	Denmark	Estonia	Finland	France	Georgia
Germany	Greece	Holy See	Hungary	Iceland	Ireland
Italy	Kazakhstan	Kyrgyzstan	Latvia	Liechtenstein	Lithuania
Luxembourg	The former Yugoslav Republic of Macedonia	Malta	Moldova	Monaco	Mongolia
Montenegro	Netherlands	Norway	Poland	Portugal	Romania
Russian Federation	San Marino	Serbia	Slovakia	Slovenia	Spain
Sweden	Switzerland	Tajikistan	Turkey	Turkmenistan	Ukraine
United Kingdom	United States of America	Uzbekistan			

Հաջորդ մի քանի պատկերները քաղվածքներ են պարունակում ԼԳԲՏ անձանց, նրանց նկատմամբ խտրականության, բռնության, ատելության հիմքով հանցագործությունների և այլ հարցերի վերաբերյալ երբևէ կատարված ամենամեծ հարցման մասին Եվրոպական Միության Հիմնարար իրավունքների գործակալության (ՀԻԳ) զեկույցից, որը վերնագրված է *EU LGBT survey – European Union lesbian, gay, bisexual and transgender survey – Main results* (ԵՄ ԼԳԲՏ հետազոտություն՝«Եվրոպական միությունում լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր անձանց հետազոտություն՝ հիմնական արդյունքները»լեսբի»): Թեև զեկույցը չի անդրադառնում ԵՄ-ից բացի այլ երկրներին, այն ներկայացնում է անհատական փորձի շատ մանրամասն պատկեր, որի հիման վրա կարելի է համեմատություններ անցկացնել ԵՄ-ից բացի այլ երկրների հետ: Ստորև ձեր ուշադրությունը հրավիրում ենք յուրաքանչյուր գծապատկերի մի քանի հիմնական կետերի վրա: Այլ ի՞նչ եզրակացություններ կարելի է անել տվյալների հիման վրա:

Գծապատկեր 32. Բռնության տարածվածությունը նախորդ 5 տարիների և վերջին 12 ամիսների ընթացքում ըստ ԼԳԲՏ խմբի (%)



Հարցեր	*F1_A. Այս հարցը վերաբերում է բռնության ցանկացած դեպքի, որին բախվել եք վերջին 5 տարիների ընթացքում: Այն կարող էր տեղի ունենալ ցանկացած պատճառով՝ ԵՄ անդամ ցանկացած երկրում կամ Խորվաթիայում:*
	Արդյո՞ք վերջին 5 տարվա ընթացքում դուք որևէ պատճառով ենթարկվել եք ֆիզիկական/սեռական բռնության կամ բռնության սպառնալիքի տանը կամ այլուր (փողոցում, հասարակական տրանսպորտում, աշխատավայրում և այլն): Այո:
	FA1_2. Ե՞րբ է տեղի ունեցել ՎԵՐՋԻՆ ֆիզիկական/սեռական բռնությունը կամ բռնության սպառնալիքը: Վերջին 12 ամիսներին:
Բազա	*ԵՄ ԼԳԲՏ հարցման բոլոր մասնակիցները:*
Աղբյուր	*ՀԻԳ, ԵՄ ԼԳԲՏ հետազոտություն, 2012թ.*

ՀԻԳ, էջ 57, ԵՄ ԼԳԲՏ հետազոտություն՝«Եվրոպական միությունում լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր անձանց հետազոտություն՝ հիմնական արդյունքները»

Ի գիտություն. Աղյուսակից հետևում է, որ տրանսգենդեր անձինք առավել շատ են ենթարկվում բռնության:

Գծապատկեր 33. Ատելության շարժառիթներով բռնության տարածվածությունը նախորդ 12 ամիսների ընթացքում՝ ըստ բռնության տեսակի և ԼԳԲՏ խմբի (%)



ՀԻԳ, էջ 57, ԵՄ ԼԳԲՏ հետազոտություն՝«Եվրոպական միությունում լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր անձանց հետազոտություն՝ հիմնական արդյունքները»

Աղյուսակից հետևում է, որ տրանսգենդեր անձինք առավել շատ են ենթարկվում բռնի հարձակումների, քան մյուս խմբերը:

Գծապատկեր 40. Սեռական բնույթի ատելության շարժառիթներով հարձակումների տոկոսային հարաբերությունն (%) ըստ ԼԳԲՏ խմբերի՝ ատելության շարժառիթներով բռնության ընդհանուր դեպքերի նկատմամբ



Հարցեր	*FA1_5. Արդյոք կարծում եք, որ վերջին 12 ամիսների ընթացքում ֆիզիկական/սեռական հարձակման կամ բռնության սպառնալիքի ՎԵՐՋԻՆ դեպքը տեղի է ունեցել մասամբ կամ ամբողջությամբ այն պատճառով, որ դուք ընկալվել եք որպես [ըստ կատեգորիա A3-ի կամ A4-ի]: Այո:* *FA1_4. Անդրադառնալով ՎԵՐՋԻՆ ֆիզիկական/սեռական հարձակման կամ բռնության սպառնալիքին՝ ի՞նչ պատահեց ձեզ հետ: 2. Սեռական հարձակում 3. Ֆիզիկական և սեռական հարձակում: Հաշվարկված փոփոխական:*
Ի գիտություն	*A3 և A4-ով ինքնորոշման կատեգորիաները ներառում էին տրանսգենդեր, տրանսսեքսուալ, տրանսսեքսուալ անցյալով կին, տրանսսեքսուալ անցյալով տղամարդ, գենդերին չհամապատասխանողանձ, հագուստափոխ, քվիր, լեսբի, գեյ, բիսեքսուալ կամ այլ:*
Բազա	*ԵՄ ԼԳԲՏ հարցման մասնակիցները, ովքեր նախորդ 12 ամիսների ընթացքում ենթարկվել են ֆիզիկական/սեռական հարձակման կամ բռնության սպառնալիքի, մասամբ կամ ամբողջությամբ, քանի որ նրանք ընկալվել են որպես ԼԳԲՏ:*
Աղբյուր	*FRA, ԵՄ ԼԳԲՏ հետազոտություն, 2012թ.*

ՀԻԳ, էջ 62, ԵՄ ԼԳԲՏ հետազոտություն՝«Եվրոպական միությունում լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր անձանց հետազոտություն՝ հիմնական արդյունքները»

Ի գիտություն. Սեռական բռնությունը, ԼԳԲՏ անձանց նկատմամբ կիրառվող բռնության նշանակալի տեսակ է: Հարկ է նշել, որ բիսեքսուալ կանայք հատկապես խոցելի են:

	Վերջին	Առավել ծանր
Արդյո՞ք հանցագործը միայնակ է եղել		
Միայնակ	36	36
Մի քանի հոգով	64	64
Հանցագործ(ներ)ի սեռը		
Արական	84	86
Իգական	4	4
Երկուսն էլ	12	10
Չգիտեմ	0	0
Ձեր կարծիքով հանցագործ(ներ)ը հանդիսանում էր...		
Գեյ	3	3
Լեսբի	0	1
Բիսեքսուալ	1	2
Հետերոսեքսուալ	72	69
Խառը սեռական կողմնորոշմամբ անձ	4	4
Չգիտեմ	20	21
Հանցագործ(ներ)ը եղել է...		
Ընտանիքի/տնային տնտեսության անդամ	7	7
Հարևան	6	5
Աշխատանքային գործընկեր	5	4
Ձեր դպրոցից, քոլեջից կամ համալսարանից ինչ-որ մեկը	12	14
Հաճախորդ կամ պացիենտ	4	3
Մեկ ուրիշը, ում ճանաչում եք	12	11
Ծայրահեղական/ռասիստական խմբի անդամ	15	14
Դեռահաս կամ դեռահասների խումբ	36	33
Ոստիկանության ծառայող	4	3
Անվտանգության ծառայող/թիկնապահ	4	3
Այլ պետական պաշտոնյա (օրինակ՝ սահմանապահ, քաղծառայող)	3	2
Մեկ ուրիշը, ում չեք ճանաչում	45	42
Այլ անձ(ինք)	3	3

ՀԻԳ, էջ 64, ԵՄ ԼԳԲՏ հետազոտություն՝«Եվրոպական միությունում լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր անձանց հետազոտություն՝ հիմնական արդյունքները»

Ի գիտություն. Հարձակումներն առավել հաճախ կատարվել են դեռահասի կամ դեռահասների խմբի կողմից (բացի այն հարձակումներից, որտեղ հանցագործն անհայտ է եղել):

	Վերջին	Առավել ծանր
Իմ տանը	8	8
Մեկ այլ բնակելի շենքում, բնակարանում	2	2
Դպրոցում, համալսարանում	5	7
Աշխատավարում	4	3
Սրճարանում, ռեստորանում, փաբում, ակումբում	11	9
Ավտոմեքենայում	1	1
Հանրային տրանսպորտում	8	7
Մարզական ակումբում	1	0
Որևէ այլ փակ տարածքում	3	2
Փողոցում, հրապարակում, ավտոկայանատեղիում կամ այլ հասարակական վայրում	44	43
Զբոսայգում, անտառում	4	6
ԼԳԲՏ հատուկ վայրում (օրինակ՝ ակումբ, բար) կամ միջոցառման ժամանակ (օրինակ՝ հպարտության երթ)	3	4
Որևէ այլ բաց տարածքում	5	6
Այլ	2	2

ՀԻԳ, էջ 65, ԵՄ ԼԳԲՏ հետազոտություն՝«Եվրոպական միությունում լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր անձանց հետազոտություն՝ հիմնական արդյունքները»

Ի գիտություն. Հարձակումներն առավել հաճախ կատարվել են փողոցում, հրապարակում, ավտոկայանատեղիում կամ հասարակական վայրերում:

Գծապատկեր 42. Ատելության շարժառիթով բռնության ամենածանր միջադեպը, որը հաղորդվել է ոստիկանություն՝ ԼԳԲՏ խմբի կողմից (%)



Հարցեր	*FA2_5. Արդյո՞ք կարծում եք, որ ֆիզիկական/սեռական հարձակումը կամ սպառնալիքը մասամբ կամ ամբողջությամբ տեղի է ունեցել այն պատճառով, որ դուք ընկալվել եք որպես [ըստ կատեգորիա կատեգորիա A3-ի կամ A4-ի]: Այո:*
FA2_11.	*Արդյո՞ք դուք կամ մեկ ուրիշն այդ մասին հայտնել եք ոստիկանություն:*
Ի գիտություն	*A3 և A4-ով ինքնորոշման կատեգորիաները ներառում էին տրանսգենդեր, տրանսսեքսուալ, տրանսսեքսուալ անցյալով կին, տրանսսեքսուալ անցյալով տղամարդ, գենդերին չհամապատասխանողգենդերային դիսկոմֆորտով անձ, հագուստափոխ, տրանսվեստիտ, քվիր, լեսբի, գեյ, բիսեքսուալ կամ այլ:*
Բազա	*ԵՄ ԼԳԲՏ հարցման մասնակիցները, ովքեր նախորդ 5 տարիների ընթացքում ենթարկվել են ֆիզիկական/սեռական հարձակման կամ բռնության սպառնալիքի, մասամբ կամ ամբողջությամբ, քանի որ նրանք ընկալվել են որպես ԼԳԲՏ:*
Աղբյուր	*FRA, ԵՄ ԼԳԲՏ հետազոտություն, 2012թ.*

ՀԻԳ, էջ 66, ԵՄ ԼԳԲՏ հետազոտություն՝«Եվրոպական միությունում լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր անձանց հետազոտություն՝ հիմնական արդյունքները»

Ի գիտություն. Միջադեպերի միայն չնչին տոկոսն է հաղորդվում ոստիկանություն:

ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունները տեղի են ունենում ընտանեկան բռնության, խտրականության և նախապաշարումների համատեքստում:

Օրինակ, ԼԳԲՏԻ անձանց զգալի տոկոսը խտրականության է ենթարկվում աշխատավայրում և ապրանքների և ծառայությունների մատուցման ժամանակ: ՀԻԳ-ի հետազոտությունը ցույց է տվել, որ ԼԳԲՏ անձանց 19%-ը խտրականության զգացում է ունեցել աշխատանքի վայրում: Խտրականության ամենաբարձր ցուցանիշներն տրանսգենդեր անձանց մոտ է (30%): Հարցումը նաև ցույց է տվել, որ ԼԳԲՏ անձանց 32%-ը խտրականության է ենթարկվել ռեստորաններում և սրճարաններում, բնակարան փնտրելիս, առողջապահական ծառայություններում, բանկային կամ ապահովագրական ծառայություններ փնտրելիս, ինչպես նաև սպորտային ակումբներում և մարզադահլիճներում:

Փաստեր ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների և խտրականության այլ ձևերի փորձառության ինտերսեկցիոալ տարբերությունների մասին

Անկասկած, ԼԳԲՏԻ անձինք ունեն նաև ինքնության այլ հատկանիշներ, ինչպիսիք են սեռը, տարիքը, էթնիկ պատկանելությունը և կրոնը, որոնք կարող են հատվել և առաջացնել հատուկ փորձառություններ և կարիքներ: Դրանք պետք է ավելի լավ պատկերացվեն և հաշվի առնվեն ոստիկանության և այլ ծառայությունների կողմից:

Գենդեր. ՀԻԳ-ի հետազոտությունը պարզել է, որ լեսբի կանանց55%-ը հայտնել է սեռական կողմնորոշման պատճառով իրենց նկատմամբ խտրականության կամ ոտնձգության մասին, մինչդեռ գեյ տղամարդկանցերի մոտ այդ ցուցանիշը կազմել է 45%: Ինչպես նշվեց վերևի աղյուսակներում, տրանսգենդերներ անձինք ավելի հաճախ են ենթարկվում ատելության հիմքով բռնության և խտրականության:

Տարիք. ՀԻԳ-ի հետազոտությունը պարզել է, որ երիտասարդ ԼԳԲՏ անձինք իրենց սեռական կողմնորոշման պատճառով ավելի հաճախ են ենթարկվում խտրականության կամ ոտնձգության քան տարեց ԼԳԲՏ անձինք՝ 18-24 տարեկան հարցվածների 57%-ը ենթարկվել է խտրականության, 25-39 տարեկան հարցվածների 45%-ի դիմաց:

Էթնիկ պատկանելություն. Լոնդոնի քաղաքային ոստիկանության զեկույցը «Հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի վերաբերյալ կանանց փորձը» ցույց է տվել, որ աֆրո-կարիբյան ծագում ունեցող կանայք հոմոֆոբիայի կամ տրանսֆոբիայի հիմքով հարձակումից հետո ավելի հաճախ են փոխում իրենց վարքը կամ արտաքին տեսքը, քան մյուս կանայք (MPS, 2008):

Այլ ուսումնասիրություններ.

- «Ի գիտություն. բռնություն տրանս անձանց նկատմամբ, ProTrans «Տրանսգենդեր անձանց պաշտպանություն բռնությունից» նախագծի փորձառությունը»: [7] Այս զեկույցը միավորում է նախագծի արդյունքները, որն աջակցում էր Եվրոպայի խորհրդի անդամ մի քանի երկրներում տրանսգենդեր անձանց նկատմամբ խտրականության և ատելության հիմքով հանցագործությունների մշտադիտարկում իրականացնող կազմակերպություններին: Նախագիծը պարզել է, որ տրանսգենդեր անձինք ենթարկվում են բռնի հարձակումների և լայնածավալ խտրականության ռիսկի: Զեկույցը տարբեր երկրների ամփոփ պրակտիկ ուսումնասիրությունների լավ աղբյուր է:
- «Ի գիտություն. տրանս անձանց նկատմամբ բռնության փաստագրում՝ փորձառություններ Հայաստանից, Վրաստանից, Գերմանիայից, Մոլդովայից, Ռուսաստանից և Ուկրաինայից» (հրատարակվելիք): Այս զեկույցում վերը նկարագրված մշտադիտարկման աշխատանքը տարածվում է ավելի շատ երկրների վրա (վերտառության մեջ թվարկված): Այն նաև փաստում է կառուցվածքային բռնության, այդ թվում՝ խտրականության, լուրջ բնույթի միջանձնային բռնության և ոստիկանության ծառայողների կողմից բռնության դեպքերը:
- «Ակտիվազնել հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի հիմքով բռնության մասին հաղորդումները»: Լեսբիի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր և ինտերսեքսանանց միջազգային միավորման եվրոպական տարածաշրջանի (ILGA-Europe) զեկույց (հրատարակվելիք): Այս զեկույցն ամփոփում է 12 երկրներում, այդ թվում՝ ԵՄ անդամ չհանդիսացող երկրներում՝ Բոսնիա և Հերցեգովինայում, Մոլդովայում, Թուրքիայում և Ուկրաինայում ատելության հանցագործությունները և միջադեպերը մշտադիտարկող ՔՀԿ–ների աջակցության ծրագրի եզրահանգումները: Այն արտացոլում է ՀԻԳ-ի զեկույցի կարևոր արդյունքները, ներառյալ այն, որ բազմաթիվ ատելության հանցագործություններ կատարվում են հանրային վայրերում,

7. http://tgeu.org/wp-content/uploads/2013/11/TGEU_protrans_publication_1_Nov.pdf

տրանսգենդեր անձինք ավելի հաճախ են ենթարկվում լուրջ ֆիզիկական բռնության վտանգի, և որ ատելության հիմքով կատարված հանցագործությունների մասին տուժողները ոստիկանություն հազվադեպ են հաղորդում:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹ 1.4 ԱՆՁՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ

Այս օժանդակ նյութը ներկայացնում է վիճակագրությանն առնչվող անձնական պատմությունները:

> «Ավելի քան մեկ տարի անց ես դեռ վախենում եմ... Հարձակումից հետո ես չէի կարող քայլել փողոցում առանց բազմիցս ետ նայելու՝ ստուգելու, թե արդյոք ինչ-որ մեկը գալիս է հետևից հարձակվելու ինձ վրա:... Դեռևս խորը ընկճված եմ, երբեմն մղձավանջներ եմ տեսնում:
>
> Միշել՝ հարձակման է ենթարկվել Իտալիայի Կատանիա քաղաքում
>
> «Պատճառն իմ ինքնությունն է՝ հոմոֆոբիա, տրանսֆոբիա և ատելության հիմքով հանցագործություններ Եվրոպայում», էջ 7:

Բոսնիա և Հերցեգովինա. ֆիզիկական հարձակման դեպք

Երեք տարվա ընթացքում երիտասարդ տղամարդը պարբերաբար բռնության է ենթարկվել իր թաղամասի մի խումբ երիտասարդ տղամարդկանց կողմից: Նրանք քարեր և առարկաներ են նետել նրա և նրա տան վրա՝ վիրավորելով, սպառնալով և վախեցնելով, քանի որ նա գեյ էր: Թեև այս դեպքերից շատերը հաղորդվել են ոստիկանություն, տուժողը վախի պատճառով հրաժարվել է ոստիկանության լուսանկարներից նույնականացնել իր վրա հարձակվողներին: Հարձակման դեպքերն գնալով ավելի դաժան բնույթ են կրել, մինչև մի օր հանցագործները շրջապատել են տուժողին դեպի քաղաք տանող ճանապարհին, օրը ցերեկով հարձակվել և ֆիզիկական բռնության ենթարկել նրան՝ պատճառելով շտապ վիրաբուժական միջամտություն պահանջող ազդրի ծանր վնասվածք: Անմիջապես դեպքի մասին հաղորդվել է դեպքը հետաքննող ոստիկանության ծառայողներին, որոնք տուժողի հետ հարցազրույցի և մանրակրկիտ քննության արդյունքում պարզել և ձերբակալել են հանցագործներին: Ցավոք, քանի որ ատելության հիմքով հանցագործությունների մասին ներպետական օրենքները հաշվի չեն առնում տուժողի սեռական կողմնորոշումը, այդ գործը չի արձանագրվել և չի քննվել որպես ատելության հիմքով հանցագործություն:

ԻԼԳԱ-Եվրոպա. «Հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի հիմքով բռնության մասին հաղորդումներ պետք է էապես ավելանան» (հրատարակվելիք):

Ուկրաինա. կազմակերպված խմբեր, որոնք հետևում են ԼԳԲՏԻ համայնքի անդամներին՝ նրանց վրա հարձակվելու նպատակով

Լվովում ուլտրաաջ խմբերի գործունեությունը մշտադիտարկող ԼԳԲՏԻ ակտիվիստներից մեկն իմացել էր, որ այդ խմբերից որոշ անդամներ տեղյակ են եղել մի քանի օր անց ծրագրված ԼԳԲՏ երեկույթի մասին: Հաջորդ երկու օրերի ընթացքում առցանց աղբյուրը փաստագրել էր այդ խմբի անդամների նախապատրաստությունները, ինչպես նաև տեղական ֆուտբոլային ակումբի երկրպագուների պլանները՝ հարձակվելու ԼԳԲՏ միջոցառման մասնակիցների վրա, ներառյալ մանրամասն հրահանգները, թե ում վրա, ինչպես և ինչ միջոցների օգնությամբ: Մասնավորապես, կազմակերպիչները լեսբիներին ծեծելու «վախեցման արշավում» ներգրավել էին իրենց անդամների ընկերուհիներին, քանի որ արական սեռի ներկայացուցիչներն չէին ցանկանում, որ հենց իրենք ծեծեն կանանց: Երեկույթի օրը ԼԳԲՏԻ ակտիվիստները ժամանել էին աջակողմյան խմբի պայմանավորված հանդիպման վայր և տեսել սևազգեստ երիտասարդների մի քանի խմբեր, տղամարդկանց և կանանց, ընդհանուր առմամբ մոտ 60 հոգի: Նրանցից շատերը կրում էին ուսապարկեր, որոնցում բեյսբոլի մահակներ էին նշմարվում: Նրանք խմբերով շարժվեցին դեպի ԼԳԲՏ երեկույթի վայր: Ակտիվիստները հետևեցին նրանց և նախապես զանգահարեցին երեկույթի կազմակերպիչներին՝ նկարագրելով հրոսակախմբի գործողությունները: Ի վերջո նրանք նկատեցին ԼԳԲՏԻ ակտիվիստներին և փորձեցին հարձակվել նրանց վրա, սակայն ակտիվիստներին հաջողվեց թաքնվել McDonald's ռեստորանում, իսկ հրոսակախումբը շարունակեց շարժվել դեպի երեկույթի վայր: ԼԳԲՏ երեկույթի կազմակերպիչները նախօրոք մասնավոր պահակ էին վարձել և պաշտպանության համար դիմել էին ոստիկանություն: Ոստիկանությունը գտնվում էր երեկույթի վայրում, սակայն ձերբակալություններ չկատարվեցին:

ԻԼԳԱ-Եվրոպա. «Հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի հիմքով բռնության մասին հաղորդումներ պետք է էապես ավելանան» (հրատարակվելիք):

Մոլդովա. Գեյ տղամարդկանց ակտիվ թիրախավորում՝ առցանց ժամադրությունների միջոցով

Մտահոգիչ միտումը, որը սկսվել է Ռուսաստանում, ենթադրում է, որ հարձակվողները անմիջական հանդիպումներ էին կազմակերպում տուժողների հետ գեյերի առցանց ծանոթությունների կայքերի միջոցով: Նման օրինակներից մեկում Մոլդովայում մի գեյ տղամարդ վաղ երեկոյան ժամին սրճարանում ժամադրության էր հրավիրել մեկ այլ տղամարդու: Երբ նրանք որոշել էին զբոսնել մեկուսի պուրակում, տուժողին կողոպտել և դաժան ծեծի էին ենթարկել, կոտրելով նրա ծնոտը: Տուժողը նշել էր, որ եթե իրեն չհաջողվեր փախչել, իրավիճակը կարող էր շատ ավելի ծանր լինել, ընդ որում հանցագործի շարժառիթները հեշտությամբ ճանաչելի էին, քանի որ նրանք հարձակման ժամանակ հոմոֆոբ հայհոյանքներ էին հնչեցնում: Նմանատիպ միջադեպեր գրանցվել են նաև Բոսնիա և Հերցեգովինայում, որտեղ տուժողները նույնպես թալանվել և ծեծի են ենթարկվել ծանոթությունների կայքերի միջոցով կազմակերպված հանդիպումների ժամանակ:

ԻԼԳԱ-Եվրոպա. «Հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի հիմքով բռնության մասին հաղորդումներ պետք է էապես ավելանան» (հրատարակվելիք):

Թուրքիա. հոգեբանական ազդեցություն

Զեկույցում նշվել է, որ տուժողների մեծամասնությունը լուրջ հոգեբանական վնաս է կրել միջադեպից անմիջապես հետո, ընդ որում այն կրել է երկարատև բնույթ և ազդել է տուժողների կյանքի տարբեր կողմերի վրա: Նրանցից շատ քչերն են դիմել մասնագիտական աջակցության՝ հաղթահարելու հետտրավմատիկ սթրեսային խանգարման, ընկճախտի, տագնապայնության, զայրույթի կամ պարանոյայի լուրջ հետևանքները: Հոգեբանական բուժում ստացած տուժողների կեսից ավելին նշել է, որ իրենց նկատմամբ պատշաճ վերաբերմունք չի ցուցաբերվել:

ԻԼԳԱ-Եվրոպա. «Հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի հիմքով բռնության մասին հաղորդումներ պետք է էապես ավելանան » (հրատարակվելիք):

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹ 1.5 ՀՂՈՒՄՆԵՐ, ՀԵՏԱԳԱ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Եվրոպայի խորհրդի ռեսուրսներ

Երկրների թեմատիկ ուսումնասիրություններ հոմոֆոբիայի, տրանսֆոբիայի, սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության վերաբերյալ, Եվրոպայի խորհուրդ (2011թ.)

Այս կայքը պարունակում է հղումներ հոմոֆոբիայի, տրանսֆոբիայի, սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի կողմից պատվիրված իրավական և սոցիալական իրավիճակի համապարփակ զեկույցներին Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր մասնակից պետության համար[8]:

Ատելության հիմքով հանցագործությունների մասին ազգային մակարդակում գործող օրենքներին և ուղեցույցներին ծանոթանալու համար ընթերցեք իրավական ուսումնասիրությունների՝ ատելության հիմքով հանցագործությունների մասին բաժինը:

Ատելության հիմքով հանցագործությունների, այդ թվում՝ ոստիկանության կողմից կատարված դեպքերի վերաբերյալ տվյալներին ծանոթանալու համար ընթերցեք սոցիալական զեկույցները:

Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականությունը Եվրոպայում, Եվրոպայի խորհուրդ (2011թ.)

Այս զեկույցը միավորում է վերը նշված ուսումնասիրությունից հավաքագրված տվյալները՝ ատելության հիմքով հանցագործությունների մասին օրենսդրության և Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում արձագանքների համապարփակ ամփոփման համար[9]: Տե՛ս, մասնավորապես, բաժին 3.2-ը «Բռնությունը ԼԳԲՏ անձանց նկատմամբ»:

Երկրներիի թեմատիկ ուսումնասիրություններ հոմոֆոբիայի, տրանսֆոբիայի, սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության վերաբերյալ – 2010 թ. թարմացում, Եվրոպական միության հիմնարար իրավունքների գործակալություն (ՀԻԳ) (2010թ.)[10]

Այս զեկույցն ամփոփում է ատելության հիմքով հանցագործության դեպքերի, օրենքների և արձագանքների վերաբերյալ տվյալները և տեղեկատվությունը Եվրոպական միության անդամ պետություններում, որոնք հավաքվել են Եվրոպայի խորհրդի կողմից վերը նշված թեմատիկ ուսումնասիրության համար:

ԵՄ ԼԳԲՏ հետազոտություն՝«Եվրոպական միությունում լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր անձանց հետազոտություն՝ հիմնական արդյունքները» (ՀԻԳ) (2014թ.)[11]

Այս աշխատությունը ներկայացնում է Եվրոպայում ԼԳԲՏ անձանց շրջանում անցկացված ամենամեծ հետազոտության արդյունքները, որոնք անմիջականորեն հաստատել են խտրականության, բռնության և ոտնձգությունների ենթարկվելու նրանց փորձառությունը: Սույն ձեռնարկի առաջին և երրորդ մոդուլները հիմնված են այդ զեկույցի արդյունքների վրա: Դասընթացին նախապատրաստվելիս կարող եք օգտագործել այս զեկույցը՝ երկրին հատուկ դեպքերի մասին պրակտիկ ուսումնասիրություններ մշակելու և երկրի համատեքստը հետազոտելու համար: Տե՛ս մասնավորապես, բաժին 2.5-ը *«Բռնություն և ոտնձգություններ»:*

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ Եվրոպական հանձնաժողովի (ՌԱԵՀ) զեկույցները[12]

ՌԱԵՀ-ի՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններ այցերի կանոնավոր ժամանակացույցը, որոնք իրականացվում են ողջ տարածաշրջանից փորձագետների կողմից, ներառում է ԼԳԲՏ անձանց հուզող հարցերի մանրամասն դիտարկումը, մասնավորապես՝ ատելության հիմքով հանցագործությունները: Զեկույցները ներառում են ատելության հիմքով հանցագործությունների

8. www.coe.int/en/web/commissioner/thematic-work/lgbti-country-studies
9. www.europewatchdog.info/wp-content/uploads/2016/11/LGBTStudy2011_en.pdf
10. http://fra.europa.eu/en/national-contribution/2012/country-thematic-studies-homophobia-transphobia-and-discrimination
11. http://fra.europa.eu/en/publication/2014/eu-lgbt-survey-european-union-lesbian-gay-bisexual-and-transgender-survey-main, 2016թ. հոկտեմբերի 7-ի դրությամբ:
12. http://www.coe.int/t/dghl/monitoring/ՌԱԵՀ/activities/countrybycountry_en.asp

վերաբերյալ պաշտոնական և քաղաքացիական հասարակության տվյալների մանրամասն ակնարկներ, ատելության հիմքով հանցագործությունների մասին օրենքների և քաղաքականության քննադատական ուսումնասիրություն և բարելավման համար կոնկրետ հանձնարարականներ: Յուրաքանչյուր զեկույց ներառում է նաև համապատասխան երկրի պաշտոնական արձագանքը ՌԱԵՀ-ի դիտարկումներին և հանձնարարականներին: Այդ զեկույցները կարող են չափազանց օգտակար լինել վերապատրաստման դասընթացներ պլանավորելիս՝ ազգային իրավիճակի մասին պատկերացում կազմելու համար, ներառյալ ԼԳԲՏ անձանց վրա ազդող խնդիրները և պետության կողմից ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործություններին տրված առաջնահերթության աստիճանը:

Մարդու իրավունքները և ինտերսեքս անձինք. Եվրոպայի Խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարի կողմից հրապարակված թեմատիկ զեկույց[13]

Այս փաստաթուղթը ներկայացնում է Եվրոպայի խորհրդի տարածաշրջանում և նրա սահմաններից դուրս ինտերսեքս անձանց խնդիրների հազվագյուտ ուսումնասիրություն և ցույց է տալիս նրանց նկատմամբ խտրականության տարածված օրինակները:

Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարի թեմատիկ աշխատանքը և երկրների մասին զեկույցները

Հանձնակատարը լայն գործունեություն է ծավալել թեմատիկ և երկրների մասշտաբով՝ ձգտելով հասկանալ և արձագանքել ԼԳԲՏԻ անձանց վերաբերող խնդիրներին: Թեմատիկ աշխատանքը ներառում է սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության մասին զեկույցը և ինտերսեքս անձանց արդիական խնդիրների վերաբերյալ համապարփակ զեկույցը, որը հրապարակվել է 2015թ.[14]:

Հանձնակատարը նաև կանոնավոր այցելություններ է կատարում երկրներ՝ խոցելի խմբերի մարդու իրավունքների վիճակը ուսումնասիրելու նպատակով: ԼԳԲՏԻ հետ կապված հարցերը շոշափվում են ոչ բոլոր երկրների այցելությունների ժամանակ, ընդ որում այցելությունների վերաբերյալ կայքէջում որոնման միջոցով կարելի է պարզել, թե արդյոք Հանձնակատարն այցելել է այն երկիրը կամ երկրները, որտեղ դուք նախատեսում եք վերապատրաստման դասընթաց անցկացնել[15]:

Այլ ռեսուրսներ

«Պատճառն իմ ինքնությունն է՝ հոմոֆոբիա, տրանսֆոբիա և ատելության հիմքով հանցագործություններ Եվրոպայում», Ամնեսթի ինթերնեյշնլ (2013թ.)[16]

Այս զեկույցը ԵՄ ԼԳԲՏ-ի վերաբերյալ վերը ամփոփված հետազոտությունը լրացնում է Եվրոպական միության անդամ պետություններում ԼԳԲՏ անձանց դեմ ատելության հիմքով հանցագործությունների դեպքերի ուսումնասիրությամբ: Ի լրումն, ներկայիս իրավական շրջանակները և քաղաքականությունը քննադատորեն գնահատվում են, և նշվում են ազգային և եվրոպական մակարդակներում բարելավման առաջարկություններ: Այս զեկույցը ծառայում է որպես ազգային դեպքերի ուսումնասիրության աղբյուր, որոշ եվրոպական երկրներում իրավական և քաղաքական համատեքստը հասկանալու համար:

ԵԱՀԿ ատելության հիմքով հանցագործությունների մասին տարեկան զեկուցման տվյալներ

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը 2008 թվականից մշտադիտարկում և զեկուցում է ԵԱՀԿ տարածաշրջանում ատելության հիմքով հանցագործությունների և միջադեպերի վերաբերյալ: Ատելության հիմքով հանցագործությունների մասին կայքը մանրամասնում է պաշտոնական և քաղաքացիական հասարակության տվյալները, քրեական արդարադատության մարմինների համապատասխան քաղաքականության և ուղեցույցների մասին տեղեկությունները, ատելության հիմքով հանցագործությունների մասին գործող օրենքների մանրամասները և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան վճիռները, ինչպես նաև ամփոփում միջազգային կազմակերպությունների համապատասխան հանձնարարականները, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի և Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարի գրասենյակի:

13. https://wcd.coe.int/com.instranet.InstraServlet?command=com.instranet.CmdBlobGet&InstranetImage=2933521&SecMode=1&DocId=2367288&Usage=2
14. www.coe.int/en/web/commissioner/thematic-work/lgbti
15. www.coe.int/en/web/commissioner/country-report
16. https://www.amnesty.org/en/documents/eur01/014/2013/en/, 2016թ. հոկտեմբերի 7-ի դրությամբ:

Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր երկրները նաև ԵԱՀԿ-ի մասնակից երկրներ են: Հետևաբար, այս կայքը կարող է օգտակար լինել, եթե դուք ցանկանում եք ընդհանուր պատկերացում ստանալ իրավիճակի մասին այն երկրում, որտեղ դուք նախատեսում եք վերապատրաստում անցկացնել: Այս կայքը օգտագործվում է որպես ռեսուրս սույն ձեռնարկի Առաջին մոդուլի համար:

ILGA-Europe (հրատարակվելիք),«Ակտիվացնել հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի հիմքով բռնության մասին հաղորդումները» (հրատարակվելիք) (հղումը հասանելի կլինի ԻԼԳԱ-Եվրոպա կայքում, երբ զեկույցը հրատարակվի[17]

«Ի գիտություն. բռնություն տրանս անձանց նկատմամբ, ProTrans «Տրանսգենդերանձանց պաշտպանություն բռնությունից» նախագծի փորձառությունը»[18]

Այս զեկույցն ամփոփում է նախագծի արդյունքները, որն աջակցում էր Եվրոպայի խորհրդի անդամ մի քանի երկրներում տրանսգենդեր անձանց նկատմամբ խտրականության և ատելության հիմքով հանցագործությունների մշտադիտարկում իրականացնող կազմակերպություններին: Նախագիծը արձանագրել է, որ տրանսգենդեր անձինք գտնվում են բռնի հարձակումների և լայնատարած խտրականության բարձր վտանգի տակ: Զեկույցը տարբեր երկրների ամփոփ պրակտիկ ուսումնասիրությունների լավ աղբյուր է:

«Ի գիտություն. տրանս անձանց նկատմամբ բռնության փաստագրում՝ փորձառություններ Հայաստանից, Վրաստանից, Գերմանիայից, Մոլդովայից, Ռուսաստանից և Ուկրաինայից» (հրատարակվելիք):

17. Լեսբիինտերսեքս անձանցEuropean Region of the International Lesbian, Gay, Bisexual, Trans and Intersex Association (ILGA-Europe)
18. http://tgeu.org/wp-content/uploads/2013/11/TGEU_protrans_publication_1_Nov.pdf

Մոդուլ 2. Հիմնական հասկացություններ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ինչպես նշվեց Մոդուլ 1-ում և կընդգծվի նաև ծրագրի հետագա մասերում, իրավախախտները անհամաչափորեն ավելի հաճախ են թիրախավորում ԼԳԲՏԻ անձանց: ԼԳԲՏԻ անձինք հաճախ չեն համաձարկվում ոստիկանություն հաղորդել ատելության հիմքով հանցագործությունների մասին, իսկ երբ հաղորդում են, ոստիկանության ծառայողները ոչ միշտ են պատշաճ կերպով արձանագրում այդ հանցագործությունները կամ ընդհանրապես չեն արձանագրում դրանք:

Որպեսզի ոստիկանության ծառայողները արհեստավարժ կերպով արձագանքեն ատելության հանցագործության ենթարկված ԼԳԲՏԻ անձանց կարիքներին, նրանք պետք է կարողանան բացահայտել ԼԳԲՏԻ անձանց, խտրական վարքագծի առանձնահատկությունները և այն, թե ինչն է համարվում ատելության հիմքով հանցագործություն:

Այս մոդուլի (ա) մասում մասնակիցները պատկերացում էն կազմում, թե ովքեր են ներառված ԼԳԲՏԻ համայնքում, ծանոթանում են սեռական կողմնորոշում (ԼԳԲ), գենդերային ինքնություն (Տ) և սեռական հատկանիշներ (Ի) հասկացություններին:

Այնուհետև մասնակիցները կծանոթանան ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ բացասական կամ խտրական մտածելակերպի և վարքագծի հետ կապված հասկացություններին: ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների մեծ մասի հիմքում է հոմոֆոբիան, տրանսֆոբիան, կարծրատիպերը և խտրականությունը:

Այս մոդուլի (բ) մասում տրվում է ատելության հիմքով հանցագործությունների և ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների սահմանումները: Ուրվագծվում են ատելության հիմքով հանցագործությունների որոշ հիմնական առանձնահատկությունները: Դրանք ընկած են 4-րդ մոդուլի հիմքում, որի ընթացքում տելության հիմքով հանցագործությունները դիտարկվում են ոստիկանության աշխատանքի գործնական տեսանկյունից:

Արդյունքում (ա) և (բ) մասերը ընդհանուր հիմք են ապահովում վերապատրաստման ծրագրում ներառված բոլոր հարցերի ամբողջական ըմբռնման համար:

Մոդուլ 2(ա) Հիմնական հասկացություններ և սահմանումներ՝ ԼԳԲՏԻ համայնք. հոմոֆոբիա, տրանսֆոբիա, կարծրատիպեր և խտրականություն

ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Մասնակիցները՝

- ավելի խորը կպատկերացնեն սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության, գենդերային արտահայտման հիմնական հասկացությունները, Լ, Գ, Բ, Տ և Ի բաղադրիչ մասերը.
- ավելի խորը կպատկերացնեն հոմոֆոբիայի, տրանսֆոբիայի, կարծրատիպերի և խտրականության հասկացությունները և, թե ինչպես են դրանք կապված ոստիկանության ծառայողի դերի հետ.
- գործնականում կկիրառեն տերմինաբանությունը վերապատրաստման ողջ ընթացքում և իրենց աշխատանքում:

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԺԱՄԱՆԱԿ

- Վարժություն 2.1 ԼԳԲՏԻ համայնքին առնչվող հիմնական տերմինաբանության պարզաբանում՝ Դասընթացավարը ներկայացնում է նյութը (30 րոպե)
- Վարժություն 2.2 Կարծրատիպերի լուսաբանում՝ խմբային աշխատանք, որին հաջորդում է նյութի ներկայացումը և քննարկումը (20 րոպե)
- Վարժություն 2.3 Կարծրատիպերի լուսաբանում՝ անհատական աշխատանք, որին հաջորդում է նյութի ներկայացումը և քննարկումը (25 րոպե)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2.1 ԼԳԲՏԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ՝ ԴԱՍԸՆԹԱՑԱՎԱՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ (30 ՐՈՊԵ)

Հիմնական հասկացություններ և սահմանումներ՝ ներկայացում

Պահանջվող նյութեր.

Ֆլիպչարտի թուղթ, գրիչներ
Օժանդակ նյութեր 2.1ա, 2.1բ

Այս մոդուլում դասընթացավարը ընդհանուր խմբին ներկայացնում է հետևյալ հիմնական հասկացությունները.

- Սեռական կողմնորոշում (ԼԳԲ), Գենդերային ինքնություն (Տ) և Ինտերսեքս (Ի)
- Հոմոֆոբիա, տրանսֆոբիա, կարծրատիպեր և խտրականություն

Խմբին հանձնարարվում է գրառումներ կատարել այն մասին, թե ինչ են նրանք պարզել ներկայացման շնորհիվ և, թե որոնք են հիմնական հասկացությունները: 2.1 օժանդակ նյութն օգնում է խմբի

մասնակիցներին արձանագրել այն, ինչ նրանք սովորել են դասընթացի ընթացքում, իսկ 2.1բ օժանդակ նյութն օգնում է խորացնել յուրացրածը:

Այս նյութի յուրացումը կարելի է ստուգել ավելի ուշ 2.6 գործողության ընթացքում 2.6 օժանդակ նյութի միջոցով:

Դասընթացավարի ուղեցույց.

Ստորև ներկայացվող տեղեկատվությունը կարող է հարմարեցվել վերապատրաստման տեղական գործընթացին: Հարմարեցումն իրականացվում է հաշվի առնելով թիրախային լսարանի վերաբերյալ առկա տեղեկությունները և պահանջվող մանրամասնության մակարդակը՝ ելնելով ժամանակային սահմանափակումներից և վերապատրաստման խորության մակարդակից: Ուսումնասիրեք նյութը և ընտրեք այն հատվածները, որոնք առավել համապատասխան են ոստիկանության ծառայողների տվյալ խմբի կողմից նյութը ավելի լավ ըմբռնելու համար:

Խնդրում ենք նկատի ունենալ, որ այս վարժությունը չի նախատեսված ինտերսեքս անձանց մասին թեմայի քննարկման համար: Դա պայմանավորված է նրանով, որ այն չի արտացոլում ինտերեքս սահմանմանը բնորոշ սեռական հատկանիշների բազմազանությունը: Ինտերսեքս անձանց հետ կապված հարցերը քննարկելիս խնդրում ենք անդրադառնալ 2.1 գործողության և 2.1ա օժանդակ նյութի սահմանումներին:

Սեռական կողմնորոշում. «ԼԳԲ» բաղադրիչը

Սեռական կողմնորոշումը յուրաքանչյուր անհատի՝ այլ գենդերի (տարասեռական/հետերոսեքսուալ), նույն գենդերի (նույնասեռական/հոմոսեքսուալ, լեսբի, գեյ) կամ մեկից ավելի գենդերների (երկսեռական/բիսեքսուալ) անձանց նկատմամբ խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչություն ունենալու, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ ունենալու կարողությունն է:[19]

Այս վերապատրաստման ծրագրի ներքո դիտարկվում են սեռական կողմնորոշմանը վերաբերող հետևյալ սահմանումները.

- **Լեսբի՝** կին, ում հիմնական ռոմանտիկ, հուզական, ֆիզիկական և սեռական գրավչությունը կանանց նկատմամբ է:
- **Գեյ՝** տղամարդ ում հիմնական ռոմանտիկ, հուզական, ֆիզիկական և սեռական գրոավչությունը տղամարդկանց նկատմամբ է: Այս եզրույթը կարող է կիրառվել նաև լեսբիների, բիսեքսուալների նկատմամբև, որոշ դեպքերում, որպես հովանոցային եզրույթ կիրառվել բոլոր ԼԳԲՏ անձանց համար:
- **Բիսեքսուալ՝** անձ, ով ունի նշանակալի ռոմանտիկ, զգացմունքային, ֆիզիկական և սեռական գրավչություն երկու սեռերի ներկայացուցիչների նկատմամբ: Գրավչության հաճախականությունը, ուժգնությունը կամ որակը պարտադիր չէ, որ երկու սեռերի նկատմամբ հավասար լինեն:
- **Հետերոսեքսուալ.** անձ, ով հուզական, ռոմանտիկ կամ սեռական գրավչություն կամ նվիրվածություն ունի հակառակ սեռի ներկայացուցիչների նկատմամբ:[20]

Մեզանից յուրաքանչյուրն ունի սեռական կողմնորոշում: Լեսբի, գեյ կամ բիսեքսուալ բնակչության տոկոսը ստույգ չէ: Տարբեր ուսումնասիրություններում տարբեր տոկոսներ են ներկայացվում, ընդ որում իրենց որպես լեսբի, գեյ կամ բիսեքսուալ սահմանող մարդկանց համեմատ, այն մարդկանց տոկոսը, որոնք նշում են, որ ունեցել են նույնասեռական հարաբերություններ ավելի բարձր է: Հաղորդված թվերը տարբերվում են՝ ելնելով մշակութային նորմերից, կրոնական համոզմունքներից և սոցիալական ընդունելության ընդհանուր մակարդակից: Նույնասեռականների իրավունքների պաշտպանության բրիտանական Stonewall բարեգործական կազմակերպության գնահատմամբ բրիտանական բնակչության 5-7%-ը գեյ, լեսբի կամ բիսեքսուալ է[21]: Williams Institute-ի գնահատմամբ ԱՄՆ-ի չափահաս բնակչության 3,5%-ը գեյ է, լեսբի կամ բիսեքսուալ, ընդ որում բնակչության 8,2%-ը հայտնում է, որ ունեցել են որոշակի նույնասեռական վարքագիծ[22]: Թեև ստույգ տվյալները բացակայում են, մենք, այնուամենայնիվ, գիտենք, որ բնակչության ստվար մասը լեսբի, գեյ կամ բիսեքսուալ է: Նույնիսկ եթե այդ ցուցանիշը 3%-ից ցածր է, դա հավասար է ավելի քան 220 000 000 մարդու[23]: Բոլոր

19. www.coe.int/en/web/sogidatabase/glossary
20. http://rainbowcenter.uconn.edu/terms/
21. https://www.staffs.ac.uk/assets/Stonewall%20-%20Employment%20regulations%20-%20guidelines%20for%20employers_tcm44-21515.pdf
22. http://williamsinstitute.law.ucla.edu/research/census-lgbt-demographics-studies/how-many-people-are-lesbian-gay-bisexual-and-transgender/
23. www.census.gov/popclock/ 29 սեպտեմբերի 2016թ.:

մայրցամաքներում լեսբիները, գեյերը և բիսեքսուալները ներկայացնում են փոքրամասնության ստվար զանգված:

Գենդերային ինքնություն. «Տ» բաղադրիչը

Տրանսգենդեր անձինք այն անհատներն են, որոնց գենդերային ինքնությունը տարբերվում է ծննդյան պահին իրենց վերագրված սեռից, և այն անձինք, ովքեր ցանկանում են արտահայտել իրենց գենդերային ինքնությունը այլ կերպ, քան ծննդյան պահին իրենց վերագրված սեռը: Նրանց թվին են պատկանում այն մարդիկ, որոնք կարծում են որ պեռք է, գերադասում են կամ որոշում են են ներկայանալ ծննդյան պահին իրենց վերագրված գենդերային դերի ակնկալիքներին չհամընկող ձևով՝ հագուստի, անհատական պարագաների, վարքագծի, խոսքի ձևի, հարդարանքի կամ մարմնի ձևափոխման միջոցով: Դրանց թվին են պատկանում, ի թիվս այլոց, մարդիկ, ովքեր չեն նույնականացնում իրենց «արական» կամ «իգական» պիտակների հետ՝ տրանսսեքսուալները, տրանսվեստիտները և քրոս-դրեսերները (հագուստափոխ):

Տրանսգենդեր տղամարդն այն անձն է, ում ծննդյան ժամանակ վերագրել են «իգական» սեռը, բայց, որն ունի «արական» գենդերային ինքնություն կամ մասկուլին գենդերային ինքնության սպեկտրոին: Տրանսգենդեր կինն այն անձն է, ում ծննդյան պահին վերագրել են «արական» սեռ, բայց, որն ունի «իգական» գենդերային ինքնություն կամ պատկանում է ֆեմինին գենդերային ինքնության սպեկտրին:

Որոշ տրանսգենդեր անձինք իրենք իրենց չեն նույնականացնում ո՛չ որպես տղամարդ, ո՛չ որպես կին, կամ նույնականացնում են իրենց որպես երկուսն էլ, և արդյունքում նույնականացվում են որպես **ոչ բինար** տրանսգենդեր անձինք:

Տրանսգենդեր անձանց սեռական կողմնորոշման համանման պիտակներն օգտագործվում են ելնելով իրենց գենդերային ինքնության, այլ ոչ թե ծննդյան պահին վերագրված սեռի: Այդպես՝ նույնասեռական տրանսգենդեր տղամարդուն գրավում են կին զուգընկերները: Լեսբի տրանսգենդեր կնոջը գրավում են կին զուգընկերները: «Տրանսգենդերություն» բառը մատնանշում է տրանսգենդեր ինքնությունը կամ արտահայտվածության փաստը:

Գենդերային ինքնությունը վերաբերում է անձի խորապես զգացվածանհատական գենդերային փորձառությանը, որը կարող է համապատասխանել կամ չհամապատասխանել ծննդյան պահին վերագրված սեռին, և ներառում է սեփական մարմնի անձնային ներզգացողությունը և գենդերի այլ արտահայտումները, ինչպիսիք են՝ հագուստը, խոսքը և ոճային ընդօրինակումը:

Անձի **սեռը** սովորաբար վերագրվում է ծննդյան պահին և այդ պահից համարվում սոցիալական և իրավական փաստ: Սակայն, որոշ անձինք խնդիրներ են ունենում ծննդյան պահին վերագրած սեռի հետ նույնականացման հարցում: Նման անձինք անվանվում են **«տրանսգենդեր»** կամ **«տրանս»** անձինք: Գենդերային ինքնությունը նույնը չէ, ինչ սեռական կողմնորոշումը, և տրանսգենդերները կարող են նույնականանալ որպես նույնասեռական, բիսեքսուալ կամ գեյ/լեսբի[24]:

Գենդերային ինքնության այլընտրանքային սահմանումն է «Անձի արական, իգական կամ մեկ այլ գենդերի պատկանելիության ներքին զգացողությունը (պարտադիր չէ, որ այն տեսանելի լինի ուրիշների համար)»[25]:

Եվրոպայում սովորաբար օգտագործվում է «տրանսգենդեր» կամ «տրանս» անձ ընդգրկուն եզրույթը՝ մատնանշելու բազմաթիվ տարբեր եղանակները, որոնցով անձը կարող է նույնականացնել իր՝ որպես հիմնական բնակչությունից տարբերվող գենդերը:

Կրկին, ինչպես և սեռական կողմնորոշման պարագայում, շատ դժվար է հաշվարկել այն մարդկանց թիվը, ովքեր ծննդյան պահին վերագրած սեռի և գենդերային ինքնության միջև անհամապատասխանություն են ընկալում: Որոշ գնահատականներով դրանք կազմում են բնակչության 0,3-3 տոկոսը[26]: Հաշվի առնելով հասարակական խարանը և տրանսգենդեր անձանցնկատմամբ տարածված խտրականությունը՝ բնակչության այդ հատվածի հաշվառումը խնդրահարույց է:

Ինչպես և սեռական կողմնորոշման դեպքում, մեզանից յուրաքանչյուրն ունի գենդերային ինքնություն: Բնակչության մեծամասնության մոտ ֆիզիկական սեռը և գենդերային ինքնությունը համապատասխանում են միմյանց: Նրանց համար, ում մոտ նման համապատասխանությունը

24. www.coe.int/en/web/sogidatabase/glossary
25. Հանցագործությունների տուժողների գրասենյակ (2014) «Արձագանքելով սեռական ոտնձգության տրանսգենդեր տուժողներին»:
26. Տես վերոնշյալ աղբյուրը:

բացակայում է, գենդերային ինքնության սահմանումը կարող է ցավոտ և բարդ լինել և հաճախ խորապես ազդել նրանց կյանքի վրա:

Գենդերային արտահայտումը վերաբերում է անձի կողմից իր գենդերի արտահայտմանը հագուստի, հարդարանքի, խոսքի, մազերի ոճի, մարմնի լեզվի, սոցիալական փոխազդեցությունների և այլ վարքագծի միջոցով[27]: Գենդերային արտահայտումը, ի տարբերություն գենդերային ինքնության, արտաքին դրսևորում է:

Մինչդեռ գենդերային ինքնությունը կապված է այն բանի հետ, թե ինչպես ենք մենք զգում, գենդերային արտահայտումը կապված է բազմաթիվ ընտրությունների հետ, որոնք մենք անում ենք առօրյա կյանքում, թե ինչ հագուստ ենք կրում, ինչպես ենք հագնվում և ինչ վարք ենք ցուցաբերում: Մեզանից շատերը դա ընդունում են որպես իքնստինքյան պարզ, բայց երբ մեր գենդերային ինքնությունը չի համապատասխանում այն սեռին, որը մեզ վերագրվել է ծննդյան պահին, ֆիզիկապես արտահայտվելու ձևի մասին մեր որոշումը կարող է բարդ և հաճախ ճակատագրական լինել:

Գենդերային ցուցիչները

Գենդերային փոփոխության գործընթացը հաճախ կոչվում է «անցումային շրջան»: Սա այն գործընթացն է, որի միջոցով անձը որպես մեկ գենդերով ընկալվելուց անցնում է դեպի այլ գենդերով ընկալվելը, որը ժամանակ է պահանջում:

Անցումային շրջանը կարող է լինել սոցիալական փոփոխություն, որը ներառում է, մասնավորապես, հետևյալ փոփոխությունները՝ արտաքինի, հագուստի և սոցիալական հարաբերությունների: Այն կարող է ներառել նաև զգալի ֆիզիկական անցում, հորմոնային թերապիայի միջոցով, որոշ դեպքերում նաև գենդերային վերափոխման վիրահատության միջոցով:

Անձինք, ովքեր անցել են անցումային շրջանը, կարող է այլևս չհամարեն իրենց տրանս հովանոցի մաս:

Գենդերային ցուցիչները

Գենդերային ցուցիչները այնպիսի մի բան են, որին ոստիկանության ծառայողները հանդիպում են իրենց ծառայության ողջ ընթացքում: Դրանք նշված են փաստաթղթերում, ինչպիսիք են ինքնության քարտերը, վարորդական վկայականները և անձնագրերը: Ամենաակնառու գենդերային ցուցիչները սեռի նշումներն են, ինչպիսիք են արական/իգական կամ պարոն/տիկին: Դրանք կարող են լինել նաև մասնագիտական կոչումների, անձնական դերանունների կամ կոդավորված թվերի տեսքով, ինչպիսիք են սոցիալական ապահովության համարները և հարկային համարները, որոնք կարող են որոշակի համակցություններ օգտագործել ըստ սեռային պատկանելիության[28]:

Ինքնության փաստաթղթերում գենդերային ցուցիչների փոփոխությունը շատ երկրներում կարող է դժվար, կամ նույնսիկ անհնարին լինել: Դա խնդիրներ է առաջացնում տրանսգենդեր անձանց համար այն դեպքերում, երբ պետական մարմինների, օրինակ՝ ոստիկանության հետ շփման համար պահանջվում են որոշակի փաստաթղթեր: Այս հարցին կանդրադառնանք 4-րդ մոդուլում:

Դերանուններ

Դերանունները բառեր են, որոնք օգտագործվում են անձին նշելու համար կամ իր անվան փոխարեն: Անգլերենում անձնական դերանուններն են, օրինակ՝ «he/she», «him/her», «his/hers»: Որոշ տրանսգենդեր անհատներ օգտագործում են գենդերային չեզոք դերանուններ կամ գենդերային դերանունների փոխարեն օգտագործում են «they/ their» («նրանք/նրանց»): Այս հարցին կանդրադառնանք 4-րդ մոդուլում:

Տրանս հովանցի որոշ լրացուցիչ սահմանումներ

Կան բազմաթիվ եղանակներ, որոնցով մարդիկ, ովքեր որակվում են որպես տրանսգենդեր, կարող են սահմանել իրենց հատուկ գենդերային արտահայտումը և գենդերային ինքնության կառուցվածքը: Դրանցից մի քանիսը ներկայացված են ստորև: Սակայն, եթե վստահ չեք, թե դրանցից որն օգտագործել, նկատի ունեցեք, որ **«տրանս»** եզրույթը սովորաբար համարվում է ներառական և հարգալից: Անհատի հետ առնչվելիս հաճախ ավելի լավ է հարգալից կերպով հարցնել այդ մասին: 4-րդ մոդուլում մենք նաև կուսումնասիրենք, թե ինչպես լավագույնս պրոֆեսիոնալ առումով շփվել տրանս անձանց հետ:

27. Շոտլանդական տրանսգենդերների դաշինք, գենդերային ինքնություն, Տրանսգենդեր անձանց աջակցելու ներածական ուղեցույց:
28. www.coe.int/en/web/sogidatabase/glossary

Տրանսսեքսուալ բառն օգտագործվում է այն անձանց դեպքում, որոնց գենդերային ինքնությունը չի համապատասխանում ծննդյան պահին վերագրված սեռին և, որոնք փոփոխում են իրենց մարմնի տեսքը կամ գործառույթները՝ գենդերի վերահաստատման միջամտությունների միջոցով:

Իգականից արական/ԻԱ տրանս տղամարդն այն մարդն է, որը ծննդյան պահին համարվել է իգական սեռին պատկանող, թեև նա ունի արական գենդերային ինքնություն, և անցում է կատարում մշտապես որպես տղամարդ ապրելու համար:

Արականից իգական/ԱԻ տրանս կինն այն մարդն է, որի ծննդյան պահին համարվել է արական սեռին պատկանող, թեև նա ունի իգական գենդերային ինքնություն, և գենդերային անցում է կատարում մշտապես որպես կին ապրելու համար:

Քրոսդրեսեր (հագուստափոխ) բառը նկարագրում է այն մարդկանց, ովքեր նախընտրում են կրել հակառակ գենդերին բնորոշ հագուստ: Նրանք դա անում են զգացմունքային կամ սեռական բավարարվածություն զգալու համար: **«Տրանսվեստիտ»** եզրույթն այլևս չի օգտագործվում և կարող է վիրավորական լինել որոշ մարդկանց համար[29]:

Դրաք Քուին բառը պատմականորեն օգտագործվում է այն նույնասեռականների պարագայում, ովքեր սովորաբար կրում են հակառակ սեռին բնորոշ հագուստ՝ զվարճանքի կամ ինքնաարտահայտման նպատակով[30]: Կան նաև դրագ քինգեր, ովքեր կենսաբանորեն իգական են և հագնվում են որպես տղամարդ:

Ցիսգենդեր բառն օգտագործվում է նկարագրելու նրանց, ովքեր տրանսգենդեր չեն, այսինքն՝ ովքեր ունեն գենդերային ինքնություն կամ կատարում են գենդերային դեր, որը հասարակությունը համապատասխան է համարում իրենց սեռին[31]:

Գենդերքուիր բառն օգտագործվում է գենդերային երկվության (արական/իգական) մերժման համար՝ հօգուտ ավելի դինամիկ, ոչ ավանդական ինքնության[32]:

Գենդերային երկվությունը (բինար) սոցիալական կառուցված հասկացություն է, ըստ որի գոյություն ունի միայն երկու գենդեր՝ արական և իգական:

Ոչ բինար բառը նկարագրում է գենդերային ինքնությունը, որը ոչ իգական է, ոչ էլ արական, կամ գենդերային այն ինքնությունները, որոնք դուրս են արական և իգական երկու ավանդական հասկացությունների սահմաններից[33]:

Ինտերսեքս. «Ի» բաղադրիչը

Ինտերսեքս անձինք նրանք են, ովքեր իրենց քրոմոսոմային, գոնադային, էնդոկրին կամ անատոմիական սեռի առումով չեն համապատասխանում իգական և արական մարմնական կառուցվածքի բժշկական և հասարակական չափանիշներին:

Դա ակնհայտ է դառնում օրինակ՝ երկրորդային սեռական հատկանիշներում, ինչպիսիք են մկանային զանգվածը, մազածածկույթը և հասակը, կամ առաջնային սեռական հատկանիշներում, ինչպիսիք են ներքին և արտաքին սեռական օրգանները և/կամ քրոմոսոմային և հորմոնալ կառուցվածքը:

Կարող է օգտագործվել նաև ավելի պարզ աշխատանքային սահմանում. ինտերսեքս անձինք այդպիսին են, քանի որ նրանց բնածին սեռական բնութագրերը միաժամանակ իգական և արական են, կամ ոչ լիովին իգական կամ արական, կամ ո՛չ իգական են, ո՛չ արական:

Գոյություն ունեն ինտերսեքսի բազմաթիվ ձևեր. դա սպեկտրային կամ ընդգրկուն եզրույթ է, այլ ոչ թե մեկ կատեգորիա: Այդ բառը փոխարինել է «հերմաֆրոդիտ» եզրույթը, որը բժիշկների կողմից լայնորեն օգտագործվում էր 18-րդ և 19-րդ դարերում: Այժմ հերմաֆրոդիտ եզրույթը խորապես վիրավորական է համարվում:

Ինտերսեքս անձը ծնվում է այդպիսին: Ինտերսեքս տարբերությունները կարող են տեսանելիորեն ակնհայտ լինել ծննդյան ժամանակ: Որոշ ինտերսեքս հատկանիշներ ակնհայտ են դառնում սեռական հասունացման կամ հղիության փորձի ժամանակ կամ պատահականությամբ: Որոշ դեպքերում դա հայտնաբերվում է միայն դիահերձման ժամանակ:

29. www.transequality.org/issues/resources/teaching-transgender-guide-leading-effective-trainings
30. www.transequality.org/issues/resources/teaching-transgender-guide-leading-effective-trainings
31. http://rainbowcenter.uconn.edu/terms/
32. http://rainbowcenter.uconn.edu/terms/
33. https://lgbt.wisc.edu/documents/Trans_and_queer_glossary.pdf

Ինտերսեքս անձանց և տրանսգենդեր անձանց միջև էական տարբերությունն այն է, որ ինտերսեքս անձինք հաճախ որպես այդպիսին ճանաչվում են բժիշկների կողմից, երբ նրանք փոքր երեխա են կամ դեռահասության շրջանում: Հաճախ նրանց սեռական օրգանները վիրահատվում են կամ վերարտադրողական օրգանները հեռացվում են անչափահաս տարիքում, երբ նրանք դեռևս զրկված են դրան համաձայնություն տալու կամ հրաժարվելու իրավունքից:

Ինտերսեքս անձանց թվաքանակի վերաբերյալ ամենացածր վիճակագրությունը 200-ից 1-ն է (ծնունդների 0,5 տոկոսը): Հաճախ բերվում են նույնիսկ ավելի ցածր վիճակագրական տվյալներ՝ 1-ը 2000-ից, սակայն այս վիճակագրությունը վերաբերում է միայն այն ինտերսեքս մարդկանց, որոնք վիրահատվել են մանկության շրջանում: Տարբեր կառույցներ, օրինակ՝ ՄԱԿ-ը, օգտագործում են մինչև 1,7% ցուցանիշը:

Դա վկայում է ինտերսեքս տարբերությունների ավելի մեծ տարածվածության մասին ի համեմատ խուլ ծնված երեխաների, և նույնիսկ նույնքան տարածված լինելու մասին, որքան կարմրահերությունն է[34]:

Ակնհայտ է, որ ինտերսեքս անձինք եղել և մնում են խտրականության և մարդու իրավունքների ոտնահարման մեծ ռիսկի տակ: Ոչ շատ երկրներում է ատելության հիմքով հանցագործությունների մասին օրենսդրությունը ինտերսեքս հասկացությունը ճանաչում որպես պաշտպանված հատկանիշ (օրինակ՝ Եվրոպայի խորհրդի երկրներից Շոտլանդիայում և Մալթայում): Եվրոպայի խորհուրդն ինքն ընդգծել է ատելության հիմքով հանցագործությունների մասին օրենսդրության նպատակների համար սեռական հատկանիշները որպես պաշտպանված հատկանիշ ներառելու կարևորությունը (նշել համապատասխան հղումը):

Համալիր համայնքներ և ընդհանուր փորձառություններ

Ստորև տեղեկատվությունը ներկայացնում է ԼԳԲՏԻ որոշ համալիր համայնքները:

ԼԳԲՏԻ համայնքները չեն բնութագրվում բինար սեռականության և գենդերային նորմերով: Սակայն, շատ դեպքերում մեկ ենթախմբի անձինք չեն տեսնում իրենց որպես այլ ենթախմբերի անձանց հետ ընդհանուր փորձառություն ունեցող: Շատ ԼԳԲ անձինք իրենց համայնքի և տրանսգենդեր անձանց միջև բնական կապ չեն ընկալում: Բազմաթիվ տրանսգենդեր անձինք համարում են, որ իրենց գենդերային ինքնության հարցը տարբեր է սեռական կողմնորոշման հարցից և իրենց ճանաչմանն ուղղվածարշավներում առանձնացնում են այդ երկու գաղափարները: Անձը կարող է պատկանել մեկից ավելի ենթախմբի (օրինակ՝ տրանս անձը, ով իրեն լեսբի է համարում):

ԼԳԲ անձանց (սեռական կողմնորոշում), տրանսգենդեր անձանց(գենդերային ինքնությունն և գենդերային արտահայտում) և ինտերսեքս անձանց (սեռական հատկանիշներ) միջև կան որոշակի տարբերություններ: Թեև այդ անձանց կյանքի փորձը կարող է շատ տարբեր լինել, այդ խմբերը հաճախ համախմբվում են մեկ ընդգրկուն եզրի ներքո՝ ավելի հեշտ պատկերացնելու, թե ինչպես են այդ խմբերը ենթարկվում նմանատիպ խտրական վարքագծի, ներառյալ ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների:

Ինտերսեքս անձանց՝ որպես ատելության հիմքով հանցագործությունների տուժողների մասին տեղեկատվությունը սակավ է, և իրավապահ մարմիններն ու ՀԿ-ները դեռ նոր են սկսում հաշվառել այդ դեպքերը:

Ինտերսեկցիոնալ հասկացությունը վերաբերում է խտրականության լրացուցիչ դրսևորումներին, որոնց անձը կարող է ենթարկվել՝ գտնվելով մեկից ավելի փոքրամասնությունների խմբում: Ինտերսեկցիոնալության խնդիրը կարող է նաև սրել այն խնդիրները, որոնք առաջանում են ԼԳԲՏ անձանց կյանքում: Սևամորթ նույնասեռական կինը, օրինակ, կարող է բախվել ռասիզմի, հոմոֆոբիայի և սեքսիզմի: Խտրական վարքագիծը կարող է առաջանալ ոչ միայն հասարակության ավանդական տիրույթում. ռասիզմը գոյություն ունի ԼԳԲՏ համայնքներում, իսկ հոմոֆոբիան՝ ռասայական փոքրամասնությունների մեջ:

Մահմեդական տրանս անձը կարող է բախվել ինչպես և՛ կրոնական խտրականության, և՛ տրանսֆոբիայի, ինչպես իր կրոնական համայնքում, այնպես էլ դրանից դուրս:

34. http://www.ilga-europe.org/what-we-do/our-advocacy-work/trans-and-intersex/intersex

ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ՝ ՀՈՄՈՖՈԲԻԱ, ՏՐԱՆՍՖՈԲԻԱ, ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ ԵՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոմոֆոբիա՝ նախապաշարումների վրա հիմնված անհիմն վախ և հակակրանք նույնասեռականության և լեսբի, գեյ, բիսեքսուալ անձանց նկատմամբ:

Պարզ սահմանումն է *«վախ կամ հակակրանք ԼԳԲ անձանց նկատմամբ»:*

Տրանսֆոբիա՝ նախապաշարումների վրա հիմնված անհիմն վախ և հակակրանք տրանսգենդեր անձանց գենդերային անհամապատասխանության նկատմամբ:

Պարզ սահմանումն է«վախ կամ հակակրանք տրանսգենդեր անձանց նկատմամբ»:

Հոմոֆոբիան և տրանսֆոբիան սոցիալական առումով կարող են դրսևորվել որպես խուսափում, սոցիալական բացառում, խտրականություն, վիրավորական վարքագիծ, բռնություն և նույնիսկ սպանություն:

Հոմոֆոբիան և տրանսֆոբիան կարող են առաջանալ այնպիսի վերաբերմունքի և համոզմունքների արդյունքում, որոնք մենք ընդօրինակում ենք ծնողներից, ընկերներից, դպրոցից, համայնքից, կրոնական առաջնորդներից և սոցիալական ազդեցություն ունեցող անձանցից (քաղաքական գործիչներ/հայտնի մարդիկ): Հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի տարբեր աստիճանի դրսևորումներ առկա են բոլոր երկրներում:

Կարծրատիպը մարդու կամ անձանց նկատմամբ վերաբերմունք է կամ համոզմունք՝ հիմնված նրանց առանձնահատկությունների կամ հատկանիշների վրա կամ ելնելով այն խմբից, որին նրանք պատկանում են[35]:

Կարծրատիպի այլընտրանքային սահմանումն է «Մարդկանց խմբի մասին կանխորոշված կամ գերպարզեցված ընդհանրացում՝ անտեսելով նրանց անհատական տարբերությունները»:

Կարծրատիպերի օրինակներ են.

- Բոլոր լեսբիները առնական են
- Բոլոր աֆրիկացի ներգաղթյալները հանցագործներ են
- Բոլոր ոստիկանները չարաշահում են իրենց իշխանությունը
- Բոլոր մահմեդականները կրոնական ծայրահեղականներ են

Կարծրատիպերը կանխորոշված և ծաղրանկարային ընկալումներ են, որոնք հանգեցնում են որոշակի խմբերի բոլոր անդամներին նույն ընդհանրացնող գծերը վերագրելուն՝ առանց ուշադրություն դարձնելու նրանց անհատական հատկանիշներին: Կարծրատիպերը կարող են հանգեցնել այլ խմբերի նկատմամբ նախապաշարումների և, ի վերջո, խտրական վարքագծի և գործողությունների:

Թեև կարծրատիպերը հաճախ բացասական են, նրանք կարող են նաև դրական երանգ կրել: Դրական կարծրատիպերը դեռևս կարող են բացասական ազդեցություն ունենալ, պարզապես այն պատճառով, որ դրանք ներառում են լայն ընդհանրացումներ, որոնք անտեսում են անհատական իրողությունները[36]: Օրինակ՝ կանայք ավելի լավ են խնամում երեխաներին, քան տղամարդիկ: Այս կարծրատիպը անտեսում է այն իրողությունը, որ կան բազմաթիվ կանայք, ովքեր, օրինակ, դաժան են վերաբերվում երեխաների հանդեպ և չպետք է խնամեն նրանց:

Նախապաշարում հասկացությունը կապված է կարծրատիպ հասկացության հետ:

Նախապաշարումը նախնական դատողություն է և կողմնակալ պատկերացում կամ վերաբերմունք այլ անձանց կամ խմբերի վերաբերյալ: Նախապաշարումները հաճախ բացասական են և սովորաբար հիմնված են ասեկոսեների, ենթադրությունների, զգացմունքների և համոզմունքների, այլ ոչ թե գիտելիքի և փաստերի վրա: Նախապաշարումները ազդում են ինչպես մեր գործողությունների, այնպես էլ ուրիշների արարքների մեր մեկնաբանության վրա:

Դասընթացավարի ուղեցույց

Վերապատրաստումից առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել և անհրաժեշտության դեպքում դասընթացում ներառել համապատասխան տեղական օրենսդրությունը և խտրականության հետ

35. ԵԱՀԿ (2014թ.) ուսումնական ձեռնարկ «Դասընթաց ատելության հիմքով հանցագործությունների մասին իրավապահ մարմինների համար»: Ուսումնական ծրագիր դասընթացավարների համար (TAHCLE Training Manual Training on Hate Crime for Law Enforcement Curriculum for Trainers):
36. https://lgbtrc.usc.edu/education/terminology/

կապված սահմանումները: Մասնակիցներին պետք է տրամադրել ինչպես խտրականության սահմանումը, այնպես էլ օրենքով պաշտպանվող խմբերի մասին տեղեկատվությունը:

Խտրականություն. Շատ երկրներ ունեն խտրականության իրավական սահմանում: Սահմանումները հաճախ ընդգրկում են ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի խտրականությունը: Խտրականության ստորև ներկայացվող սահմանումն ավելի լայն է և արտացոլում է ԼԳԲՏԻ և այլ փոքրամասնությունների համայնքների փորձառությունները բազմաթիվ երկրներում.

«Խտրականություն տեղի է ունենում, երբ ավելի մեծ ազդեցություն ունեցող սոցիալական խմբի անդամները անարդարացի կամ դաժան են վարվում պակաս ազդեցություն ունեցող սոցիալական խմբի անդամների նկատմամբ: Խտրականությունը կարող է ունենալ տարբեր դսևորումներ, ներառյալ թ՛ե ատելության կամ անարդարության անհատական գործողությունները, և թ՛ե այլ խմբերին սովորաբար տրվող արտոնությունների ինստիտուցիոնալ մերժումը[37]:

Խտրականության իրավական սահմանումը

Խտրականությունն իրավաբանորեն սահմանվում է որպես անարդար, անհավասար վերաբերմունք.

1. Ուղղակի խտրականություն տեղի է ունենում, երբ մեկ կամ մի քանի պաշտպանված հատկանիշներով պայմանավորված որևէ անձի կամ անձանց խմբի նկատմամբ վերաբերվում են ոչ այնքան բարենպաստ, որքան համադրելի իրավիճակում կվերաբերվեին կամ վերաբերվում են մեկ այլ անձի կամ անձանց խմբի նկատմամբ, կամ երբ անձին կամ անձանց խմբին մեկ կամ մի քանի պաշտպանված հատկանիշի հետ կապված պատճառով վնաս է պատճառվում:

Ավելի պարզ ասած՝ ուղղակի խտրականությունն այն է, երբ փոքրամասնության խմբին պատկանելու պատճառով անձին կամ անձանց ցուցաբերվում պակաս բարենպաստ վերաբերմունք, քան բնակչության մեծամասնությանը:

Դրա օրինակն է, երբ ոստիկանության ծառայողը հրաժարվում է տուժողից հանցագործության մասին հաղորդում ընդունել, քանի որ տուժողը տրանսգենդեր է, ռոմա է կամ կրոնական փոքրամասնության ներկայացուցիչ է:

2. Անուղղակի խտրականություն տեղի է ունենում, երբ որևէ դրույթը, չափորոշիչը կամ գործելակերպը որոշակի անբարենպաստ վիճակ է ստեղծում մեկ կամ մի քանի պաշտպանված հատկանիշների (ներառյալ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության) հետ կապված կարգավիճակ կամ հատկանիշ ունեցող անձանց համար՝ այլ անձանց համեմատ, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ դրույթը, չափորոշիչը կամ գործելակերպն օբյեկտիվորեն արդարացված է իրավաչափ նպատակով, և այդ նպատակին հասնելու միջոցները համաչափ են և անհրաժեշտ:

Ավելի պարզ ասած՝ անուղղակի խտրականությունն այն է, երբ որոշակի գործելակերպը, կանոնները կամ քաղաքականությունն անձին կամ անձանց դնում են անբարենպաստ վիճակում՝ մեծամասնության անդամների համեմատ: Անուղղակի խտրականությունը երբեմն ավելի դժվար է բացահայտել, քան ուղղակի խտրականությունը:

Դրա դրսևորում է, օրինակ՝ հակառակ սեռի ներկայացուցչի հետ ամուսնացած ոստիկանության ծառայողներն տարեկան հատուկ (ընտանեկան) արձակուրդի նախատեսումը, որն օրենսդրորեն կամ վարվող քաղաքականությամբ չի նախատեսված նույնասեռական հարաբերություններում գտնվող ոստիկանության ծառայողների համար:

Մեկ այլ օրինակ այն կրթական որակավորման ճանաչման մերժումը, որը ձեռք է բերվել ոստիկանության ծառայության երկրից դուրս, նույնիսկ եթե այն նույնքան որակյալ է, որքան տեղական կրթական որակավորումը: Խտրականության այս անուղղակի ձևը բացառում է էթնիկապես տարբերվող անձանց ոստիկանությունում աշխատանքը:

37. https://lgbtrc.usc.edu/education/terminology/

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹ 2.1 ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԼՐԱՑՆԵԼ

Ինչի՞ց է կազմված ԼԳԲՏԻ համայնքը՝ հիմնական հասկացություններ և սահմանումներ

Սեռական կողմնորոշում	
ԼԳԲ	Լ – Գ – Բ –
Գենդերային ինքնություն	
Գենդերային արտահայտում	
Տրանսգենդեր կամ Տ	
Ինտերսեքս	

Վնասակար սոցիալական վարքագիծ՝ հիմնական հասկացություններ և սահմանումներ

Հոմոֆոբիա	
Տրանսֆոբիա	
Կարծրատիպ	
Խտրականություն	Ուղղակի – Անուղղակի –

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹ 2.1Բ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարդ բոքոնիկն օժանդակ միջոց է՝ բացահայտելու և հասկանալու հիմնական ԼԳԲՏ հասկացությունները, որոնք մինչ այժմ քննարկվել են մոդուլում: Խնդրում ենք նկատի ունենալ, որ այս վարժությունը նախատեսված չէ ինտերսեքս անձանց մասին քննարկումների համար: Դա պայմանավորված է նրանով, որ պատկերը չի արտացոլում ինտերսեքսի սահմանման մեջ ընդգրկված սեռական հատկանիշների բազմազանությունը: Ինտերսեքս հարցերը քննարկելիս խնդրում ենք օգտագործել 2.1 գործողության ձևակերպումները և օժանդակ նյութ 2.1ա-ն[38]:



Սեռական կողմնորոշում. Ինչ ենք զգում ուրիշների հանդեպ, ում հանդեպ ունենք հուզական և ֆիզիկական գրավչություն, ինչ կա մեր սրտերում: Գեյ, լեսբի, բիսեքսուալ կամ նույնասեռական լինելը:

Գենդերային ինքնություն. Ինչ ենք մենք մտածում և զգում մեր գենդերի մասին, ինչ կա մեր ուղեղում (օրինակ՝ ես ինձ կին եմ զգում, թե տղամարդ կամ երկուսի համակցություն):

Գենդերային արտահայտում. Ինչպես ենք մենք արտահայտվում վարքի և մեր արտաքինի միջոցով: Մեր հագուստը, սանրվածքը, զարդերը, վարքագիծը և այլն: Այդ թվում՝ տրանս, ցիսգենդեր կամ քրոսդրեսեր լինելը:

Մեր սեռը. կին, ում հիմնական ռումանտիկ, հուզական, ֆիզիկական և սեռական գրավչությունը կանանց նկատմամբ է:

Լեսբի. կին, ում հիմնական ռումանտիկ, հուզական, ֆիզիկական և սեռական գրավչությունը կանանց նկատմամբ է:

Գեյ՝ տղամարդ ում հիմնական ռոմանտիկ, հուզական, ֆիզիկական և սեռական գրավչությունը տղամարդկանց նկատմամբ է:

Բիսեքսուալ՝ անձ, ով ունի զգալի ռոմանտիկ, հուզական, ֆիզիկական և սեռական գրավչություն երկու սեռերի ներկայացուցիչների նկատմամբ:

Հետերոսեքսուալ. անձ, ով զգացմունքային, ռոմանտիկ կամ սեռական գրավչություն ունի հակառակ սեռի ներկայացուցիչների նկատմամբ:

Տրանսգենդեր անձ, որի գենդերային ինքնությունը տարբերվում է ծննդյան պահին իրենց վերագրված գենդերից, և այն անձինք, ովքեր ցանկանում են արտահայտել իրենց գենդերային ինքնությունը ծննդյան պահին իրենց վերագրված գենդերից տարբերվող ձևով:

38. http://itspronouncedmetrosexual.com/2012/03/the-genderbread-person-v2-0/

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2.2 ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ՝ ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ, ՈՐԻՆ ՀԱՋՈՐԴՈՒՄ Է ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ և ՔՆՆԱՐԿՈՒՄ (20 ՐՈՊԵ)

Դասընթացավարի ուղեցույց.

Այս վարժությունը պետք է իրականացվի մեծ ուշադրությամբ՝ ապահովելու համար, որ ԼԳԲՏԻ անձանց դեմ բացասական կարծրատիպերի հավաքումը չօգտագործվի որպես հոմոֆոբիայի/տրանսֆոբիայի առիթ: Այն կարող է նպատակահարմար չլինել շատ բարդ աշխատանքային միջավայրում կամ երբ դասընթացավարը փորձառու չէ վիճելի քննարկումները ղեկավարելու հարցում:

Պահանջվող նյութեր՝

Ֆլիպչարտի թուղթ, գրիչներ
Ընդմիջման համար սենյակ կամ տարածք դասասենյակում

1. Մասնակիցներին բաժանեք չորս խմբի:

2. Յուրաքանչյուր խմբին հանձնարարեք հավաքել հնարավորինս շատ կարծրատիպեր հետևյալ ոլորտներում՝
   - առաջին խմբին առաջարկվում է հավաքել բացասական կարծրատիպեր ԼԳԲՏԻ անձանց մասին.
   - երկրորդ խմբին առաջարկվում է հավաքել բացասական կարծրատիպեր ոստիկանության մասին.
   - երրորդ խմբին առաջարկվում է հավաքել դրական կարծրատիպեր ԼԳԲՏԻ անձանց մասին.
   - չորրորդ խմբին առաջարկվում է հավաքել դրական կարծրատիպեր ոստիկանության մասին:

3. Խմբերին տվեք հինգ րոպե՝ գտնելու համապատասխան կարծրատիպերը: Այնուհետև հավաքեք մասնակիցներին և խնդրեք խմբերին ներկայացնել իրենց պատասխանները: Արդյունքները տեղադրեք գրատախտակի չորս էջերի վրա:

4. Ընդհանուր քննարկման համար տվեք հետևյալ հարցերը.
   - Արդյո՞ք կարծրատիպերը տալիս են առանձին խմբերի ճշգրիտ նկարագրությունը:
   - Ի՞նչ վնաս կարող են հասցնել կարծրատիպերը վերոնշյալ երկու խմբերի անդամներին:

Վարժությունը պետք է բացահայտի նախապաշարումները և ցույց տա, որ բոլոր խմբերը տուժում են կարծրատիպերից: ԼԳԲՏԻ անձանց և ոստիկանության զուգահեռ քննարկումը թույլ է տալիս կապ ստեղծել ոստիկանության և ԼԳԲՏԻ համայնքի միջև[39]:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.3Ա ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ 2. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ, ՈՐԻՆ ՀԵՏԵՎՈՒՄ Է ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ (20 ՐՈՊԵ)

Պահանջվող նյութեր՝

Ֆլիպչարտի թուղթ,
A4 թուղթ, գրիչներ

1. Խնդրեք մասնակիցներին ինքնուրույն աշխատել՝ առաջարկելով նրանց հիշել դրվագներ, երբ իրենց կամ իրենց ընտանիքի անդամների նկատմամբ կիրառվել է որևէ կարծրատիպ: Առաջարկեք նրանց գրավոր նշել, թե ինչ ազդեցություն ունեցավ այդ կարծրատիպը:

2. Մի քանի րոպե անց խնդրեք մասնակիցներին հակիրճ ներկայացնել իրենց գրառումները:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.3Բ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ 2. ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ (15 ՐՈՊԵ)

Ամփոփելով քննարկումը խմբին տվեք հետևյալ հարցերը՝ նշելով նրանց պատասխանները ֆլիպչարտի վրա.

- Հաշվի առնելով կարծրատիպերի մասին ձեր պատկերացումները, ի՞նչ վտանգներ կան անհատների, ընտանիքների և համայնքների համար կարծրատիպերը հանդուրժելու դեպքում:

39. Աղբյուրը՝ Polack, R. and LeDeroff, J. (2010) ILGA Europe Toolkit for training police officers on tackling homophobic crime, ILGA Europe

- Ի՞նչ ռիսկեր են առաջանում, եթե ոստիկանության ծառայողները նույպնես ղեկավարվեն նման կարծրատիպերով:

Մոդուլ 2 (բ). Հիմնական հասկացություններ և սահմանումներ՝ Ատելության հիմքով հանցագործություն

ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Մասնակիցները՝

- հստակ պատկերացում կկազմեն ատելության հիմքով հանցագործությունների սահմանման մասին,
- կկարողանան տարբերակել ատելության հիմքով հանցագործությունները և ատելության միջադեպը,
- ավելի լավ կըմբռնեն ատելության հիմքով հանցագործությունների որոշ հիմնական առանձնահատկությունները, որոնց առնչվում են ոստիկանության ծառայողները,
- կուսումնասիրեն տեղական/ազգային ոստիկանական համատեքստը,
- կկարողանան կիրառել տերմինաբանությունը վերապատրաստման ողջ ընթացքում և իրենց աշխատանքում,
- կընկալեն, որ նույնիսկ ատելության հիմքով հանցագործությունների մասին օրենսդրության բացակայության դեպքում, ատելության հիմքով հանցագործությունը ոստիկանության համար հանդիսանում է գործնական և սոցիալական հայեցակարգ:

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԺԱՄԱՆԱԿ

- Վարժություն 2.4 Ի՞նչ է ատելության հիմքով հանցագործությունը: Ներկայացում և քննարկում (20 րոպե)
- Վարժություն 2.5 Սահմանումների իմացությունը ստուգելու հակիրճ թեստ (10 րոպե)
- Վարժություն 2.6 Ատելության հիմքով հանցագործությունների վերաբեյալ ներպետական օրենսդրական համատեքստի քարտեզագրում (10 րոպե)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2.4 Ի՞ՆՉ Է ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ և ՔՆՆԱՐԿՈՒՄ (30 ՐՈՊԵ)

Դասընթացավարի ուղեցույց

Նախքան վերապատրաստումը անհրաժեշտ է ուսումնասիրել տեղական օրենսդրությունը և ատելության հիմքով հանցագործությունների/միջադեպերի/ատելության խոսքի իրավական սահմանումները և անհրաժեշտության դեպքում ներառել վերապատրաստման ծրագրում: Մասնակիցներին ներկայացնել ինչպես սահմանումներն, այնպես էլ օրենսդրությամբ նախատեսված պաշտպանվող խմբերի մասին տեղեկություններ:

Պահանջվող նյութեր՝

Ֆլիպչարտի թուղթ, գրիչներ, A4 թուղթ
Օժանդակ նյութ 2.4ա
Օժանդակ նյութ 2.4բ

Այս գործողության ընթացքում դասընթացավարը վերապատրաստման մասնակիցներին տրամադրում է ատելության հիմքով հանցագործությունների սահմանումը և դրա հետ կապված որոշ հիմնական հասկացությունները: Մասնակիցներին բաժանվում է Օժանդակ նյութ 2.4ա-ն (անհրաժեշտության դեպքում տեղական համատեքստին հարմարեցվելուց հետո): Մասնակիցների կողմից հիմնական հասկացությունների ըմբռնումը ստուգելու համար կարող է օգտագործվել Օժանդակ նյութ 2.4բ-ն:

Հիմնական սահմանումներ

Ատելության հիմքով հանցագործություն՝ քրեական իրավախախտում կողմնակալության շարժառիթով:

Ատելության հիմքով հանցագործությունները ներառում են ահաբեկումը, սպառնալիքը, գույքային վնասը, հարձակումը, սպանությունը կամ ցանկացած այլ հանցագործություն, որտեղ տուժողը, տարածքը կամ հանցագործության թիրախն ընտրվել է պաշտպանվող խմբին նրա իրական կամ ենթադրյալ կապի, կապվածության, պատկանելության, աջակցության կամ անդամության պատճառով:

Ատելության հիմքով հանցագործության երկու հիմնական բաղադրիչներն են.

ա) **Քրեական հանցագործություն է** տեղի ունեցել

բ) հանցագործը **կողմնակալ շարժառիթ** է ունեցել

Առանց վերը նշված բաղադրիչներից որևէ մեկի՝ միջադեպը չի կարող համարվել ատելության հիմքով հանցագործություն:

ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունները կողմնակալության շարժառիթով հանցավոր արարքներ են: Դրանք ատելության հիմքով հանցագործություններ են, որտեղ տուժողը, տարածքը կամ թիրախը ընտրվում են ԼԳԲՏ խմբին նրանց իրական կամ ենթադրյալ կապի, կապվածության, պատկանելության, աջակցության կամ անդամակցելու պատճառով: Պետք է լինի հիմնավոր կասկած, որ հանցագործի շարժառիթը տուժողի սեռական կողմնորոշումն է, գենդերային ինքնությունը, գենդերային արտահայտումը կամ սեռական հատկանիշները[40]:

Ատելության շարժառիթով միջադեպերը՝ միջադեպեր, գործողություններ կամ անհանդուրժողականության դրսևորումներ, որոնք կատարվել են կողմնակալության շարժառիթով, որը կարող է չհասնել ատելության հիմքով հանցագործության շեմին, քանի որ դատարանում քրեական հանցագործության կամ կողմնակալության շարժառիթների բավարար ապացույցներ չկան, կամ արարքն ինքնին, ներպետական օրենսդրության համաձայն, չի կարող քրեական հանցագործություն համարվել:

Փողոցում ինչ-որ մեկի հասցեին տրանսֆոբ արտահայտություն բղավելը կարող է ատելության միջադեպ հանդիսանալ, եթե բղավոցը և սպառնալից պահվածքը բավարար չեն քրեական պատժամիջոցի կիրառումն արդարացնելու համար:

Ատելության խոսքը վերաբերում է հանրային արտահայտություններին, որոնք տարածում, հրահրում, խթանում կամ արդարացնում են ատելություն, խտրականություն կամ բռնություն փոքրամասնության խմբի նկատմամբ, օրինակ՝ քաղաքական և կրոնական առաջնորդների կամ այլ կարծիք ձևավորողների հայտարարությունները, որոնք տարածվում են մամուլում կամ համացանցում, ատելություն հրահրելու նպատակով:

Ատելության խոսքը կարող է հանցագործություն համարվել կամ չհամարվել՝ կախված ներպետական օրենսդրությունից:

Ցեղասպանությունը ենթադրում է միտումնավոր վարքագիծ, որն ուղղված է ազգային, էթնիկական, ռասայական, կրոնական կամ սոցիալական խմբի ամբողջական կամ մասնակի ոչնչացմանը: Ատելության հիմքով հանցագործությունները կարող են լինել ցեղասպանության հանգեցնող գործընթացի մի մասը:

Ատելության հիմքով հանցագործությունների հիմնական առանձնահատկությունն այն է, որ պատշաճ արձագանքի բացակայության դեպքում դրանք կարող են ավելի **սրվել**: Անհետևանք մնացած ատելության խոսքը կարող է հանգեցնել գույքի վնասման և/կամ բռնի գործողությունների: Ազդեցությունը կարող է տարածվել անհատից մինչև իր ընտանիքը, տեղական համայնքի անդամները և ողջ հասարակությունը:

Ուստի կարևոր է, որ դպրոցը, համայնքը, կառավարությունը և իրավապահ մարմինները հնարավորինս արագ միջամտեն՝ կանխելու խտրական վարքագծի հետագա սրումը (Էսկալացիան):

40. www.coe.int/en/web/sogidatabase/glossary

Պաշտպանված հատկանիշը խմբի հիմնարար հատկանիշն է, ինչպիսիք են ռասան, կրոնը, էթնիկ պատկանելությունը, ազգությունը, սեռը, սեռական կողմնորոշումը, սեռային հատկանիշները կամ նմանատիպ ընդհանուր գործոնը, որն առանցքային է նրանց ինքնության համար: Պաշտպանված հատկանիշները ներկայացնում են մեր որպես անհատի այն կողմերը, որոնք մենք չենք կարող հեշտությամբ փոխել: Դրանք սովորաբար այն հատկանիշներն են, որոնցում առկա է ժամանակի ընթացքում և տվյալ մշակույթի շրջանակներում տեսանելի խտրականության դրսևորումների օրինաչափություն:

Սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը օրենսդրության մեջ հաճախ նշվում են որպես պաշտպանված հատկանիշներ, քանի որ դրանք անձի այն հատկանիշներն են, որոնք չեն կարող փոփոխվել: ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ խտրականության դրսևորման հստակ օրինաչափությունները կարելի է հայտնաբերել տարբեր մշակույթներում և ավելի վաղ դարերում: Դրանք են ԼԳԲՏԻ անձանց քրեականացումը, նրանց դաժան վերաբերմունքը և հասարակական խարանը:

Ատելության հիմքով հանցագործությունը հաճախ կոչվում է **ուղերձ-հանցագործություն**, քանի որ հանցագործի նպատակը հաճախ խմբին կամ համայնքին հղված ուղերձն է, որ իրենք ապահով չեն: Իրավապահ մարմինների, այդ թվում՝ ոստիկանության պարտականությունն է **ուղերձ** հղել իրավախախտներին, որ հասարակությունը չի հանդուրժի նման հանցագործությունները:

ԼԳԲՏ համայնքային կենտրոնի պատին «մահ բոլոր գոմիկներին» գրելը ուղերձ-հանցագործություն է: Այս ակտի միջոցով ուղերձ է հղվում տեղի ողջ ԼԳԲՏ համայնքին, որ իրենք ապահով չեն:

Ընդ որում **պարտադիր չէ ցույց տալ**, որ **իրավախախտը ատում է** ընտրված խմբին: Բավական է ցույց տալ, որ տուժողն ընտրվել է պաշտպանված խմբին պատկանելիության (**կողմնակալ ընտրության**) պատճառով: Ատելության հիմքով հանցագործություն կատարած անձը նույնպես կարող է նույն խմբի անդամը լինել:

Օրինակ՝ հանցագործները հաճախ ընտրում են գեյ տղամարդկանց՝ որպես շանտաժի թիրախ, քանի որ հույս ունեն, որ կկարողանան նրանցից գումար շորթել՝ սպառնալով բացահայտել նրանց սեռական կողնորոշումը: Հանցագործները կարող են չատել այդ գեյ անձին, այլ պարզապես ձգտել ամենահեշտ ձևով գումար կորզել:

Հարկ է նշել, որ ոչ բոլոր երկրներում է գործում ատելության հիմքով հանցագործությունների մասին օրենսդրություն: Նման երկրներում ոստիկանության հետ առնչվելիս նման միջադեպերը նպատակահարմար է նշել որպես **ատելության շարժառիթներով հանցագործություններ:**

Պարտադիր չէ, որ տուժողը պաշտպանված խմբի անդամ լինի: Տուժողը կարող է լինել մեկը, ով ընտրվել է այդ խմբին **աջակցելու** պատճառով կամ **սխալմամբ ընկալվել** է որպես այդ խմբի անդամ:

Օրինակ, տուժողը կարող է լինել հետերոսեքսուալ տղամարդ, ով գտնվել է գեյ-բարի մոտակայքում, իսկ սափրագլուխները նրան շփոթել են հաճախորդի հետ և ծեծի ենթարկել: Տուժողը կարող է լինել մի անձ, ով հեռուստահաղորդման ընթացքում պաշտպանել է գեյերի իրավունքները և դրա պատճառով հայտնվել աջակողմյան խմբերի թիրախում:

Տուժողը կարող է չիմանալ, որ ինքը ատելության հիմքով հանցագործության **տուժող է** դարձել, կամ **լավ չպատկերացնել թե դա ինչ է**: Դա չի ժխտում այն փաստը, որ միջադեպը կարող է լինել ատելության հիմքով հանցագործություն:

Տուժողը կարող է իմանալ կամ չիմանալ, որ իրեն թիրախ են դարձրել փոքրամասնության խմբի անդամ լինելու համար: Ոստիկանության ծառայողները պետք է պարզեն, թե արդյոք առկա է կողմնակալության շարժառիթ, և անհրաժեշտության դեպքում դա բացատրեն տուժողին: Տուժողի ընկալումը բազմաթիվ գործոններից միայն մեկն է, որն այս աշխատությունում դիտարկվում է (տե՛ս «Կողմնակալության ցուցիչներ» մոդուլ 4-ը):

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹ 2.4Ա ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱՍՏԱԹԵՐԹ

Սահմանում.

Ատելության հիմքով հանցագործություն՝ քրեական իրավախախտումկողմնակալության շարժառիթով: Ատելության հիմքով հանցագործությունները ներառում են ահաբեկումը, սպառնալիքը, գույքային վնասը, հարձակումը, սպանությունը կամ ցանկացած այլ հանցագործություն, որտեղ տուժողը, տարածքը կամ հանցագործության թիրախն ընտրվել է պաշտպանված խմբին նրա իրական կամ ենթադրյալ կապի, կապվածության, պատկանելության, աջակցության կամ անդամության պատճառով:

ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունները կողմնակալության շարժառիթով հանցավոր արարքներ են: Դրանք ատելության հիմքով հանցագործություններ են, որտեղ տուժողը, տարածքը կամ թիրախը ընտրվում են ԼԳԲՏ խմբին նրանց իրական կամ ենթադրյալ կապի, կապվածության, պատկանելության, աջակցության կամ անդամակցելու պատճառով: Պետք է լինի հիմնավոր կասկած, որ հանցագործի շարժառիթը տուժողի սեռական կողմնորոշումն է, գենդերային ինքնությունը, գենդերային արտահայտումը կամ սեռական հատկանիշները:

Ատելության հիմքով հանցագործության երկու հիմնական բաղադրիչներն են.

ա) **Քրեական հանցագործություն** է տեղի է ունեցել

բ) հանցագործը **կողմնակալ շարժառիթ** է ունեցել

Ատելության շարժառիթով միջադեպերը՝ միջադեպեր, գործողություններ կամ անհանդուրժողականության դրսևորումներ, որոնք կատարվել են կողմնակալության շարժառիթով, որը կարող է չհասնել ատելության հիմքով հանցագործության շեմին, քանի որ դատարանում քրեական հանցագործության կամ կողմնակալության շարժառիթների բավարար ապացույցներ չկան, կամ արարքն ինքնին, ներպետական օրենսդրության համաձայն, չի կարող քրեական հանցագործություն համարվել:

Ատելության խոսքը վերաբերում է հանրային արտահայտություններին, որոնք տարածում, հրահրում, խթանում կամ արդարացնում են ատելություն, խտրականություն կամ բռնություն փոքրամասնության խմբի նկատմամբ, օրինակ՝ քաղաքական և կրոնական առաջնորդների կամ այլ կարծիք ձևավորողների հայտարարությունները, որոնք տարածվում են մամուլում կամ համացանցում, ատելություն հրահրելու նպատակով:

Ցեղասպանությունը ենթադրում է միտումնավոր վարքագիծ, որն ուղղված է ազգային, էթնիկական, ռասայական, կրոնական կամ սոցիալական խմբի ամբողջական կամ մասնակի ոչնչացմանը: Ատելության հիմքով հանցագործությունները կարող են լինել ցեղասպանության հանգեցնող գործընթացի մի մասը:

Ատելության հիմքով հանցագործությունների հիմնական առանձնահատկությունն այն է, որ պատշաճ արձագանքի բացակայության դեպքում դրանք կարող են ավելի **սրվել**: Անհետևանք մնացած ատելության խոսքը կարող է հանգեցնել գույքի վնասման և/կամ բռնի գործողությունների: Ազդեցությունը կարող է տարածվել անհատից մինչև իր ընտանիքը, տեղական համայնքի անդամները և ողջ հասարակությունը:

Պաշտպանված հատկանիշը խմբի հիմնարար հատկանիշն է, ինչպիսիք են ռասան, կրոնը, էթնիկ պատկանելությունը, ազգությունը, սեռը, սեռական կողմնորոշումը, սեռային հատկանիշները կամ նմանատիպ ընդհանուր գործոնը, որն առանցքային է նրանց ինքնության համար: Պաշտպանված հատկանիշները ներկայացնում են մեր որպես անհատի այն կողմերը, *որոնք մենք չենք կարող հեշտությամբ փոխել:* Դրանք սովորաբար այն հատկանիշներն են, որոնցում առկա է ժամանակի ընթացքում և տվյալ մշակույթի շրջանակներում *տեսանելի խտրականության դրսևորումների օրինաչափություն:*

Ատելության հիմքով հանցագործությունը հաճախ կոչվում է **ուղերձ-հանցագործություն**, քանի որ հանցագործի նպատակը հաճախ խմբին կամ համայնքին հղված ուղերձն է, որ իրենք ապահով չեն: Իրավապահ մարմինների, այդ թվում՝ ոստիկանության պարտականությունն է **ուղերձ** հղել իրավախախտներին, որ հասարակությունը չի հանդուրժի նման հանցագործությունները:

Ընդ որում **պարտադիր չէ ցույց տալ**, որ **իրավախախտը ատում է** ընտրված խմբին: Բավական է ցույց տալ, որ տուժողն ընտրվել է պաշտպանված խմբին պատկանելիության (**կողմնակալ ընտրության**) պատճառով: Ատելության հիմքով հանցագործություն կատարած անձը նույնպես կարող է նույն խմբի անդամը լինել:

Հարկ է նշել, որ ոչ բոլոր երկրներում է գործում ատելության հիմքով հանցագործությունների մասին օրենսդրություն: Նման երկրներում ոստիկանության հետ առնչվելիս նման միջադեպերը նպատակահարմար է նշել որպես **ատելության շարժառիթներով հանցագործություններ:**

Պարտադիր չէ, որ տուժողը պաշտպանված խմբի անդամ լինի: Տուժողը կարող է լինել մեկը, ով ընտրվել է այդ խմբին **աջակցելու** պատճառով **կամ սխալմամբ ընկալվել** է որպես այդ խմբի անդամ:

Տուժողը կարող է չիմանալ, որ ինքը ատելության հիմքով հանցագործության **տուժող է** դարձել, կամ **լավ չպատկերացնել թե դա ինչ է**: Դա չի ժխտում այն փաստը, որ միջադեպը կարող է լինել ատելության հիմքով հանցագործություն:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹ 2.4Բ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐԱԳ ԹԵՍՏ

1	Լրացրե՛ք բացերը (երկուսի պատասխանը նույնն է) Ատելության հիմվող հանցագործությունները հաճախ կոչում են _____ հանցագործություն: Դա պայմանավորված է նրանով, որ իրավախախտը ցանկանում է _____ հղել համայնքին, որ նրա անդամներն ապահով չեն:
2	Արդյո՞ք տուժողը պետք է հանցագործությունը ներկայացնի որպես ատելության հիմքով հանցագործություն, որպեսզի ոստիկանությունը հետաքննի միջադեպը որպես ատելության հիմքով հանցագործություն: Հակիրճ բացատրեք ձեր պատասխանը:
3	Ինչ կարող է տեղի ունենալ, եթե ատելության հիմքով հանցագործությունը վաղ փուլում չստանա պատշաճարձագանք:
4	Որո՞նք են այն երկու հիմնական բաղադրիչները, որոնք պետք է առկա լինեն ատելության հիմքով յուրաքանչյուր հանցագործության մեջ: 1) _____ 2) _____
5	Արդյո՞ք ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործության տուժողը պետք է լինի ԼԳԲՏԻ տուժող համարվելու համար: Հակիրճ բացատրեք ձեր պատասխանը:
6	Արդյո՞ք ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հանցագործությունների քրեական վարույթի ընթացքում անհրաժեշտ է ապացուցել, որ հանցագործը ատել է տուժողին:
7	Արդյո՞ք ատելության խոսքը ատելության հիմքով հանցագործություն է:
8	Թվարկեք պաշտպանված հատկանիշները, որոնք նախատեսված են ատելության հիմքով հանցագործությունների մասին ձեր ներպետական օրենսդրությամբ:
9	Թվարկե՛ք պաշտպանված հատկանիշների երկու ընդհանուր բնութագրիչ 1) _____ 2) _____

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2.5 ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԻ ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՏՈՒԳԵԼՈՒ ՀԱԿԻՐՃ ԹԵՍՏ (5 ՐՈՊԵ)

Պահանջվող նյութեր՝

Գրիչներ
Օժանդակ նյութեր 2.5ա (թեստ) և 2.5բ (պատասխաններ)

Յուրաքանչյուր մասնակցի տրամադրեք թեստի թերթիկը: Տեղեկացրեք մասնակիցներին, որ վարժության նպատակն է համապատասխանեցնել հասկացությունը տրված սահմանմանը: Հինգ րոպեի ավարտին ներկայացրեք ճիշտ պատասխանները և խնդրեք մասնակիցներին հաշվել իրենց միավորները: Առավելագույն միավոր հավաքած մասնակցին կարելի է փոքր մրցանակ պարգևել:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹ 2.5Ա ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԻ ԹԵՍՏ

Հասկացություն	Տեղադրեք ճիշտ տառը		Սահմանում
Խտրականություն		Ա	Բառեր, որոնք օգտագործվում են անձին նշելու համար կամ իր անվան փոխարեն, օրինակ անգլերենում՝ «he/she», «him/her», «they»:
Հոմոֆոբիա		Բ	Սեռական կողմնորոշումը յուրաքանչյուր անհատի այլ անձանց նկատմամբ խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչություն ունենալու, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ ունենալու կարողությունն է
Տրանս		Գ	Նախապաշարումների վրա հիմնված անհիմն վախ և հակակրանք նույնասեռականության և լեսբի, գեյ, բիսեքսուալ անձանց նկատմամբ:
Ինտերսեքս		Դ	Անձինք, որոնց գենդերային ինքնությունը չի համապատասխանում ծննդյան պահին վերագրված սեռին և, որոնք փոփոխում են իրենց մարմնի տեսքը կամ գործառույթները՝ գենդերի վերահաստատման վիրահատության միջոցով:
Անցումային շրջան		Ե	Տղամարդ ում հիմնական ռոմանտիկ, հուզական, ֆիզիկական և սեռական գրավչությունը տղամարդկանց նկատմամբ է:
Կարծրատիպ		Զ	Մեր գենդերը նշող որոշումներ, որոնք մենք անում ենք ամեն օր կապված նրա հետ, թե ինչ հագուստ ենք կրում և ինչպես ենք հագնվում և ինչ վարք ենք, ցուցաբերում:
Գենդերային ինքնություն		Է	Սոցիալական, իրավական և/կամ բժշկական փոփոխությունների գործընթաց, որն, ի թիվս այլ բաների, ներառում է ֆիզիկական տեսքը, հագուստը և սոցիալական հարաբերությունները:
Բիսեքսուալ		Ը	Չհիմնավորված անհավասար վերաբերմունք:
Լեսբի		Թ	Անձ, ով զգացմունքային, ռոմանտիկ կամ սեռական գրավչություն ունի հակառակ սեռի ներկայացուցիչների նկատմամբ:
Դերանուններ		Ժ	Նախապաշարումների վրա հիմնված անհիմն վախ և հակակրանք տրանսգենդեր անձանց գենդերային անհամապատասխանության նկատմամբ:
Տրանսսեքսուալ		Ի	Ընդգրկուն եզր, որը ներառում է բազմաթիվ ձևերը, որոնցով անձը կարող է նույնականացնել իր գենդերը որպես հիմնական բնակչությունից տարբերվող:
Սեռական կողմնորոշում		Լ	Անձի արական, իգական կամ մեկ այլ գենդերի պատկանելիության ներքին զգացողություն
Հետերոսեքսուալ		Խ	Անձ, ով ունի զգալի ռոմանտիկ, հուզական, ֆիզիկական և սեռական գրավչություն երկու սեռերի ներկայացուցիչների նկատմամբ:
Տրանսֆոբիա		Ծ	Մարդկանց մի ամբողջ խմբի մասին կանխորոշված կամ գերպարզեցված ընդհանրացում՝ առանց հաշվի առնելու նրանց անհատական տարբերությունները

Գենդերային արտահայտում		Կ	Կին, ում հիմնական ռումանտիկ, հուզական, ֆիզիկական և սեռական գրավչությունը կանանց նկատմամբ է:
Գեյ		Հ	Անձը հաստատող փաստաթղթերում հաճախ հանդիպող ցուցիչներն են, ինչպիսիք են արական/իգական կամ պարոն/տիկին:
Գենդերային ցուցիչ		Ձ	Անձ, որը ծնվել է ֆիզիկական, հորմոնալ կամ գենետիկական հատկանիշներով, որոնք միաժամանակ իգական և արական են, կամ ոչ լիովին իգական կամ արական, կամ ո՛չ իգական են, ո՛չ արական:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹ 2.5Բ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԻ ԹԵՍՏ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Հասկացություն	Տեղադրեք ճիշտ տառը		Սահմանում
Խտրականություն	**Ը**	Ա	Բառեր, որոնք օգտագործվում են անձին նշելու համար կամ իր անվան փոխարեն, օրինակ անգլերենում՝ «he/she», «him/her», «his/hers»:
Հոմոֆոբիա	**Գ**	Բ	Սեռական կողմնորոշումը յուրաքանչյուր անհատի այլ անձանց նկատմամբ խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչություն ունենալու, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ ունենալու կարողությունն է
Տրանս	**Ի**	Գ	Նախապաշարումների վրա հիմնված անհիմն վախ և հակակրանք նույնասեռականության և լեսբի, գեյ, բիսեքսուալ անձանց նկատմամբ:
Ինտերսեքս	**Ձ**	Դ	Անձինք, որոնց գենդերային ինքնությունը չի համապատասխանում ծննդյան պահին վերագրված սեռին և, որոնք փոփոխում են իրենց մարմնի տեսքը կամ գործառույթները՝ գենդերի վերահաստատման վիրահատության միջոցով:
Անցումային շրջան	**Է**	Ե	Տղամարդ ում հիմնական ռոմանտիկ, հուզական, ֆիզիկական և սեռական գրավչությունը տղամարդկանց նկատմամբ է:
Կարծրատիպ	**Ծ**	Զ	Մեր գենդերը նշող որոշումներ, որոնք մենք անում ենք ամեն օր կապված նրա հետ, թե ինչ հագուստ ենք կրում և ինչպես ենք հագնվում և ինչ վարք ենք, ցուցաբերում:
Գենդերային ինքնություն	**Լ**	Է	Սոցիալական, իրավական և/կամ բժշկական փոփոխությունների գործընթաց, որն, ի թիվս այլ բաների, ներառում է ֆիզիկական տեսքը, հագուստը և սոցիալական հարաբերությունները:
Բիսեքսուալ	**Խ**	Ը	Չհիմնավորված անհավասար վերաբերմունք:
Լեսբի	**Կ**	Թ	Անձ, ով զգացմունքային, ռոմանտիկ կամ սեռական գրավչություն ունի հակառակ սեռի ներկայացուցիչների նկատմամբ:
Դերանուններ	**Ա**	Ժ	Նախապաշարումների վրա հիմնված անհիմն վախ և հակակրանք տրանսգենդեր անձանց գենդերային անհամապատասխանության նկատմամբ:
Տրանսսեքսուալ	**Դ**	Ի	Ընդգրկուն եզր, որը ներառում է բազմաթիվ ձևերը, որոնցով անձը կարող է նույնականացնել իր գենդերը որպես հիմնական բնակչությունից տարբերվող:
Սեռական կողմնորոշում	**Բ**	Լ	Անձի արական, իգական կամ մեկ այլ գենդերի պատկանելիության ներքին զգացողություն
Հետերոսեքսուալ	**Թ**	Խ	Անձ, ով ունի զգալի ռոմանտիկ, հուզական, ֆիզիկական և սեռական գրավչություն երկու սեռերի ներկայացուցիչների նկատմամբ:

Տրանսֆոբիա	**Ժ**	Ծ	Մարդկանց մի ամբողջ խմբի մասին կանխորոշված կամ գերպարզեցված ընդհանրացում առանց հաշվի առնելու նրանց անհատական տարբերությունները
Գենդերային արտահայտում	**Զ**	Կ	Կին, ում հիմնական ռումանտիկ, հուզական, ֆիզիկական և սեռական գրավչությունը կանանց նկատմամբ է:
Գեյ	**Ե**	Հ	Անձը հաստատող փաստաթղթերում հաճախ հանդիպող ցուցիչներն են, ինչպիսիք են արական/իգական կամ պարոն/տիկին:
Գենդերային ցուցիչ	**Է**	Ձ	Անձ, որը ծնվել է ֆիզիկական, հորմոնալ կամ գենետիկական հատկանիշներով, որոնք միաժամանակ իգական և արական են, կամ ոչ լիովին իգական կամ արական, կամ ո՛չ իգական են, ո՛չ արական:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2.6 ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՅԱԼ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԻ ՔԱՐՏԵՂԱԳՐՈՒՄ (30 ՐՈՊԵ)

Պահանջվող նյութեր՝

Թուղթ և գրիչներ

Այս վարժության ընթացքում խմբին հանձնարարվում է քննարկել ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ ներպետական օրենսդրությունը և ցույց տալ, թե որքանով լավ են նրանք պատկերացնում այդ օրենսդրությունը: Մասնակիցներին հարց է տրվում, թե արդյոք նրանք ունեցել են ատելության հիմքով հանցագործությունների հետաքննության փորձ և, թե գործնականում որքան արդյունավետ է հետաքննությունն ու քրեական հետապնդումը: Պետք է ուսումնասիրվեն հետևյալ ոլորտները.

- Ի՞նչ է նախատեսում օրենքը (պատժի հատուկ խստացում, պատժի ընդհանուր խստացում, կոնկրետ իրավախախտում
- Որո՞նք են պաշտպանված հատկանիշները
- Ինչպիսի՞ քաղաքականություն է կիրառվում իրավապահ մարմինների կողմից ատելության հիմքով հանցագործությունների հետաքննության հարցում:
- Ո՞րն է ձեր դերը որպես քննիչ:
- Ձեր ընկալմամբ ո՞րն է դատախազի դերը:
- Ձեր ընկալմամբ ո՞րն է դատական համակարգի դերը:
- Ձեր կարծիքը գործող օրենսդրության վերաբերյալ:
- Որքանո՞վ է այն արդյունավետ:

Մոդուլ 3. Ոստիկանության արձագանքը ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործություններին՝ մարդու իրավունքների և անխտրականության վրա հիմնված մոտեցում

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Թեև հաճախ կարող է թվալ որ մարդու իրավունքները այնքան էլ չեն առնչվում ոստիկանության գործունեության «բուն նպատակի» հետ, դրանք իրականում ազդում են ոստիկանության յուրաքանչյուր ծառայողի հիմնական պարտականությունների վրա՝ տուժողների ապահովությունն ու անվտանգությունն ապահովելուց մինչև արդյունավետ հետաքննություն իրականացնելը: Այդ չափանիշներին չհամապատասխանելը կարող է լուրջ հետևանքներ ունենալ: Տուժողները կարող են կորցնել վստահությունը ոստիկանության՝ իրենց պաշտպանելու շահագրգռվածության վերաբերյալ, հանցագործները կմնան անվերահսկելի և ազատ կլինեն իրենց հետագա հանցագործություններն անելու, ոստիկանության ծառայության նկատմամբ էլ խտրականության հիմքով կներկայացվեն բազմաթիվ գանգատներ, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի դրույթների խախտման վերաբերյալ:

ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունները տեղի են ունենում նախապաշարումների և խտրականության ամենօրյա դրսևորումների համատեքստում: Հետազոտությունը ցույց է տվել, որ ԼԳԲՏԻ անձինք հասարակության մեջ թշնամանքի և ոտնձգությունների թիրախ են հանդիսանում, խտրականության են ենթարկվում աշխատավայրում, դպրոցում և բնակարանային և առողջապահական ծառայություններից օգտվելու ժամանակ: Որոշ ԼԳԲՏԻ անձինք ոստիկանության ծառայողների կողմից ենթարկվում են ոտնձգության և նույնիսկ բռնության: Այդ ամենի հետևանքով ԼԳԲՏԻ անձինք խուսափում են ատելության հիմքով հանցագործությունների մասին հաղորդել ոստիկանությանը կամ համագործակցեն իրավապահ մարմինների հետ հետաքննության և հնարավոր դատական վարույթի ժամանակ: Ոստիկանություն չդիմելու հիմնական պատճառներից են. տուժողների թերահավատությունը ոստիկանության կողմից իրենց բողոքները լուրջ ընդունելու վերաբերյալ, քանի որ նրանց փորձը հուշում է, որ նման միջադեպերը չափազանց հաճախ են պատահում, և այդ մասին ամեն անգամ հաղորդելն անօգուտ է կամ տուժողները վախենում են հանցագործների կողմից հնարավոր հետևանքներից:

Դա նշանակում է, որ ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունները հետաքննելիս ոստիկանության աշխատակիցները պետք է շատ շրջահայաց լինեն՝ կրկնակի զոհայնացումից խուսափելու համար: Ինչպես իմացանք Մոդուլ 2-ից, պարզ քայլեր ձեռնարկելը՝ ապահովելու, որ ոստիկանության ծառայությունը և անձնակազմը հոգատար են ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ, թույլ կտա բարձրացնել տուժողների վստահությունը հետաքննության և հնարավոր դատական վարույթի ընթացքում:

Այս մոդուլում ուրվագծվում են մարդու իրավունքների չափանիշները, որոնք առավել կարևոր են ոստիկանության ծառայողների համար՝ ԼԳԲՏԻ անձանց դեմ ատելության հիմքով հանցագործությունների

դեմ պայքարի համատեքստում, և այն ներառում է վարժություններ՝ ԼԳԲՏԻ անձանց դեմ ատելության հիմքով հանցագործությունները արդյունավետ հետաքննելիս մարդու իրավունքների չափանիշներով և սկզբունքներով առաջնորդվելու վերաբերյալ: Օժանդակ նյութ 3.3բ-ում համապարփակ դիտարկվում են ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների դեմ իրավապահ մարմինների արդյունավետ պայքարի առանցքային միջազգային չափանիշները:

Հնարավորության դեպքում վերապատրաստման գործընթացում կարելի է ներառել տեղական ՔՀԿ-ների ներկայացուցիչների՝ ելույթով հանդես գալու և ազգային համատեքստում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ խտրականության թեմայով մասնակիցների հետ կառուցողական երկխոսության համար: Այս մոդուլում նաև ներկայացվում են ՔՀԿ-ների հնարավոր աջակցության տարբերակները:

ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Մասնակիցները՝

- Կծանոթանան ԼԳԲՏԻ անձանց և համայնքների նկատմամբ նախապաշարումների, թշնամանքի և խտրականության լայն համատեքստին (գիտելիք), ատելության հիմքով հանցագործությունների մասին հաղորդում տալու հարցում ԼԳԲՏԻ անձանց առջև առկա խոչընդոտներին և ոստիկանության համապատասխան պարտականություններին (հմտություն):
- Ավելի լավ կպատկերացնեն Եվրոպայի խորհրդի և մարդու իրավունքների այլ չափանիշները, որոնք առնչվում են ԼԳԲՏԻ անձանց դեմ ատելության հիմքով հանցագործություններին, ներառյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի առանցքային վճիռներին, և ինչու են դրանք կարևոր իրենց մասնագիտական գործունեության համար (գիտելիք):
- Կտարբերակեն ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների հնարավոր խախտումների ձևերը (հմտություն):
- Կծանոթանան Եվրոպայի խորհրդի և այլ առաջատար միջազգային կառույցների չափանիշներին:

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՏԿԱՑՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԸ

- Վարժություն 3.1 ԼԳԲՏԻ անձանց և համայնքների նկատմամբ խտրականության ավելի լայն համատեքստի մասին պատկերացում (30 րոպե)
- Վարժություն 3.2 ԼԳԲՏԻ համայնքների նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների մասին հաղորդելուն խանգարող հանգամանքների բացահայտում, ՀԻԳ զեկույցի ընթերցում (30 րոպե)
- Վարժություն 3.3 ԵԽ հիմնական չափանիշների, մարդու իրավունքների և ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների այլ չափանիշների և ազգային չափանիշների ուսումնասիրություն, ՄԻԵԴ դատական պրակտիկան և ոստիկանության աշխատանքում դրա կարևորությունը (գիտելիք) (60 րոպե)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3.1 ԼԳԲՏԻ ԱՆՁԱՆՑ և ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԻ ԼԱՅՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԻ ՄԱՍԻՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄ

Պահանջվող նյութեր՝

Ֆլիպչարտի թուղթ, Գրիչներ,
Օժանդակ նյութ 3.1

1. Նախքան դասընթացը, պատրաստեք գրատախտակին ամրացվող երկու ֆլիպչարտի էջ.
   - ԼԳԲՏԻ անձանց նախապաշարումների և խտրականության դրսևորումներ» վերնագրով աղյուսակ չորս սյունակով՝ «Հանրային տարածքներ», «Հանրային ծառայություններ (բնակարան, կրթություն)», «Անձնական (ընտանեկան կյանք)», «Աշխատավայր»: Կարող եք նաև մտավոր քարտեզի տեսքով ուրվագծել կատեգորիաները: Կարևոր է, որ չորս կատեգորիաները հստակ տեսանելի լինեն, և որևէ նոր մտքեր ավելացնելու համար բավարար տեղ լինի:
   - Երկրորդ էջի վրա գրված է «ԼԳԲՏԻ անձանց՝ ոստիկանության հետ առնչվելու փորձառությունը»:

« ԼԳԲՏԻ անձանց նախապաշարումների և խտրականության դրսևորումներ »

Հանրային տարածք (փողոցում, ռեստորաններում/ փաբերում)	Հանրային ծառայություններ (առողջապահություն, բնակարան, կրթություն)	Անձնական (ընտանեկան կյանք)	Աշխատավայր

2. Նախքան դասընթացը, ուսումնասիրեք ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ նախապաշարումների և թշնամական վերաբերմունքի փաստերն այն համատեքստում/երկրում, որտեղ անցկացվում է վերապատրաստման դասընթացը: Օրինակ՝ կարող եք տվյալներ փնտրել TGEU-ի և ILGA-Europe-ի կայքերում: Այդ տեղեկատվության համար կարող եք նաև կապվել տեղական ՔՀԿ-ների հետ (տես ստորև՝ 3.2ա)

3. 5 րոպե նախատեսեք: Ներկայացրեք վարժությունը՝ բացատրելով, որ ԼԳԲՏԻ անձինք իրենց կյանքի շատ ոլորտներում բախվում են նախապաշարումների, թշնամանքի և խտրականության: Տեղեկացրեք մասնակիցներին, որ նրանք կուսումնասիրեն այս երևույթի որոշ օրինակներ վարժության հաջորդ մասում: Բացատրեք, որ կուզենայիք, որ նրանք կիսվեն իրենց պատկերացումներով այն մասին, թե ինչպիսի թշնամանքի և նախապաշարումների են հանդիպում ԼԳԲՏԻ անձինք: Մասնակիցների կողմից ներկայացվող օրինակների վերաբերյալ արձանագրում կատարեք համապատասխան սյունակում: Եթե մասնակիցներից ոչ ոք որևէ առաջարկ չի անում, ինքներդ մեկ կամ երկու առաջարկ արեք, ըստ անհրաժեշտության անդրադառնալով նախորդ քննարկումներին: Ահա մի քանի օրինակներ, որոնք կարող եք ավելացնել սյունակներում:

Հանրային տարածք (փողոցում, ռեստորաններում/ փաբերում)	Հանրային ծառայություններ (առողջապահություն, բնակարան, կրթություն)	Անձնական (ընտանեկան կյանք)	Աշխատավայր
բանավոր վիրավորանք հայացքը հառելով նայել	դպրոցում բուլիինգ ոչ պատշաճ բուժում բուժաշխատողների կողմից տանտիրոջ կողմից անարդարացիորեն վտարում	ընտանեկան տնից դուրս շպրտվելու սպառնալիքներ ընտանիքի անդամների կողմից ֆիզիկական բռնություն և կոպիտ վերաբեմունք	անթույլատրելի կատակներ, անպատշաճ մեկնաբանություններ առաջխաղացումից զրկում

4. Մասնակիցներին բաժանեք 4-5 հոգանոց փոքր խմբերի: Առանձնացրեք այն մասնակիցներին, ովքեր սովորաբար միմյանց հետ են աշխատում և հնարավորության դեպքում յուրաքանչյուր խմբում ապահովեք երկու սեռերի ներկայացուցիչների հավասար թվաքանակ:

5. Յուրաքանչյուր խմբին տրամադրեք օժանդակ նյութ 3.1-ը, խնդրեք նրանց ընթերցել այն և քննարկել մի քանի րոպե: Հիշեցրեք նրանց, որ պատրաստ լինեն աղյուսակում լրացումներ կատարել:

6. Խմբերին հատկացրեք 10-15 րոպե օժանդակ նյութը ընթերցելու և աղյուսակում ավելացնելու կետերը համաձայնեցնելու համար: Ստուգեք, որ հատկացված ժամանակը բավարար է:

7. Խմբերին կրկին միավորեք մեկ խմբում և խնդրեք նրանց աղյուսակում ավելացնել իրենց դիտարկումները: Առաջարկեք նրանց նկարել կամ որևէ այլ կերպ ներկայացնել իրենց դիտարկումները: Խնդրեք մեկնաբանել, թե ինչ են նրանք մտածում ներկայացված մտքերի մասին:

8. Ամփոփեք հետևյալ հիմնական կետերը՝ ԼԲԳՏ անձինք նախապաշարումների և խտրականության են բախվում կյանքի բոլոր ոլորտներում:

9. Այժմ գրատախտակի վրա ամրացրեք երկրորդ թերթիկը՝ «ԼԳԲՏԻ անձանց՝ ոստիկանության հետ առնչվելու փորձառությունը»: Եթե արձագանքել ցանկացողներ չկան, կարող եք առաջարկել հետևյալը.

- Հաղորդված միջադեպերին հետամուտ չլինելը
- Ոստիկանության ծառայողների կողմից ոտնձգության փորձառություն
- Ոստիկանության կողմից խտրական արձագանքի փորձառություն
- Բռնության, ներառյալ ֆիզիկական հարձակումների փորձառություն

10. Եզրափակեք վարժությունը՝ ընդգծելով հիմնական կետերը և բացատրեք, որ խումբն ավելի մանրամասն կուսումնասիրի այս հարցերը հաջորդ վարժության ընթացքում:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹ 3.1 ԼԳԲՏԻ ԱՆՁԱՆՑ և ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԻ ԼԱՅՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԻ ՄԱՍԻՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄ

ԼԳԲՏԻ անձինք թշնամանքի և խտրականության են ենթարկվում իրենց կյանքի բազմաթիվ ոլորտներում: Հոմոֆոբ և տրանսֆոբ բնույթի կատակները շատ տարածված են, և ԼԳԲՏԻ անձանց փողոցում հաճախ են հայացքը հառելով նայում: Այդ ամենը հիմք է հանդիսանում է նրանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների և ատելության շարժառիթովմիջադեպերի համար: Այս փորձառությունը ազդում է նրանց վստահության վրա առ այն, ոստիկանությունը պատշաճ կերպով կարձագանքի ատելության հիմքով հանցագործություններին:

Անդրադառնանք այս գծապատկերին, որը պատրաստվել է Հիմնարար իրավունքների գործակալության կողմից ԼԳԲՏ անձանց վերաբերյալ ԵՄ համապարփակ հետազոտության շրջանակներում:

http://fra.europa.eu/en/publications-and-resources/infographics/eu-lgbt-survey

Ի՞նչ է մեզ հուշում ԼԳԲՏ անձանց նկատմամբ թշնամանքի և նախապաշարումների փորձի մասին այս ակնարկը: Այժմ ծանոթանանք հարցված անձանց մեջբերվող խոսքերին: Ձեր կարծիքով ինչպե՞ս են այդ փորձառություններն ազդում հանրության շրջանում ԼԳԲՏ անձանց անվտանգ և ապահով զգալու և իրենց դեմ ատելության հիմքով հանցագործությունների և միջադեպերի մասին հայտնելու ցանկության վրա:

> «Ես հասկացա, որ լեսբի եմ, երբ 18 տարեկան էի: Բացասական մեկնաբանություններն ու կատակները շփման ընդունված ձև էին և ցանկացած ոք, ով կարծիք էր արտահայտում հոգուտ ԼԳԲՏ իրավունքների (կամ պարզապես հարգալից վերաբերվում), մարգինալացվում և վիրավորանքների էր արժանանում: Խտրականությունն իմ դեպքում երբեք բռնի ֆիզիկական հարձակում չէր նշանակում, այլ բամբասանք, բացառում, կատակներ, հոգեբանական բռնություն, անզորության զգացում, վախ իմ և ինձ շրջապատող մարդկանց համար՝ գործընկերի, ընտանիքի, ընկերների»:
>
> (Իտալիա, լեսբի, 30 տարեկան)

> «Դժվար է պահպանել աշխատանքը Ֆրանսիայում, երբ գործատուն իմանում է, որ դու գեյ ես: Դու անմիջապես համարվում ես փխրուն:»
>
> (Ֆրանսիա, գեյ, 33 տարեկան)

> «Ես 24 տարի աշխատել եմ բանկում և անընդհատ խտրականության եմ ենթարկվել ղեկավարության կողմից: Նրանք կարծում էին, որ քանի որ անկեղծ եմ իմ սեռական կողմնորոշման մասին, ապա չպետք է առաջխաղացում ունենամ, քանի որ չեմ կարողանա վայելել իմ ենթակաների հարգանքը: Մի անգամ նոր աշխատակիցը խնդրեց իր գրասեղանը տեղադրել իմ գրասեղանից «որոշ հեռավորության վրա», քանի որ վախենում էր, որ ես կարող եմ սեռական ոտնձգություն կատարել իր հանդեպ: Նրա պահանջը դիտվեց որպես ողջամիտ և իմ գրասեղանը տեղափոխվեց: Երբ վերջապես իմ պաշտոնը բարձրացրեցին, ինձ ասացին, որ աշխատավայրում չբացահայտեմ իմ սեռական կողմնորոշումը:»
>
> (Հունաստան, գեյ, 53 տարեկան)

> [Ես և իմ կին զուգընկերը] չենք այցելում գիշերային ակումբներ, հիմնականում որովհետև վտանգավոր է երբ դրանք ԼԳԲՏ-ի անձանց նկատմամբ լավ չեն տրամադրված, հատկապես, եթե մենք միայն երկուսով ենք: Մենք չենք բացահայտում մեր հարաբերությունները մեր տանտիրոջը կամ մոտակայքում ապրող մարդկանց:»
>
> (Սլովենիա, լեսբի, 28 տարեկան)

Հարմարեցում ազգային համատեքստին

Առկայության դեպքում ներառեք ազգային որևէ զեկույցից տվյալներ և ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ ուսումնասիրություններից քաղվածքներ: Հստակ նշեք աղբյուրը՝ մանրամասն տեղեկություններով, թե ինչպես մուտք գործել դրան:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3.2 ԼԳԲՏԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴԵԼՈՒՆ ԽԱՆԳԱՐՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ, ՀԻԳ ԶԵԿՈՒՅՑԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Այս վարժությունը նախատեսում է նյութի ընթերցանություն, քննարկում փոքր խմբերում և դասընթացավարի կողմից կազմակերպված քննարկում ընդհանուր խմբում:

Պահանջվող նյութեր՝

Ֆլիպչարտի թուղթ, գրիչներ
Օժանդակ նյութ 3.2

1. Պատրաստեք ֆլիպչարտին ամրացվող երկու էջ: Առաջին էջը վերնագրեք՝ «Ոստիկանությանը չհաղորդելու պատճառները»: Երկրորդ էջը վերնագրեք. «Ի՞նչ է դա նշանակում ոստիկանության համար: Ի՞նչ կարելի է անել»:

2. Մասնակիցներին բաժանեք 4-5 հոգանոց փոքր խմբերի: Առանձնացրեք այն մասնակիցներին, ովքեր սովորաբար միմյանց հետ են աշխատում և հնարավորության դեպքում յուրաքանչյուր խմբում ապահովեք երկու սեռերի ներկայացուցիչների հավասար թվաքանակ:

3. Հատկացրեք նրանց օժանդակ նյութ 3.3-ը և խնդրեք հետևել հրահանգներին: Խմբերինին հատկացրեք 10-15 րոպե՝ ընթերցելու տեքստը և կիսվելու իրենց մտքերով օժանդակ նյութում պարունակվող հարցերի վերաբերյալ:

4. Փոքր խմբերը կրկին միավորեք մեկ խմբում: Խնդրեք մասնակիցներին կիսվել ՀԻԳ-ի զեկույցի վերաբերյալ իրենց մտքերով: Արդյո՞ք նրանց համար անսպասելի էր, թե որքան մեծ է այն մարդկանց տոկոսը, ովքեր չեն հաղորդում ոստիկանություն հանցագործությունների մասին: Որո՞նք են իրենց կարծիքով դրա պատճառները: Արդյո՞ք, մասնակիցները համարում են, որ նույնպիսի վիճակ է նաև իրենց երկրում: Նշեք հիմնական կետերը ֆլիպչարտի վրա:

5. Խմբին հիշեցրեք, որ ՀԻԳ զեկույցը հիմնված է մասնագիտական հետազոտության վրա, որը կարող է կիրառվել այլ համատեքստերում: Եթե մասնակիցները վիճարկում են զեկույցում արտահայտված եզրակացությունները, ընդունեք, որ այն կարող է որոշակի թերություններ պարունակել, սակայն բարձրացնում է կարևոր խնդիրներ, որոնք պետք է լուծվեն՝ հասկանալու համար, թե ինչու ԼԳԲՏԻ անձինք չեն հաղորդում ատելության հիմքով հանցագործությունների մասին: Եթե դուք ունեք նաև տեղական ՔՀԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվություն, օգտագործեք այն ձեր երկրում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների փաստերը և դրանց մասին չհաղորդելու պատճառները լուսաբանելու համար:

6. Այժմ անդրադարձեք ֆլիպչարտի վրա ամրացված երկրորդ էջին և խնդրեք խմբին ներկայացնել, թե ինչ է դա նշանակում ոստիկանության գործու նեության տեսանկյունից:

7. Ավարտեք վարժությունը՝ ամփոփելով ներկայացված հիմնական կետերը: Դրանց կարելի է անդրադառնալ վերապատրաստման հետագա ընթացքում

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3.2Ա ՏԵՂԱԿԱՆ ՔՀԿ-ՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 3.1 և 3.2 ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ԸՍՏ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ)

Տեղական և ազգային ՔՀԿ ներգրավվածությունը 3.1 և 3.2 վարժությունների իրականացմանը մեծապես կբարելավի մասնակիցների իրազեկվածությունն ուսումնասիրվող հարցերում: Մտածեք ՔՀԿ-ների ներգրավման հնարավորության մասին ԼԳԲՏԻ անձանց և համայնքների նկատմամբ նախապաշարումների և խտրականության ավելի լայն համատեքստում, ինչպես նաև ԼԳԲՏԻ համայնքների կողմից ատելության հիմքով հանցագործությունների մասին հաղորդելու կոնկրետ խոչընդոտների ներկայացման աշխատանքում: ՔՀԿ-ի ներկայացուցիչ(ներ)ը կարող է(են) նաև օժանդակել խմբային քննարկումներին և քննարկմանը ավելացնել իրենց մոտ առկա կոնկրետ տեղեկատվությունն ու տվյալները: Այս հարցերն ավելի խորը քննարկվում են հինգերորդ մոդուլում:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹ 3.2: ԼԳԲՏԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՌՋԵՎԾԱՌԱՅԱԾ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՏԱԼՈՒ ԿՈՆԿՐԵՏ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ, ՀԻԳ ՁԵԿՈՒՅՑԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ

1. Մի քանի րոպե հատկացրեք ծանոթանալու ԵՄ Հիմնարար իրավունքների գործակալության կողմից 2013թ. հրապարակված ԵՄ ԼԳԲՏ հետազոտություն՝«Եվրոպական միությունում լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր անձանց հետազոտություն՝ հիմնական արդյունքները» լեսբի զեկույցի 2.3 բաժնին՝ «Ատելության հիմքով բռնության մասին հաղորդելը»:

Զեկույցում ներկայացված է ատելության հիմքով հանցագործությունների մասին ոստիկանությանը հաղորդող տուժողների տոկոսային կշիռը, և նշվում են այն պատճառները, թե ինչու տուժողները հաճախ չեն հաղորդում ոստիկանությանը ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների մասին:

2. Այժմ անդրադարձեք հետևյալ նյութին՝

www.ilga-europe.org/sites/default/files/womens_experience_of_homophobia_and_transphobia.pdf

Այստեղ ներկայացված են ԼԳԲՏԻ անձանց դեմ ատելության հիմքով հանցագործությունների հետևանքները, հատկապես կանանց վրա, և ցույց է տրվում, որ ԼԳԲՏ կանայք ավելի հազվադեպ են հայտնում ատելության հիմքով հանցագործությունների մասին: Նշվում է նաև, որ փոքրամասնությունների խմբերի կանայք ավելի հաճախ են ենթարկվում բռնության:

3. Այս վարժությունն ավարտելուց հետո քննարկում կազմակերպեք խմբում:

4. Որքա՞ն է ՀԻԳ-ի զեկույցում նշված անձանց տոկոսային կշիռը, որոնք ոստիկանությանը հաղորդել են ատելության հիմքով ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ հանցագործությունների մասին:

5. Որո՞նք են տուժողների կողմից այդ մասին ոստիկանությանը չհայտնելու հիմնական պատճառները:

Ի՞ՆՉ Է ԴԱ ՆՇԱՆԱԿՈՒՄ ՁԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Փոքր խմբի ներսում համաձայնեցրեք ամփոփ եզրակացությունները, որոնցով նրանք կարող են կիսվել այլ մասնակիցների հետ ընդհանուր խումբ վերադառնալիս:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3.3 ԵԽ ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ԼԳԲՏԻ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՅԼ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ, ՄԻԵԴ-Ի ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ ԵՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ԴՐԱ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Այս վարժությունն ընդգծում է մարդու իրավունքների ոլորտում պարտավորությունների կարևորությունը ոստիկանական պրակտիկայում: Այն սկսվում է հիմնաբառերով, որոնք հետագայում բացատրվում են *«Identoba-ն ընդդեմ Վրաստանի»* ՄԻԵԴ-ի գործնական օրինակով:

Պահանջվող նյութեր՝

Քարտեր/ A4 թուղթ
ֆլիպչարտ, թուղթ և գրիչներ,
Օժանդակ նյութ 3.3ա
Օժանդակ նյութ 3.3բ

Դասընթացավարի ուղեցույց

Այս դասընթացը պատրաստելիս ուշադիր ծանոթացեք օժանդակ նյութ 3.3բ-ին, որը մանրամասն տեղեկատվություն է պարունակում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան վճիռների, Եվրոպայի խորհրդի չափանիշների և այլ միջազգային չափանիշների մասին: Այդ առումով հատկապես կարևոր են ՄԻԵԴ վճիռները:

1. Դասընթացից առաջ քարտի կամ թղթի վրա գրեք հետևյալ եզրույթները.
   - *Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդված*
   - *Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդված*
   - *Պոզիտիվ պարտավորություն*
   - *Ընթացակարգային պարտավորություն*
   - *Հոմոֆոբ շարժառիթների քողազերծում*

Այնուհետև գրեք յուրաքանչյուր եզրույթը թղթի մեկ էջի վրա և դասավորեք դրանք լսարանում:

2. Վարժության սկզբում բաժանեք գրված եզրույթներով էջերը: Բացատրեք, որ այդ եզրույթներն ու արտահայտություններն առանցքային դեր են խաղում ոստիկանության աշխատանքում մարդու իրավունքներով առաջնորդվելիս:

3. Խնդրեք մասնակիցներին ընթերցել եզրույթները և նշել, թե իրենց կարծիքով ինչ են դրանք արտահայտում: Բացատրեք, որ այս պահին ձեզ հետաքրքրում է ոչ թե անթերի պատասխանը, այլ ուղղակի անհատական մտքերը: Խնդրեք մասնակիցներից որևէ մեկին գրատախտակի վրա գրել մասնակիցների առաջարկությունները: Կարճ քննարկեք յուրաքանչյուր եզրույթը, առանց ներկայացնելու դրա սահմանումը: Բացատրեք, որ դուք կանդրադառնաք այդ հարցին դասընթացի վերջում:

4. Այժմ բաժանեք Օժանդակ նյութ 3.3-ը, որտեղ ներկայացված է «Identoba-ն ընդդեմ Վրաստանի» դատական գործի ամփոփագիրը: Բացատրեք, որ թեև ամփոփագրում ներկայացված բոլոր տեղեկությունները ճշգրիտ են, սակայն նպատակը գործի փաստերի, Վրաստանի օրենքների կամ Դատարանի կողմից դիտարկված օրենքների (օրենքների) սպառիչ նկարագրությունը չէ: Նպատակը պրակտիկ օրինակի դիտարկումն է, որը տեղի է ունեցել Վրաստանում, և մարդու իրավունքների ընդհանուր սկզբունքների ներկայացնելը, որոնք վերաբերում են ոստիկանության բոլոր ծառայողներին:

5. Մասնակիցներին հատկացրեք 5-7 րոպե օժանդակ նյութ 3.3-ին ծանոթանալու համար: Խնդրեք նրանց ուշադրություն դարձնել այն եզրույթներին, որոնք դուք քննարկել եք խմբի հետ միասին և կրկին անդրադառնալ սահմանումներին:

6. Այժմ նախաձեռնեք քննարկում ընդհանուր խմբում: Վերադարձեք այն սահմանումներին և եզրույթներին, որոնք դուք ներկայացրել եք դասընթացի սկզբում: Սկսեք Կոնվենցիայի 3-րդ հոդվածից: Հարցրեք մասնակիցներին՝ արդյո՞ք նրանք համաձայն են սահմանման հետ և արդյոք նրանք որևէ բան կավելացնեն դրան: Հարցրեք նրանց, ինչ է այն նշանակում իրենց ամենօրյա աշխատանքի տեսանկյունից:

7. Այժմ անդրադարձեք «պոզիտիվ պարտավորություն» սահմանմանը: Հարցրեք խմբին, թե ինչ է դա նշանակում և արդյոք նրանք որևէ լրացուցիչ բան կավելացնեն սահմանմանը: 3-րդ հոդվածի իմաստը քննարկելիս որպես հիմք ընդունեք հետևյալ փորձագիտական կարծիքը.

Պոզիտիվ պարտավորությունը, որը սահմանում է 3-րդ հոդվածը, նշանակում է, որ պետությունները պետք է ձեռնարկեն ինչպես կանխարգելիչ, այնպես էլ հետաքննական գործողություններ՝ անհատների նկատմամբ ցանկացած վատ վերաբերմունքի առնչությամբ: Դա նշանակում է, որ պետությունները պետք է ապահովեն անհատի կամ անհատների արդյունավետ պաշտպանությունը երրորդ կողմի հանցավոր արարքներից, ինչպես նաև ողջամիտ քայլեր ձեռնարկեն կանխելու այն վատ վերաբերմունքը, որի մասին իշխանություններին հայտնի է կամ պետք է հայտնի լիներ: Բացի այդ, պետությունները պետք է արդյունավետ պաշտոնական հետաքննություն անցկացնեն ենթադրյալ վատվերաբերմունքի վերաբերյալ, նույնիսկ եթե այդպիսի վերաբերմունքը ցուցաբերվել է մասնավոր անձանց կողմից:

Բացատրեք, որ պետության նման պարտավորություններ արդեն գոյություն ունեն ռասայական, էթնիկական և կրոնական պատկանելության հիման վրա:

8. Այժմ անդրադարձեք **14-րդ հոդվածին**: Հարցրեք՝ արդյո՞ք մասնակիցները որևէ բան կավելացնեն իրենց սահմանմանը: Քննարկման ընթացքում հիմնվեք հետևյալ սահմանման վրա. Կոնվենցիայով սահմանված իրավունքներից և ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խտրականության ՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ կարգավիճակից:

9. Այժմ անցեք **«կողմնակալության շարժառիթների քողազերծում»** եզրին և այն, թե դա ինչ է նշանակում ոստիկանական պրակտիկայի համար: Հիշեցրեք մասնակիցներին, որ կանդրադառնաք դրան, երբ կդիտարկեք կողմնակալության ցուցիչները, բացատրեք, թե դա ինչ է նշանակում ոստիկանական պրակտիկայի, արձանագրությունների և ուսուցման համար, և որ դա այս դասընթացը վարելու հիմնական պատճառներից մեկն է: Այդ հարցը քննարկելիս հիմք ընդունեք հետևյալ փորձագիտական կարծիքը.

*Ոստիկանության պրակտիկա. «Կարևոր էր, որ համապատասխան ներպետական մարմինները հետաքննություն վարեին [...]՝ ձեռնարկելով բոլոր ողջամիտ քայլերը՝ խնդրո առարկա իրադարձությունների համար հնարավոր հոմոֆոբ շարժառիթների դերը **քողազերծելու** նպատակով: Հարձակման պատճառը հանդիսացող խտրականության արդյունավետ հետաքննություն անցկացնելն անհրաժեշտ էր՝ հաշվի առնելով, մի կողմից, թշնամանքը ԼԳԲՏ համայնքի դեմ, իսկ մյուս կողմից՝ միջադեպի ժամանակ հարձակվողների կողմից հնչեցրած ակնհայտ հոմոֆոբ ատելության խոսքը: Դատարանը գտնում է, որ առանց իրավապահ մարմինների կողմից նման խիստ մոտեցման, նախապաշարումով պայմանավորված հանցագործություններն անխուսափելիորեն կդիտարկվեն նման երանգավորում չունեցող սովորական գործերի հետ հավասար հիմունքներով, իսկ դրա արդյունքում ցուցաբերած անտարբերությունը հավասարազոր կլիներ ատելության հիմքով հանցագործությունների նկատմամբ պաշտոնական հանդուրժողականությանը կամ նույնիսկ թողտվությանը:» (կետ 77):*

10. Ի վերջո, անցեք ընթացակարգային պարտավորությունների քննարկմանը: Հարցրեք մասնակիցներին, թե ինչ է դա նշանակում իրենց ամենօրյա աշխատանքում: Հստակեցրեք, որ, երբ առկա են հասարակության մեջ հոմոֆոբիայի դրսևորումների մասին փաստեր, և ինչ-որ մեկը սեռական կողմնորոշման հիման վրա ենթարկվում է զոհայնացման (վիկտիմիզացիայի), ոստիկանությունը պարտավոր է հետաքննել այդ երևույթը, և սա մարդու իրավունքների ոլորտում նրանց պարտավորությունների ընթացակարգային տարրն է: Այդ հարցը քննարկելիս հիմք ընդունեք հետևյալ փորձագիտական կարծիքը.

«Դատարանի ձևակերպումները չափազանց հստակ են և հզոր ուղերձ են հղում բոլոր պայմանավորվող պետություններին՝ երբ հասարակության մեջ կա բացասական վերաբերմունք սեռական փոքրամասնությունների նկատմամբ և առկա է հոմոֆոբ բռնության հավանականություն, ապա իրավապահ մարմինները կրում են ԼԳԲՏ անձանց պաշտպանելու «անհերքելի պոզիտիվ պարտավորություն» (կետ 80): Ավելին, պետություններն ունեն ընթացակարգային պարտավորություն՝ հետաքննելու հոմոֆոբ ատելությունը «առանձնահատուկ շեշտադրելով կողմնակալ շարժառիթը քողազերծելը» (կետ 80): Ինչպես Դատարանն արձանագրեց, եթե պետությունները նման գործողություններ չձեռնարկեն, ապա «դժվար կլինի [...] ապագայում իրականացնել միջոցառումներ, որոնք ուղղված են խաղաղ հավաքների ոստիկանական հսկողության բարելավմանը (կետ 80)[41]:

11. Վերջում, բաժանեք օժանդակ նյութ 3.3բ-ն և մասնակիցների ուշադրությունը հրավիրեք Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների և այլ համապատասխան միջազգային չափանիշների վերաբերյալ մանրամասն տեղեկատվության վրա: Ընդգծեք, որ դրանք կարևոր ռեսուրս են իրենց աշխատանքում:

41. http://echrso.blogspot.co.uk/2015/05/the-judgment-in-identoba-and-others-v.htm

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹ 3.3Ա *IDENTOBA*-Ն ԸՆԴԴԵՄ ՎՐԱՍՏԱՆԻ ՄԻԵԴ-Ի ԳՈՐԾԻ ԱՄՓՈՓ ԴԻՏԱՐԿՈՒՄ

Այս օժանդակ նյութում ամփոփ ներկայացվում է Identoba-ն ընդդեմ Վրաստանի գործը: Գործի մանրամասների համար այցելեք ՄԻԵԴ կայք՝ goo.gl/ddlwPG:

Գործի նախապատմությունը

Ի՞նչ էր տեղի ունեցել

Identoba-ին Վրաստանի իշխանությունները թույլտվություն էին տվել 2012 թվականի մայիսի 17-ին Թբիլիսիի կենտրոնում կազմակերպել Հոմոֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրվան նվիրված խաղաղ երթ: Իշխանությունները հաստատել էին, որ «կտեղակայվեն ոստիկանական ուժեր՝ ապահովելու, որ երթն անցնի խաղաղ»:

Այդ օրը ԼԳԲՏ երթի մասնակիցները բախվեցին «հարյուր կամ ավելի հակացուցարարների, որոնք շատ ագրեսիվ էին տրամադրված և անձնական վիրավորանքներ էին հնչեցնում նրանց հանդեպ»: Ագրեսիան սաստկացավ այնքան, որ պաստառներ խլվեցին երթի մասնակցիների ձեռքերից և պատռվեցին, նրանց հրում և բռունցքով հարվածներ էին հասցնում, առնվազն մեկ անձի տապալեցին գետնին և ոտքերով հարվածներ հասցրեցին: Երթի մի քանի մասնակիցներ մարմնական վնասվածքներ էին ստացել: Կոնկրետ սպառնալիքներ էին հնչել, որ երթի մասնակիցներին «պետք է կենդանի այրել և գլուխները ջարդել»:

Երբ հակացուցարարները հարձակվեցին երթի մասնակիցների վրա, ոստիկանները «հանկարծակի հեռացան դեպքի վայրից»: Դեպքի վայրում գտնվող ոստիկանության մյուս ծառայողները հայտնեցին ԼԳԲՏ երթի մասնակիցներին, որ միջամտելն իրենց պարտականությունը չէ, քանի որ նրանք ոստիկանության պարեկային ծառայության մաս չեն կազմում: Երթի մասնակիցներից ահազանգեր ստանալուց հետո ժամանեցին լրացուցիչ ոստիկանական ուժեր, որոնք միջամտեցին՝ ծեծը դադարեցնելով, սակայն սպառնալիքները շարունակում էին հնչել: ԼԳԲՏ երթի մասնակիցներից մի քանիսը ոստիկանների կողմից ձերբակալվեցին: Դատարանի վճռի համաձայն՝ դրա նպատակն էր «կանխել նրանց կողմից վարչական խախտում կտարելը, այն է՝ երթևեկությանը խոչընդոտելուն, ինչպես նաև պաշտպանել հակացուցարարների հարձակումից»:

Դեպքից հետո

Դիմումատուները մի քանի մանրամասն գանգատ ներկայացրեցին՝ կապված իրենց նկատմամբ բռնության և ոստիկանության կողմից պաշտպանության բացակայության հետ (տե՛ս 20-28 կետերը):

ՄԻԵԴ-ի որոշումը

Հոմոֆոբիայի և թշնամանքի համատեքստը

Դատարանը՝ կայացնելով հօգուտ դիմումատուների վճիռը, հիմնվել է Վրաստանում ԼԳԲՏ անձանց նկատմամբ հոմոֆոբիայի և բացասական վերաբերմունքի մասին փաստերի վրա: Այդ փաստերը ամփոփվել էին Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարի Վրաստան կատարած այցի արդյունքում, ինչպես նաև առկա էին լեսբիների, գեյերի, բիսեքսուալների, տրանս և ինտերսեքս անձանց միջազգային ասոցիացիայի եվրոպական բաժանմունքի (ILGA-Europe) զեկույցներում: Դատարանը արձանագրել էր, որ «վրացական հասարակության որոշ հատվածներում» բացասական վերաբերմունքի համատեքստը առանձնապես ակնհայտ էր դարձրել «2012 թվականի մայիսի 17-ի միջադեպի խտրական երանգավորումը և դիմումատուների խոցելիության մակարդակը, ովքեր հրապարակայնորեն ներկայացրել էին իրենց որպես սեռական նախապաշարումների թիրախային խմբի անդամներ (կետ 68): Այդ ամենը, երթի ընթացքում ոստիկանության կողմից աջակցություն չցուցաբերելու հետ միասին, Դատարանին հանգեցրեց հետևյալ եզրակացության «դիմումատուների նկատմամբ վերաբերմունքը անշուշտ նրանց մոտ պետք է առաջացներ վախի, **տագնապների և անապահովության զգացում, որն անհամատեղելի էր նրանց մարդկային արժանապատվության նկատմամբ հարգանքի սկզբունքի հետ և Կոնվենցիայի 14-րդ հոդվածի համակցությամբ 3-րդ հոդվածի իմաստով հատել էր ծանրության շեմը»:**

Ոստիկանությունը չէր պաշտպանել

Երկրորդ, Դատարանը գտավ, որ ներպետական իշխանությունները գիտեին կամ պետք է իմանային այդ իրադարձության հետ կապված ռիսկերի մասին, «և հետևաբար պարտավոր էին ապահովել **ուժեղացված** պետական պաշտպանություն» (կետ 72): Սակայն, այն եզրակացրեց, որ ոստիկանությունը «չի ապահովել տասներեք անհատ դիմումատուների պատշաճպաշտպանությունը մասնավոր անձանց կողմից կողմակալ շարժառիթով պայմանավորված հարձակումներից 2012 թվականի մայիսի 17-ի երթի ընթացքում մասնավոր անձանց նկատմամբ կողմնակալ շարժառիթով հարձակումներից» (կետ 74):

Արդյունավետ հետաքննության բացակայություն

Թեև հանցագործները արձանագրվել էին տեսանյութում, և տուժողները վնասվածքներ էին ստացել, իշխանությունները «անբացատրելիորեն նեղացրել էին քննության շրջանակը և բացել երկու առանձին և միմյանցից անջատված գործ՝ կապված միայն երկու դիմումատուների ֆիզիկական վնասվածքների հետ» (պարբերություն 75): Բացի այդ, հետաքննությունը տևել էր ավելի քան երկու տարի, և վճիռը կայացնելու պահին մեղադրյալներին միայն փոքր վարչական տույժեր էին նշանակվել:

Իշխանությունները չէին նախաձեռնել **ատելության հիմքով հանցագործության քննություն** և չէին կիրառել ատելության հիմքով հանցագործությունների մասին Վրաստանի գործող օրենքները: Նկատի ունենալով գործի հանգամանքները և այն փաստը, որ Վրաստանում գործում է ատելության հողի վրա հանցագործությունների մասին օրենսդրություն, Դատարանն արձանագրեց.

> «Կարևոր էր, որ համապատասխան ներպետական մարմինները հետաքննություն վարեին [...]՝ ձեռնարկելով բոլոր ողջամիտ քայլերը՝ խնդրո առարկա իրադարձությունների համար **հնարավոր հոմոֆոբ շարժառիթների դերը քողազերծելու նպատակով**: Հարձակման պատճառը հանդիսացող խտրականության արդյունավետ հետաքննություն անցկացնելն անհրաժեշտ էր՝ հաշվի առնելով, մի կողմից, թշնամանքը ԼԳԲՏ համայնքի դեմ, իսկ մյուս կողմից՝ միջադեպի ժամանակ հարձակվողների կողմից հնչեցրած ակնհայտ հոմոֆոբ ատելության խոսքը: **Դատարանը գտնում է, որ առանց իրավապահ մարմինների կողմից նման խիստ մոտեցման, նախապաշարումով պայմանավորված հանցագործություններն անխուսափելիորեն կդիտարկվեն նման երանգավորում չունեցող սովորական գործերի հետ հավասար հիմունքներով, իսկ դրա արդյունքում ցուցաբերած անտարբերությունը հավասարազոր կլիներ ատելության հիմքով հանցագործությունների նկատմամբ պաշտոնական հանդուրժողականությանը կամ նույնիսկ թողտվությանը:»**

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹ 3.3Բ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՉԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՈՐՄԵՐԸ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Եվրոպայի խորհրդի չափանիշները

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի փաստաթերթերը

Այս գործիքները միավորում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գործերն ու վճիռները, որոնք ներառում են Կոնվենցիայի բոլոր կողմերը: Առավել համապատասխան փաստաթերթերն ամփոփված են ստորև:

«Սեռական կողմնորոշման հարցեր»[42]

Այս փաստաթերթն տրամադրում է Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում ԼԳԲՏԻ համայնքների դեմ ատելության հիմքով հանցագործությունների և ատելության խոսքի դեպքերի առնչությամբ քրեական արդարադատության արձագանքի բոլոր գործերի ակնարկ: Լրացուցիչ տեղեկություններ են տրվում Identoba-ն ընդդեմ Վրաստանի և M.C.-ն և C.A.-ն ընդդեմ Ռումինիայի գործերով, որոնք դիտարկվում են ձեռնարկի երրորդ և հինգերորդ մոդուլներում: Բացի այդ, հակիրճ ներկայացվում են Վրաստանի և Խորվաթիայի դեմ երկու ընթացիկ գործերի փաստական հանգամանքները:

«Նույնասեռականություն՝ քրեական ասպեկտներ»[43]

Այս փաստաթերթը ներկայացնում է դիմումատուների կողմից հարուցված գործերի արդյունքները, որոնցում վերջիններս պնդում են, որ պետությունը խտրական վերաբերմունք է դրսևորում նույնասեռականների միջև սեռական հարաբերությունների հարցում՝ համեմատած հետերոսեքսուալ անձանց հետ: Այս գործերը կրկին ցույց են տալիս ԼԳԲՏԻ անձանց խնդիրները, որոնց հաճախ վերաբերվում են որպես կասկածյալների և իրավախախտների, այլ ոչ թե ատելության հիմքով հանցագործությունների և այլ հանցագործությունների թիրախը դառնալու ռիսկի տակ գտնվող անձանց:

«Գենդերային ինքնության հարցեր»[44]

Թեև այս փաստաթերթը չի վերաբերում ատելության հիմքով հանցագործությունների գործերին կամ ոստիկանության ծառայողների կողմից ԼԳԲՏԻ անձանց վերաբերմունքին, սակայն նրանում ամփոփած դատավճիռներն անդրադառնում են տրանսգենդեր անձանց՝ իրենց գենդերային ինքնության իրավական և սոցիալական ճանաչման պայքարին: Ինչպես ներկայացվում է այս մոդուլում, կարևոր է հասկանալ ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ խտրականության համատեքստը, քանի որ դա կարող է խաթարել ոստիկանությանը միջադեպերի մասին հաղորդելու նրանց վստահությունը և նրանց հավատը, որ նման միջադեպերը արդյունավետ կհետաքննվեն:

Նախարարների կոմիտեի CM/Rec(2001)10 հանձնարարականը ոստիկանության էթիկայի եվրոպական կանոնագրքի մասին[45] հիմնական քաղվածքների ամփոփում

Նույնիսկ հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների առկա ոստիկանական ծառայությունների և հաստատությունների բազմազանությունը, Նախարարների կոմիտեն ընդունում է, որ գոյություն ունի էթիկայի կանոնների մի շարք, որը պետք է ընդհանուր լինի բոլոր ծառայությունների համար: Կանոնագիրքը սահմանում է մանրամասն չափանիշներ, որոնց պետք է հետևեն ոստիկանության ծառայողներն իրենց հիմնական գործառույթներն իրականացնելիս, ինչպես նշված է ստորև.

1. Օրենքի գերակայությամբ կառավարվող ժողովրդավարական հասարակության մեջ ոստիկանության հիմնական նպատակներն են.
   - պահպանել հասարակական անդորրը, օրենքն ու կարգը.
   - պաշտպանել և հարգել մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները, որոնք ամրագրված են, մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով.
   - կանխարգելել և պայքարել հանցավորության դեմ.
   - բացահայտել հանցագործությունները.
   - տրամադրել օգնության և սպասարկման գործառույթներ հանրությանը:

42. www.echr.coe.int/documents/fs_sexual_orientation_eng.pdf
43. www.echr.coe.int/Documents/FS_Homosexuality_ENG.pdf
44. http://www.echr.coe.int/Documents/FS_Gender_identity_ENG.pdf
45. www.refworld.org/docid/43f5c7944.html

Ոստիկանության ծառայողների վերապատրաստման համատեքստում հստակ կապ կա այս նպատակներից յուրաքանչյուրի և ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների դեմ ոստիկանության՝ արդյունավետ, արդար և անվտանգ պայքարի միջև: Ոստիկանության պարտավորությունները՝ «արդար կերպով կատարելու իրենց առջև դրված խնդիրները, առաջնորդվելով, մասնավորապես, անկողմնակալության և խտրականության բացառման սկզբունքներով», ընդգծվում են ամբողջ Կանոնագրքում, այդ թվում՝ տուժողներին աջակցության և օգնության, ոստիկանական ծառայությունների շրջանակներում խտրականությունից զերծ մնալու և անհատական իրավունքների հարգման մշակույթի ձևավորման և հատկապես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի պահպանման և Կոնվենցիայով ամրագրված իրավունքների նկատմամբ խտրականության ընդհանուր արգելքի հետ կապված:

Նախարարների կոմիտեի CM/Rec(2010)5 հանձնարարականը անդամ պետություններին սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիման վրա խտրականության դեմ պայքարի միջոցների վերաբերյալ[46]

Այս հանձնարարականն ընդգծում է Կոնվենցիայի ամենակարևոր հոդվածները և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հիմնական եզրակացությունները, որոնք վերաբերում են ԼԳԲՏԻ անձանց վերաբերող խնդիրներին: Դրանք ներառում են ԼԳԲՏԻ անձանց դեմ ատելության հիմքով հանցագործությունների արդյունավետ հետաքննության կարևորությունը, համապատասխան և արդյունավետ օրենքները, որոնք թույլ են տալիս դատարանին հաշվի առնել ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ կողմնակալ շարժառիթները, արտահայտվելու և հավաքների ազատության իրավունքի պաշտպանությունը, հատկապես հավաքների ազատության իրավունքն իրականացնելիս պաշտպանության իրավունքը:

Համապատասխան հոդվածները ներկայացված են ստորև:

> «1. Անդամ պետությունները պետք է ապահովեն ենթադրյալ հանցագործությունների և այլ միջադեպերի դեպքերի արդյունավետ, անհապաղ և անկողմնակալ հետաքննություն, երբ առկա են ողջամիտ կասկածներ, որ հանցագործի շարժառիթը տուժողի սեռական կողմնորոշումն է կամ գենդերային ինքնությունը: Նրանք պետք է նաև ապահովեն, որ հատուկ ուշադրություն դարձվի նման հանցագործությունների և միջադեպերի քննությանը, երբ դրանք ենթադրաբար կատարվել են իրավապահ մարմինների պաշտոնյաների կամ պաշտոնական կարգավիճակով գործող այլ անձանց կողմից, և որ նման արարքների համար պատասխանատու անձինք արդյունավետորեն ենթարկվեն արդարադատության և, անհրաժեշտության դեպքում, պատժվեն՝ անպատժելիությունից խուսափելու համար:
>
> 2. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ պատժամիջոցներ սահմանելիս սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հետ կապված կողմնակալ շարժառիթը կարող է հաշվի առնվել որպես ծանրացուցիչ հանգամանք:
>
> 13. Անդամ պետությունները պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու համար, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն, արտահայտման ազատության իրավունքը կարող է արդյունավետորեն իրացվել՝ առանց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության, այդ թվում՝ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնությանն առնչվող հարցերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու և տարածելու ազատության առումով:
>
> 14. Անդամ պետությունները պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեն ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում՝ ապահովելու, որ խաղաղ հավաքների ազատության իրավունքը, ինչպես ամրագրված է Կոնվենցիայի 11-րդ հոդվածում, արդյունավետորեն կիրառվի՝ առանց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության:
>
> 15. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ իրավապահ մարմինները համապատասխան միջոցներ ձեռնարկեն՝ պաշտպանելու հանուն լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր անձանց մարդու իրավունքների խաղաղ ցույցերի մասնակիցներին՝ իրենց արտահայտման ազատության և խաղաղ հավաքների իրավունքի արդյունավետ իրացումը ապօրինաբար խաթարելու կամ խոչընդոտելու ցանկացած փորձից:
>
> 17. Բոլոր մակարդակների պետական մարմինները պետք է խրախուսվեն հրապարակայնորեն դատապարտելու, հատկապես ԶԼՄ-ներում, ցանկացած ապօրինի միջամտություն անհատների և անհատների խմբերի նկատմամբ՝ իրենց արտահայտվելու և խաղաղ հավաքների ազատությունն իրականացնելու իրավունքին, հատկապես երբ դա առնչվում է լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր անձանց մարդու իրավունքներին:»:

46. www.coe.int/en/web/sogi/rec-2010-5

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 1728 բանաձև (2010) Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության մասին[47]

Սույն բանաձևը նկարագրում և ճանաչում է ԼԳԲՏ անձանց նկատմամբ կիրառվող խտրականության շրջանակը, ներառյալ ատելության հիմքով հանցագործությունները և ատելության խոսքը: Այն կարևոր լրացում է՝ վերը ներկայացված սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիման վրա խտրականության դեմ պայքարի միջոցների վերաբերյալ Նախարարների կոմիտեի CM/Rec(2010)5 հանձնարարականին ուղղված անդամ պետություններին: Բանաձևը կոչ է անում Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին «ապահովել, որ ԼԳԲՏ անձանց հիմնարար իրավունքները, ներառյալ արտահայտվելու և հավաքների և միավորումների ազատությունը, հարգվեն՝ մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համապատասխան» և «Տուժողների համար ապահովել իրավական պաշտպանության միջոցներ և վերջ դնել այն անձանց անպատժելիությանը, ովքեր խախտում են ԼԳԲՏ անձանց հիմնարար իրավունքները, մասնավորապես նրանց կյանքի և անվտանգության իրավունքը»:

Բանաձևը նաև կոչ է անում Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին «դատապարտել ատելության խոսքը և խտրական հայտարարությունները և արդյունավետորեն պաշտպանել ԼԳԲՏ անձանց նման հայտարարություններից՝ հարգելով արտահայտման ազատության իրավունքը՝ համաձայն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկայի» և «ընդունել և կիրառել հակախտրականության օրենսդրություն, որը սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը ներառում է խտրականության արգելված հիմքերի թվում, ինչպես նաև սահմանել օրինախախտումների համար պատժամիջոցներ»:

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա[48]

Կոնվենցիան, որը նաև հայտնի է որպես Ստամբուլյան կոնվենցիա սահմանում է կանխարգելման, պաշտպանության, քննության և դատապարտման հետ կապված իրավաբանորեն պարտադիր պարտավորություններ: Թեև կանանց նկատմամբ բռնությունը և ընտանեկան բռնությունը դուրս են այս ձեռնարկի շրջանակներից, կարևոր է նկատի ունենալ, որ ԼԳԲՏԻ անձինք նույնպես կարող են ենթարկվել այդ տեսակի բռնության: Ավելին, տանը ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ նպատակաուղղված բռնության որոշ դեպքեր կարելի է համարել և ընկալել և՛ որպես ատելության հիմքով հանցագործություն, և՛ ընտանեկան բռնություն: Դասընթացավարի համար կարևոր է անդրադառնալ այս հարցին քննարկումների ժամանակ և մասնակիցներին հարցնել բարձրացված խնդիրների մասին, երբ խոսքը գնում է այն մասին, թե ինչպես է ընտանեկան բռնությունը և գենդերային հիմքով բռնությունը փոխկապակցված ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործություններ հետ:

Կոնվենցիան ներառում է խտրականության արգելման մասին դրույթ, որը նախատեսում է, որ տուժողները չպետք է խտրականության ենթարկվեն գենդերային ինքնության կամ սեռական կողմնորոշման հիմքով: Լրացուցիչ նկարագրության և տեղեկատվության համար տե՛ս բացատրական նշումները[49] և Transgender Europe-ի կողմից տրամադրված վերլուծությունը[50]:

Մարդու իրավունքների այլ միջազգային չափանիշներ

2016 թվականի հունիսի 30-ին Մարդու իրավունքների խորհրդի կողմից ընդունված 32/2 բանաձև. Պաշտպանություն սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով բռնությունից և խտրականությունից[51]

Այս բանաձևը «խստորեն դատապարտում է բռնության և խտրականության դրսևորումները աշխարհի բոլոր տարածաշրջաններում, որոնք իրականացվել են անհատների նկատմամբ նրանց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության պատճառով»: Բանաձևը ստորագրած կողմերը նաև երեք տարի ժամկետով նշանակել են Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով բռնության և խտրականության գծով անկախ փորձագետի: Փորձագետն ունի մի շարք գործառույթներ, այդ թվում՝ գնահատում է մարդու իրավունքների համապատասխան չափանիշների կատարումը, անդամ երկրներին տեխնիկական աջակցություն է տրամադրում, երկխոսություն է վարում պետական մարմինների հետ և նրանց առաջընթացի մասին զեկուցում Մարդու իրավունքների խորհրդին:

47. http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-EN.asp?fileid=17853&lang=en
48. www.coe.int/en/web/istanbul-convention/about-the-convention
49. www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/treaty/210
50. http://tgeu.org/protection-of-trans-people-under-the-istanbul-convention/
51. www.un.org/en/ga/search/view_doc.asp?symbol=A/HRC/RES/32/2

Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հետ կապված ՄԱԿ-ի այլ չափանիշներին ծանոթանալու համար ուսումնասիրեք ՄԱԿ-ի սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության (SOGI) տվյալների շտեմարանը[52]:

Եվրոպական միության 2012/29/ԵՄ հրահանգ հանցագործության տուժողների իրավունքների, աջակցության և պաշտպանության նվազագույն չափորոշիչների սահմանման մասին[53].

Այս Հրահանգն ընդունվել է 2012 թվականի հոկտեմբերի 25-ին և ուժի մեջ է մտել 2012 թվականի նոյեմբերի 15-ին: Եվրամիության անդամ երկրները պետք է մինչև 2015 թվականի նոյեմբերի 16-ը ներառեն դրա դրույթները իրենց ներպետական օրենսդրության մեջ: Հրահանգը վերաբերում է հանցագործությունների բոլոր տուժողներինև հատուկ անդրադառնում է ատելության հիմքով հանցագործությունների տուժողներին, ներառյալ ԼԳԲՏԻ անձանց: Այն հատուկ պարտավորություններ է սահմանում Եվրամիության անդամ երկրների համար՝ ատելության հիմքով հանցագործությունների տուժողներին վերաբերվել որպես հատուկ պաշտպանություն պահանջող կատեգորիայի, իրենց կարիքների գնահատման հիման վրա ապահովել հատուկ աջակցության ծառայություններից օգտվելու հնարավորություն, ապահովել, որ քրեական արդարադատության մարմինների ծառայողները, որոնք անմիջապես շփվելու են տուժողների հետ, այդ թվում՝ ոստիկանները, դատախազները և դատավորները հետ, համապատասխան ուսուցում անցնեն՝ ապահովելու տուժողների նկատմամբ հարգալից և ոչ խտրական վերաբերմունք:

Առավել համապատասխան հոդվածներից քաղվածքներ ներկայացված են ստորև:

Հոդված 3. Հասկանալու և հասկացվելու իրավունք

1. Անդամ պետությունները պատշաճ միջոցներ են ձեռնարկում՝ օգնելու տուժողներին հասկանալ և հասկացվել առաջին իսկ շփումից և քրեական դատավարության համատեքստում իրավասու մարմնի հետ ցանկացած հետագա անհրաժեշտ փոխգործակցության ընթացքում, ներառյալ, երբ տեղեկատվությունը տրամադրվում է այդ մարմնի կողմից:

2. Անդամ պետությունները ապահովում են, որ տուժողների հետ հաղորդակցությունը լինի պարզ և մատչելի լեզվով, բանավոր կամ գրավոր: Նման հաղորդակցությունները պետք է հաշվի առնեն տուժողի անձնական հատկանիշները, այդ թվում ցանկացած հաշմանդամություն, որը կարող է ազդել հասկանալու կամ հասկացվելու ունակության վրա:

3. Բացառությամբ այն դեպքերի, երբ դա հակասում է տուժողի շահերին կամ դատավարության ընթացքին կարող է հասցվել վնաս, անդամ պետությունները թույլ են տալիս, որպեսզի իրավասու մարմնի հետ առաջին շփման ժամանակ տուժողներին ուղեկցի իր ընտրությամբ անձը, եթե, ելնելով հանցագործության հետևանքներից, տուժողին՝ հասկանալու կամ հասկացվելու համար անհրաժեշտ է օգնություն:

Հոդված 8: Տուժողների աջակցության ծառայություններից օգտվելու իրավունք

1. Անդամ պետություններն ապահովում են, որ տուժողներն, իրենց կարիքներին համապատասխան, ունենան անվճար մուտք դեպի տուժողների անանուն աջակցության ծառայություններ, որոնք գործում են տուժողների շահերից, քրեական վարույթից առաջ, ընթացքում և դրանից հետո պատշաճ ժամանակահատվածում: Ընտանիքի անդամները պետք է կարողանան օգտվել տուժողների աջակցության ծառայություններից՝ իրենց կարիքներին և տուժողի նկատմամբ կատարված քրեական հանցագործության հետևանքով կրած վնասի աստիճանին համապատասխան:

2. Անդամ պետությունները պարտավոր են դյուրացնել բողոքը ստացած իրավասու մարմնի և այլ համապատասխան մարմինների կողմից տուժողներին անանուն աջակցության ծառայություններ ուղղորդելու գործընթացը:

3. Անդամ պետությունները միջոցներ են ձեռնարկում՝ ստեղծելու անվճար և մասնագիտական անանուն աջակցության ծառայություններ՝ ի հավելումն տուժողների աջակցության ընդհանուր ծառայությունների կամ որպես դրանց անբաժանելի մաս, կամ հնարավորություն տալ տուժողներին աջակցող կազմակերպություններին դիմել առկա մասնագիտացված կազմակերպություններին, որոնք տրամադրում են այդպիսի մասնագիտական աջակցություն: Տուժողներին, իրենց հատուկ կարիքներին համապատասխան, պետք է հասանելի լինեն այդ ծառայությունները, իսկ ընտանիքի

52. www.icj.org/sogi-un-database
53. http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?qid=1421925131614&uri=CELEX:32012L0029

անդամներին՝ հասանելի ըստ իրենց հատուկ կարիքների և տուժողի նկատմամբ կատարված քրեական հանցագործության հետևանքով կրած վնասի աստիճանի:

4. Տուժողների աջակցության ծառայությունները և ցանկացած մասնագիտացված աջակցության ծառայություններ կարող են ստեղծվել որպես հասարակական կամ ոչ կառավարական կազմակերպություններ և կազմակերպվել մասնագիտական կամ կամավոր հիմունքներով:

5. Անդամ պետություններն ապահովում են, որ տուժողների աջակցության ծառայություններից օգտվելը կախված չլինի տուժողի կողմից իրավասու մարմնին քրեական հանցագործության վերաբերյալ պաշտոնական բողոք ներկայացնելուց:

Հոդված 20. Քրեական հետաքննության ընթացքում տուժողների պաշտպանության իրավունքը

1. Չխախտելով պաշտպանության իրավունքները և համաձայն դատական հայեցողության կանոնների՝ անդամ պետությունները ապահովում են, որ քրեական վարույթի ընթացքում.

ա) իրավասու մարմնին հանցագործության վերաբերյալ բողոք ներկայացնելուց հետո տուժողների հարցաքննություններն անցկացվեն առանց անհիմն ձգձգումների.

բ) տուժողների հարցաքննություններիթիվը հասցվի նվազագույնի և հարցաքննություններն անցկացվեն միայն այն դեպքում, երբ դա խիստ անհրաժեշտ է քրեական հետաքննության նպատակների համար.

գ) տուժողներին ուղեկցեն իրենց օրինական ներկայացուցիչները և իրենց ընտրությամբ անձը, եթե հակառակի վերաբերյալ հիմնավորված որոշում չի կայացվել.

դ) բժշկական զննումները հասցվում են նվազագույնի և իրականացվում են միայն քրեական վարույթի նպատակների համար խիստ անհրաժեշտության դեպքում:

Հոդված 22. Տուժողների անհատական գնահատում՝ նրանց պաշտպանության կարիքները բացահայտելու համար

1. Անդամ պետություններն ապահովում են, որ տուժողները ներպետական ընթացակարգերին համապատասխան ստանան ժամանակին և անհատական գնահատում, որպեսզի բացահայտվեն նրանց հատուկ պաշտպանության կարիքները և որոշվի, թե արդյոք և որքանով նրանք քրեական վարույթի ընթացքում կօգտվեն 23-րդ և 24-րդ հոդվածներով նախատեսված հատուկ միջոցներից, ելնելով երկրորդական և կրկնակի զոհայնացման, ահաբեկման և վրեժխնդրության նկատմամբ նրանց առանձնահատուկ խոցելիությունից:

2. Անհատական գնահատումը, մասնավորապես, հաշվի է առնում.

ա. տուժողի անձնական բնութագրերը.

բ. հանցագործության տեսակը կամ բնույթը. և

գ. հանցագործության հանգամանքները.

3. Անհատական գնահատման շրջանակում առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի այն տուժողներին, որոնք զգալի վնաս են կրել հանցագործության ծանրության պատճառով, որոնց նկատմամբ հանցագործությունը կատարվել է կողմնակալ կամ խտրական շարժառիթով, որը կարող է, մասնավորապես, կապված լինել նրանց անձնական հատկանիշների հետ, ինչպես նաև այն տուժողների, որոնց հարաբերություններն ու կախվածությունը իրավախախտի հետ նրանց առանձնապես խոցելի են դարձնում: Այդ առումով հատուկ ուշադրություն պետք է դարձնել ահաբեկչության, կազմակերպված հանցավորության, մարդկանց թրաֆիքինգի, գենդերային հիմքով բռնության, մտերիմ հարաբերություններում բռնության, սեռական բռնության, շահագործման կամ ատելության հիմքով հանցագործությունների տուժողների և հաշմանդամություն ունեցող տուժողներին:

4. Սույն Հրահանգի նպատակների համար ենթադրվում է, որ տուժող երեխաներն ունեն հատուկ պաշտպանության կարիք, ելնելով երկրորդական և կրկնակի զոհայնացման, ահաբեկման և վրեժխնդրության նկատմամբ նրանց առանձնահատուկ խոցելիությունից: Որոշելու համար, թե արդյոք և որքանով նրանք կօգտվեն 23-րդ և 24-րդ հոդվածներով նախատեսված հատուկ միջոցներից, երեխա տուժողները ենթակա են սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված անհատական գնահատման:

5. Անհատական գնահատման խորությունը կարող է հարմարեցվել ըստ հանցագործության ծանրության և տուժողի կրած ակնհայտ վնասի աստիճանի:

6. Անհատական գնահատումներն իրականացվում են տուժողի սերտ մասնակցությամբ և հաշվի են առնվում նրա ցանկությունները, ներառյալ այն դեպքերը, երբ նրանք չեն ցանկանում օգտվել 23-րդ և 24-րդ հոդվածներով նախատեսված հատուկ միջոցներից:

7. Անհատական գնահատման հիմքը կազմող տարրերի զգալի փոփոխության դեպքում անդամ պետությունները պետք է ապահովեն, որպեսզի քրեական վարույթի ընթացքում այն թարմացվի:

Հոդված 25. Մասնագետների վերապատրաստում

1. Անդամ պետություններն ապահովում են, որ տուժողների հետ անմիջականորեն շփման մեջ գտնվող պաշտոնյաները, այդ թվում՝ ոստիկանության ծառայողները և դատարանի աշխատակիցները, ստանան տուժողների հետ նրանց շփումներին համապատասխան մակարդակի և՛ ընդհանուր, և՛ մասնագիտացված վերապատրաստում՝ տուժողների կարիքների մասին նրանց իրազեկությունը բարձրացնելու և նրանց հնարավորություն տալու տուժողների հետ անաչառ, հարգալից և արհեստավարժ կերպով վարվելու համար:

2. Չխախտելով դատական անկախությունը և դատական համակարգի կազմակերպման տարբերությունները Միության ողջ տարածքում՝ անդամ պետությունները պետք է ապահովեն, որ քրեական վարույթի մեջ ներգրավված դատավորների և դատախազների վերապատրաստման համար պատասխանատուները տրամադրեն թե՛ ընդհանուր, թե՛ մասնագիտական վերապատրաստում՝ տուժողների կարիքների մասին դատավորների և դատախազների իրազեկվածությունը բարձրացնելու համար:

3. Իրավաբանի մասնագիտության անկախության նկատմամբ պատշաճ հարգանք ցուցաբերելով՝ անդամ պետությունները հանձնարարում են իրավաբանների վերապատրաստման համար պատասխանատուներին տրամադրել ինչպես ընդհանուր, այնպես էլ մասնագիտացված վերապատրաստում՝ տուժողների կարիքների վերաբերյալ փաստաբանների իրազեկվածությունը բարձրացնելու համար:

4. Անդամ պետություններն իրենց հանրային ծառայությունների միջոցով կամ տուժողներին աջակցություն տրամադրող կազմակերպությունների ֆինանսավորմամբ աջակցում են տուժողներին աջակցություն և վերականգնողական արդարադատության ծառայություններ մատուցողների մասնագիտական վերապատրաստման նախաձեռնություններին՝ հաշվի առնելով տուժողների հետ նրանց ներգրավվածության մակարդակը և ապահովելով այդ ծառայությունների անաչառ, հարգալից և արհեստավարժ մատուցումը:

5. Հաշվի առնելով վերապատրասման մասնակիցների ծառայողական պարտականությունները և տուժողների հետ նրանց ներգրավվածության մակարդակը վերապատրաստումները կազմակերպվում են այնպես, որ դրանց արդյունքում մասնակիցները կարողանում են ավելի լավ ըմբռնել տուժողների կարիքները, ցուցաբերում են նրանց նկատմամբ հարգալից, մասնագիտական և ոչ խտրական վերաբերմունք:

Մոդուլ 4. ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների հետաքննություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ոստիկանության ծառայողների առաջնահերթ պարտականությունն է կանխել հանցագործությունները իսկ, եթե հանցագործություն տեղի ունենա, հետաքննել և բացահայտել հանցավոր վարքագիծը: Դա հատկապես կարևոր է ատելության հողի վրա հանցագործությունների ոլորտում՝ հաշվի առնելով տուժողի վրա հոգեբանական ազդեցությունը[54], ատելության հանցագործությունների աճի միտումը և հնարավոր ազդեցությունը ԼԳԲՏԻ ավելի լայն համայնքի վրա: Կրկնվող զոհայնացման կանխարգելումը նույնպես կարևոր գործոն է, և եթե այն չլուծվի ատելության հիմքով հանցագործությունները կարող են շարունակվել և հետագայում դրսևորվել ավելի ծանր հանցավոր վարքագծի տեսքով: Ոստիկանության կողմից արդյունավետ արձագանքման ձախողումը կարող է հանգեցնել ոստիկանության հետագա աշխատանքի հետ կապված լուրջ խնդիրների և վնասել համայնքի հետ նրա հարաբերություններին:

Ինչպես քննարկվել է նախորդ գլուխներում, ոստիկանությունն՝ իր աշխատանքը արհեստավարժ կերպով և հավուր պատշաճի կատարելու պոզիտիվ պատասխանատվություն է կրում: Այս մոդուլի նպատակն է ոստիկանության ծառայողներին զինել գիտելիքներով և հմտություններով ատելության հիմքով հանցագործությունները արհեստավարժ հետաքննելու համար:

ԼԳԲՏԻ անձանց դեմ ատելության հանցագործությունների հետաքննությունը դժվար է, քանի որ այն պահանջում է, որ ոստիկանությունը ապացույցներ ձեռք բերի խոցելի տուժողներց, որոնք հաճախ գտնվում են շատ բարձր սթրեսային անձնական իրավիճակներում: Այն պահանջում է, որ տուժողը բացահայտի այնպիսի տեղեկատվություն, որի մասին խոսելիս նա կարող է կաշկանդված զգալ իրեն:

Համայնքներն ու տուժողները ոստիկանությունից ակնկալում են արագ և արհեստավարժ արձագանք: Այն հստակորեն չցուցադրելը կարող է խարխլել վստահությունը, ուղերձ հղելով հասարակությանը, որ ոստիկանությունը լուրջ չի վերաբերվում ատելության հիմքով հանցագործություններին կամ, որն ավելի վատ է, որ հավանություն է տալիս դրանց:

Մոդուլը սկսվում է վարժությունով՝ աջակցելու ոստիկանության ծառայողների կողմից այն քայլերի ըմբռնմանը, որոնք նախ և առաջ պետք է ձեռնարկվեն ատելության հիմքով հանցագործությանն արձագանքելու նախնական փուլում: Դրանք են տուժողից մանրամասներն իմանալը, իրեղեն ապացույցներ հավաքելը և հանցագործության պաշտոնական արձանագրությունը:

Այնուհետև ուսումնասիրվում է ատելության հիմքով հանցագործությունների հետաքննության գործընթացը՝ տուժողների հետ աշխատանքի տեսանկյունից: Այն ներառում է տուժողին հանցագործության վայրում, հեռախոսով կամ ոստիկանական բաժնում աջակցելը: Ուսումնասիրվում է ցուցմունքներ ստանալու գործընթացը, այնուհետև տուժողներին աջակցության ուղղությամբ քայլերը համապարփակ զեկույցը կազմելուց հետո:

54. Եվրոպայի խորհուրդը լավատեղյակ է, որ ատելության հողի վրա հանցագործությունների շատ տուժողներ չեն ընդունում «տուժող» եզրույթը: Նման դեպքերում մարդիկ նախընտրում են «հանցագործություն վերապրած անձ» եզրույթը, քանի որ այն ավելի լավ է արտացոլում նրանց հետ կատարվածը: «Տուժող» բառն այս ձեռնարկում օգտագործվում է այն պատճառով, որ այն համապատասխանում է ատելության հանցագործության թիրախում հայտնված անձի իրավական և տեխնիկական կարգավիճակին, ով շփման մեջ է ոստիկանության և քրեաիրավական մարմինների հետ: Ինչպես բազմիցս նշվում է ձեռնարկում, ոստիկանության ծառայողները պետք է զոհակենտրոն մոտեցում ցուցաբերեն և ճշտեն թիրախավորված անձից, թե ինչպես նա կուզենա, որ իրեն դիմեն և, հնարավորության դեպքում, հետևի նրա ցանկությանը:

Բավականին մանրամասնորեն ուսումնասիրվում են հանցագործության տուժող տրանսգենդեր անձանց յուրահատուկ կարիքները: Դա կարևոր է՝ հաշվի առնելով սահմանափակ գիտելիքները, որ ոստիկանության աշխատակիցները հաճախ ունենում են տրանսգենդեր անձանց մասին և այդ խմբի ներկայացուցիչների զոհայնացման բարձր ցուցանիշները:

Այնուհետև ուսումնասիրվում են կողմնակալության ցուցիչները, ատելության հիմքով հանցագործությունն ապացուցելու համար փաստային բազայի կառուցման քայլերը: Ներկայացվող պրակտիկ օրինակների նպատակը մասնակիցների ուշադրությունն այն բանի վրա կենտրոնացնելն է, թե ինչ է պահանջվում ոստիկանության ծառայողներից ատելության հիմքով հանցագործությունը բացահայտելու և ապացուցելու համար:

Վերջում, մասնակիցներին առաջարկվում է ուսումնասիրել ոստիկանության ծառայության և տեղական ԼԳԲՏԻ համայնքի միջև առկա հարաբերությունները: Վերջին մոդուլը կենտրոնանում է վստահության կարևորության վրա, որն առանցքային գործոն է ինչպես հանցագործությունների մասին հաղորդելը խրախուսելու, այնպես էլ քրեական հետապնդմանն աջակցելու նպատակով անհրաժեշտ ապացույցների ապահովման հարցում:

ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Մասնակիցները՝

- Կծանոթանան ԼԳԲՏԻ անձանց դեմ ատելության հիմքով հանցագործությունների հետաքննության լավ փորձին: Այն ներառում է թե՛ ոստիկանության հետաքննության տեխնիկական կողմը, և թե՛ տուժողի հետ աշխատանքը:
- Ավելի լավ պատկերացում կկազմեն տրանսգենդեր համայնքի առջև ծառացած կոնկրետ մարտահրավերների մասին և ինչպես ոստիկանությունը լավագույնս կարող է աջակցել տրանսգենդերներ տուժողներին:
- Կհասկանան և կկարողանան ճանաչել կողմնակալության ցուցիչները, կծանոթանան ատելության հիմքով հանցագործության հաջող հետաքննության և քրեական հետապնդման համար կողմնակալ շարժառիթի ապացուցման գործընթացը:
- Կկարողանան ճանաչել ատելության հիմքով հանցագործությունները:
- Կհասկանան ոստիկանության պրոակտիվ դերը վստահության ձևավորման գործում, որը կարևոր բաղադրիչ է ոստիկանության աշխատանքի արդյունավետությունն ապահովելու համար:

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ՀԱՏԿԱՑՎԱԾ

- Վարժություն 4.1. Ապացույցների հավաքում. Ատելության հիմքով հանցագործություններ ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ՝ Գործողություններ հանցագործության վայրում և հետագա քրեական հետաքննություն (30 րոպե)
- Վարժություն 4.2. Ապացույցների հավաքում. Ատելության հիմքով հանցագործություններ ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ՝ զոհակենտրոն մոտեցում (30 րոպե)
- Վարժություն 4.3. Ապացույցների հավաքում. Ատելության հիմքով հանցագործություններ ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ՝ Տրանսգենդեր անձանց վերաբերյալ նկատառումներ (60 րոպե)
- Վարժություն 4.4. Ապացույցների հավաքում. Կողմնակալության ցուցիչներ՝ Կողմնակալ ընտրությունը/շարժառիթն ապացուցելը (30 րոպե)
- Վարժություն 4.5. Ապացույցների հավաքում. Կողմնակալության ցուցիչներ՝ ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների բացահայտում (30 րոպե)
- Վարժություն 4.6ա. Վստահության կարևորությունը. Ոստիկանության արձագանքները և ԼԳԲՏԻ համայնքը (30 րոպե)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 4.1. ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄ. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԼԳԲՏԻ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ՝ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԱՅՐՈՒՄ և ՀԵՏԱԳԱ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ (30 ՐՈՊԵ)

Այս վարժությունը նախատեսում է նյութի ընթերցանություն, քննարկումներ փոքր խմբերում և կազմակերպված քննարկում ընդհանուր խմբում

Պահանջվող նյութեր՝

Ֆլիպչարտի թուղթ, գրիչներ
Ընդմիջման համար սենյակ կամ տարածք դասասենյակում
Օժանդակ նյութեր 4.1ա and 4.1բ

1. Պատրաստեք երեք ֆլիպչարտի էջ՝ աղյուսակի տեսքով:
   - Առաջին էջը վերնագրեք՝
     «Բանավոր ցուցմունքների հավաքում. տուժողի և վկաների ապացույցներ»
   - Երկրորդ էջը վերնագրեք՝
     «Ի՞նչ հավաքել. Դատաբժշկական և տեխնիկական ապացույցներ»
   - Երրորդ էջը վերնագրեք՝
     «Ոստիկանության բաժնում՝ նախնական պաշտոնական արձանագրություն»
   - Չորրորդ էջը վերնագրեք՝
     «Հետաքննություն՝ բազմակողմանի ուսումնասիրություն»:

2. Մասնակիցներին բաժանեք չորս խմբի: Առանձնացրեք այն մասնակիցներին, ովքեր սովորաբար միմյանց հետ են աշխատում և հնարավորության դեպքում յուրաքանչյուր խմբում ապահովեք երկու սեռերի ներկայացուցիչների հավասար թվաքանակ:

3. Բաժանեք օժանդակ նյութ 4.1ա-ն և խնդրեք մասնակիցներին հետևել հրահանգներին: Խմբին տվեք 10-15 րոպե՝ ընթերցելու սցենարը և վերը նշված վերնագրերի հիման վրա քննարկել այն բոլոր հարցերը, որոնք ոստիկանության ծառայողը պետք է հաշվի առնի հանցագործությունը հետաքննելիս: Խմբի մեկ անդամ վարում է քննարկման արձանագրությունը:

4. Կրկին միավորեք փոքր խմբերը մեկ խմբի: Խնդրեք յուրաքանչյուր խմբի մեկ մասնակցի ներկայացնել իրենց խմբի քննարկման հիմնական կետերը: Այնուհետև հարցրեք մասնակիցներին, արդյոք որևէ մեկը ցանկանում է նշել որևէ այլ կետեր, որոնք իր կարծիքով չեն ներկայացվել:

5. Այդ կետերի ներկայացնելիս հղում կատարեք 4.1բ-ի լավ պրակտիկայի ուղեցույցին՝ ընդգծելով հիմնական կետերը և բոլոր այն կետերը, որոնք կարող են նշված չլինել:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹ 4.1Ա

Ապացույցների հավաքում. ատելության հիմքով հանցագործություններ ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ՝ Գործողություններ հանցագործության վայրում և հետագա քրեական հետաքննություն:

Այս վարժությունը նախատեսում է նյութի ընթերցանություն, քննարկումներ փոքր խմբերում և կզմակերպված քննարկում ընդհանուր խմբում:

- Մեկ մասնակցի պետք է հանձնարարվի խմբի համար ընթերցել հետևյալ սցենարը:
- Մեկ մասնակից պետք է կատարի գրառումները:

Սցենար.

Հարձակում քաղաքի կենտրոնում
Երկու լեսբի կանայք լքում են ԼԳԲՏԻ միջոցառման տարածքը քաղաքի կենտրոնում: Միջոցառման վայրից 100 մետր հեռավորության վրա կանանց վրա հարձակվում են մի խումբ տղամարդիկ, որոնցից մի քանիսի ձեռքերում փայտեր են: Կանանց դաժան ծեծի են ենթարկում փայտերով, բռունցքներով և ոտքերով: Հարձակումից առաջ և դրա ընթացքում այդ տղամարդիկ հոմոֆոբ հայհոյանքներ են բղավում կանանց հասցեին: Կանանց վրա հարձակման ականատես անցորդներից մեկը զանգահարում է ոստիկանություն, և դուք հասնում եք դեպքի վայր:

Սցենարն ընթերցելուց հետո ընթերցեք ստորև ներկայացված առաջադրանքի նկարագրությունը, որը հանձնարարվել է ձեր խմբին: 10-15 րոպեի ընթացքում քննարկում անցկացրեք՝ նշումներ անելով, որոնք կօգնեն ներկայացնել ձեր խմբի մտքերը հիմնական խմբին:

1-ին խմբի առաջադրանքը
Բանավոր ցուցմունքների հավաքում՝ տուժողների և վկաների բանավոր վկայություններ:
Որո՞նք են այն հիմնական կետերը, որոնք պետք է հաշվի առնել դեպքի վայրում տուժողներից և վկաներից մանրամասն տեղեկություններ ստանալիս:

2–րդ խմբի առաջադրանքը
Հավաքել դատաբժշկական և տեխնիկական ապացույցներ: Որո՞նք են դատաբժշկական և տեխնիկական ապացույցների հավաքագրման հետ կապված ձեր հիմնական պարտականությունները:

3–րդ խմբի առաջադրանքը
Ոստիկանության բաժնում՝ նախնական պաշտոնական արձանագրության կազմում:
Որո՞նք են այն հիմնական նկատառումները, որ ոստիկանության ծառայողները պետք է հաշվի առնեն բաժին վերադառնալիս և պաշտոնական զեկույց կազմելիս: Ոստիկանության ծառայությունն ի՞նչ է պահանջում ծառայողներից նման դեպքերում և ինչու:

4–րդ խմբի առաջադրանքը
Հետաքննություն՝ բազմակողմանի ուսումնասիրություն:
Դեպքի վայրի նախնական զննությունից և ոստիկանության բաժնում ձեր պաշտոնական զեկույցից հետո ամփոփ ներկայացրեք հետաքննության ընթացքը: Ի՞նչպիսի արդյունավետ հետաքննական գործողություններ կարող եք կատարել առանց կասկածյալ(ներ)ի ինքնությունն իմանալու:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹ 4.1Բ. ԼԳԲՏԻ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՆՑԱՆՔԻ ՎԱՅՐ ԺԱՄԱՆԵԼԸ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ և ՎԿԱՆԵՐԻ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ և ՀԵՏԱԳԱ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Հանցագործության վայրում կատարվող նախնական գործողությունները չափազանց կարևոր են հետաքննության հաջողության համար: Գրավոր ցուցմունքները չգրանցելը, որպես ոստիկան ձեր գործողությունները չարձանագրելը կամ իրեղեն ապացույցներ չհավաքելը կարող է տապալել քրեական գործը:

Այդ ամենը չափազանց կարևոր է ԼԳԲՏԻ անձանց դեմ ատելության հիմքով հանցագործությունները հետաքննելիս հաշվի առնել, որ տուժողի և/կամ վկաների հետ ոստիկանության նախնական շփումը կարող է հանգեցնել կենսական տեղեկությունների տրամադրմանը կամ դրանց թաքցնելուն, ինչն համապատասխանաբար կնպաստի կամ կխանգարի նման լուրջ հանցագործության քրեական հետապնդմանը:

Այս օժանդակ նյութում ներկայացվում են հանցագործության վայրում ձեռնարկվող գործողությունները՝ վկայի ցուցմունքները և դատաբժշկական տվյալները հավաքելու առումով: Այնուհետև ուսումնասիրվում է ոստիկանության պաշտոնական ուղիներով հանցագործության մասին զեկուցումը և հետագա հետաքննության հետ կապված որոշ գաղափարներ են ներկայացվում:

Ի գիտություն դասընթացավարի՝ այս ուղեցույցը սպառիչ չէ և նախքան այս ոլորտի հետագա ուսումնասիրությունը պետք է ծանոթանալ լավագույն փորձի մասին տեղական ուղեցույցներին և կանոնակարգերին:

Ա) Բանավոր ցուցմունքների հավաքում՝ տուժողների և վկաների բանավոր վկայություններ: Որո՞նք են այն հիմնական կետերը, որոնք պետք է հաշվի առնել դեպքի վայրում տուժողներից և վկաներից մանրամասն տեղեկություններ ստանալիս:

Բ) Հավաքել դատաբժշկական և տեխնիկական ապացույցներ: Որո՞նք են դատաբժշկական և տեխնիկական ապացույցների հավաքագրման հետ կապված ձեր հիմնական պարտականությունները:

Գ) Ոստիկանության բաժնում՝ նախնական պաշտոնական արձանագրության կազմում: Որո՞նք են այն հիմնական նկատառումները, որ ոստիկանության ծառայողները պետք է հաշվի առնեն բաժին վերադառնալիս և պաշտոնական զեկույց կազմելիս: Ոստիկանության ծառայությունն ի՞նչ է պահանջում ծառայողներից նման դեպքերում և ինչու:

Դ) Հետաքննություն՝ բազմակողմանի ուսումնասիրություն:

Դեպքի վայրի նախնական զննությունից և ոստիկանության բաժնում ձեր պաշտոնական զեկույցից հետո ամփոփ ներկայացրեք հետաքննության ընթացքը: Ի՞նչպիսի արդյունավետ հետաքննական գործողություններ կարող եք կատարել առանց կասկածյալ(ներ)ի ինքնությունն իմանալու:

► Դեպքի վայրում բանավոր վկայությունների հավաքագրում

Հիմնական կետերը, որոնք պետք է հաշվի առնել դեպքի վայրում տուժողներից և վկաներից դեպքի մանրամասներն իմանալիս:

Թեև դեպքի վայրում արված գրառումները ն պարզապես նախնական արձանագրություն են, դրանք, ամենայն հավանականությամբ, կօգտագործվեն հետաքննության ընթացքում և կարող են ուսումնասիրվել քրեական հետապնդման փուլում: Հետևաբար կարևոր է հնարավորինս շատ մանրամասներ գրանցել:

Գրառումները պետք է բավականաչափ մանրամասն լինեն, որպեսզի երկրորդ քննիչին հնարավորություն ընձեռնվի շարունակել հետաքննությունը, եթե գործը վերահանձնարարվի օպերլիազորին/ատելության հիմքով հանցագործությունների քննիչին կամ որևէ այլ ծառայողի:

- Պետք է պարզել, թե արդյոք վկաներն ունեն թարգմանչի կամ որևէ այլ աջակցության կարիք: Դեպքի վայրում թարգմանչի բացակայության դեպքում սկզբում կարող են օգնել ընտանիքի անդամները/ընկերները: Երեխաներին երբեք չպետք է նեգրավել, եթե դեպքն արտակարգ չէ:
- Ոստիկանության ծառայողները պետք է խոսեն բաց և ներառական ձևով, օրինակ՝
  - «Դուք ունե՞ք զուգընկեր», այլ ոչ թե «Ամուսնացա՞ծ եք»:
  - «Որևէ մեկի հետ հարաբերությունների մեջ եք», այլ ոչ թե «Ունեք ընկեր/ընկերուհի»

- Տուժողներին պետք է թույլ տալ ներկայացնել կատարվածը իրենց խոսքերով և առանց շտապողականության: Համբերատար մոտեցումը կարող է նպաստել կարևոր ապացույցների տրամադրմանը, որոնք հակառակ դեպքում կարող են չնշվել:
- Եթե տուժողը գտնվում է խորը սթրեսային վիճակում կամ ծանր վնասվածքներ է ստացել, հետաձգեք մանրամասն հարցաքննությունը, մինչև նա իվիճակի կլինի ցուցմունքներ տալ (անհրաժեշտության դեպքում կազմակերպեք բժշկական օգնություն):
- Տուժողները պետք է խոսեն իրենց, այլ ոչ թե ոստիկանության ծառայողի համար հարմար լեզվով: Եթե որևէ բան պարզ չէ, կարելի է խնդրել հստակեցնել այն:
- Բառացիորեն արձանագրեք այն ամենը, ինչ կասկածյալներն ասել են վկաներին:
- Եթե կասկածյալը դեպքի վայրում է, գրանցեք նրա ցանկացած խոստովանությունը՝ համաձայն տեղական օրենսդրության/ոստիկանության կանոնակարգերի՝ անհրաժեշտության դեպքում զգուշացնելով: Գրանցեք նրանց բառերը հնարավորինս ճշգրիտ:

► Դեպքի վայրում դատաբժշկական և տեխնիկական տվյալների հավաքագրում

ԼԳԲՏԻ անձանց դեմ ատելության հանցագործությունների վայրում դատաբժշկական և տեխնիկական տվյալների հավաքագրման հետ կապված հիմնական խնդիրները:

Ի գիտություն դասընթացավարի՝ այս ուղեցույցը սպառիչ չէ և նախքան այս ոլորտի հետագա ուսումնասիրությունը պետք է ծանոթանալ լավագույն փորձի վերբերյալ տեղական ուղեցույցներին և կանոնակարգերին:

- Դեպքի վայր ժամանելիս արգելեք կողմնակի անձանց մուտքը դեպքի վայր և ցանկացած տարածք, որտեղ հանցագործները կարող էին գտնվել կամ որտեղ կարող են թաքնվել:
- Պահպանեք բոլոր իրեղեն ապացույցները և լուսանկարեք բոլոր համապատասխան տարածքներն ու հանցագործության հետ առնչվող առարկաները: Հնարավորության և համապատասխան միջոցների առկայության դեպքում տեսագրեք դեպքի վայրը: Համոզվեք, որ հավաքագրվել են կողմնակալության դրսևորումները ցույց տվող ֆիզիկական ապացույցները (օրինակ՝ լուսանկարեք հոմոֆոբ գրաֆիտիները):
- Արձանագրեք տուժողի վրա հանցագործության հետ կապված բոլոր հետքերը: Հիշեք, որ յուրաքանչյուր շփում թողնում է հետք, և հանցագործության ապացույցներ կարող են լինել տուժողի մաշկի և հագուստի վրա (արյուն, թուք, հագուստի մանրաթելեր, մազեր, ԴՆԹ և այլն):
- Հնարավորության դեպքում վերցրեք քսուքներ և առգրավեք հագուստը, երբ տուժողին այլ հագուստ տրվի:
- Լուսանկարեք տուժողի վնասվածքները՝ նախապես ստանալով նրա համաձայնությունը: Որոշ դեպքերում նպատակահարմար է լուսանկարներ անել որոշ ժամանակ անց, որպեսի կապտուկները ավելի տեսանելի լինեն:
- Անհրաժեշտության դեպքում կազմակերպեք հանցագործության վայրի զննող մասնագետների կամ դատաբժշկական փորձագետների ներկայությունը:
- Հավաքեք և փաթեթավորեք բոլոր իրեղեն ապացույցները՝ համաձայն տեղական կանոնակարգերի և լավագույն փորձի:
- Օգտագործեք դեպքի վայրից ԴՆԹ հետքեր ձեռք բերելու հնարավորությունները: Դրանց աղբյուրների թվում են հանցագործ(ներ)ի կողմից օգտագործված զենքը/գործիքները, այն ամենը, ինչին նրանք կարող էին դիպչել կամ ինչից խմել, արյունը, թուքը, մազերը կամ այլ մարմնական հեղուկները: Ինչպես նշվեց վերևում, տուժողի վրա կարող է լինել կասկածյալի ԴՆԹ-ն:
- Եթե միջադեպի մասին հաղորդվում է հեռախոսով, տուժողին/վկային զգուշացրեք, որ անհրաժեշտ է պահպանել բոլոր իրեղեն ապացույցները:
- Հնարավորության դեպքում դիմեք վերապատրաստված քննիչների օգնության:
- Հավաքեք դեպքի վայրից և հարակից տարածքներից տեսախցիկների տեսագրությունները ՝ հատուկ ուշադրություն դարձնելով դեպքի վայր մուտքի և ելքի կետերին:
- Եթե կասկածյալը բացահայտվել և ձերբակալվել է, առգրավեք հագուստը և կոշիկները, որոնց վրա կարող են հետքեր լինել, վերցրեք ԴՆԹ նմուշը, ինչպես նաև մատնահետքերը և լուսանկարեք այդ ամենը: Լուսանկարեք դաջվածքները, որոնք վկայում են իրավախտի՝ որևէ ծայրահեղական խմբի անդամակցության մասին:

- Կազմակերպեք բժշկական զննում և ստացեք տուժողի համաձայնությունը բժշկական փորձաքննության եզրակացություն ստանալու համար:
- Հավաքեք բոլոր անհրաժեշտ ապացույցներն ելնելով այն վարկածից, որ գործի վերաբերյալ դատական վարույթ է հարուցվելու:

► Վերադարձ ոստիկանության բաժին՝ պաշտոնական զեկույցի կազմում:

Այնուհետև ոստիկանության բաժնում պահանջվող արձանագրությունը կազմելիս և ադ մասին զեկուցելիս հիշեք, որ ատելության հիմքով հանցագործության ճշգրիտ գրանցումը հանցագործ վարքագծի բացահայտման և կանխարգելիչ միջոցների կիրառման առումով կարևորագույն նախապայման է: (Ձեռնարկի ստորև բաժինը պետք է փոփոխվի՝ հաշվի առնելով տեղական գործելակերպն ու ընթացակարգերը):

- Կազմեք հանցագործության մասին հաղորդում մուտքագրելով այն ոստիկանության տվյալների բազայում (թղթային կամ համակարգչային՝ կախված երկրից):
- Գրանցեք բոլոր նախնական դիտարկումները, որը միջադեպը որակավորում են որպես ատելության հիմքով առերևույթ հանցագործություն:
- Անցկացրեք նախնական հետաքննություն՝ պարզելու, թե արդյոք նախկինում կատարվել են նմանատիպ հանցագործություններ: Հնարավոր է հայտնաբերեք հանցագործին բնորոշ վարքագծի այլ օրինակներ: Ուսումնասիրեք ատելության հիմքով հանցագործությունների արձանագրությունները՝ բացահայտելու զոհականացմանը բնորոշ օրինաչափությունները:
- Ուսումնասիրեք բոլոր նախկին արձանագրությունները՝ պարզելու, թե արդյոք անձը նախկինում նույնպես հանցագործության տուժող է եղել: Դա շատ կարևոր է կրկնակի զոհայնացում ախտորոշելու համար:
- Միջադեպի մասին զեկուցեք անմիջական ղեկավարին, համաձայն ներքին կանոնների/գործելակարգերի:
- Զեկուցեք միջադեպի մասին ատելության հիմքով հանցագործությունների տեղական/ազգային ստորաբաժանմանը՝ համաձայն քաղաքականության/կանոնակարգերի:
- Եթե հետաքննությունը փոխանցվում է մեկ այլ քննիչի/բաժին, համոզվեք, որ նրանք տեղյակ են, որ հանցագործությունն ատելության հիմքով է:
- Անհրաժեշտության դեպքում միջադեպի մասին տեղեկացրեք համապատասխան ղեկավարին/ոստիկանության մամուլի խոսնակին:
- Եթե հաստատվում է, որ հանցագործությունը կատարվել է ատելության հիմքով, զեկուցեք այդ մասին՝ համապատասխան արձագանքի/միջամտության համար:
- Անհրաժեշտության դեպքում կազմակերպեք տուժողի/վկաների/կասկածյալների համար թարգմանիչների հետագա ներգրավումը:
- Կազմակերպեք իրեղեն ապացույցների հանձնումը քննիչին/քննիչ խմբին:

► Հետաքննություն՝ բոլոր ուղիներով ուսումնասիրություն:

Դեպքի վայրի նախնական քննությունից և ոստիկանության բաժնում պաշտոնական հաղորդումը ներկայացնելուց հետո հաճախ պահանջվում է մանրակրկիտ հետաքննություն, հատկապես, երբ կասկածյալ(ներ)ի ինքնությունը հայտնի չէ: Ստորև ներկայացված հետաքննական պրակտիկան սպառիչ չէ և պետք է ընդլայնվի՝ համապատասխանեցնելով տեղական գործելակերպին/ընթացակարգերին: Ատելության հիմքով հանցագործություն կատարած անձանց բացահայտելու ոստիկանության ծառայողների հանձնառությունը առանցքային դեր է խաղում է փոքրամասնությունների համայնքների վստահությունը շահելու հարցում: Եթե ոստիկանական ծառայության նկատմամբ վստահությունը ցածր է, ԼԳԲՏԻ վկաները կարող են կաշկանդված լինել ոստիկանության հետ շփումներում: Նման դեպքերում վկաներին խրախուսելու համար պահանջվում են լրացուցիչ ջանքեր:

Ոստիկանության ծառայողները պետք է.

- Լրատվամիջոցների, սոցիալական մեդիայի և այլ աղբյուրների միջոցով դիմեն վկաներին:
- Ուսումնասիրեն նմանատիպ միջադեպերը այլ տեղանքներում/ոստիկանության բաժիններում:
- Փնտրեն վկաների, այն անձանց շրջանում ովքեր պարբերաբար այցելում են տարածք/դեպքի վայր (փոստի աշխատակիցների, աղբահանների, ավտոբուսային երթուղիների ուղևորների): Դիմեն ոստիկանության թաղային տեսուչների/համայնքային ոստիկանության օգնության:

- Խնդրեն ոստիկանության փորձառու ծառայողներին ուսումնասիրել հավաքված փաստերը՝ բացահայտելու հետաքննության հնարավոր նոր ուղղությունները:
- Ուսումնասիրեն շտապ օգնության կենտրոնների կողմից ձայնագրված հեռախոսազանգերը:
- Անհրաժեշտության դեպքում կազմակերպեն դատաբժշկական փորձաքննություն:
- Դռնից դուռ հարցումներ կատարեն տարածքում:
- Ուսումնասիրեն տեսախցիկների ձայնագրությունները:
- Ուսումնասիրեն հանցագործությունների և օպերտիվ քրեական հետախուզության բոլոր հասանելի գրառումները՝ հնարավոր զուգահեռներ անցկացնելու համար:
- Դիմեն բջջային հեռակապի օպերատորներին հեռախոսազանգերի տեղայնացման համար, անհրաժեշտության դեպքում ուսումնասիրեն հեռախոսազանգերը:
- Ըստ անհրաժեշտության օգտվեն հատուկ ստորաբաժանումների ծառայություններից:
- Ծանր հանցագործությունների քննության 28 օրն անցնելուց հետո դիմեն հանցագործությունների վերլուծության ստորաբաժանում (եթե այդպիսին կա)՝ տվյալները և հետաքննության ընթացքը վերլուծելու համար:
- Հարցաքննեն ԼԳԲՏԻ միջոցառումների անցկացման վայրերի անվտանգության աշխատակիցներին և անձնակազմին՝ պարզելու, թե արդյոք նրանք ունե՞ն որևէ տեղեկություն, որը կարող է օգտակար լինել: Մարդիկ իրենց համայնքներում զրուցելիս կարող են անպիսի տեղեկություններ բացահայտել, որոնք նրանք չեն հայտնի ոստիկանությանը: Օգտակար կարող է լինել ոչ պաշտոնական ուղիներով կորզված ցանկացած մանրուք:
- Տեղեկատվություն տրամադրելու համար դիմեն ԼԳԲՏԻ հարցերով հասարակական կազմակերպությունների օգնության
- Առկայության դեպքում օգտվեն այլ ձայնագրող կայքերի տեղեկատվությունից:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 4.2. ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄ. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԶՈՀԱԿԵՆՏՐՈՆ ՄՈՏԵՑՈՒՄ (30 ՐՈՊԵ)

Այս վարժությունը նախատեսում է նյութի ընթերցանություն, քննարկումներ փոքր խմբերում և կազմակերպված քննարկում ընդհանուր խմբում:

Պահանջվող նյութեր՝

Ֆլիպչարտի թուղթ, գրիչներ
Ընդմիջման համար սենյակ կամ տարածք դասասենյակում
Օժանդակ նյութեր 4.2ա և 4.2բ

1. Պատրաստեք երեք ֆլիպ աղյուսակի էջ:
   - Առաջին էջը վերնագրեք՝
     «Նախնական հաղորդում. Աջակցություն տուժողին հանցագործության վայրում/հեռախոսազանգ ընդունելիս/բաժնի ընդունարանում»
   - Երկրորդ էջը վերնագրեք՝
     «Տուժողի մանրամասն ցուցմունքի ընդունում»
   - Երրորդ էջը վերնագրեք՝
     «Շարունակական աջակցություն և ռիսկերի նվազեցում»

2. Մասնակիցներին բաժանեք երեք խմբի: Առանձնացրեք այն մասնակիցներին, ովքեր սովորաբար միմյանց հետ են աշխատում և հնարավորության դեպքում յուրաքանչյուր խմբում ապահովեք երկու սեռերի ներկայացուցիչների հավասար թվաքանակ:

3. Փոխանցեք նրանց օժանդակ նյութ 4.2ա-ն և խնդրեք հետևել հրահանգներին: Խմբերին տվեք 10-15 րոպե քննարկման համար: Խմբից մեկը արձանագրություն է վարում:

4. Կրկին միավորեք խմբերը մեծ խմբում: Վերադարձեք մեծ լսարան: Խնդրեք յուրաքանչյուր խմբից մեկ ներկայացուցչի ներկայացնել իրենց խմբի քննարկման հիմնական կետերը: Այնուհետև մասնակիցներին հարցրեք, թե արդյոք կան որևէ լրացուցիչ նկատառումներ, որ չեն նշվել:

5. Կետերի ներկայացնելիս հղում կատարեք 4.2բ-ի լավ պրակտիկայի ուղեցույցին՝ ընդգծելով հիմնական կետերը և բոլոր այն կետերը, որոնք կարող են նշված չլինել:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹ 4.2Ա. ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄ. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԼԳԲՏԻ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ՝ ՀՈՒՆԱԿԵՆՏՐՈՆ ՄՈՏԵՑՈՒՄ (30 ՐՈՊԵ)

Մասնակիցներից մեկը վարում է արձանագրությունը:

Այս վարժության սցենարը չի տարբերվում վարժություն 4.1-ի սցենարից:

Սցենար.

Հարձակում քաղաքի կենտրոնում
Երկու լեսբի կանայք լքում են ԼԳԲՏԻ միջոցառման տարածքը քաղաքի կենտրոնում: Միջոցառման վայրից 100 մետր հեռավորության վրա կանանց վրա հարձակվում են մի խումբ տղամարդիկ, որոնցից մի քանիսի ձեռքերում փայտեր են: Կանանց դաժան ծեծի են ենթարկում փայտերով, բռունցքներով և ոտքերով: Հարձակումից առաջ և դրա ընթացքում այդ տղամարդիկ հոմոֆոբ հայհոյանքներ են բղավում կանանց հասցեին: Կանանց վրա հարձակման ականատես անցորդներից մեկը զանգահարում է ոստիկանություն, և դուք հասնում եք դեպքի վայր:

Սցենարն ընթերցելուց հետո ընթերցեք ստորև ներկայացված առաջադրանքի նկարագրությունը, որին հանձնարարվել է ձեր խմբին: 10-15 րոպեի ընթացքում քննարկում անցկացրեք՝ նշումներ անելով, որոնք կօգնեն ներկայացնել ձեր խմբի մտքերը հիմնական խմբին:

1-ին խմբի առաջադրանք
Աջակցություն տուժողին հանցագործության վայրում/հեռախոսազանգ ընդունելիս/բաժին ժամանելիս՝ ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հանցագործության մասին զեկուցելու համար:
Ի՞նչ պետք է հաշվի առնեն ոստիկանության ծառայողները:

2-րդ խմբի առաջադրանք
Ցուցմունքների արձանագրում/պաշտոնական զեկույցի կազմում: Ապացույցների հավաքում և տուժողին աջակցություն այդ ընթացքում:
Ի՞նչ պետք է հաշվի առնեն ոստիկանության ծառայողները:

3-րդ խմբի առաջադրանք
Նախնական ապացույցները հավաքելուց հետո: Շարունակել տեղեկատվություն ստանալ տուժողներից և աջակցություն տրամադրել նրանց: Կրկնակի զոհայնացման ռիսկի չեզոքացում:
Ի՞նչ պետք է հաշվի առնեն ոստիկանության ծառայողները:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹ 4.2Բ. ԼԳԲՏԻ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ՝ ՀՈՍՔԱԿԵՆՏՐՈՆ ՄՈՏԵՑՈՒՄ

Որո՞նք են դեպքի վայրում և այնուհետև տուժողից մանրամասն ցուցմունքներ վերցնելիս տուժողին աջակցելու վերաբերյալ հիմնական նկատառումները, որոնք ոստիկանության ծառայողները պետք է հաշվի առնեն: Այս օժանդակ նյութն ուղղորդում է պարունակում հետևյալ երեք հարցերում.

Ա) Աջակցություն տուժողներին քրեական հետաքննության սկզբնական փուլում:

Բ) Նպաստավոր միջավայրի ստեղծում մանրամասն ցուցմունքներ վերցնելու և ապացույցները հավաքելու համար:

Գ) Շարունակական աջակցություն տուժողներին և ռիսկերի նվազեցում:

Ի գիտություն՝ ներկայացվող առաջարկությունները սպառիչ չեն և պետք է հարմարեցվեն՝ հաշվի առնելով համապատասխան երկրի օրենսդրությունը, քաղաքականությունը և ընթացակարգերը:

► Աջակցություն տուժողներին քրեական հետաքննության սկզբնական փուլում

Տուժողի հետ նախնական շփումը երկարատև տպավորություն կթողնի նրա մոտ և հետագայում կազդի ոստիկանության նկատմամբ իր վերաբերմունքի և ոստիկանության ծառայությունների մատուցման առումով իր ակնկալիքների վրա: Վատ սկիզբը կարող է էապես ազդել վկաների հետ համագործակցության հնարավորությունների վրա:

Ստորև ամփոփված են այն հիմնական կետերը, որոնք պետք է հաշվի առնել հետաքննության սկզբնական փուլերում:

Դեպքի վայրում՝

- Անհրաժեշտության դեպքում, առաջին հերթին դիմեք բժշկական օգնության:
- Ապահովեք տուժողի անվտանգությունը դեպքի վայրում: Վտանգ սպառնալու դեպքում հեռացրեք նրան դեպքի վայրից:
- Տրավման նվազագույնի հասցնելու համար տուժողը պետք է հարցաքննվի ոստիկանության մեկ ծառայողի կողմից: Անհրաժեշտության դեպքում կարող է ներկա գտնվել նաև երկրորդ ծառայողը, թեև ցանկալի է, որ նա հարցեր չտա:
- Վստահեցրեք տուժողին, որ նա մեղավոր չէ կատարվածի համար:
- Ոստիկանության ծառայողները պետք է խոսեն բաց և ներառական ձևով, օրինակ՝
  - «Դուք ունե՞ք զուգընկեր», այլ ոչ թե «Ամուսնացա՞ծ եք»:
  - «Որևէ մեկի հետ հարաբերությունների մեջ եք», այլ ոչ թե «Ունե՞ք ընկեր/ընկերուհի»
- Համբերատար ունկնդրեք և տուժողին հնարավորություն տվեք արտահայտել իր հույզերը:
- Բացառեք տուժողի ինքնության անհարկի հրապարակումը: Տուժողին հավաստիացրեք, որ ոստիկանությունն օրինական ճանապարհով կպաշտպանի իր անձնական տվյալների գաղտնիությունը:
- Տուժողին տեղյակ պահեք միջադեպի մասին հանրությանը հայտնի դառնալու և (կամ) ԶԼՄ-ներում այդ մասին հաղորդվելու մեծ հնարավորության մասին: Համոզվեք, որ այդ տեղեկատվության ներկայացման պատճառով տուժողը չի մտածում, որ ոստիկանությունը խուսափում է գործին հետամուտ լինելուց:
- Տուժողին ուղղորդեք տուժողների աջակցության տեղական ծառայություն (նրա համաձայնությամբ): Աջակցության ծառայությունների մասին տեղեկությունը պետք է տրամադրվի և՛ բանավոր և՛ գրավոր:
- Հետագա կապի ցանկության դեպքում տուժողին պետք է տրամադրել իր գործը քննող քննիչի կամ կոնտակտային անձի տվյալները: Եթե կոնտակտային անձը երկար ժամանակ բացակայելու է, տուժողին տրվում են փոխարինող անձի տվյալները:
- Հարցրեք տուժողին, արդյոք նա ունի ընկեր/զուգընկեր, ում աջակցությանը նա ցանկանում է դիմել:
- Արձանագրեք տուժողի հուզական վիճակը (օրինակ՝ սթրեսային վիճակում է):

- Վերը նշված տեղեկատվության հիման վրա գնահատեք տուժողի կամ նրա զուգընկերոջ/ընտանիքի անդամներին սպառնացող որևէ անմիջական վտանգը: Վերը նշված կետերից բացի, պարզեք, թե արդյո՞ք տուժողը սպառնալիքներ է ստացել, արդյո՞ք միջադեպի ընթացքում զենք կիրառվել է, արդյո՞ք նախկինում տեղի են ունեցել նման միջադեպեր և արդյո՞ք նա տեղյակ է, որ իրավախախտը նախկինում կատարել է նմանատիպ արարքներ: Գնահատման հիման վրա անհապաղ ձեռնարկեք բոլոր անհրաժեշտ պաշտպանական միջոցները: Ռիսկի մանրամասն գնահատման օրինակի համար տե՛ս Հեմփշիրի ոստիկանության ծառայության ատելության հիմքով դեպքերի գնահատման մոդելը[55]:

Հեռախոսով նախնական ցուցմունք վերցնելու դեպքում

- Ճշտեք, թե արդյոք անհրաժեշտ է բժշկական օգնություն և անհրաժեշտության դեպքում կազմակերպեք շտապօգնության մեքենայի ժամանումը: Հարցեր տվեք՝ պարզելու համար, թե արդյոք տուժողն ապահով է դեպքի վայրում, և տուժողին խորհուրդ տվեք հեռանալ դեպքի վայրից, եթե նա վտանգված է և ի վիճակի է դա անել: Ուղղեք անհետաձգելի միջամտության աշխատակիցներին դեպքի վայր, եթե տուժողը վտանգված է և չի կարող հեռանալ:
- Համբերատար եղեք և տուժողին հնարավորություն տվեք բացատրելու, թե ինչ է պատահել իր հետ՝ հնարավորինս մանրամասնելով տեղի ունեցածը:
- Տուժողին պետք է տեղեկատվություն տրվի այն մասին, թե ինչպես պաշտոնապես հաղորդում ներկայացնել: Տուժողին պետք է տրվեն մանրամասն տեղեկություններ, թե ում հետ կապվել, երբ և որտեղ:
- Պետք է միջոցներ ձեռնարկվեն, որպեսզի քննիչը կապ հաստատի տուժողի հետ՝ ոստիկանության ծառայության ընթացակարգերին համապատասխան:
- Տուժողին ուղղորդեք տուժողների աջակցության տեղական ծառայություն (նրա համաձայնությամբ): Աջակցության ծառայությունների մասին տեղեկությունները պետք է տրամադրվեն և՛ բանավոր և՛ գրավոր:
- Արձանագրեք տուժողի հուզական վիճակը (օրինակ՝ տուժողն ի վիճակի չէ ցուցմունք տալ, քանի որ սթրեսային վիճակում է):
- Անցկացրեք տուժողին սպառանցող ռիսկերի գնահատում և անհապաղ կիրառեք բոլոր անհրաժեշտ պաշտպանական միջոցները: Ռիսկի գնահատումների մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս վերը նշված բաժինը:

Երբ տուժողը ժամանում է ոստիկանության բաժին

- Անհրաժեշտության դեպքում դիմեք բժշկական օգնության տուժողի համար:
- Տրավման նվազագույնի հասցնելու համար տուժողը պետք է հարցազրույց անցնի մեկ ոստիկանության ծառայողի կողմից, անհրաժեշտության դեպքում կարող է ներկա գտնվել երկրորդ ոստիկանության ծառայողը:
- Վստահեցրեք տուժողին, որ նրա մեղավոր չէ կատարվածի համար:
- Տուժողից նախնական տվյալները վերցրեք առանձնասենյակում, այլ ոչ ընդունարանում:
- Ոստիկանության ծառայողները պետք է խոսեն բաց և ներառական ձևով, օրինակ՝
  - «Դուք ունե՞ք զուգընկեր», այլ ոչ թե «Ամուսնացա՞ծ եք»:
  - «Որևէ մեկի հետ հարաբերությունների մեջ եք», այլ ոչ թե «Ունե՞ք ընկեր/ընկերուհի»
- Բացառեք տուժողի ինքնության անհարկի բացահայտումը: Տուժողին տեղեկացրեք, որ ոստիկանությունն օրինական ճանապարհով կպաշտպանի նրա անձնական տվյալների գաղտնիությունը:
- Հետագա շփման ցանկության դեպքում տուժողին պետք է տրամադրվեն իր գործը քննող քննիչի կամ կոնտակտային անձի տվյալները: Եթե կոնտակտային անձը երկար ժամանակ բացակալելու է, տուժողին տրվում են փոխարինող անձի տվյալները:
- Տուժողին ուղղորդեք տուժողների աջակցության տեղական ծառայություն (նրա համաձայնությամբ): Աջակցության ծառայությունների մասին տեղեկությունները պետք է տրամադրվեն և՛ բանավոր և՛ գրավոր:
- Տուժողին տեղյակ պահեք միջադեպի մասին հանրությանը հայտնի դառնալու և (կամ) ԶԼՄ-ներում այդ մասին հաղորդվելու մեծ հնարավորության մասին: Համոզվեք, որ այդ տեղեկատվության

55. www.hampshire.police.uk/internet/asset/de7ad9c0-8783-4cae-9cb9-2bc004ab0ea1/hc-002299-15.%20additional%20information.pdf

ներկայացման պատճառով տուժողը չի մտածում, որ ոստիկանությունը խուսափում է գործին հետամուտ լինելուց:

- Համբերատար եղեք և տուժողին հնարավորություն տվեք արտահայտել իր զգացմունքները:
- Հարցրեք տուժողին, արդյոք նա ունի ընկեր/զուգընկեր, ում հետ ցանկանում է կապ հաստատել աջակցության համար:
- Արձանագրեք տուժողի հուզական վիճակը (օրինակ՝ շոկի մեջ է գտնվում):
- Անցկացրեք տուժողի ռիսկի գնահատում և անհապաղ կիրառեք բոլոր անհրաժեշտ պաշտպանական միջոցները: Ռիսկերի գնահատման վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս վերևում:

Նպաստավոր միջավայրի ստեղծում մանրամասն ցուցմունքներ վերցնելու և ապացույցները հավաքելու համար

Հարցազրույցը հաճախ հետաքննության այն կետն է, երբ տրամադրվում են հիմնական տեղեկությունները:Այն կարող է հանգեցնել քրեական գործի հարուցման կամ տապալման: Ոստիկանությունը հնարավորինս մանրամասն տեղեկություններ ստանալու անհրաժեշտությունը պետք է կշռադատի տուժողի կարիքների հետ, այդ թվում՝ գաղտնիության անհրաժեշտության:

- Ապահովեք, որ հարցազրույցի սենյակը մեկուսացված է, և որ ցուցմունք վերցնելիս ձեզ չեն անհանգստացնի:
- Դռան վրա ամրացրեք «չընդհատել» ցուցանակը:
- Սենյակի կարգավորումը պետք է լինի հնարավորինս հարմարավետ:
- Անջատեք բջջային հեռախոսները և ապահովեք, որ այդ ընթացքում ձեզ գործից չկտրեն:
- Անհրաժեշտության դեպքում ընդմիջումներ կատարեք:
- Դատողություններ մի արեք և մի արտահայտեք ձեր անձնական կարծիքը տուժողի անձնական հանգամանքների վերաբերյալ:
- Տուժողին տեղեկացրեք, որ դուք հասկանում եք, որ ցուցմունք տալը դժվար է:
- Հանգիստ ձայնով և տոնայնությամբ խոսեք:
- Ուշադրություն դարձրեք ձեր մարմնի լեզվին և ունկնդրեք դեմքի հնարավորինս չեզոք արտահայտությամբ:
- Շփման ողջ ընթացքում պահպանեք հարցալից վերաբերմունքը, գիտակցելով տուժողի կրած ցավը/հուզմունքը:
- Ճնշում մի գործադրեք տուժող վրա, եթե նա չի ցանկանում խոսել: Հետագա փուլում կարող է առաջանալ լինել երկրորդ անգամ ցուցմունք վերցնելու անհրաժեշտություն: Եթե դա իրավական խնդիրների հետ է կապված, բացատրեք դա տուժողին:
- Համբերատար եղեք տուժողի հետ, եթե նա հայտարարության համար անհրաժեշտից ավել մանրամասնում է միջադեպը:
- Բավարար ժամանակ տրամադրեք և մի շտապեցրեք գործընթացը:
- Խուսափեք տուժողի պահվածքը քննադատելուց:
- Խուսափեք տուժողի կրոնի, ապրելակերպի, սեռական կողմնորոշման և այլնի վերաբերյալ ենթադրություններ անելուց:
- Մի օգտագործեք խտրական արտահայտություններ:
- Մի նսեմացրեք հանցագործության լրջությունը: Դա հատկապես կարևոր է այն դեպքերում, երբ հանցագործները երիտասարդ են կամ եթե նրանք ալկոհոլի ազդեցության տակ են գտնվել:
- Դիտարկեք հարցազրույցը չեզոք վայրում կամ տուժողի տանը անցկացնելու հնարավորությունը, հաշվի առնելով գործի հանգամանքները:

Շարունակական աջակցություն տուժողներին և ռիսկերի նվազեցում

Նախնական ցուցմունքները վերցնեուց հետո հետևեք ստորև ներկայացված խորհուրդներին:

- Գործով քննիչ նշանակելուց հետո 24 ժամվա ընթացքում տուժողի հետ պետք է կապ հաստատել՝ հավաստիացնելու նրան, որ գործին ընթացք է տրվել:
- Ռիսկերի նախնական գնահատումն իրականացնելուց հետո պետք է պարբերաբար գնահատել սպառնացող ռիսկերը և համապատասխան գործողություններ ձեռնարկել դրանք մեղմելու համար:
- Խորհուրդ տվեք թաղային ոստիկանության տեսուչին կամ օպերլիազորին զանգահարել տուժողին՝ հավաստիացնելու, որ իր գործին ընթացք է տրվել և անհրաժեշտության դեպքում հանդիպում կազմակերպելու համար: Հանդիպումը նախապես համաձայնեցրեք տուժողի հետ:
- Ըստ անհրաժեշտության գործի քննությանը ներգրավեք տուժողի ընտանիքի անդամների կամ ԼԳԲՏԻ անձանց հետ աշխատանքային փորձ ունեցող ոստիկանության ծառայողին:
- Կասկածյալին ձերբակալելու, մեղադրանք առաջադրելու կամ ազատ ազատելու դեպքում անհրաժեշտ է ծանուցել տուժողին այդ մասին:
- Կասկածյալին ազատ արձակելու դեպքում տուժողին պետք է բացատրել, թե ինչու է կասկածյալն ազատ արձակվել:
- Տուժողին պետք է տրամադրվեն իր գործը քննող քննիչի կամ կոնտակտային անձի տվյալները: Եթե կոնտակտային անձը երկար ժամանակ բացակալելու է, տուժողին տրվում են փոխարինող անձի տվյալները:
- Անհրաժեշտության դեպքում տուժողին պետք է ուղղորդել աջակցության ծառայություն:
- Տուժողին խորհրդատվություն պետք է տրամադրել հնարավոր հանցագործության կանխարգելման, բնակարանի և անձնական անվտանգության ապահովման վերաբերյալ:
- Տուժողին պետք է տեղյակ պահել լրատվամիջոցների կողմից տեղեկատվության հարցման մասին:
- Ռիսկերը մեղմելու համար տուժողին անհրաժեշտության դեպքում պետք է տրամադրվեն բնակարանի և անձնական անվտանգության ապահովման սարքեր (ազդանշանային համակարգ) կամ ապահովել տան հսկողությունընմանվտանգության աշխատակցի կողմից:
- Անհրաժեշտության դեպքում տուժողին պետք է աջակցել փոխելու բնակության վայրը:
- Տուժողի տվյալները պետք է արձանագրվեն թղթի վրա և էլեկտրոնային շտեմարաններում՝ ըստ անհրաժեշտության:
- Կարող է պահանջվել տուժողի անվանափոխություն, լուրջ դեպքերում նաև նրա համար նոր անձնական տվյալների ապահովում:
- Նման հանգամանքներում պետք է դիտարկել տուժողների վերաբնակեցման ծրագրի իրականացումը:
- Երբ տուժողից պահանջվում է ներկայանալ դատարան, տուժողին տրամադրեք համապատասխան աջակցություն, մասնավորապես՝
  - Օգնել տուժողին մուտք գործել տուժողների սենյակ/վկաների սպասասրահ:
  - Կազմակերպել մինչև դատական վարույթի մեկնարկը տուժողի այելությունը դատարան (առկայության դեպքում նաև ծանոթանալու դատարանում իրեն հասանելի ծառայություններին):
  - Կազմակերպել քննիչի կամ այլ պատսխանատու ոստիկանության ծառայողի հետ տուժողի հանդիպումը և վարույթի ընթացքում նրա կողքին գտնվել: Անհնարինության դեպքում այդ գործառույթը փոխանցվում է «վկայի հետ կապի համար պատասխանատու» աշխատակցին:
  - Եթե դա նույնպես հնարավոր չէ, առաջարկել, որ տուժողին ուղեկցի գործին չառնչվող նրա ընկերը կամ ընտանիքի անդամը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 4.3. ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄ. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԼԳԲՏԻ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ՝ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ (60 ՐՈՊԵ)

Պահանջվող նյութեր՝

Ֆլիպչարտի թուղթ, գրիչներ
Օժանդակ նյութեր 4.3ա և 4.3բ

Այս վարժությունը նախատեսում է դասընթացավարի կողմից նյութի ներկայացումը (հնարավոր է նաև համատեղելով տրանսգենդեր անձանց խնդիրների վերաբերյալ ՔՀԿ-ի կողմից կազմակերպվող ներկայացման հետ, կամ ներկայացնելով տրանսգենդեր անձանց մասին տեսանյութեր, լուսաբանվում է, թե որն է տրանսֆոբ ատելության հիմքով հանցագործությունը բերվում են այս ուղղությամբ ոստիկանության ծառայողների լավ աշխատանքի օրինակներ, քննարկումներ են անցկացվում փոքր խմբերում, որից հետո կազմակերպվում է քննարկում ընդհանուր խմբում):

Ներկայացման սկզբում մասնակիցներին առաջարկվում է ընթացքում նշումներ կատարել բարձրացված հիմնական կետերի վերաբերյալ, մասնավորապես՝

1. Ի՞նչն է տրանսգենդեր անձանց խոցելի դարձնում:
2. Ի՞նչ քայլեր կարող է ձեռնարկել անել ոստիկանությունը տրանսգենդեր տուժողներին աջակցելու համար:

Ի գիտություն դասընթացավարի. Հնարավորության դեպքում պետք է ներգրավել տրանսգենդեր անձանց կամ ԼԳԲՏԻ անձանց հարցերով զբաղվող տեղական ՔՀԿ-ի ներկայացուցչի՝ համապարփակ տվյալներ տրամադրելու տրանսգենդեր անձանց կյանքի, նրանց զոհականացման դեպքերի մասին և խորհուրդներ տալու ԼԳԲՏԻ տուժողների հետ հաղորդակցման լավագույն տարբերակների վերաբերյալ: Այն դեպքերում, երբ դա հնարավոր չէ, պետք է դիտարկել տեսանյութերի օգտագործման հնարավորությունը:

Տրանսգենդեր տուժողների աջակցության հարցը կախված է բազմաթիվ գործոններից և 4.3ա օվաժնդակ նյութը ներկայացնում է այն մանրամասն, թեև ոչ սպառիչ ցանկը, որը ոստիկանության ծառայողները պետք է հաշվի առնեն տրանսգենդեր անձանց հետ շփվելիս: Օժանդակ նյութ 4.3բ-ն մասնակիցներին օգնում է կենտրոնանալ այդ առնչությամբ հիմնական հարցերի վրա:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹ 4.3Ա. ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄ՝ ԼԳԲՏԻ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈՒԺՈՂՆԵՐ՝ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ստորև ներկայացվում են է տրանսգենդեր տուժողների հետ ոստիկանության ծառայողների մասնագիտական և աջակցող փոխգործակցության ուղեցույցներ և լավ գործելակերպի օրինակներ: Մի շարք հարցեր վերաբերում են նաև ինտերսեքս անձանց:

1) Գենդերային ինքնություն և իրավապահ մարմինները

Ինչպես նշվեց, տրանսգենդերները ենթարկվում են բազմաթիվ դաժան փորձությունների, այդ թվում՝ սեռական բռնության և սպանությունների վտանգի: Տրանսգենդեր անձանց զոհայնացման մակարդակն ավելի բարձր է որոշ ենթախմբերում, ինչպիսիք են Էթնիկ փոքրամասնության պատկանողև երիտասարդ տրանսգենդեր անձինք: Հաշվի առնելով խարանի և հանցավոր գործելակերպի բարձր մակարդակը, տրանսգենդեր տուժողներին արհեստավարժ արձագանքը իրավապահ մարմինների համար առաջնահերթ խնդիր է:

Շատ երկրներում տրանսգենդեր անձինք, հատկապես սեռական ծառայությունների մատուցման ոլորտում, շատ հաճախ բախվում են ոստիկանության աշխատակիցների կողմից խտրականության, ինչը կարող է խարխլել նրանց վստահությունը և հետ պահել նրանց տեղի ունեցած միջադեպի մասին հաղորդելուց: **Արհեստավարժության** դրսևորումը և տրանսգենդեր տուժողների **ինքնության նկատմամբ հարգանքը** առանցքային նշանակություն ունի ոստիկանության ծառայողների կողմից այդ խոցելի համայնքին արդյունավետ աջակցելու և վերջինիս շահերը սպասարկելու համար:

2) Հետաքրքրասիրության կառավարում

Տրանսգենդեր տուժողների հետ շփման հարցում ոստիկանության ծառայողները կարող են ընդանրապես որևէ փորձ չունենալ: Քանի որ ոստիկանության ծառայողները իրենց մասնագիտական աշխատանքի բնույթով պայմանավորված հետաքրքրասեր են, նրանք կարող են հետաքրքրվել տրանսգենդեր անձանց ապրելակերպով, ֆիզիոլոգիական և հոգեբանական առանձնահատկություններով: Կարևոր է հիշել, որ ոչ բոլոր տրանսգենդեր անձինք են իրենց համայնքի համար խոսնակ: Տրանսգենդեր անձինք իրենց կյանքի ընթացքում շատ հաճախ հարցաքննվում են, ինչպես նաև քննադատության առարկա դառնում: Ցանկալի չէ, որ մասնագիտական աշխատանքի հետ առնչություն չունեցող հարցեր տալով ոստիկանության ծառայողները լրացուցիչ սթրես առաջացնեն նրանց մոտ: **Ոստիկանության ծառայողների հիմնական պարտականությունն է մշտապես գտնվել իրենց մասնագիտական պարտականությունների սահմանում և տուժողներին տալ միայն այնպիսի հարցեր, որոնք անհրաժեշտ են հետաքննության համար:**

Հետաքննության ողջ ընթացքում ոստիկանության ծառայողների համար գլխավորը քրեական մեղադրանք առաջադրելու և կողմնակալ շարժառիթներն ապացուցելու համար հիմնավոր փաստերի ձեռք բերումն է: Արարքի տրանսֆոբիկ բնույթն ապացուցելու համար անհրաժեշտ կարող է լինել ապացուցել տուժողի տրանսգենդեր լինելու փաստը: Սակայն, գենդերային անցումային շրջանի անձնական բնույթի նրբերանգները, այդ թվում՝ անձի ֆիզիկական առանձնահատկությունները/մարմնի կառուցվածքի վերաբերյալ տեղեկությունները ներկայացնելու անհրաժեշտություն կարող է և չառաջանալ: **Եթե տեղեկատվությունը ակնհայտորեն կապված չէ հանցագործության կամ կողմնակալ շարժառիթի հետ, նման հարցեր մի տվեք:**

Տրանսգենդերները հաճախ կարող են բախվել ընտանիքի, ընկերների և ավելի լայն համայնքի կողմից քննադատական արձագանքի: Երբ նրանք ժամանում են ոստիկանական բաժին, կրելով իրենց նկատմամբ կատարված հանցագործության բեռը, չափազանց կարևոր է, որ նրանք չարժանանան ոստիկանության ծառայողների դատողական արձագանքին: Պահպանեք դեմքի չեզոք արտահայտությունը և մասնագիտական կեցվածքը: Նույնը վերաբերում է բանավոր խոսքին, որը պետք է լինի զուսպ, կրի մասնագիտական և ոչ դատողական բնույթ: Արհեստավարժ ոստիկանության ծառայողի պարտականությունն է լինել աջակցող և կարեկցող, ապրումակցում դրսևորել: **Եթե տուժողն ընկալի, որ քրեական արդարադատության համակարգում կրկին ստիպված է անցնելու դատողության/խտրական վերաբերմունքի ճնապարհով, երկրորդային զոհայնացման հավանականությունը կմեծանա:**

2ա) Գաղտնիություն

Ոստիկանության ծառայողները մասնագիտական պատասխանատվություն են կրում քրեական գործերը հետաքննելիս անձի գաղտնիությունը պահպանելու համար: Տրանսգենդերները

հաճախ չեն ցանկանում ներկայացնել իրենց անցյալի մասին տեղեկությունները կամ, բազմաթիվ պատճառներով, ապրում են իրենց կյանքը՝ խուսափելով որևէ կերպ բացահայտելու իրենց տրանսգենդեր լինելու փաստը (իրենց նոր իքնությունը որպես տղամարդ կամ կին): Կողմնակի անձանց համար այդ տեղեկատվության հասանելիությունը լուրջ վտանգ է ներկայացնում անհատի անվտանգության և հոգեկան բարեկեցության տեսանկյունից: Այն կարող է նաև խնդիրներ առաջացնել ընտանիքի և ընկերների հետ հարաբերություններում, աշխատավայրում և այլն: Ոստիկանության ծառայողները պարտավոր են գաղտնի պահել տուժողների անձնական տվյալները, հաշվի առնելով նաև անձնական տվյալների պաշտպանության մասին օրենսդրական պահանջները: Դա հատկապես կարևոր է փոքր համայնքներում, որտեղ անանունությունն ավելի դժվար է պահպանել:

Վերոնշյալը պետք է դիտարկել տուժողի դատարան ներկայանալու կամ որևէ այլ պատճառով քրեական գործի մանրամասները լրատվամիջոցներին հայտնի դառնալու ռիսկի տեսանկյունից: Տուժողին պետք է տեղյակ պահել առկա ռիսկերի մասին, որպեսզի նա կարողանա տեղեկացված որոշում կայացնել, թե ինչպես վարվել: Այդ տեղեկատվությունը չպետք է փոխանցվի այնպսի եղանակով, որ տուժողի մոտ կառաջացնի մտավախություն, որ իրեն փորձում են համոզել հրաժարվել բողոք ներկայացնելուց: Վերջապես, տուժողին **մի հավաստիացրեք, որ կպահպանվի նրա անձի գաղտնիությունը, որպեսզի նա հանցագործության մասին հաղորում ներկայացնի, եթե չեք կարողանալու դա ապահովել:**

2բ) Աջակցողները

Այն դեպքերում, երբ տուժողը չափազանց ճնշված է, մասնավորապես, երբ տրանսգենդեր համայնքի և ոստիկանության միջև հարաբերությունները հարթ չեն, **տուժողին կարելի է հարցնել, թե արդյոք նա կցանկանա որ իր ընկերը կամ ընտանիքի որևէ անդամը ներկա գտնվի հարցազրույցին:** Այդ անձը չպետք է առնչվի քրեական վարույթին: Նպատակահարմար է նաև ցուցմունքները վերցնել չեզոք վայրում, օրինակ՝ համայնքային կենտրոնում կամ տուժողի տանը: Նման դեպքում հաշվի պետք է առնել ծառայողական ընթացակարգերը և օրենսդրական պահանջները, որոնք կարող են արգելել դա:

3) Դերանունների օգտագործում

Ինչպես քննարկվել է Մոդուլ 1-ում, դերանուններն այն ձևերն են, որոնցով մենք դիմում ենք մարդկանց՝ օրինակ՝ անգլերենում «he» կամ «she», «his» կամ «hers»: Դերանունները հատուկ են սեռին և տրանսգենդեր անձանց հետ շփվելիս պետք է պատշաճ կերպով օգտագործել:

Եթե դուք տրանսգենդեր անձի հետ կարճատև հանդիպում եք անցկացնում, ցանկալի է, որ հնարավորության դեպքում խուսափեք դերանուններ օգտագործելուց: Եթե հանդիպումն ավելի երկար է նախատեսված, պետք է հարցնել, **թե որ դերանունն է նա նախընտրում օգտագործել/ինչպես է իրեն նախընտրում դիմել:**

Եթե սխալ դերանուն եք օգտագործել, ավելի լավ է արագ ներողություն խնդրել և շարունակել զրույցը: Այդ թեմային հետագա ընթացք տալը ներկա գտնվողների մոտ կարող է շփոթություն առաջացնել, և ընդամենը պահանջվում է արագ ճանաչել և շտկել սխալը:

Կարևոր է նկատի ունենալ, որ որոշ տրանսգենդեր անձինք իրենց որպես տղամարդ կամ կին չեն նույնականացնում: Նրանք իրենց համարում են ոչ բինար անձ: Ոչ բինար տրանսգենդեր անձանց դիմելու համար համապատասխան դերանուններն են «they/them/theirs» («she/her/hers»-ի փոխարեն):

Սխալ դերանունը դիտավորյալ օգտագործելը վիրավորական է համարվում և կարող է զգալի վնաս պատճառել: Ոստիկանության ծառայողների կողմից ճիշտ դերանունների օգտագործումը և նախընտրելի դերանունների վերաբերյալ նրբանկատ ձևով հարցադրումը վկայում է անձի մշակութային բարձր մակարդակի մասին և արժանանում է տուժողի համակրանքի:

4) Իրավական անուն

Շատ երկրների օրենսդրությունը չի նախատեսում, որ մարդիկ փոխեն իրենց անունը՝ նախընտրած սեռին համապատասխան: Հնարավոր է նաև, որ տրանսգենդեր անձը հնարավորություն չունենա օրինական կերպով փոխել իր անունը, նույնիսկ եթե դա թույլատրված է պետության կողմից: Դա կարող է առաջացնել բազմաթիվ խնդիրներ, հատկապես, երբ նման անձը գործ է ունենում անձը հաստատող փաստաթղթերի ստուգման հարցում լավ պատրաստված և փորձառու ոստիկանության ծառայողների հետ:

Ոստիկանության աշխատակիցների համար անհրաժեշտ կարող է լինել օգտագործել անձի իրավական/ծննդական փաստաթղթում նշված անունը, որը կարող է չհամընկնել նրա նախընտրած գենդերի հետ: Եթե այդ իրավական պահանջը առկա է, **կարևոր է բացատրել այն պատճառները,**

թե ինչու և երբ և որտեղ է օգտագործվելու անունը (ձևաթղթերում, ցուցմունքներում, դատական և բժշկական փաստաթղթերում և այլն): Ոստիկանության ծառայողը շփվելիս պետք է ամեն դեպքում օգտագործի անձի նախընտրած անունը և գենդերը, երբ հնարավոր է:

Ցուցմունք վերցնելիս կամ բողոքն ընդունելիս ի գիտություն առեք վկայի ինքնությունը և նրա նախընտրած անունը, և վկայի հետ զրուցելիս օգտագործեք այն: Ցուցմունքն արձանագրելիս նախ և առաջ նշեք վկայի իրավական անունը և սեռը, և այնուհետև այն անունը և սեռը, որը վկան նախընտրում է: Նշեք, որ այդ պահից ի վեր վկային՝ (նշեք իրավական անունը) ներկայացնելու եք որպես (նշեք վկայի նախընտրած անունը): Այնուհետև շարունակեք արձանագրությունում/զեկույցում օգտագործել անձի նախընտրած անունը:

Ինքնությունը/սեռը հաստատող փաստաթղթեր պահանջելը պարտադիր չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է որոշակի նպատակի համար:

5) Մարմնի նկատմամբ զգայունությունը

Սեռական բռնությունը զգայուն և անձնապես ծանր հետևանքներ ունեցող հանցագործություն է: Դա հատկապես վերաբերում է այն մարդկանց, ովքեր սեփական մարմնի հետ կապված հատուկ խնդիրներ կարող են ունենալ: Շատ տրանսգենդերներ կարող են տագնապալին վերաբերել իրենց մարմնի որոշ մասերի առնչությամբ, որի պատճառով կարող են խուսափել դրանց հետ կապված հարցերը քննարկելուց: Դա էլ ավելի կարևոր է դարձնում վստահության մթնոլորտի ձևավորումը:

Այն դեպքերում, երբ պահանջվում է դատաբժշկական սեռական փորձաքննություն, պետք է նախապես դա բացատրել տուժողին, որպեսզի նա իրազեկված լինի որոշում կայացնելու, և իր հետագա քայլերը կատարելու համար: Նման դեպքում տուժողի որոշումը պետք է հարգել:

6) Ընտանեկան բռնություն

Արմատավորված տրանսֆոբիայի մթնոլորտը և ամոթի զգացումը երբեմն կարող են հանգեցնել անձի ցածր ինքնագնահատականի: Որոշ տրանսգենդեր անձանց համար ցանկացած հարաբերություն ունենալը կարող է ավելի լավ համարվել, քան հարաբերությունների ի սպառ բացակայությունը: Դա պարարտ հող է ստեղծում ընտանեկան բռնության համար:

Ոստիկանության ծառայողները պետք է տեղյակ լինեն, որ բռնություն գործադրողը կարող է լինել տուժողին ուղեկցող անձը: Նման հանգամանքներում կարելի է մի պահ առանձնացնել տուժողին ուղեցո անձից և հարցնել. «Դուք ձեզ ապահո՞վ եք զգում տանը: Արդյո՞ք որևէ մեկը հարվածում, վիրավորում կամ սպառնում է ձեզ: Կա՞ որևէ պատճառ, որ դուք կարող եք անհարմար զգալ կամ չկարողանալ բացահայտ պատասխանել հարցերին, երբ ձեր ուղեկցող անձ ներկա է»:

7) Ընտանիք

Ոստիկանության ծառայողները կարող են առնչվել տուժողի ընտանիքի անդամների հետ, հատկապես, եթե տուժողը անհայտ կորած է, մահացած է կամ անհասանելի է: Փորձեք նրբանկատորեն գնահատել ընտանիքի անդամների համագործակցելու ցանկությունը և պարզել, թե որքանով/արդյոք նրանք ցանկանում են աջակցել հետաքննությանը: Կարելի է նաև հարցնել, թե արդյոք նրանք ցանկանում են շփվել լրատվամիջոցների հետ:

Ընտանիքը կարող է չընդունել անձի նոր գենդերը, և այդ դեպքում ընտանիքի անդամների հետ շփման ընթացքում հնարավոր է տուժողի մասին խոսելիս օգտագործել նրա նախկին անունը և այլ մանրամասները: Այդ առումով, հարկ լինելու դեպքում կարելի է ունենալ երկու տեսակի զրույց՝ մեկը ընտանիքի անդամների և մյուսը տուժողի հետ:

Հնարավոր է, որ տուժողի ընտանիքի անդամները լավ չպատկերացնեն տրանսգենդեր անձանց հետ կապված հարցերը, ուստի որոշ դեպքերում կարելի է կազմակերպել նրանց իրազեկումն այդ թեմայի վերաբերյալ և տրամադրել նրանց տուժողների աջակցության ծառայություններ:

8) Տրանսգենդեր անձանց կալանավորումը

Տրանսգենդեր անձին կալանավորելու անհրաժեշտության դեպքում, ոստիկանության ծառայողը պետք է մանրակրկիտ ձևով կազմակերպի կալանավորումը: Ոստիկանության ծառայությունները հիմնականում չունեն տրանսգենդեր անձանց կալանքի տակ պահելու հստակ սահմանված կանոններ: Քրեակատարողական հիմնարկներում տրանսգենդեր անձանց իրենց իրավական/ծննդյան պահին վերագրված սեռի ներկայացուցիչների հետ միասին պահելը կարող է խնդրահարույց լինել: Տրանսգենդեր

անձինք բանտարկության ընթացքում ենթարկվում են ոտնձգության, հարձակման և սեռական բռնության բարձր ռիսկի:

Հնարավորության դեպքում տրանսգենդեր անձը կարճատև կալանքի դեպքում պետք է առանձին պահվի: Երկարատև կալանքի դեպքում նպատակահարմար է անձին պահել իր նախընտրած սեռի անձանց կացարանում: Ամենակարևորը կալանավորված անձի անվտանգությունն է:

Կարճաժամկետ կալանքից բացի ցանկացած այլ դեպքում ոստիկանությունը պետք է կազմակերպի անձի բժշկական սպասարկումը՝ կալանավորման ընթացքում նրա առողջական վիճակը հոգալու համար:

9) Ինտերսեքս անձանց բնորոշ հատուկ խնդիրները

Նույնիսկ կարճ ժամանակահատվածում, օրինակ՝ 24 ժամվա ընթացքում, ինտերսեքս անձանց մոտ կարող են ունենալ բժշկական կարիքներ: Օրինակ՝ հակաբորբոքային բուժման նպատակով կարող է նախատեսվել կորտիզոլ ստերոիդների ներարկում կամ տարածքի գերտաքացումից խուսափելու համար, արդյունավետ օդորակման համակարգի առկայություն:

Մանկական գոնադէկտոմիայով պայմանավորված հորմոնալ փոխարինման բուժառուների մեծամասնությունը առանց իրենց հորմոնների կարող են պահվել 24 ժամից ոչ ավել: 24 ժամ անց անմիջապես պետք է ձեռնարկել անհրաժեշտ գործողությունները, ընդ որում նաև հաշվի առնել, թե որքան ժամանակ է անցել վերջին դեղաչափի ընդունման և կալանավորման պահի միջև:

Ինտերսեքս անձինք, որոնց անհրաժեշտ են իմպլանտներ կամ ներարկումներ, սովորաբար կարճաժամկետ կտրվածքում հորմոնների ընդունման կարիք չեն ունենում: Սակայն, կարող է պահանջվել ներարկումների կատարող բուժքույրի կամ իմպլանտների տեղադրման մասնագետ բժշկի ներկայություն:

Ինտերսեքս անձնանց որոշ խմբերում, նախորդ տարիներին սխալ հորմոնալ բուժման պատճառով նկատվել է օստեոպորոզի կամ օստեոպենիայի բարձր ռիսկ: Որոշ դեպքերում անձանց մոտ կարող են առաջանալ տարբեր կոտրվածքներ, քանի որ տարբեր դեղորայքի ընդունման պատճառո նրանց ոսկորները շատ փխրուն են: Կարևոր է, որ այս խնդիրները հաշվի առնվեն անձի ընդհանուր առողջապահական կարիքները գնահատելիս:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹ 4.3. ԿԱՐԵՎՈՐ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչն է տրանսգենդեր անձանց հատկապես խոցելի դարձնում հանցավորության նկատմամբ:

2. Ի՞նչ կարող է անել ոստիկանությունը տրանսգենդեր տուժողներին աջակցելու համար:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 4.4. ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄ. ԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐ՝ ԿԱՆԽԱԿԱԼ ՀԻՄՔԵՐՈՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ/ՇԱՐԺԱՌԻԹՆ ԱՊԱՑՈՒՅԵԼԸ (30 ՐՈՊԵ)

Այս վարժությունը նախատեսում է նյութի ներկայացում, անհատական աշխատանք և խմբային քննարկում:

Պահանջվող նյութեր՝

Օժանդակ նյութեր 4.4ա և 4.4բ

1) Օժանդակ նյութ 4.4ա-ի տեղեկատվության հիման վրա դիտարկվում է կողմնակալության ցուցիչների թեման.
2) Օժանդակ նյութ 4.4ա-ն բաժանվում է խմբի յուրաքանչյուր անդամի և նրանց խնդրում են վերնագրերից յուրաքանչյուրի տակ գրավոր ներկայացնել կողմնակալ շարժառիթների ցուցիչների հնարավորինս շատ օրինակներ:
3) Այնուհետև արդյունքները համեմատվում են դրան հետևող խմբային քննարկման ժամանակ՝ օգտագործելով 4.4բ-ում բերված օրինակները՝ բացահայտելու նոր գաղափարները կամ ցուցիչները, որոնք կարող են անտեսված լինել:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹ 4.4Ա. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կողմնակալության ցուցիչներ

Ինչպես նշվեց նախորդ մոդուլներում, ատելության հիմքով հանցագործությունները սահմանվում են որպես **քրեական հանցագործություն**, որն ուղեկցվում է **կողմնակալ շարժառիթով:**

Ոստիկանության ծառայողները պետք է փորձառություն ունենան հանցավոր արարքները բացահայտելու և ապացույցներ հավաքելու գործում: Հանցագործությունների վերաբերյալ ապացույցներ հավաքելուն աջակցելու համար բոլոր հանցագործությունները սահմանված են քրեական օրենսգրքում: Այս սահմանումները ներառում են «ապացույցներ», որոնք պետք է առկա լինեն ձերբակալության/մեղադրանքի/քրեական հետապնդման համար:

Ատելության հիքով հանցագործությունները հետաքննելիս անհրաժեշտ են փաստեր, որոնք ապացուցում են հանցագործության լրացուցիչ տարրի/ապացույցի՝ **կողմնակալ շարժառիթի** առկայությունը: Շարժառիթը որոշակի սուբյեկտիվ բնույթ է կրում և այն սահմանելը կարող է ավելի դժվար լինել: Կողմնակալ շարժառիթը որոշելու համար կարող են օգտագործվել մի շարք գործոններ, որոնց մի մասն ակնհայտորեն ավելի ծանրակշիռ է, քան մյուսները: Այս գործոնները կարելի է ամփոփ դասակարգել հետևյալ խմբավորմամբ.

1. Տուժողի կամ վկայի ընկալում
2. Մեկնաբանություններ, գրավոր ցուցմունք և ժեստեր
3. Կազմակերպված ատելության խմբերի կամ նրանց անդամների ներգրավվածություն
4. Վայր և ժամանակ
5. Նախկին հանցագործությունների կամ միջադեպերի օրինաչափություն կամ հաճախականություն
6. Բռնության բնույթը
7. Այլ շարժառիթների բացակայությունը

Հաշվի առնելով շարժառիթների սուբյեկտիվ բնույթը և այն փաստը, որ որոշ ցուցիչներ ավելի ծանրակշիռ են, քան մյուսները, հնարավոր է, որ անհրաժեշտ լինի գործը կառուցել կողմնակալության ցուցիչների համակցությամբ: Որոշ դեպքերում առկա կարող է լինել մեկ ցուցիչ, ինչը կարող է բավարար չլինել՝ ապացուցելու, որ միջադեպը ատելության հիմքով հանցագործություն է, հետևաբար, դեպքը կարող է դիտվել որպես ընդհանուր բնույթի հանցավոր արարք: Այն, թե գործն իրոք ատելության հիմքով հանցագործություն է, թե ոչ, որոշում է դատախազը՝ հիմնվելով ոստիկանության ներկայացրած փաստերի վրա: Հետևաբար, չափազանց կարևոր է, որ ոստիկանությունը հավաքի և դատախազին ներկայացնի առկա բոլոր ապացույցները, և ինքնուրույն չորոշի, որ հանցագործությունը ատելության հիմքով չէ կատարվել, թեև փաստերը հակառակն են հուշում:

Կարևոր է նշել, որ մինչդեռ տուժողը կարող է ԼԳԲՏԻ անդամ չլինել, այն փաստը, որ հարձակվողներն ընտրել են տուժողին՝ կարծելով, որ նա այդպիսին է, արարքը դարձնում է ատելության հիմքով հանցագործություն: Կարևորը *հանցագործի շարժառիթն է*, այլ ոչ թե տուժողի սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը:

Յուրաքանչյուր դեպք քննվում է առկա փաստերի հիման վրա: Ուշադրություն պետք է դարձնել չանտեսելու փաստերի կամ դեպքերի հնարավոր ապակողմնորոշող բնույթը, երբ հանցագործները դիտավորյալ ապահովում են կողմնակալ շարժառիթի առկայությունը:

Կողմնակալության ցուցիչներն ավելի լավ հասկանալու համար ընթերցեք հետևյալ սցենարը և ուսումնասիրեք «ա»-«դ» հարցերի պատասխանները:

Սցենար.

Նույնասեռական զույգը լքում է քաղաքի կենտրոնի գեյ-ակումբը ժամը 2-ին: Ակումբի ելքը գտնվում է չլուսավորված արահետի հարևանությամբ: Արահետի եզրում երիտասարդների ավազակախումբ է հավաքված: Երբ զույգը անցնում է ավազակախմբի կողքով, երիտասարդները հարձակվում են նրանց վրա և ծեծում, բռունցքներով և ոտքերով հարվածում նրանց, երբ նրանք արդեն ընկած են գետնին: Երիտասարդները նրանց անպատվում են կոչելով «պիդառաստներ» և «գոմիկներ»: Այնուհետև խումբը փախչում է: Ականատեսը զանգահարում է ոստիկանություն:

ա) Արդյո՞ք տեղի է ունեցել հանցագործություն:

Այո, ծանրացուցիչ հանգամանքներում հարձակում կամ խուլիգանություն (օգտագործեք հանցագործության տեղական սահմանումը):

բ) Արդյո՞ք վերը նշված սցենարում դրսևորվել է կողմնակալ շարժառիթ:

Այո, ԼԳԲՏԻ անձանց դեմ կողմնակալ շարժառիթը ունեցել է մի շարք դրսևորումներ.

Վայրը. միջադեպը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ տղամարդիկ դուրս են եկել ԼԳԲՏԻ անձանց առնչվող վայրից (նույնասեռականների ակումբից):

Ժամանակը. տեղի է ունեցել այն ժամանակ, երբ սպասվում էր, որ ԼԳԲՏԻ անձինք կլքեն այդ վայրը:

Մեկնաբանություններ. Հարձակման ժամանակ հնչել են սեռական և հոմոֆոբ բնույթի հայհոյանքներ:

Տուժողի/վկայի ընկալում. Երկու տուժողները նույնասեռական տղամարդիկ էին:

գ) Ուրիշ ի՞նչ ապացույցներ կարող է գտնել ոստիկանությունը:

Վերոնշյալ գնահատումը կատարվում է առկա սահմանափակ տեղեկատվության հիման վրա: Ոստիկանության հետաքննությունը կարող է բացահայտել լրացուցիչ տեղեկություններ, այդ թվում՝

Տուժողի/վկայի ընկալումը. Տուժողները կարող են ընկալել, որ իրենց թիրախ են դարձրել նույնասեռական լինելու պատճառով: Վկան կարող է ընկալել է հարձակումը որպես հոմոֆոբ բնույթի:

Այլ շարժառիթի բացակայություն. Այլ շարժառիթները կարող են բացակայել (չհրահրված հարձակում, ոչինչ չի գողացվել և այլն):

Ատելության խմբերին անդամակցություն. Կասկածյալների ինքնությունը բացահայտելու դեպքում կարող է պարզվել, որ նրանք կապված են ատելության խմբերի հետ: Հարձակման մասին սոցցանցերում կարող են հրապարակումներ լինել:

Նմանատիպ հանցագործությունների դեպքեր/հաճախականություն. Արդյո՞ք տեղի են ունեցել նմանատիպ հարձակումներ նույն տարածքում, նույն ժամերին կամ նույնպիսի գործելաոճով:

դ) Արդյո՞ք դա ատելության հիմքով հանցագործություն է:

Միջադեպը ատելության հիմքով հանցագործություն է, քանի որ այն կողմնակալ շարժառիթով քրեական հանցագործություն է:

Հոմոֆոբ և տրանսֆոբ հանցագործության ցուցիչներ

Օգտագործեք մնացած ժամանակը կողմնակալության որոշ ցուցիչներ ներկայացնելու համար, որոնք քննիչներին հիմքեր կտան եզրակացնելու, որ տեղի է ունեցել հոմոֆոբ/տրանսֆոբ հիմքով հանցագործություն:

Տուժողի/վկայի ընկալումը

Մեկնաբանություններ, գրավոր ցուցմունք և ժեստեր

Կազմակերպված ատելության խմբերի կամ նրանց ներկայացուցիչների ներգրավվածություն

Վայրը և ժամանակը

Նախկին հանցագործությունների կամ միջադեպերի դեպքեր կամ հաճախականություն

Բռնության բնույթը

Այլ շարժառիթների բացակայությունը

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹ 4.4Բ. ԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐ՝ ՀՈՄՈՖՈԲԻԱ ԵՎ ՏՐԱՆՍՖՈԲԻԱ

Ատելության հիմքով հանցագործության սահմանման համաձայն՝ ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունները դրդված են լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր և ինտերսեքս անձանց նկատմամբ կողմնակալ վերաբերմունքով կամ նախապաշարումով: «ԼԳԲՏԻ անձանց դեմկողմնակալ շարժառիթ» նշանակում է, որ հանցագործն ընտրել է հանցագործության թիրախը՝ ելնելով նրա փաստացի կամ ընկալվող սեռական կողմնորոշումից կամ գենդերային ինքնությունից: Թիրախը կարող է լինել ԼԳԲՏԻ համայնքի հետ իրական կամ կեղծ կերպով կապված անձը, անձինք կամ գույքը:

Շատ կարևոր է բացահայտել ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների կողմնակալության ցուցիչները, քանի որ դա կօգնի համապատասխան մարմիններին որոշել, թե արդյոք խնդրո առարկա գործը պետք է հետաքննվի որպես ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով առերևույթ հանցագործություն:

Կողմնակալության ցուցիչների ոչ սպառիչ ցանկը ներկայացված է ստորև.

Տուժողի/վկայի ընկալումը

- Արդյո՞ք տուժողը կամ վկան ընկալել են, որ կատարված հանցավոր արարքը պայմանավորված է ԼԳԲՏԻ-ի նկատմամբ կողմնակալությամբ: Հարկ է նշել, որ տուժողը կարող է չհասկանալ, որ ինքը ենթարկվել է կողմնակալ շարժառիթով հանցագործության: Նա կարող է նաև ժխտել, որ հանցագործությունը կողմնակալ շարժառիթով է, ցանկանալով թաքցնել իր ԼԳԲՏԻ ինքնությունը:
- Համայնքի մի զգալի մասը, որտեղ տեղի է ունեցել հանցագործությունը, ընկալել է, որ միջադեպը եղել է կողմնակալ շարժառիթով:
- Արդյո՞ք դեպքի պահին տուժողը նույնասեռ զուգընկերոջ հետ է եղել: Արդյոք նրանք միմյանց ձեռք բռնած էին, կամ համբուրվում էին: Արդյո՞ք նրանք կրում էին ԼԳԲՏԻ կրծքանշաններ/ժապավեններ/հագուստ (ծիածանագույն/վարդագույն կամ սև եռանկյունիներ):
- Արդյո՞ք տուժողը դեպքի ժամանակ իրականացրել է ԼԳԲՏԻ իրավունքների/ծառայությունների/խնդիրների քարոզչություն:
- Արդյո՞ք տուժողը տեսանելիորեն նույնականացվել է որպես ԼԳԲ կամ Տ՝ հագուստի, վարքի կամ իրեն նմանակերպ ներկայացնելու հետևանքով:
- Արդյո՞ք տուժողը հասարակական գործիչ է, որը հայտնի է որպես ԼԳԲՏԻ իրավունքների պաշտպանությամբ զբաղվող (տուժողը կարող է բացահայտ հետերոսեքսուալ լինել, բայց աջակցել ԼԳԲՏԻ նպատակներին և այդպիսով դառնալ ԼԳԲՏԻ կողմնակալության շարժառիթով հանցագործության տուժող):

Մեկնաբանություններ, գրավոր ցուցմունք և ժեստեր

- Արդյո՞ք հանցագործը հանցագործություն կատարելիս օգտագործել է հոմոֆոբ/տրանսֆոբ բառեր կամ արտահայտություններ:
- Արդյո՞ք հանցագործն անդրադարձել է տուժողի ընկալվող սեռական կողմնորոշմանը, տրանսգենդերային կարգավիճակին կամ գենդերային ինքնությանը:
- Արդյո՞ք հանցագործը հոմոֆոբ կամ տրանսֆոբ հայտարարություններ է գրել կամ գրավոր անդրադարձել ընկալվող սեռական կողմնորոշմանը/գենդերային ինքնությանը (էլեկտրոնային փոստով/նամակում/սոցիալական ցանցում):
- Արդյո՞ք հանցագործն օգտագործել է ձեռքի ժեստեր, որոնք ակնարկում են տուժողի ընկալվող սեռական կողմնորոշումը:
- Արդյո՞ք դեպքի վայրում եղել են հոմոֆոբ/տրանսֆոբ գրաֆիտիներ:

Կազմակերպված ատելության խմբերի կամ նրանց անդամների ներգրավվածություն

- Արդյո՞ք հանցագործը կազմակերպված ատելության խմբի անդամ է:
- Արդյո՞ք հանցագործն իր հագուստի կամ դաջվածքների միջոցով ցույց է տվել կազմակերպված ատելության խմբին պատկանելու որևէ ապացույց:
- Արդյո՞ք հանցագործը առցանց, սոցիալական ցանցերում և այլուր ներկայանում է որպես ատելության խմբի անդամ:
- Արդյո՞ք հանցագործը հայտնի է ատելության կամ հոմոֆոբ/տրանսֆոբ ելույթների կամ մեկնաբանությունների (գրավոր կամ բանավոր) պատճառով:

- Արդյո՞ք հարձակման համար պատասխանատվություն է ստանձնել ատելության որևէ խումբ:

Վայրը և ժամանակը

- Արդյոք հարձակումը տեղի է ունեցել ԼԳԲՏԻ խոշոր միջոցառման ժամանակ (օրինակ՝ ԼԳԲՏ Հպարտության փառատոնի (pride festival)):
- Արդյո՞ք հարձակումը տեղի է ունեցել տարածքի ԼԳԲՏԻ անձանց համար քաղաքական նշանակություն ունեցող ժամանակահատվածում (ամուսնության իրավահավասարության մասին օրենքի ընդունում, քաղաքում առաջին ԼԳԲՏԻ բարի բացում կամ առաջին ԼԳԲՏ Հպարտության միջոցառում):
- Արդյո՞ք միջադեպը տեղի է ունեցել ԼԳԲՏԻ տարածքի/բարի/կենտրոնի մոտակայքում:
- Արդյո՞ք միջադեպը տեղի է ունեցել մի տարածքում, որը հայտնի է որպես ԼԳԲ կամ T անձանց հանդիպման վայր:
- Արդյո՞ք միջադեպը տեղի է ունեցել այնպիսի վայրում, որը հայտնի է որպես սեռական բնույթի ծառայությունների մատուցման/ծանոթությունների տարածք:
- Արդյո՞ք միջադեպը տեղի է ունեցել ծայրահեղական/ատելության խմբերի հավաքների վայրի մոտակայքում:
- Արդյո՞ք տեղանքը պատմականորեն ԼԳԲՏԻ հավաքատեղ է, նույնիսկ եթե հիմա դա այդպես չէ:

Նախկին հանցագործությունների կամ միջադեպերի դեպքերը կամ հաճախականությունը

- Արդյո՞ք միջադեպը տեղի է ունեցել այնպիսի վայրում, որտեղ նախկինում տեղի են ունեցել նմանատիպ իրադարձություններ կամ դրանք տեղի են ունեցել նույն ժամերին:
- Արդյո՞ք փոքրամասնության խմբի անդամների նկատմամբ հանցագործության/գրաֆիտիների/բռնության տեսակի որևէ օրինաչափություն կա:
- Արդյո՞ք հանցագործը նախկինում նույնպես կատարել է նման հանցագործություններ:

Բռնության բնույթը

- Արդյո՞ք բռնության/դաժանության կամ սեռական բռնության մակարդակն անսովոր բարձր է ելնելով գործի փաստացի տվյալներից:
- Արդյո՞ք հանցագործները վնասել են տուժողի սեռական օրգանները:

Այլ շարժառիթների բացակայությունը

- Արդյո՞ք հանցագործը չի ունեցել որևէ ֆինանսական կամ այլ դրդապատճառ (օրինակ՝ անձի կամ տան վրա հարձակման ժամանակ իրերի գողություն կամ բռնի հափշտակում տեղի չի ունեցել):

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.5. ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄ. ԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐ՝ ԼԳԲՏԻ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ (30 ՐՈՊԵ)

Այս վարժությունը նախատեսում է նյութի ընթերցանություն, քննարկումներ փոքր խմբերում և կազմակերպված քննարկում ընդհանուր խմբում:

Պահանջվող նյութեր՝

Օժանդակ նյութեր 4.5ա և 4.5բ

1. Մասնակիցներին բաժանեք փոքր խմբերի: Առանձնացրեք այն մասնակիցներին, ովքեր սովորաբար միմյանց հետ են աշխատում և հնարավորության դեպքում յուրաքանչյուր խմբում ապահովեք երկու սեռերի ներկայացուցիչների հավասար թվաքանակ:
2. Բաժանեք օժանդակ նյութ 4.5ա-ն և խմբերին խնդրեք հետևել հրահանգներին: Խմբերին տվեք 10-15 րոպե՝ սցենարները ընթերցելու համար: Այնուհետև նրանք պետք է անդրադառնան հետևյալ կետերին.

   ա)Որոշեն, արդյոք տեղի է ունեցել հանցագործություն:

   բ) Գտնեն կողմնակալ շարժառիթի ապացույցները սցենարում:

   գ) Որոշեն, թե ինչ այլ ապացույցներ կարող է որոնել ոստիկանությունը:

   դ) Որոշեն, թե արդյո՞ք միջադեպը ատելության հիմքով հանցագործություն է:
3. Քննարկեք յուրաքանչյուր սցենարի հետ կապված խմբերի եզրակացությունները, որոնք կատարվել են օժանդակ նյութ 4.5բ-ի հիման վրա: Արձանագրեք խմբի նշած կողմնակալության լրցուցիչ ցուցիչները, որոնք օժանդակ նյութում բացակայում են:

Ի գիտություն դասընթացավարի. Սցենար 6-ը բավականին բարդ է և մասնակիցներիը պետք է ուշադրություն դարձնեն սահմանումներին և ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ օրենսդրական դրույթներին: Նախքան դասընթացը սկսելը նպատակահարմար է ուսումնասիրել սցենարը ներպետական օրենսդրության և իրավական շեմերի համատեքստում:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹ 4.5Ա. ԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ (30 ՐՈՊԵ)

Սցենար 1.

Մայրաքաղաքում կայանալիք առաջին ԼԳԲՏ Հպարտության քայլերթի օրվա առավոտյան մի խումբ երիտասարդ նույնասեռականներ քայլում են փողոցներով դեպի հանդիպման վայր: Մի տղամարդու ուսերին փաթաթված է ծիածանագույն դրոշ, խմբում մի զույգ ձեռքերը բռնած են: Խմբի վրա հարձակվում են մի խումբ սափրագլուխներ, որոնք բռունցքներով, ոտքերով հարվածում են և թքում են նրանց վրա:

ա) Որոշեք թե, արդյոք տեղի է ունեցել հանցագործություն:
բ) Գտեք սցենարում կողմնակալ շարժառիթի ապացույցները:
գ) Ինչպիսի՞ այլ ապացույցներ կարող է փնտրել ոստիկանությունը:
դ) Որոշեք, թե արդյո՞ք միջադեպը ատելության հիմքով հանցագործություն է, ելնելով «ա» և «բ» կետերից:

Սցենար 2.

Որպես ԼԳԲՏԻ իրավունքների պաշտպան ՀԿՄ-ներում հայտնի քաղաքական գործչի գրասենյակը հարձակման է ենթարկվել: Գրասենյակում ամեն ինչ տակն ու վրա է արված և կոտրված, իսկ քաղաքական գործչի նախընտրական պաստառների վրա հոմոֆոբ կարգախոսներ են ցողված: Քաղաքական գործիչը հետերոսեքսուալ է: Ոչինչ չի հափշտակված:

ա) Որոշեք թե, արդյոք տեղի է ունեցել հանցագործություն:
բ) Գտեք սցենարում կողմնակալ շարժառիթի ապացույցները:
գ) Ինչպիսի՞ այլ ապացույցներ կարող է փնտրել ոստիկանությունը:
դ) Որոշեք, թե արդյո՞ք միջադեպը ատելության հիմքով հանցագործություն է, ելնելով «ա» և «բ» կետերից:

Սցենար 3.

Տրանսգենդեր կինը քայլում է փողոցով, երբ նրան է մոտենում մի տղամարդ, ով թքում է նրա վրա և բղավում, որ նա «զզվելի այլանդակություն է» և որ նրան պետք է ոչնչացնել: Կինը չի ճանաչում տղամարդուն և երբեք չի հանդիպել նրան:

ա) Որոշեք թե, արդյոք տեղի է ունեցել հանցագործություն:
բ) Գտեք սցենարում կողմնակալ շարժառիթի ապացույցները:
գ) Ինչպիսի՞ այլ ապացույցներ կարող է փնտրել ոստիկանությունը:
դ) Որոշեք, թե արդյո՞ք միջադեպը ատելության հիմքով հանցագործություն է, ելնելով «ա» և «բ» կետերից:

Սցենար 4.

Երիտասարդների մի խումբ քաղաքի կենտրոնում հարձակվում է տղամարդու վրա՝ խլելով նրա դրամապանակը, հեռախոսը և պայուսակը: Մինչ նրանք կողոպտում են տղամարդուն, հարձակվողներից մեկը նրան անվանում է«պիդառաստ» և այլ վիրավորական բառերով : Տղամարդը նույնասեռական չէ:

ա) Որոշեք թե, արդյոք տեղի է ունեցել հանցագործություն:
բ) Գտեք սցենարում կողմնակալ շարժառիթի ապացույցները:
գ) Ինչպիսի՞ այլ ապացույցներ կարող է փնտրել ոստիկանությունը:
դ) Որոշեք, թե արդյո՞ք միջադեպը ատելության հիմքով հանցագործություն է, ելնելով «ա» և «բ» կետերից:

Սցենար 5.

Տրանսգենդեր տղամարդուն իր բնակարանում սպանված են գտնում: Տղամարդը ծեծի է ենթարկվել և դանակահարվել: Տղամարդու մարմինն անդամահատվել է, նրա հետանցքում կոշտ առարկա է մտցված:

ա) Որոշեք թե, արդյոք տեղի է ունեցել հանցագործություն:

բ) Գտեք սցենարում կողմնակալ շարժառիթի ապացույցները:
գ) Ինչպիսի՞ այլ ապացույցներ կարող է փնտրել ոստիկանությունը:
դ) Որոշեք, թե արդյո՞ք միջադեպը ատելության հիմքով հանցագործություն է, ելնելով «ա» և «բ» կետերից:

Սցենար 6.

20-ամյա երիտասարդը ծանոթությունների կայքում ծանոթանում է տարեց նույնասեռական տղամարդու հետ: Նրանք հանդիպում են հյուրանոցում և գիշերում միասին: Երիտասարդն իր սմարթֆոնով գաղտնի ձայնագրում է երկուսի միջև սեռական հարաբերությունները: Որոշ ժամանակ անց երիտասարդը սկսում է շանտաժի ենթարկել տարեց տղամարդուն՝ ասելով, որ եթե իրեն որոշակի գումար չտա, կուղարկի տեսահոլովակը նրա ընտանիքին և գործընկերներին:

ա) Որոշեք թե, արդյոք տեղի է ունեցել հանցագործություն:
բ) Գտեք սցենարում կողմնակալ շարժառիթի ապացույցները:
գ) Ինչպիսի՞ այլ ապացույցներ կարող է փնտրել ոստիկանությունը:
դ) Որոշեք, թե արդյո՞ք միջադեպը ատելության հիմքով հանցագործություն է, ելնելով «ա» և «բ» կետերից:

Սցենար 7.

17 տարեկան ինտերսեքս անձը, ով իրեն ներկայացնում և նույնականացնում է որպես տղամարդ, բացահայտում է իր կարգավիճակը դասընկերոջը և խնդրում է պահպանել այն գաղտնի:: Հաջորդ օրը ֆիզկուլտուրայի պարապմունքից առաջ հանդերձարանում դասընկերը ևս 5 աշակերտների հետ շրջապատում են տուժողին և պահանջում, որ նա հանի տաբատը, որպեսզի «տեսնեն, թե ինչ կա այնտեղ»: Երբ նա հրաժարվում է, տղաները հանում են նրա տաբատը, բռունցքով հարվածներ հասցնում և անվանում նրան «այլանդակ» և «պիդառաստ»: Նրան թողնում են հատակին ընած, վերցնելով տաբատն ու ներքնազգեստը: Տուժողը քթի կոտրվածք ունի, գտնվում է ծանր սթրեսային վիճակում և միջադեպից հետո հրաժարվում է վերադառնալ դպրոց:

ա) Որոշեք թե, արդյոք տեղի է ունեցել հանցագործություն:
բ) Գտեք սցենարում կողմնակալ շարժառիթի ապացույցները:
գ) Ինչպիսի՞ այլ ապացույցներ կարող է փնտրել ոստիկանությունը:
դ) Որոշեք, թե արդյո՞ք միջադեպը ատելության հիմքով հանցագործություն է, ելնելով «ա» և «բ» կետերից:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹ 4.5Բ. ԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ (30 ՐՈՊԵ)

Սցենար 1.

Մայրաքաղաքում կայանալիք առաջին ԼԳԲՏ Հպարտության քայլերթի օրվա առավոտյան մի խումբ երիտասարդ նույնասեռականներ քայլում են փողոցներով դեպի հանդիպման վայը: Մի տղամարդու ուսերին փաթաթված է ծիածանագույն դրոշ, խմբում մի զույգ իրար ձեռք են բռնել: Խմբի վրա հարձակվում են մի խումբ սափրագլուխներ, որոնք բռունցքներով, ոտքերով հարվածու են և թքում են նրանց վրա:

ա)Որոշեք թե, արդյոք տեղի է ունեցել հանցագործություն. Այո՝ հարձակում
բ) Գտեք սցենարում կողմնակալ շարժառիթի ապացույցները.

Ժամանակը. Մայրաքաղաքում կայանալիք առաջին ԼԳԲՏ Հպարտության քայլերթի օրը:

Վայրը. երիտասարդ նույնասեռականներ քայլում էին դեպի ԼԳԲՏ Հպարտության քայլերթի հանդիպման կետը:

Տուժողի/վկայի ընկալումը. բոլորն էլ գեյ տղամարդիկ էին: Նրանք կրում էին ծիածանագույն դրոշ, ինչը վկայում էր, որ նրանք նույնասեռական են: Խմբում մի զույգ իրար ձեռք էին բռնել:

գ) Գտեք սցենարում կողմնակալ շարժառիթի ապացույցները.

Մեկնաբանություններ. Արդյո՞ք հանցագործները հոմոֆոբ արտահայտություններ են օգտագործել հարձակման ժամանակ կամ անդրադարձել են տուժողների սեռական կողմնորոշմանը:

Ատելության խմբերի ներգրավվածություն. Բացահայտվելու դեպքում, արդյո՞ք հանցագործները ատելության խմբերի անդամնե՞ր էին: Նրանք կրու՞մ էին որևէ դաջվածք կամ հագուստ, որը կվկայեր նման խմբերի անդամակցության մասին:

Նմանատիպ հանցագործություններ. Ոստիկանության հաշվետվությունների ստուգում. Արդյո՞ք այդ օրը տեղի է ունեցել նմանատիպ հարձակումներ այլ ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ:

Բռնության էությունը. բռնության անսովոր ծանր մակարդակ/զենքի կիրառում և այլն:

Այլ շարժառիթների բացակայություն. Արդյո՞ք հարձակման ժամանակ խմբի անդամները թալանվել են:

դ) Որոշեք, թե արդյո՞ք միջադեպը ատելության հիմքով հանցագործություն է, ելնելով «ա» և «բ» կետերից:

Միջադեպը ատելության հիմքով հանցագործություն է, քանի որ այն համատեղում է քրեական հանցագործությունն ու կողմնակալ շարժառիթը:

Սցենար 2.

Որպես ԼԳԲՏԻ իրավունքների պաշտպան ՀԼՄ-ներում հայտնի քաղաքական գործչի գրասենյակը հարձակման է ենթարկվել: Գրասենյակում ամեն ինչ տակն ու վրա է արված և կոտրված, իսկ քաղաքական գործչի նախընտրական պաստառների վրա հոմոֆոբ կարգախոսներ են ցողված: Քաղաքական գործիչը հետերոսեքսուալ է: Ոչինչ չի հափշտակված:

ա)Որոշեք թե, արդյոք տեղի է ունեցել հանցագործություն. Այո: գողություն և գույքի վնասում:
բ) Գտեք սցենարում կողմնակալ շարժառիթի ապացույցները.

Տուժողի/վկայի ընկալումը. *Տուժողը հայտնի է որպես ԼԳԲՏԻ իրավունքների պաշտպան*
Մեկնաբանություններ, գրավոր ցուցմունք. *նախընտրական պաստառների վրա հոմոֆոբ կարգախոսներ*
Այլ շարժառիթի բացակայություն. *Ոչինչ չի հափշտակված:*

գ) Ինչպիսի՞ այլ ապացույցներ կարող է փնտրել ոստիկանությունը:

Ատելության խմբերի ներգրավվածություն. Հանցագործության պատասխանատվությունը ստանձնող առցանց/սոցիալական մեդիա հրապարակումներ:
Ժամանակը. Արդյո՞ք այդ ժամանակ քաղաքական գործիչը ներգրավված է եղել ԼԳԲՏԻ հարցերով որևէ նշանակալի քարոզարշավի մեջ:

Նմանատիպ հանցագործություններ. Արդյո՞ք նմանատիպ հարձակումներ եղել են նախկինում, կամ արդյոք՞ վերջերս տեղի է ունեցել որևէ քաղաքական գործչի, նրա պաստառների կամ ԼԳԲՏԻ աջակցող այլ քաղաքական գործիչների հետ կապված որևէ այլ հոմոֆոբ միջադեպ:

դ) Որոշեք, թե արդյո՞ք միջադեպը ատելության հիմքով հանցագործություն է, ելնելով «ա» և «բ» կետերից:

Միջադեպը ատելության հիմքով հանցագործություն է, քանի որ այն համատեղում է քրեական հանցագործությունն ու կողմնակալ շարժառիթը:

Սցենար 3.

Տրանսգենդեր կինը քայլում է փողոցով, երբ նրան է մոտենում մի տղամարդ, ով թքում է նրա վրա և բղավում, որ նա «զզվելի այլանդակություն է» և որ նրան պետք է ոչնչացնել: Կինը չի ճանաչում տղամարդուն և երբեք չի հանդիպել նրան:

ա)Որոշեք թե, արդյոք տեղի է ունեցել հանցագործություն. Այո՝ Հարձակում և, հնարավոր է, հասարակական կարգի խախտում

բ) Գտեք սցենարում կողմնակալ շարժառիթի ապացույցները.

Տուժողի/վկայի ընկալումը. *Տուժողը տրանսգենդեր է՝ սեռափոխության տեսանելիությունը թույլ է տալիս հեշտությամբ նույնականացնել անձին որպես տրանսգենդեր:*

Մեկնաբանություններ. *Հանցագործը նրան անվանել է այլանդակություն, որը հազվադեպ կիրառվող բառ է և կարող է կրոնական/կենսաբանական առումով հուշում պարունակել:*

Այլ շարժառիթների բացակայություն. *Հանցագործն ու տուժողը միմյանց չեն ճանաչել.*

Բռնության բնույթը. *Անձի վրա թքելը ենթադրում է ուժեղ նողկանք*

գ) Ինչպիսի՞ այլ ապացույցներ կարող է փնտրել ոստիկանությունը:

Տուժողի/վկայի ընկալումը. Արդյոք տուժողը կարծում է, որ դա տրանսֆոբ հարձակում էր: Արդյոք ներկա գտնված որևէ վկա ընկալում է, որ հարձակման շարժառիթը ԼԳԲՏԻ հանդեպ նախապաշարումն է:

Վայրը. Կա՞ն արդյոք ԼԳԲՏԻ հանդիպումների վայրեր այն տարածքում, որտեղից անձը կարող է գալ/գնալ: Արդյո՞ք հայտնի է, որ ԼԳԲՏԻ անձինք հաճախում են այդ տարածքը:

Նմանատիպ հանցագործություններ. Արդյո՞ք ոստիկանության արձանագրությունները ցույց են տալիս, որ նախկինում այդ տարածքում տեղի են ունեցել նմանատիպ միջադեպեր:

դ) Որոշեք, թե արդյո՞ք միջադեպը ատելության հիմքով հանցագործություն է, ելնելով «ա» և «բ» կետերից:

Միջադեպը ատելության հիմքով հանցագործություն է, քանի որ այն համատեղում է քրեական հանցագործությունն ու կողմնակալ շարժառիթը:

Սցենար 4.

Երիտասարդների մի խումբ քաղաքի կենտրոնում հարձակվում է տղամարդու վրա՝ խլելով նրա դրամապանակը, հեռախոսը և պայուսակը: Մինչ նրանք կողոպտում են տղամարդուն, հարձակվողներից մեկը նրան անվանում է«պիդառաստ» և այլ վիրավորական բառերով: Տղամարդը նույնասեռական չէ:

ա)Որոշեք թե, արդյոք տեղի է ունեցել հանցագործություն. Այո՝ կողոպուտ

բ) Գտեք սցենարում կողմնակալ շարժառիթի ապացույցները.

Մեկնաբանություն. Հարձակման ժամանակ օգտագործվել է «պիդառաստ» արտահայտությունը:

գ) Ինչպիսի՞ այլ ապացույցներ կարող է փնտրել ոստիկանությունը:

Տուժողի ընկալումը. Արդյո՞ք տուժողը գտնում է, որ դա հոմոֆոբիայի հիմքով հանցագործություն է:

Ատելության խմբերի ներգրավվածություն. Կա՞ որևէ ապացույց ենթադրելու, որ ներգրավված են եղել ատելության խմբեր:

դ) Որոշեք, թե արդյո՞ք միջադեպը ատելության հիմքով հանցագործություն է, ելնելով «ա» և «բ» կետերից:

Չկա ոչ մի հստակ ապացույց հոմոֆոբ շարժառիթն ապացուցելու համար, բացի նսեմացնող բառի մեկ օգտագործումից: Հոմոֆոբ բառերն հաճախ օգտագործվում են որպես ընդհանուր հայհոյանք և միշտ չէ, որ ուղղված են ԼԳԲՏԻ անձանց:

Սցենար 5.

Տրանսգենդեր տղամարդուն իր բնակարանում սպանված են գտնում: Տղամարդը ծեծի է ենթարկվել և դանակահարվել: Տղամարդու մարմինն անդամահատվել է, նրա հետանցքում կոշտ առարկա է մտցված:

ա)Որոշեք թե, արդյոք տեղի է ունեցել հանցագործություն: Այո՝ մարդասպանություն:
բ) Գտեք սցենարում կողմնակալ շարժառիթի ապացույցները:

Տուժողի/վկայի ընկալումը. տուժողը տրանսգենդեր է:

Բռնության էությունը. ծայրահեղ բռնություն, սեռական օրգանների խեղում, դանակահարություն:

գ) Ինչպիսի՞ այլ ապացույցներ կարող է փնտրել ոստիկանությունը:

Մեկնաբանություններ, գրավոր ցուցմունք. Որևէ գրավոր ապացույց բնակարանում/մեկնաբանություններ սոցիալական ցանցերում:

Նմանատիպ հանցագործություններ. Նմանատիպ գործելաոճի ապացույցներ այլ սպանությունների/բռնի հարձակումների ժամանակ:

Այլ շարժառիթների բացակայություն. Արդյո՞ք տուժողին թալանել են: Արդյո՞ք առկա է ներգրավված անձանցից որևէ մեկի հետ առնչվող որևէ պատմություն, որը կբացատրեր նման հարձակումը:

դ) Որոշեք, թե արդյո՞ք միջադեպը ատելության հիմքով հանցագործություն է, ելնելով «ա» և «բ» կետերից:

Միջադեպը ատելության հիմքով հանցագործություն է, քանի որ այն համատեղում է քրեական հանցագործությունն ու կողմնակալ շարժառիթը:

Սցենար 6.

20-ամյա երիտասարդը ծանոթությունների կայքում ծանոթանում է տարեց նույնասեռական տղամարդու հետ: Նրանք հանդիպում են հյուրանոցում և գիշերում միասին: Երիտասարդն իր սմարթֆոնով գաղտնի ձայնագրում է երկուսի միջև սեռական հարաբերությունները: Որոշ ժամանակ անց երիտասարդը սկսում է շանտաժի ենթարկել տարեց տղամարդուն՝ ասելով, որ եթե իրեն որոշակի գումար չտա, կուղարկի տեսահոլովակը նրա ընտանիքին և գործընկերներին:

ա)Որոշեք թե, արդյոք տեղի է ունեցել հանցագործություն. Այո՝ շանտաժ
բ) Գտեք սցենարում կողմնակալ շարժառիթի ապացույցները.

Տուժողի/վկայի ընկալումը. Տուժողը նույնասեռական է: Հանցագործը կարող է նույնպես նույնասեռական լինել:

Մեկնաբանություններ. Հանցագործը սպառնում է, որ տղամարդը կտեղեկացնի տուժողի նույնասեռական լինելու փաստն այն մարդկանց, ովքեր կարող են բացասաբար արձագանքել:

գ) Ինչպիսի՞ այլ ապացույցներ կարող է փնտրել ոստիկանությունը:

Նմանատիպ հանցագործություններ. Շանտաժի ենթարկողի կողմից նմանատիպ իրավախախտումների ապացույցներ.

դ) Որոշեք, թե արդյո՞ք միջադեպը ատելության հիմքով հանցագործություն է, ելնելով «ա» և «բ» կետերից:

Միջադեպը ատելության հիմքով հանցագործություն է, քանի որ այն համատեղում է քրեական հանցագործությունն ու կողմնակալ շարժառիթը: Թեև հանցագործը կարող է նույնպես գեյ լինել, տուժողին նա ընտրել է՝ ելնելով նրա սեռական կողմնորոշումից՝ գիտակցելով այն լծակները, որոնք նա կարող է օգտագործել հասարակական նախապաշարումների պատճառով:

Սցենար 7.

17 տարեկան ինտերսեքս անձը, ով իրեն ներկայացնում և նույնականացնում է որպես տղամարդ, բացահայտում է իր կարգավիճակը դասընկերոջը և խնդրում է պահպանել այն գաղտնի: Հաջորդ օրը ֆիզկուլտուրայի պարապմունքից առաջ հանդերձարանում դասընկերը ևս 5 աշակերտների հետ շրջապատում են տուժողին և պահանջում, որ նա հանի տաբատը, որպեսզի «տեսնեն, թե ինչ կա այնտեղ»: Երբ նա հրաժարվում է, տղաները հանում են նրա տաբատը, բռունցքով հարվածներ հասցնում և անվանում նրան «այլանդակ» և «պիդառաստ»: Նրան թողնում են հատակին ընած, վերցնելով տաբատն ու ներքնազգեստը: Տուժողը քթի կոտրվածք ունի, գտնվում է ծանր սթրեսային վիճակում և միջադեպից հետո հրաժարվում է վերադառնալ դպրոց:

ա)Որոշեք թե, արդյոք տեղի է ունեցել հանցագործություն. Այո՝ ֆիզիկական հարձակում:
բ) Գտեք սցենարում կողմնակալ շարժառիթի ապացույցները:

Տուժողի/վկայի ընկալումը. Տուժողն ինտերսեքս է և խորապես վրդովված է կատարվածից՝ ընկալելով, որ իր վստահությունը կոպիտ կերպով չարաշահվել է:

Մեկնաբանություններ. Հանցագործները տուժողի մարմնի և սեռական օրգանների վերաբերյալ վիրավորական արտահայտություններ են օգտագործել: Օգտագործվել է նաև հոմոֆոբ լեզու:

Բռնության էությունը. Հարձակումը հատկապես դաժան բնույթ էր կրել և թիրախավորել էր տուժողի սեռական օրգանները՝ պատռված էր նրա տաբատը և ներքնազգեստը:

գ) Ինչպիսի՞ այլ ապացույցներ կարող է փնտրել ոստիկանությունը:
դ) Որոշեք, թե արդյո՞ք միջադեպը ատելության հիմքով հանցագործություն է, ելնելով «ա» և «բ» կետերից:

Միջադեպը ատելության հիմքով հանցագործություն է, քանի որ այն համատեղում է քրեական հանցագործությունն ու կողմնակալ շարժառիթը: Հարցեր կարող են առաջանալ ազգային օրենսդրությամբ սահմանված քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքի հետ կապված (հանցագործները դեռահասներ են եղել) և արդյոք սեռային հատկանիշների հիման վրա ատելության հանցագործությունը նախատեսված է գործող իրավական դաշտում:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.6. ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱԳԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԼԳԲՏԻ ՀԱՄԱՅՆՔԸ (30 ՐՈՊԵ)

Այս գործունեությունը նախատեսում է նյութի ընթերցանություն և կազմակերպված ընդհանուր խմբային քննարկում:

Պահանջվող նյութեր՝

Օժանդակ նյութ 4.6

1. Կարդացեք օժանդակ նյութ 4.6-ում նշված երկու օրինակները:
2. Խնդրեք ներկա գտնվող ոստիկանության ծառայողներին դիտարկել օժանդակ նյութում բարձրացված կետերը:
3. Խնդրեք ներկա գտնվող ոստիկանության ծառայողներին ներկայացնելու, թե իրենց կարծիքով ինչպիսին է իրենց աշխատանքային տարածքում ԼԳԲՏԻ համայնքի և ոստիկանության միջև վստահության մակարդակը:
4. Հարցրեք ներկա գտնվող ոստիկանության ծառայողներին, թե իրենց կարծիքով, ինչ տեղի կունենա, եթե հաջորդ շաբաթ նման միջադեպեր տեղի ունենան իրենց քաղաքում:
5. Խնդրեք ներկա գտնվող ոստիկանության ծառայողներին նշել, թե իրենց կարծիքով ինչ կարող են իրենք անել անհատապես և ոստիկանական ծառայության կազմում՝ վստահության մակարդակը բարձրացնելու համար:

Ի գիտություն դասընթացավարի. Կարող են լինել տեղական իրողությանն ավելի բնորոշ կամ ավելի թարմ օրինակներ, որոնք կարող եք օգտագործել ներկայացված օրինակների փոխարեն:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹ 4.6 ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ- ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ և ԼԳԲՏ ՀԱՄԱՅՆՔԸ

Հետևյալ օրինակները հիմնված են իրական իրադարձությունների վրա և ցույց են տալիս ոստիկանության ծառայողների երկու խիստ տարբեր արձագանքները ԼԳԲՏԻ անձանց դեմ հանցագործությունների նկատմամբ: Դրանք ամփոփվել են՝ ընդգծելու ուսուցման հիմնական կետերը: Թեև դրանք տեղի են ունեցել տարբեր երկրներում տարբեր ժամանակահատվածներում, սակայն դրանց փորձառությունը նմանատիպ է:

Այստեղ առանցքայինն այն հանգամանքն է, որ ատելության հիմքով հանցագործությունները արդյունավետորեն հետաքննելու հնարավորությունը զգալիորեն մեծանում է, երբ ԼԳԲՏԻ համայնքի և ոստիկանության միջև գոյություն ունեն դրական հարաբերություններ:

Ոստիկանության կողմից շարունակական հիմունքներով վստահության մթնոլորտ ձևավորելու գործողությունները նպաստում են ոստիկանության աշխատանքին երկու հիմնական ուղղություններով:

- Նախ, թույլ են տալիս ստեղծել տեղեկատվական հոսք և օպերատիվ տվյալներ, որի հիման վրա ոստիկանության աշխատակիցները կարող են պրոակտիվ քայլեր ձեռնարկել՝ ատելության հողի վրա հանցագործությունները հնարավորինս արագ կանխելու համար:
- Երկրորդ, կարող են մոտիվացնել անձին միջադեպից հետո այցելել ոստիկանություն՝ դեպքի մասին հաղորդելու որպես տուժող կամ տեղեկություններ տրամադրելու որպես վկա:

Դիտարկեք ստորև բերված դեպքերը և այնուհետև քննարկեք կետ առ կետ:

Պրակտիկ օրինակ Ա) Նույնասեռական տղամարդու սպանությունը

Այդ օրը հանրությանը հայտնի նույնասեռական տղամարդն այցելել էր քաղաքի կենտրոնի մի շարք բարեր: Օրվա վերջում նա տուն վերադարձավ մեկ այլ տղամարդու ուղեկցությամբ, ում հանդիպել էր այդ գիշեր: Հաջորդ օրը նրան մահացած գտել էին հյուրասենյակում՝ պարանոցի և կրծքավանդակի շրջանում դանակի բազմաթիվ հարվածներով:

Ոստիկանությունն օգտագործեց հետաքննությունը քաղաքում նույնասեռական անձանց տվյալների շտեմարան ստեղծելու համար: Քաղաքի նույնասեռական անձանց հրահանգել էին ներկայանալ քաղաքի կենտրոնի ոստիկանական բաժանմունք՝ լուսանկարվելու և մատնահետքերը վերցնելու համար: Բազմաթիվ հաղորդումներ են եղել, որ ոստիկանությունը բռնության է դիմել և ահաբեկել նույնասեռական անձանց՝ ստիպելու նրանց գնալ ոստիկանության բաժին: Հետաքննության արդյունքում հարցաքննվեցին, լուսանկարվեցին և մատնահետքեր թողեցին գրեթե 1500 նույնասեռական անձինք:

Քաղաքում բնակվող նույնասեռականների մասին տեղեկատվության հավաքագրումը դադարեց, երբ նույնասեռականների համայնքային խմբերը դիմեցին տեղական ոստիկանության ղեկավարների դեմ իրավական պաշտպանության համար:

Հետաքննությունն իրականացնող ոստիկանության ծառայողները նշել էին, որ հետաքննությանն աջակցություն համայնքից չի եղել: Դեպքն այդպես էլ չբացահայտվեց:

Պրակտիկ օրինակ Բ) ԼԳԲՏԻ համայնքի հավաքների վայրում ռումբի պայթեցում

«Աջ ծայրահեղականը երկաթյա մեխերով լիցքավորված ռումբ էր տեղադրել ԼԳԲՏԻ բարում: Պայթյունի հետևանքով զոհվել էր երեք մարդ, վիրավորվել 70: Միջոցառումից մի քանի օր անց մոտակա հրապարակում ԼԳԲՏԻ խմբերի կազմակերպած բացօթյա հանդիպումն այցելել էր տեղամասի ոստիկանապետը, որը դիմել էր ԼԳԲՏԻ համայնքին: Նա հայտարարել էր, որ այն փողոցում, որտեղ տեղի էր ունեցել պայթյունը կգործի ոստիկանական շրջիկ ջոկատը մինչև հետաքննության ավարտը: Շրջիկ ջոկատն այցելել էին բազմաթիվ ԼԳԲՏԻ անձինք և ցուցմունք տվել ոստիկանության ծառայողներին:»:

Խմբային քննարկում.

Պրակտիկ օրինակ 1. Նույնասեռական տղամարդու սպանություն

- Ի՞նչ կանեիք, եթե ղեկավարեիք նկարագրված դեպքի հետաքննությունը:
- Ո՞րն էր այս դեպքում ոստիկանության առաջնային գործառույթը:
- Ի՞նչ ազդեցություն ունեցավ ոստիկանության մոտեցումը ԼԳԲՏԻ համայնքի և նրա անդամների վրա:

- Ի՞նչ ազդեցություն ունեցավ ոստիկանության մոտեցումը քրեական հետաքննության վրա:
- Եթե հաջորդ շաբաթ նմանատիպ սպանություն տեղի ունենա ձեր քաղաքում, կկարողանա՞ք կապ հաստատել ԼԳԲՏԻ վկաների հետ: Արդյո՞ք նրանք կարծագանքեն հրապարակային կոչին՝ ներկայանալ և տեղեկություն տալ ոստիկանություն:

Պրակտիկ օրինակ 2. ԼԳԲՏԻ համայնքի հավաքների վայրում ռումբի պայթեցում

- Ի՞նչ կանեիք, եթե ղեկավարեիք նկարագրված դեպքի հետաքննությունը:
- Ո՞րն էր այս դեպքում ոստիկանության առաջնային գործառույթը:
- Ի՞նչ ազդեցություն ունեցավ ոստիկանության մոտեցումը ԼԳԲՏԻ համայնքի և նրա անդամների վրա:
- Ի՞նչ ազդեցություն ունեցավ ոստիկանության մոտեցումը քրեական հետաքննության վրա:
- Եթե հաջորդ շաբաթ նմանատիպ հանցագործություն տեղի ունենա ձեր քաղաքում, կկարողանա՞ք կապ հաստատել ԼԳԲՏԻ վկաների հետ: Արդյո՞ք նրանք կարծագանքեն հրապարակային կոչին՝ ներկայանալ և տեղեկություն տալ ոստիկանություն:

Ընդհանուր քննարկման հարց.

- Եթե վկաները խուսափում են ոստիկանությանը տեղեկություններ տրամադրելուց, ի՞նչ կարող են անել ոստիկանության ծառայողները ԼԳԲՏՔ համայնքի հետ փոխվստահություն ձևավորելու շահելու համար:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.7. ԼԳԲՏ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԱՐՁԱԳԱՆՔ (15 ՐՈՊԵ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՕՐԻՆԱԿԻ ՀԱՄԱՐ)

Այս վարժությունը նախատեսում է նյութի կարճ ընթերցանություն և հարցերի քննարկում փոքր խմբերում, որին հաջորդում է նյութի ներկայացումը և քննարկումն ընդհանուր խմբում: Բոլոր սցենարները իրական կյանքից են և արտացոլում են ոստիկանության և ԼԳԲՏԻ համայնքին առնչվող իրավիճակներ:

Ի գիտություն դասընցավարի. Նախքան ստորև բերված օրինակներին անդրադառնալը, վերապատրաստման մասնակիցները պետք է ուսումնասիրեն այն սցենարները, որոնցում կարող են ներգրավված լինել տվյալ երկրի ոստիկանության ծառայողները: Ստորև բերված դեպքերը և քննարկման կետերը ցանկալի է օգտագործել որպես ուղեցույց, այլ ոչ թե ուղղակիորեն կիրառել դրանց թարգմանված տարբերակը, եթե սցենարը չի համապատասխանում տեղական կարիքներին: Օգտագործված ցանկացած օրինակ պետք է կազմվի այնպես, որ այն առնչվի տեղական ոստիկանությանը՝ օգտագործելով տեղական անուններ, բնակավայրերի անվանումներ և այլն՝ մասնակիցների համար օրինակները հնարավորինս իրական դարձնելու համար:

Պահանջվող նյութեր՝

Օժանդակ նյութ 4.7 (կամ այլ նման օրինակներ) ,
Թուղթ, Գրիչներ

1. Մասնակիցներին բաժանեք խմբերի
2. Յուրաքանչյուր խմբին հանձնարարեք ընթերցել կարճ պրակտիկ օրինակը:
3. Խմբին հանձնարարեք քննարկել պրակտիկ օրինակը և պատասխաններ տալ յուրաքանչյուր սցենարի քննարկման կետերին:
4. Պատասխանների արձանագրումը հանձնարարվում է խմբի որևէ անդամին:
5. Վերադարձրեք մասնակիցներին ընդհանուր խումբ և քննարկեք ներկայացված պրակտիկ օրինակներն ու բարձրացված հարցերը՝ կենտրոնանալով ոստիկանության ծառայողներից ակնկալվող արհեստավարժ արձագանքի վրա:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹ 4.7. ՊՐԱԿՏԻԿ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Օրինակ 1. Հարձակում նույնասեռականների բարի վրա

Մայքլը փաստաբան է, աշխատում է քաղաքի կենտրոնի իրավաբանական գրասենյակում: Մի անգամ գիշերվա ժամը 2-ին նա դուրս է գալիս քաղաքի կենտրոնում գտնվող գեյ ակումբից իր զուգընկերոջ Ալեքսի հետ: Ակումբի մուտքի դուռը գտնվում է չլուսավորված արահետի հարևանությամբ: Արահետի եզրում երիտասարդների ավազակախումբ է հավաքված: Երբ զույգը անցնում է ավազակախմբի կողքով, երիտասարդները հարձակվում են նրանց վրա և ծեծում, բռունցքներով և ոտքերով հարվածում նրանց, երբ նրանք արդեն պառկած են գետնին: Ավազակախմբի անդամները նրանց կոչում են «պիդառաստներ» : Երբ ավազակախումբը հեռանում է տուժողները վերադառնում են ակումբ, որտեղ անվտանգության աշխատակիցն առաջին օգնություն է նրանց ցույց տալիս:

Ալեքսն ուզում է զանգահարել ոստիկանություն, բայց Մայքլն ասում է «ոչ»: Նա վախենում է գործի մանրամասների հրապարակումից և դատարան դիմելուց, որի դեպքում նրա նույնասեռական լինելու մասին կիմանան նրա գործընկերները, հաճախորդները և ընտանիքի անդամները: Մայքլը Ալեքսին ասում է. «Նման բաներ գեյերի հետ երբեմն պատահում են, պարզապես պետք է համակերպվել դրա հետ»:

Օրինակ 1. Քննարկման կետեր

- Արդյո՞ք Մայքլն ու Ալեքսը հարձակման մասին պետք է հայտնեին ոստիկանություն:
- Ո՞րը կլիներ զուգընկերների համար ցանկալի արդյունքը, եթե նրանք հայտնեին այդ մասին:
- Ո՞րը կլիներ ոստիկանության համար ցանկալի արդյունքը, եթե նրանք հանցագործության մասին հաղորդում ստանային:
- Եթե հարձակման մասին չհաղորդեն, ի՞նչ հետևանքներ դա կունենա ա) զուգընկերների, բ) տեղի ԼԳԲՏ համայնքի և գ) ոստիկանության համար:
- Ինչպե՞ս կարող է ոստիկանությունը շահագրգռել մարդկանց հաղորդել նման դեպքերի մասին:

Օրինակ 2 (ա). Հանրային վայրերում սեռական գործողություններ

Դուք պարեկություն եք կատարում ծովամերձ տարածքում: Կեսգիշերին մոտ է և դրսում մութ է: Ծովափին մեքենա եք հանդիպում, որի հետևի նստատեղին մի երիտասարդ տղամարդ և մի երիտասարդ կին են: Երկուսն էլ գոտկատեղից մերկ են:

Նրանք օրալ սեքսով են զբաղվում:

Օրինակ 2 (բ). Հանրային վայրերում սեռական գործողություններ

Դուք պարեկություն եք կատարում ծովամերձ տարածքում: Կեսգիշերին մոտ է և դրսում մութ է: Ծովափին մեքենա եք հանդիպում, որի հետևի նստատեղին երկու երիտասարդ տղամարդ են: Երկուսն էլ գոտկատեղից մերկ են:

Նրանք օրալ սեքսով են զբաղվում:

Օրինակ 2. Քննարկման կետեր

- Արդյո՞ք նախկինում հանդիպել եք (բ) սցենարում նկարագրված իրավիճակների:
- Ինչպե՞ս կվարվեիք նման դեպքում:
- Արդյոք (ա) և (բ) սցենարների դեպքում տարբեր կերպ կվարվեիք:
- Որո՞նք են այն գործոնները, որոնք դուք հաշվի եք առնում այս սցենարում ձեր գործողությունները որոշելիս:
- Եթե հանդիպեք (ա) և (բ) սցենարներում նկարագրված իրադրության, և պարզվի, որ ներգրավված անձանցից մեկը վարձատրվող սեքսաշխատող է. ա) ո՞ր գործողությունները ճիշտ կլինեն և բ) ի՞նչ է նախատեսում ձեր երկրի օրենսդրությունը նման դեպքերում:

Օրինակ 3. Հանրային վայրերում սեռական գործողություններ՝ զուգընկեր որոնելը և հարձակում

Ռիչարդն աշխատում է խոշոր ապահովագրական ընկերությունում որպես միջին օղակի ղեկավար: Նա ամուսնացած է, ունի երեք երեխա և ապրում է փոքրիկ քաղաքում: Ռիչարդը տեղյակ է դառնում

ավտոմայրուղու հարևանությամբ գտնվող մի վայրի մասին, որը տղամարդիկ այցելում են անանուն սեռական բնույթի հանդիպումներ ունենալու համար: Ռիչարդը մեքենայով շարժվում է այնտեղ և շրջում մոտակա անտառապատ տարածքով: Ռիչարդը հանդիպում է մի տղամարդու և նրա հետ գնում անտառ՝ սեռական հարաբերություն ունենալու համար: Երբ նրանք խորանում են անտառում, տղամարդը ծեծում է Ռիչարդին և երբ Ռիչարդ կորցնում է գիտակցությունը, խլում նրա դրամապանակն ու հեռախոսը: Որոշ ժամանակ անց Ռիչարդին հայտնաբերում են և շտապօգնության մեքենայով տեղափոխում տեղի հիվանդանոց, որտեղ նա ուշքի է գալիս: Հիվանդանոցի աշխատակիցները ծանուցում են ոստիկանությանը է և ոստիկանության ծառայողն այցելում է հիվանդանոցը միջադեպի հանգամանքները պարզելու համար:

Օրինակ 3. Քննարկման կետեր

- Ինչպե՞ս է գործում ոստիկանությունը հասարակական վայրում սեռական հարաբերություններ ունեցող անձանց իրավունքները պաշտպանելու համար, նույնիսկ եթե դա արգելված կարող է լինել:
- Եթե Ռիչարդը ոստիկանությանը չհաղորդի իր հետ կատարվածի մանրամասները, ի՞նչ վտանգներ կան նրա և հանրության համար: Արդյո՞ք առկա է իրավախախտի կողմից կրկնահանցագործություն կատարելու վտանգը:
- Ինչո՞ւ են հանցագործները նախընտրում կողոպտել և հարձակվել մարդկանց վրա նման հանգամանքներում:
- Անձնական կյանքի գաղտնիության հետ կապված ի՞նչ խնդիրներ են առաջանում այս սցենարում:

Օրինակ 4. Դպրոցում՝բուլիինգ և հարձակում

Թոմասը միջնակարգ դպրոցում սովորող 15-ամյա երիտասարդ է: Նա հանգիստ և աշխատասեր անձնավորություն է, դասընկերների հետ չի մասնակցում «արական» խաղերի՝ ֆուտբոլ կամ ռեգբի չի խաղում: Մյուս տղաները նրան անվանում են «գոմիկ», «պիդառաստ»,» և այլ նվաստացուցիչ մականուններով, որոնք ենթադրում են նույնասեռականություն և չեն համապատասխանում «իրական տղամարդու» մասին գենդերային ակնկալիքներին: Մի օր Թոմասի համադասարանցիներն իմանում են, որ Թոմասին տեսել են քաղաքի կենտրոնում նույնասեռականների հանդիպումների վայրում:

Հաջորդ օրը ֆիզկուլտուրայի դասից առաջ Թոմասին դաժան ծեծի են ենթարկում դպրոցի հանդերձարանում: Ծեծելիս տղաները նրան անպատվում են հոմոֆոբ բնույթի հայհոյական բառերով գլուխը մտցնում են զուգարանակոնքի մեջ և ջուրը քաշում : Այդ օրը Թոմասը հեռանում է դպրոցից և այլևս չի վերադառնում:

Օրինակ 4. Քննարկման կետեր

- Արդյո՞ք այս հարցը ենթակա է ոստիկանական քննության:
- Արդյո՞ք դպրոցի ղեկավարությունը պարտավոր է վերահսկել նման միջադեպերն իրենց դպրոցներում, թե դա ոստիկանության պարտականությունն է:
- Ի՞նչ ազդեցություն ունի հոմոֆոբ բառերի և նմանատիպ նվաստացուցիչ արտահայտությունների օգտագործումը դպրոցներում և լայն հասարակությունում:
- Ինչպե՞ս կարելի է կանխել նման միջադեպերը:

Օրինակ 5. Առցանց ծանոթություն և գողություն

Ջոնը տարրական դպրոցի ուսուցիչ է փոքրիկ քաղաքում: Նա իր ընտանիքին և կրոնական կազմակերպության կողմից ֆինանսավորվող դպրոցի գործընկերներին չի պատմում, որ նույնասեռական է: Նա ունի տարեց ծնողներ և որոշել է թաքցնել իր նույնասեռական լինելը, քանի դեռ նրանք ողջ են, համոզված լինելով, որ նրանք երբեք չեն համակերպվի այդ փաստի հետ: Նա նաև վախենում է, որ կկորցնի իր ժամանակավոր աշխատանքը դպրոցում, եթե գործատուները պարզեն, որ նա նույնասեռական է:

Ջոնը հաճախում է նույնասեռականների համար սոցիալական ցանցի մի կայք, որպեսզի ծանոթանա այլ նույնասեռական տղամարդկանց հետ: Մի երեկո նա իր տուն է հրավիրում Ալֆրեդին, ում հետ ծանոթացել է սոցիալական կայքում: Ալֆրեդը գիշերում է նրա տանը, իսկ առավոտյան շուտ հեռանում է: Հեռանալիս նա իր հետ վերցնում է Ջոնի աշխատանքային նոութբուքն ու դրամապանակը: Ջոնը ստիպված է ոստիկանությանը հայտնել դպրոցի նոութբուքի գողության մասին:

Case 5 – Discussion points

- Արդյոք հավանական է, որ տուժողը կհայտնի դեպքի մասին ոստիկանությանը:
- Ի՞նչ տեղեկություններ պետք է ունենա ոստիկանությունը՝ գործն արդյունավետ վարելու համար:
- Ո՞րն է տուժողի համար ցանկալի արդյունքը:
- Ո՞րն է ոստիկանության համար ցանկալի արդյունքը:
- Ի՞նչը կօգնի, որ տուժողը վստահի ոստիկանությանը:
- Կարո՞ղ է արդյոք ոստիկանությունը հանգուցալուծել գործը՝ առանց տուժողի խոստովանության:
- Արդյո՞ք ոստիկանության կողմից քննվող յուրաքանչյուր քրեական գործով ցանկալի արդյունքը հաջողությամբ ավարտված քրեական հետապնդում է:
- Ինչպե՞ս պետք է գործի ոստիկանությունը, որպեսզի տուժողը չթաքցնի կամ չխեղաթյուրի փաստերը՝ որպես գեյ կամ լեսբի ճանաչվելու մտավախությամբ դրդված:

Case 6 – Blackmail

Սյուզանը լեսբի է, բայց թաքցնում է դա: Նա 16 տարի առաջ ամուսնացել է Փիթերի հետ և նրանք ունեն 14 տարեկան երեխա: Ամուսնու հետ նա գրեթե չի շփվում, սակայն չի խզում ամուսնությունը՝ ելնելով որդու շահերից: Սյուզանը պետական հիմնարկի ավագ պաշտոնյա է:

Գործընկերներից մեկը հայտնաբերում է, որ նա լեսբի է և սպառնում է բացահայտել նրա սեռական կողմնորոշումը ամուսնուն և հիմնարկի ղեկավարությանը, եթե Սյուզանը նրան խոշոր գումար չտա: Սյուզանն ուզում է ոստիկանությանը պատմել շանտաժի մասին, բայց վախենում է, որ նրանք կարող են չհասկանալ իր դրությունը: Նա նաև վախենում է, որ ոստիկանությունը կհայտնի այդ մասին իր ամուսնուն:

Օրինակ 6. Քննարկման կետեր

- Արդյոք ԼԳԲՏ անձինք, ովքեր թաքցնում են իրենց սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը, ավելի մեծ հավանականությամբ կարող են շանտաժի ենթարկվել:
- Ո՞րն է պատճառը:
- Ինչ հետևանքներ կունենա այդ փաստի բացահայտումը Սյուզանի համար:
- Որքանո՞վ է մեծ հավանականությունը, որ շանտաժի ենթարկվող անձինք այդ մասին կհայտնեն ոստիկանութանը:
- Ի՞նչ պետք է անի ոստիկանությունը, որպեսզի խրախուսի շանտաժի ենթարկվող մարդկանց հաղորդել այդ մասին:
- Ի՞նչ պարտականություն է կրում ոստիկանությունը Սյուզանի անձնական տվյալների գաղտնի պահելու հարցում:

ՄՈԴՈՒԼ 4-Ի ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ

Danish Institute for Human Rights. (2011) Hate Crime Tool Kit: A guide for Police ILGA, Draft report on incidents of homophobic and transphobic hate crime.

Federal Bureau of Investigation. (2015) Hate Crime Data Collection Guidelines and Training Manual.

Franey, P and Del Aguila E. (2012) Supporting LGBT Communities: Police Toolkit, UCD School of Social Justice, G-Force and the European Gay Police Association.

Logar, R. and Marvanove Vargova B. (2015) Effective Multi-Agency Cooperation for Preventing and Combating Domestic Violence (Council of Europe)

National Coalition of Anti-Violence Programmes and The National Centre for Victims of Crime. (2010) Why it matters: Rethinking Victim Assistance for Lesbian, Gay, Bisexual, Transgender and Queer Victims of Hate Violence and Intimate Partner Violence.

National Centre for Transgender Equality. (2009) Responding to hate crime: A community resource manual Office for Victims of Crime. (2014) Responding to Transgender Victims of Sexual Assault

Polack, R. and LeDeroff, J. (2010) ILGO Europe Toolkit for training police officers on tackling homophobic crime, ILGA Europe.

Polack, R. and LeDeroff, J. (2010) Joining Forces to Combat Homophobic and Transphobic Hate Crime: Cooperation between Police Forces and LGBT Organisations in Europe, ILGA Europe.

Scottish Transgender Alliance. (2013) Gender Identity, Introductory Guide for Supporting Transgender Persons www.scottishtrans.org/resources/

Stout, B. (2010) Equality and Diversity in Policing, Learning Matters Limited, Exeter.

Մոդուլ 5. Աշխատանքը քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ (ՔՀԿ-ներ)

ԱՄՓՈՓԱԳԻՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Եվրոպայի խորհուրդը երկար տարիներ է ինչ քաղաքացիական հասարակությունը դիտում է որպես «եվրոպական հասարակության կենսական բաղադրիչ և ժողովրդավարության կարևոր և անբաժանելի տարր»[56]: Ի լրումն ռասիզմի և այլատյացության դեմ պայքարի ուղղությամբ գործողությունների գնահատման, Խորհուրդը և նրա կառույցները, ներառյալ Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովը (ՌԱԵՀ) և Մարդու իրավունքների հանձնակատարը, հատուկ հետևում են ազգային մակարդակով առաջընթացին՝ անդրադառնալով սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականությանը: Ազգային մակարդակում խտրականության և մարդու իրավունքների վիճակի գնահատման նպատակով երկրների զեկույցները պատրաստելու և այցելությունները կազմակերպելու համար նրանք ուսումնասիրել և հիմք են ընդունել ՔՀԿ-ների տվյալները:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ) հաճախ ատելության հիմքով հանցագործությունների տուժողների օգնության առաջին օղակն են: Շատերը տրամադրում են կարևոր հոգեբանական, գործնական, իրավական և, երբեմն, բժշկական աջակցություն: Որպես այդպիսին, դրանք ոստիկանության համար կարևոր ռեսուրս են և կարող են օգնել ոստիկանությանը հասկանալ ատելության հիմքով հանցագործությունների իրական հետևանքները տուժողների և նրանց համայնքների համար: Շատ հաճախ ՔՀԿ-ների կողմից տրամադրվող աջակցության շնորհիվ տուժողները ավելի պատրաստակամ են համագործակցելու ոստիկանության հետ հետաքննության ընթացքում և քրեական արդարադատության հետագա գործընթացում:

Գործընկերային համագործակցությունը միշտ չէ, որ հեշտ է: Որոշ դեպքերում քաղաքացիական հասարակության և ոստիկանության միջև կարող է առաջանալ փոխադարձ անվստահություն: Այս մոդուլն օգնում է մասնակիցներին հասկանալ ՔՀԿ-ների աշխատանքը և ինչպես կարող է ոստիկանությունը լավագույնս աշխատել նրանց հետ՝ բարելավելու տուժողների սպասարկումը: Այն նախատեսում է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների անմիջական մասնակցություն, որոնք ներկայացնում են իրենց մատուցած ծառայությունները, հավաքած տվյալները և այն ամենը, ինչ նրանք իմացել են ԼԳԲՏԻ տուժողների կարիքների վերաբերյալ: Մասնակիցներն այնուհետև հնարավորություն կունենան աշխատելու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ՝ բացահայտելու բարելավման կարիք ունեցող ոլորտները և համատեղ աշխատանքի հեռանկարները:

Վերապատրաստման գործընթացում այս մոդուլով նախատեսված քաղաքացիական հասարակության կազմակեպությունների ներգրավումը չափազանց կարևոր է: Մոդուլը կարող է իրականացվել նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունների աշխատավայրում: Մասնակիցներին դա հնարավորություն կտա անմիջականորեն ծանոթանալ կազմակերպության հետ՝ ևս մեկ անգամ ընդգծելով այն ուղերձի կարևորությունը, որ ՔՀԿ-ները ոստիկանության կարևոր գործընկերն են ԼԳԲՏԻ անձանց դեմ ուղղված հանցագործությունների բնույթի ըմբռնման և դրանց արդյունավետ լուծման գործում, ինչպես նաև ստեղծելով այդ գործընթացում ՔՀԿ-ների հետագա ներգրավման նոր ուղիներ և հնարավորություններ:

56. Բանաձև CM/Res(2016)3 «Միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների Եվրոպայի խորհրդում մասնակցության կարգավիճակը»

ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Մասնակիցները՝

- Պատկերացում կկազմեն, թե ինչ կարող է առաջարկել քաղաքացիական հասարակությունը՝ բարելավելու ատելության հիմքով հանցագործությունների հետաքննությունը և արձանագրումը:
- Կկարողանան համագործակցել տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ ԼԳԲՏԻ անձանց դեմ ատելության հանցագործությունների դեմ պայքարում:
- Հնարավորություն կունենան պլանավորելու քաղաքացիական հասարակության հետ համագործակցությունը:

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 5.1 Ի՞նչ է քաղաքացիական հասարակության կազմակերպությունը, ինչպե՞ս կարող են նրանք օգտակար լինել, ինչպե՞ս կարող ենք միասին աշխատել: (40-45 րոպե)
- 5.2 «Ի՞նչի կարիք ունեմ և ի՞նչ կարող եմ անել, եթե լինեի նրանց տեղում» (45 րոպե)
- 5.3 Համայնքների հետ արդյունավետ հարաբերությունների ձևավորումը (40 րոպե)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 5.1 Ի՞ՆՉ Է ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ, ԻՆՉՊԵ՞Ս ՆՐԱՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ՕԳՆԵԼ:

1. Նախքան վարժությունը՝

   ա. Ուսումնասիրել համապատասխան ազգային և տեղական ՔՀԿ-ները, որոնք աշխատում են ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների դեմ: Կազմել դրանց ցանկը, կոնտակտային տվյալները և կարճ նկարագրություն նրանց աշխատանքի և ծառայությունների մասին: Ավելացնել դրանք Օժանդակ նյութ 5.1-ին՝ ILGA և TGEU կազմակերպությունների մասին տեղեկությունների շարքում:

   բ. Պայմանավորվել համապատասխան ՔՀԿ-ի հետ այս գործողության համատեղ իրականացման մասին: Ցանկալի է, որ ՔՀԿ-ն որակյալ աշխատանքային փորձ ունենա ատելության հիմքով հանցագործությունների մշտադիտարկման և/կամ տուժողների աջակցության ոլորտներում: Համապատասխան կազմակերպության հետ կապ հաստատելու համար դուք կարող եք խորհրդակցել ատելության հիմքով հանցագործությունների հարցերով ազգային փորձագետների հետ: Նախապես պլանավորեք ՔՀԿ-ի հետ համատեղ անցկացվող սեմինարը՝ համաձայնեցրեք հիմնական ուղերձները և նախանշեք բոլոր հնարավոր զգայուն հարցերը, որոնք հավանաբար կքննարկվեն դասընթացի ընթացքում: Մասնավորապես՝ չափազանց զգայուն թեմա է ոստիկանության ծառայողների կողմից տուժողների և/կամ նրանց աջակիցների նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորումը: Նախապես համաձայնեցրեք նման դեպքերի կամ հարցերի շուրջ քննարկումների անցկացման լավագույն մոտեցումը: Հիշեք, որ այս դասընթացի ընդհանուր նպատակն է ուղղակիորեն և օբյեկտիվորեն բացահայտել ՔՀԿ-ների և ոստիկանության միջև ցանկացած հնարավոր խնդիրը և մեղմել նրանց փոխհարաբերություններում հնարավոր լարվածությունը, կենտրոնանալով այն լուծումների և ուղիների վրա, որոնց միջոցով ոստիկանությունը և ՔՀԿ-ները կարող են արդյունավետ համագործակցել ապագայում:

   Նյութի ներկայացման ընթացքում լուսաբանվում են հետևյալ հիմնական կետերը.

   գ. ՔՀԿ-ի աշխատանքը:

   դ. Ատելության հիմքով հանցագործությունների ազդեցությունը տուժողների վրա, ներառյալ պրակտիկ օրինակի կամ անձնական պատմության ուսումնասիրությունը:

   ե. Օրենքներում կամ կատարողական բացերի վերաբերյալ նկատառումները:

   զ. ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների մասին տվյալները, որոնք առկա են հրավիրված ՔՀԿ-ի կամ այլ գործընկեր կազմակերպության մոտ. վերլուծություն, թե որքանով են դրանք համադրելի ոստիկանությունում առկա տվյալների հետ և դրանց միջև տարբերությունների պատճառները (օրինակ՝ տուժողները հանցագործությունների մասին ոստիկանություն չեն հաղորդում, ՔՀԿ-ն և ոստիկանությունը տարբեր չափորոշիչների վրա են հիմնվում և այլն):

   է. Տվյալների գրանցման մեթոդաբանության դիտարկում և գնահատում այն բանի, թե որքանով են հավաստի ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ նրանց տվյալները:

   ը. Պատճառները, թե ինչու տուժողները հանցագործությունների մասին չեն հաղորդում ոստիկանություն:

   թ. Առաջարկություններ, թե ինչպես ոստիկանությունը կարող է լավագույնս աշխատել ԼԳԲՏԻ տուժողների հետ և աջակցել նրանց:

   ժ. Առաջարկություններ առ այն, թե ինչպես ՔՀԿ-ներն ու ոստիկանությունը կարող են միասին ավելի լավ աշխատել:

2. Դասընթացի սկզբում կազմակերպեք կարճ քննարկում՝ մասնակիցներին հարցնելով, թե ինչ գիտեն միջազգային, ազգային և տեղական մակարդակներում ՔՀԿ-ների կողմից իրականացվող աշխատանքի մասին:

   Քննարկման ընթացքում կարող եք առաջարկել հետևյալ տեղեկությունները.

   ՔՀԿ-ները կարող են՝

   - Լինել խոշոր միջազգային կազմակերպություններ, որոնք աշխատում են մի շարք հարցերի շուրջ, այդ թվում՝ ատելության հիմքով հանցագործությունների և մարդու իրավունքներին առնչվող ավելի լայն հարցերի, օրինակ՝ «Amnesty International-ը» կամ Human Rights Watch-ը:

- Հատուկ կենտրոնանալ ԼԳԲՏԻ խնդիրների և իրավունքների վրա, օրինակ՝ ILGA և TGEU կազմակերպությունները:
- Ներգրավվել մի շարք գործողություններում՝ ատելության հիմքով հանցագործությունների մշտադիտարկման, զեկուցների պատրաստման, իրազեկման արշավների:
- Տվյալներ և տեղեկատվություն ներկայացնել միջազգային կազմակերպություններին, ներառյալ Եվրոպայի խորհրդին, ատելության հիմքով հանցագործությունների հարցում ազգային իրավիճակի վերաբերյալ:
- Ուղղակի աջակցություն ցուցաբերել ատելության հիմքով հանցագործությունների տուժողներին և օգնել նրանց, որպեսզի հանցագործությունների մասին միասին հաղորդեն ոստիկանություն, հայցելով տուժողների համաձայնությունը:

3. Մասնակիցներին խնդրեք ընթերցել Օժանդակ նյութ 5.1-ը, որտեղ թվարկված են ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների հետ կապված խնդիրների ասպարեզում գործող միջազգային և ազգային ՔՀԿ-ները:
4. Հրավիրեք ՔՀԿ ներկայացուցչին ներկայացնելու իրենց աշխատանքը:
5. Վերջում անցկացրեք հարց ու պատասխան:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹ 5.1. ԼԳԲՏԻ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ, ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ստորև ներկայացված են ատելության հիմքով հանցագործությունների դեմ պայքարող մի շարք միջազգային և ազգային քաղաքացիական հասարակության կազմակերպություններ: Որոշ ժամանակ տրամադրեք նրանց կայքերն ուսումնասիրելու համար: Դուք կծանոթանաք այլ երկրներում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների մասին տեղեկատվությանը, կուսումնասիրեք, թե ինչպես արձագանքել և ինչ աջակցություն տրամադրել տուժողներին:

Ատելության հիմքով հանցագործությունների դեմ պայքարող միջազգային կազմակերպությունները

Լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանս և ինտերսեքս անձանց միջազգային ասոցիացիայի եվրոպական բաժանմունք (ILGA-Europe)
www.ilga-europe.org/

ILGA-Europe կազմակերպության նպատակն է ապահովել եվրոպական և միջազգային մակարդակներում ատելության հիմքով հանցագործութունների և ատելության խոսքի դեմ պայքարի հետևողականությունը: Կազմակերպությունը վերահսկում է, թե ինչպես են Եվրոպայի խորհրդի անդամ երկրները կատարում ստանձնած տարբեր պարտավորությունները, և աշխատում է իր անդամների հետ ազգային մակարդակում՝ աջակցելու ազգային օրենսդիրների և կառավարությունների կողմից օրենսդրության և քաղաքականության ընդունմանն ուղղված փաստահենք քարոզչությանը:

ILGA-Europeհամագործակցում է մասնագիտական կազմակերպությունների հետ՝ աջակցելու ոստիկանության անձնակազմի, դատախազների, դատավորների և իրավաբանների վերապատրաստանը: Այն կազմակերպում է իր անդամ կազմակերպությունների կողմից ատելության հիմքով հանցագործությունների և միջադեպերի մասին ապացույցների հավաքագրումը և օգնում զարգացնել նրանց կարողություններն այդ ոլորտում: Կազմակերպությունը նաև աջակցում է եվրոպական դատարաններում դատական գործերի քննությանը:

OII Europe (Organisation Intersex International Europe)
https://oiieurope.org/about/

OII Europe կազմակերպությունը մարդու իրավունքների ոլորտում եվրոպական ինտերսեքս կազմակերպությունների հովանոցային կազմակերպություն է: Թեև կազմակերպությունն ուղղակիորեն չի ներգրավված ատելության հիմքով հանցագործություններին դեմ պայքարում, այն հիանալի ռեսուրս է ինտերսեքս անձանց խնդիրներին ավելի լավ ծանոթանալու համար: OII Europe կազմակերպության միջոցով կարելի լրացուցիչ տեղեկություններ ստանալ և կապ հաստատել ազգային անդամ կազմակերպությունների հետ:

Transgender EU (TGEU)
www.tgeu.org

TGEU-ն աշխատում է իր անդամ կազմակերպությունների և գործընկերների հետ՝ վերահսկելու և բարձրացնելու իրազեկվածությունը համաշխարհային և եվրոպական մասշտաբով տրանս անձանց նկատմամբ իրականացվող մարդու իրավունքների խախտումների և բռնության լուրջ դեպքերի մասին: 2009 թվականից ի վեր այդ կազմակերպության «Տրանս սպանությունների մշտադիտարկում» ծրագիրն իրականացնում է ամբողջ աշխարհում փոփոխական գենդերի/տրանս անձանց սպանությունների դեպքերի մասին տեղեկությունների համակարգված հավաքագրումը, մշտադիտարկումը և վերլուծությունը: Եվրոպայում TGEU—ն-ն համագործակցում է գործընկեր կազմակերպությունների հետ՝ արձանագրելու խտրականության, ատելության խոսքի և ատելության հիմքով հանցագործությունները և համայնքային աջակցություն է առաջարկում բռնության տուժողներին/վերապրածներին իր ProTrans ծրագրի շրջանակներում:

Amnesty International
www.amnesty.org

Amnesty International -ը մի շարք ազգային հետաքննություններ է անցկացրել ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ, այդ թվում՝ ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ: Նրանց զեկույցները ներառում են դեպքերի ուսումնասիրություններ, ազգային իրավական և քաղաքականության շրջանակների վերլուծություն և բարելավումների առաջարկություններ:

Փնտրեք նրանց կայքում «Ատելության հիմքով հանցագործություններ» բառերը և կգտնեք տարբեր երկրների մասին մի շարք զեկույցներ:

Human Rights Watch
www.hrw.org

Ինչպես Amnesty International -ը, Human Rights Watch կազմակերպությունը նույնպես ուսումնասիրություններ է անցկացնում ատելության հիմքով հանցագործությունների, այդ թվում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ հանցագործությունների վերաբերյալ: Նրանց զեկույցները նույնպես ներառում են դեպքերի ուսումնասիրություններ, ազգային իրավական և քաղաքականության շրջանակների վերլուծություն և բարելավումների վերաբերյալ առաջարկություններ:

Փնտրեք նրանց կայքում «Ատելության հիմքով հանցագործություններ» բառերը և դուք կգտնեք տարբեր երկրների մասին մի շարք զեկույցներ:

Ազգային կազմակերպություններ, որոնք աշխատում են ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների դեմ պայքարի ոլորտում

Անվանում
Էլ. կայք
Կոնտակտային անձ
Կազմակերպության գործունեության կարճ նկարագրություն (ուսուցում, մշտադիտարկում, տուժողների աջակցություն և այլն):

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 5.2. Ի՞ՆՉԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՄ ԵՎ Ի՞ՆՉ ԿԱՐՈՂ ԵՄ ԱՆԵԼ, ԵԹԵ ԼԻՆԵԻ ՆՐԱՆՑ ՏԵՂՈՒՄ

Այս պարամունքն անցկացվում է ՔՀԿ-ի մասնակցությամբ: Այն կարող է տեղի անցկացվել անմիջապես ՔՀԿ-ի զեկույցից հետո:

1. Նախապես պատրաստեք ֆլիպչարտի հինգ էջ հետևյալ վերտառությամբ.
   - 1-ին էջ՝ «Ի՞նչ է պետք տուժողներին»:
   - 2-րդ էջ՝ «Ի՞նչ է պետք ոստիկանությանը», «Ի՞նչ կարող է անել ոստիկանությունը»:
   - 3-րդ էջ՝ «Ի՞նչ է պետք ՔՀԿ-ներին», «Ի՞նչ կարող են անել ՔՀԿ-ները»:
   - 4-րդ էջ՝ «Ի՞նչ է պետք դատախազությանը», «Ի՞նչ կարող է անել դատախազությունը»:
   - 5-րդ էջ՝ «Ի՞նչ է պետք նախարարություններին», «Ի՞նչ կարող են անել նախարարությունները»:
2. Փակցրեք էջերը սենյակի պատերին և մասնակիցներին գրիչներ բաժանեք:
3. Ներկայացրեք թեման: Մասնակիցներին բացատրեք այս դասընթացի նպատակը: Նրանք պետք է՝
   - հասկանան ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների դեմ պայքարում ներգրավված տարբեր անձանց և կազմակերպությունների մոտեցումները,
   - հատուկ դիտարկեն տուժողների մոտեցումները:
4. Խումբը բաժանեք հինգ փոքր խմբերի: Տրամադրեք նրանց 5-7 րոպե՝ իրենց անունից լրացնելու գծապատկերները: Օրինակ՝ անդրադառնալով տուժողի մասին գծապատկերներին նրանք կարող են ասել՝ «Որպես տուժող ինձ պետք է...»/«Որպես ոստիկան՝ ես կարող եմ...»: Ընդգծեք, որ թեև տուժողները կարող են որոշ քայլերի դիմել, որոնք կօգնեն բարելավել ԼԳԲՏԻ անձանց դեմ ատելության հիմքով հանցագործությունների արձագանքը (օրինակ՝ հաղորդել այդ մասին և համագործակցել քրեական վարույթի ընթացքում), նրանց վրա պետք չէ ճնշում գործադրվել, ստիպելով անել որևէ բան, որը նրանք չեն ցանկանում անել: Նշեք, որ այս առումով տուժողի դերը բոլորովին տարբերվում է ոստիկանության, ՔՀԿ-ների և նախարարությունների դերից, որոնցից յուրաքանչյուրն ունի կոնկրետ գործողությունների ծրագիր: Բացատրեք, որ սա է պատճառը, որ տուժողի մասին էջը տարբերվում է մյուս էջերից (երկրորդ հարցը բացակայում է):
5. Հաղորդեք նրանց, որ 7 րոպեի ավարտին խմբի բոլոր անդամները, բացառությամբ մեկի, անդրադառնում են հաջորդ ֆլիպչարտին: Խումբն ունի 5-7 րոպե հաջորդ ֆլիպչարտը վերլուծելու համար, իսկ այն մեկ անդամը, որը չի միանում խմբին, ներկայացնում է լսարանին, թե ինչ է գրել խումբը՝ սկսելով հետևյալ բառերով «Որպես տուժող ինձ պետք է...»/«Որպես ոստիկան ես կարող եմ...» և այլն: Խումբն այնուհետև անհրաժեշտության դեպքում ներկայացվող ցանկում ավելացնում է լրացուցիչ կետեր:
6. 7 րոպեի ավարտին խմբի անդամներն անդրադառնում են հաջորդ էջին, կրկին բացառությամբ մեկ անդամի (այս դեպքում մեկ այլ) և ևս 5-7 րոպե տրամադրում հաջորդ ֆլիպչարտ էջին, իսկ խմբին չմիացած մասնակիցը ներկայացնում է, թե ինչ է գրել իր խումբը: Խումբը կրկին ըստ անհրաժեշտության լրացումներ է կատարում ցանկում, որից հետո աշխատանքը շարունակվում է նույն ձևաչափով: Շարունակեք այնքան ժամանակ, մինչև բոլոր խմբերն անդրադառնան բոլոր ֆլիպչարտ էջերին:
7. Այնուհետև բոլոր մասնակիցները միավորվում են ընդհանուր խմբում: Հարցրեք նրանց, թե ի՞նչ իրենք սովորեցին այս գործողության ընթացքում, ո՞րն էր իրենց համար զարմանալի, ո՞րն են իրենք օգտակար համարում: Նշեք և գրանցեք հիմնական գործողությունները, որոնք կարող են ձեռնարկվել մոտ և միջին ապագայում՝ բացահայտված խնդիրները լուծելու համար՝ ոստիկանության, ՔՀԿ-ների և այլ շահակիցների միջև համագործակցության միջոցով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 5.3 ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԵՏ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ (1 ԺԱՄ)

Այս վարժությունը բաղկացած է երկու մասից. Առաջին մասը ներառում է պրակտիկ օրինակի ուսումնասիրություն՝ բացահայտելու քաղված դասերը և այն, ինչը կարելի է այլ կերպ անել: Երկրորդ մասը քննարկում է, որի ընթացքում մասնակիցները նշում են հատուկ գործողությունները, որոնք կարող են ձեռնարկվել ազգային մակարդակում՝ ոստիկանության և ԼԳԲՏԻ համայնքների միջև

հարաբերությունները բարելավելու համար: Ինչպես այս մոդուլի մյուս վարժությունների դեպքում, խորհուրդ է տրվում սեմինարին ներգրավել ՔՀԿ-ներ:

5.3ա Ռումինիայում հոմոֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրը նշելու կապակցությամբ իրավապահ մարմինների աշխատանքը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանում քննված գործը «M.C.-ն և A.C.-ն ընդդեմ Ռումինիայի»

1. Դասընթացից առաջ վերցրեք երկու ֆլիպչարտի էջ: Մեկի վրա գրեք՝ «Ի՞նչ խնդիրներ առաջացան», իսկ երկրորդի վրա՝ «Ի՞նչ կարելի էր այլ կերպ անել»:
2. Մասնակիցներին բաժանեք փոքր խմբերի: Եթե ներկա են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներ, նրանք խառը նստում են ոստիկանության աշխատակիցների շարքում: Խնդրեք մասնակիցներին ընթերցել պրակտիկ օրինակը՝ անդրադառնալով վերը նշված հարցերին: Բացատրեք, որ գործողության նպատակը մեղքը ոստիկանության վրա բարդելը չէ: Նշեք, որ Եվրոպայի խորհրդի տարածաշրջանի շատ երկրներ նման մարտահրավերների առջև են կանգնել: Ընդգծեք, որ այս գործն ուսումնասիրելու պատճառն այն է, որ այն իրական դեպք է ներկայացնում, ինչպես նաև, որ այն բարձրացնում է ոստիկանության ծառայողների և համայնքների առջև ծառացած ընդհանուր խնդիրները:
3. Մասնակիցներին հատկացրեք 5-7 րոպե պրակտիկ օրինակն ընթերցելու համար: Խնդրեք նրանց կարճ պատասխաններ տալ երկու հարցերին:
4. Այնուհետև մասնակիցներին վերադարձրեք ընդհանուր խումբ՝ ներկայացնելու իրենց պատասխանները: Խնդիրները քննարկելիս համոզվեք, որ առանձնացրել եք հետևյալ խնդիրները.
   - Մասնակիցները երթից հետո վնասվածքներ են ստացել, թեև հետևել են հագուստը և երթուղին ընտրելու հրահանգներին:
   - Ոստիկանության ծառայողների արձագանքը ոչ համարժեք է եղել (օրինակ՝ նրանք զարմանք են հայտնել, որ տուժողները «բարեկեցիկ տեսք ունեին» և հորդորել են նրանց հրաժարվել գործին ընթացք տալուց):
   - Գործի հանգամանքները պարզելու համար տուժողների հետ վատ հաղորդակցություն, ինչը նույնպես կարող է խարխլել համայնքի վստահությունը (օրինակ՝ ACCEPT կազմակերպությունը ստիպված է եղել երեք անգամ դիմել ոստիկանություն՝ պարզելու, թե արդյոք գործը տեղից շարժվում է):
   - Առկա են փաստացի տվյալներ միջոցառումից առաջ, դրա ընթացքում և հետո մասնակիցների պաշտպանության միջոցառումների վատ պլանավորման և իրականացման մասին:
   - Քննարկելիս, թե ինչ կարելի էր այլ կերպ անել, համոզվեք, որ մասնակիցներն անդրադառնել են հետևյալ կետերին.
   - Անվտանգության ընթացակարգերի ուսումնասիրությունը նախքան միջոցառման մեկնարկը՝ մասնակիցների անվտանգությունը միջոցառումից առաջ, դրա ընթացքում և դրանից հետո ապահովելու համար:
   - Ոստիկանության ծառայողների վերապատրաստումը, թե ինչպես զգայուն և արդյունավետ կերպով հարցազրույց վարել և հաղորդակցվել հոմոֆոբ հարձակումների ենթարկված անձանց հետ:
   - Փաստացի տվյալների հավաքագրման բարելավում՝ հարձակվողների հնարավոր քրեական հետապնդման նպատակով (ի գիտություն դասընթացավարի այս քննարկումը չպետք է շոշափի հետաքննության մանրամասները, որոնք առանձին քննարկվում են 4-րդ մոդուլում):
   - Միջադեպերից հետո տուժողների և տուժող համայնքների հետ կապի բարելավումը:

HANDOUT 5.3: OVERVIEW OF ECTHR CASE M.C. AND A.C. V. ROMANIA

Այս օժանդակ նյութը ներկայացնում է «M.C.-ն և A.C.-ն ընդդեմ Ռումինիայի» դատական գործի համառոտագիրը: Գործի մանրամասներին ծանոթանալու համար այցելեք Դատարանի կայքը՝ https://goo.gl/sHMXb4.

Ինչ էր տեղի ունեցել

2006թ. հունիսի 3-ին դիմումատուները մասնակցել էին Բուխարեստում անցկացվող ամենամյա ԼԳԲՏ քայլերթին: Այն կազմակերպել էր ACCEPT հասարակական կազմակերպությունը, որի նպատակն էր տեղեկատվություն տրամադրել և աջակցել ԼԳԲՏԻ համայնքին: Երթի մասնակիցները գտնվում էին ոստիկանության պաշտպանության տակ: Մի քանի անձ, ովքեր ակտիվորեն խանգարում էին քայլերթի անցկացմանը, ոստիկանության կողմից կանգնեցվեցին, նրանց լուսանկարեցին, ստուգեցին փաստաթղթերը և գրանցեցին նրանց տվյալները:

Ժամը 19-ի սահմաններում երթի ավարտին դիմումատուները և ևս չորս մասնակիցներ հեռացան տարածքից՝ օգտվելով երթի մասնակիցների համար իրավապահ մարմինների ուղեցույցում նշված երթուղուց և տրանսպորտային միջոցներից: Ինչպես նշված էր այդ ուղեցույցում, նրանք չէին կրում այնպիսի տարբերող հագուստ կամ կրծքանշաններ, որոնք ցույց կտային, որ նրանք երթի մասնակից են:

Մետրոյի գնացքը նստելուց անմիջապես հետո նրանց վրա հարձակվեցին գլխանոցով սպորտային վերնաշապիկներ կրող վեց երիտասարդներ և մեկ կին: Հարձակվողները սկսեցին բռունցքներով հարվածել նրանց գլխներին և դեմքերին: Նրանք ճոճվում էին գնացքի մետաղյա ձողերի վրա, ոտքերով հարվածում տուժողներին: Հարձակման ժամանակ նրանք շարունակում էին բղավել. «Ա՛յ գոմիկներ, գնացեք Հոլանդիա» (Poponarilor, duceţi-vă în Olanda!)

Տուժողներին հրելով տարան գնացքի վագոնի անկյուն: Տուժողներից մեկն իր մարմնով փորձում էր պաշտպանել մյուսներին, սակայն երկրորդ դիմումատուն մնացել էր անպաշտպան և մի քանի հարված ստացել:

Հարձակումը տևեց մոտ երկու րոպե: Գնացքից դուրս գալիս հարձակվողները կրկին բռունցքով հարվածեցին առաջին դիմումատուի դեմքին:

Մյուս ուղևորները հարձակման ժամանակ գտնվում էին վագոնի հակառակ կողմում: Նրանց մեջ էր գտնվում մի լուսանկարիչ, որը նույնպես մասնակցել էր երթին: Տուժողները խնդրել էին նրան լուսանկարել դեպքը, և նա դա արել էր: Արդյունքում հարձակվողները հարվածել էին նաև նրան:

Ոստիկանության հետաքննությունը

2006թ. հունիսի 3-ի լույս 4-ի գիշերը տուժողները և ACCEPT ՀԿԿ-ի ներկայացուցիչը գնացել էին ոստիկանություն: Նրանք քրեական հայց էին ներկայացրել հարձակվողների դեմ և հայտարարել, որ միջադեպը տեղի էր ունեցել տուժողների սեռական կողմնորոշման պատճառով: Նրանք հայտնել էին, որ չեն կրել որևէ տեսանելի նշան, որը կարող էր վկայելնույնասեռականների երթին իրենց մասնակցության մասին: Տուժողների համոզմամբ հարձակվողներն իրենց տեսել են երթի ժամանակ (նրանք դիմակ չէին կրում) և հետո հետևել՝ վնաս հասցնելու մտադրությամբ: Տուժողները ոստիկանությանը հայտնել էին հարձակման ժամանակ իրենց հասցեին հնչեցված վիրավորական արտահայտությունների մասին:

Ըստ դիմումատուների՝ ոստիկանության աշխատակիցները զարմացել էին, տեղեկանալով, որ դիմումատուները և մյուս տուժողները, լինելով նույնասեռական, ունեն կանոնավոր աշխատանք, պատասխանատու պաշտոններ են զբաղեցնում և բարեկեցիկ կյանքով ապրող մարդիկ են: Ոստիկանության ծառայողները փորձել էին համոզել տուժողներին հրաժարվել բողոքից՝ զգուշացնելով, որ այդ դեպքում նրանք դատարանում առերեսվելու են իրենց վրա հարձակված անձանց հետ:

Ոստիկանությունում տեղի ունեցած վերակազմավորման պատճառով գործի նյութերը ոստիկանության այդ բաժնից տեղափոխվել էին մեկ այլ բաժին, և 2007 թվականի ապրիլի 4-ին գործը գրանցվել էր մետրոպոլիտենի ոստիկանությունում:

Այն բանից հետո, երբ պարզվեց, որ գործն առաջ չի շարժում, դիմումատուները ACCEPT ՀԿԿ-ի միջոցով 2006թ. սեպտեմբերի 25-ին, 2007թ. մարտի 28-ին և 2011թ. հուլիսի 20-ին ուղարկված նամակներում տեղեկություններ էին հայցել քննության ընթացքի վերաբերյալ: 2007թ. մարտի 19-ին նրանք նաև բողոքել էին Ներքին գործերի նախարարություն գործի անարդյունավետ հետաքննության վերաբերյալ, սակայն դա նույնպես արդյունք չէր տվել:

2011 թվականի օգոստոսի 9-ին, ի պատասխան դիմումատուների տեղեկությունների հարցմանը, մետրոպոլիտենի ոստիկանությունը նրանց հայտնել է, որ իրենք մտադիր չեն քրեական հետապնդում հարուցել (neînceperea urmăririi penale), քանի որ ենթադրյալ հանցագործությունների վաղեմության ժամկետն անցել է (s-a împlinit prescripţia specială): Ոստիկանությունը դա հիմնավորել էր նրանով, որ հետաքննությունը կանգ է առել, քանի որ գործը մետրոպոլիտենի բաժին է հասել դեպքերից մեկ տարի անց: Ավելին, ենթադրյալ մեղավորներին հայտնաբերելու ուղղությամբ ոստիկանության ձեռնարկած բոլոր գործողություններն ապարդյուն էին:

2011 թվականի հոկտեմբերի 4-ին Չորրորդ տեղամասի Բուխարեստի շրջանային դատարանին կից դատախազությունը հավանություն տվեց ոստիկանության առաջարկին և որոշեց կարճել հետաքննությունը:

Հարցեր.

Ի՞նչը սխալ ընթացավ:

Ինչպե՞ս կարելի էր իրավիճակն ավելի լավ կարգավորել:

5.3բ. Ոստիկանության և ԼԳԲՏԻ համայնքների միջև դրական հարաբերությունների ձևավորում

Կարևոր նշում. Ներկայացվող մոտեցումներից ոչ բոլորն են նպատակահարմար յուրաքանչյուր համատեքստում, և դրանք պետք է հարմարեցնել: Օրինակ, հնարավոր է, որ ոստիկանությունում չլինի ԼԳԲՏ հարցերով զբաղվող հատուկ բաժին կամ նույնասեռական ծառայողներ: Հնարավոր է, որ ներկա փուլում ոստիկանության և քաղաքացիական հասարակության միջև հարաբերությունների բարելավման համար իրատեսական լինեն միայն շատ փոքր քայլերը: Սակայն այդ ամենը լուծելի խնդիրներ են: Նույնիսկ մեկ փոքր քայլի հաջող իրականացումը կարող է նշանակալի ձեռքբերում համարվել և հիմք հանդիսանալ ապագայում ավելի լուրջ բարելավումների համար:

Քայլ առաջին՝ Գնահատում

1. Այս փուլի ընթացքում մասնակիցները գնահատում են ոստիկանության և ԼԳԲՏԻ համայնքների միջև առկա հարաբերությունները: Սա ամենադժվար քայլերից մեկն է և պահանջում է անկեղծ մոտեցում: Եթե նախորդ երկու դասընթացները արդյունավետ են անցել, ապա ոստիկանության և ԼԳԲՏԻ համայնքի հարաբերությունների ճշգրիտ և կառուցողական գնահատականի հավանականությունն ավելի մեծ է:

Քայլ երկրորդ՝ Պլանավորում

2. Խնդրեք մասնակիցներին անդրադառնալ 5.3բ-ին և համաձայնեցնել առնվազն երկու քայլ, որոնք կարող են կատարվել մոտ ապագայում:

Քայլ երրորդ՝ Աշխատանքի կատարում

3. Խնդրեք մասնակիցներին հստակեցնել, թե ինչպես և ում կողմից են կատարվելու քայլերը: Եթե մասնակիցները հայնդիպել են խոչընդոտների, որոնք չեն կարող հաղթահարել (օրինակ՝ իրավական դաշտի բացակայության, անբավարար քաղաքական աջակցության), խորհուրդ տվեք նրանց գտնել դրանց հաղթահարման այլ ձևեր և հիշեցրեք, որ այդ հարցին կրկին անդրադարձ է կատարվելու հաջորդ մոդուլում:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹ 5.3Բ. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԳԲՏ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՋև ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ. ՈՐՈՇ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԱՅԼԵՐ

Սկսեք փոքրից

Եթե սա ոստիկանության և ՔՀԿ-ների միջև կապի հաստատման առաջին փորձն է, սկսեք փոքրից: Օրինակ՝ կազմակերպեք ոչ պաշտոնական հանդիպում, որպեսզի կողմերից յուրաքանչյուրը ավելի աշտ բան իմանա մյուսների աշխատանքի մասին և բացահայտել համագործակցության հնարավոր ուղիները:

Գործնական մոտեցում ցուցաբերեք և կենտրոնացեք փոխշահավետ գործողությունների վրա

Համաձայնեցրեք երկու կողմերի շփման կետերը և ամփոփ ներկայացրեք, թե ինչ կարող են նրանք անել:

Համաձայնեցրեք ՔՀԿ-ների մասնակցությունը ոստիկանության վերապատրաստման ծրագրում՝ կենտրոնանալով վերջիններիս մասնագիտական աշխատանքի վրա, այդ թվում՝ տուժողների աջակցության, ատելության հիմքով հանցագործությունների հետևանքների և տուժողների կարիքների լավ պատկերացման վրա: ՔՀԿ-ները հաճախ առանձնահատուկ մոտեցում են ունենում ԼԳԲՏԻ կողմնակալության ցուցիչների հարցում, որը կարևոր նշանակություն ունի հետաքննության և փաստերի հավաքման առումով:

Այցելեք ԼԳԲՏԻ համայնքների հարցերով զբաղվող ազգային կամ տեղական ՔՀԿ-ներ

Այցելեք նաև նույնասեռականների հանդիպումների բարերը և այլ վայրերը: Նախապես պլանավորեք այցելությունը՝ ընդգծելով, որ դուք ցանկանում եք պարզել, թե ինչպիսին է ընդհանուր իրավիճակը և արդյոք եղել են խնդիրներ, որոնք անհանգստացրել են համայնքին:

Հանդիպում կազմակերպեք՝ միջադեպերը և դրանց մասին կարծիքները քննարկելու համար, իմանալու, թե արդյոք միջադեպերի հաճախականությունն աճել է կամ նվազել:

Խնդրեք ՔՀԿ-ներին մասնակցել ոստիկանության ուղեցույցի կամ գործելակարգերի մշակման աշխատանքում: Դա լավ հնարավորություն է բարելավելու այդ փաստաթղթերի որակը, հաշվի առնելու տուժողների կարիքները, ավելի լավ հասկանալու ատելության հիմքով հանցագործությունների հետևանքները և կողմնակալության ցուցիչները:

Եղեք հետևողական

Հետևողականությունը կարևոր է և նոր հնարավորություններ է ստեղծում, որոնք կարող են օգտագործվել առաջացող խնդիրների հաղթահարման համար (տե՛ս ստորև):

Կազմակերպեք ամփոփ հանդիպում որևէ կոնկրետ, զգայուն կամ լուրջ միջադեպից հետո

Սխալներ լինում են, և դրանցից հարկավոր է դասեր քաղել: Մի խուսափեք շփումից այնպիսի բարդ միջադեպերից հետո, ինչպիսին է բռնությունը ԼԳԲՏ Հպարտության քայլերթի միջոցառման ժամանակ, ոստիկանության անբավարար աշխատանքը կամ ոստիկանության ծառայողների կողմից կիրառված բռնությունը: Բաց պահեք հաղորդակցման ուղիները, նույնիսկ եթե կոնկրետ միջադեպի հետ կապված լարվածություն է առաջացել: Մտածեք ոչ պաշտոնական հանդիպումների անցկացման հնարավորության մասին, որտեղ միջադեպերը քննարկվում են առանց երրորդ կոմերի ներկայության և մամուլը չի ներգրավվում: Աշխատեք ՔՀԿ-ների հետ՝ օժանդակելու տուժողին կամ ընտանիքին կամ համայնքին որևէ կոնկրետ միջադեպի պարագայում:

Զարգացրեք ձեր ձեռքբերումները

Թեև կարող եք փոքրից սկսել, միշտ փնտրեք համագործակցությունը զարգացնելու ուղիները: Միգուցե, շփման ընդհանուր եզրերի ստեղծման համակարգն արդարացնում է իրեն: Հնարավոր է, որ եկել է ժամանակը մտածելու միջադեպերի և արձագանքների քննարկման նպատակով ավելի սերտ համագործակցության մասին: Դուք կարող եք քննարկել տվյալների և տեղեկատվության անանուն փոխանակման հնարավորությունը: Միգուցե կարող եք համաձայնեցնել տուժողների աջակցության համար ուղղորդման համակարգը:

Ապահովեք, որ աշխատանքը բավարար ֆինանսավորվի

ՔՀԿ-ները հաճախ գտնում են, որ թեև մշտադիտարկման և տուժողների աջակցության հետ կապված իրենց աշխատանքը շատ կարևոր է, սակայն նրանց ռեսուրսները սահմանափակ են: Հնարավորության դեպքում ոստիկանության ծառայությունը կարող է օգնել ֆինանսավորում ապահովել այն աշխատանքի համար, որը նրանք կատարում են:

Հստակ եղեք, թե ինչ կարող են և ինչ չեն կարող անել երկու կողմերը

Օրինակ, քաղաքացիական հասարակության կազմակերպությունը չի կարող երաշխավորել, որ տուժողը հաղորդում կներկայացնի հանցագործության մասին կամ կհամագործակցի քրեական վարույթի ընթացքում: Ոստիկանությունը նույնպես չի կարող երաշխավորել, որ կհարուցվի քրեական վարույթ:

Հետագա քայլերը. Ատելության հիմքով հանցագործությունների հետաքննությունը՝ քաղաքականության շրջանակ

ԱՄՓՈՓԱԳԻՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Թեև արդյունավետ վերապատրաստումը կարող է զգալիորեն բարելավել ԼԳԲՏԻ անձանց դեմ ատելության հիմքով հանցագործությունները արդյունավետ հետաքննելու ոստիկանության կարողությունը, այն ատելության հիմքով հանցագործությունների դեմ պայքարի համապարփակ մոտեցման գլուխկոտրուկի միայն մի մասն է: Օրինակ, ատելության հիմքով հանցագործությունների մասին օրենքները կարող են անդրադառնալ միայն տուժողի սեռական կողմնորոշմանը և ոչ գենդերային ինքնության հիմքով հանցագործություններին, ինչը դժվարացնում է տրանսֆոբ ատելության հիմքով հանցագործությունների հետաքննությունը և քրեական հետապնդումը: Ոստիկանության արձանագրման ընթացակարգերով կարող է նախատեսված չլինել ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների բոլոր մանրամասների արձանագրումը, որ պատճառով կարևոր տեղեկատվությունները, որոնք արձանագրելու համար ոստիկանության ծառայողներն այժմ ունեն անհրաժեշտ կարողունակությունները, պարզապես կորում է՝ չարտացոլվելով պաշտոնական վիճակագրությունում:

Այս դասընթացի ընթացքում ներկայացվող հետաքննության ընթացակարգերը պաշտոնական արձանագրություններում և ուղեցույցներում չեն արտացոլվում: Դատախազները կարող են չներառվեն ԼԳԲՏԻ անձանց դեմ ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ վերապատրաստման ծրագրում, որի պատճառով ավելի քիչ տեղեկացված լինեն այնպիսի մոտեցումների մասին, որոնց հիման վրա հնարավոր է ապացուցել հանցագործությունների կողմնակալության շարժառիթները:

Դասընթացի ողջ ընթացքում մասնակիցները լավ պատկերացում կարող են ստանալ հետաքննական պրակտիկայում բարելավումների իրականացման և տուժող ԼԳԲՏԻ անձանց աջակցության հարցում առաջացող խոչընդոտների վերաբերյալ: Ներկայացվող վարժության նպատակն է աջակցել մասնակիցներին՝ այս խնդիրները ի մի բերելու և դրանց լուծմանն ուղղված արդյունավետ մոտեցումներ ցուցաբերելու համար: Խորհուրդ է տրվում, որ սեմինարին ներկա գտնվեն ոստիկանության բարձրաստիճան պաշտոնյաները, նաև համապատասխան նախարարությունների ներկայացուցիչները: Շատ ցանկալի է նաև ՔՀԿ-ների ներկայությունը: Դա կնպաստի կարևոր հարցերի ավելի լավ ընկալմանը և բարելավումների վերաբերյալ որոշումների կայացմանը:

Այս մոդուլում մասնակիցներին առաջարկվում է անդրադառնալ ներպետական համատեքստին հաշվի առնելով ատելության հիմքով հանցագործությունների հարցում համապարփակ մոտեցման անհրաժեշտ կառուցակարգերը: Դրանք են՝

- Իրավական դաշտը. Արդյո՞ք ատելության հիմքով հանցագործությունների մասին օրենքներում անձի սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը պաշտպանվող կատեգորիաներ են:
- Ատելության հիմքով հանցագործությունների արձանագրման շրջանակը և համակարգը. Արդյո՞ք ոստիկանության արձանագրության ձևերը ներառում են ԼԳԲՏԻ կողմնակալության ցուցիչները, կողմնակալ շարժառիթի մասին ապացույցները և տուժողների կարծիքը գրանցելու համար նախատեսված դաշտերը:
- Ուղղորդում և ուղեցույցներ. Արդյո՞ք ոստիկանությունն ունի հստակ ցուցումներ ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների հետաքննության, տուժողների

աջակցության հնարավորությունների և հաջող գործերի կառուցման համար դատախազության հետ համագործակցության վերաբերյալ:

- Վերապատրաստում.Արդյո՞ք ոստիկանության ծառայողների համար անց են կացվում կանոնավոր վերապատրաստման դասընթացներ ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների հետաքննության վերաբերյալ:
- Աջակցության ծառայություններ. Արդյո՞ք ատելության հիմքով հանցագործությունների տուժողների համար նախատեսված են աջակցության ծառայություններ: Արդյո՞ք դրանք սպասարկում են ԼԳԲՏԻ անձանց:

Կարևոր է նշել, որ ոչ մի երկրում ամբողջությամբ չեն գործում ատելության հիմքով հանցագործությունների համապարփակ մոտեցման յուրաքանչյուր վերոնշյալ կառուցակարգերը: Հետևաբար, այս վարժությունը, կարող է բացահայտել իրականացման հարցում առկա խնդիրները: Դա չպետք է խոչընդոտ հանդիսանա այս վարժությունը կատարելիս: Նպատակը կայանում է նրանում, որ մասնակիցներն կարողանան ստանձնել առաջնորդությունը, քարտեզագրել առկա բացերը և նախանշել խնդիրների վերացման համար գործնական քայլերը: Դա լավ հնարավորություն կընձեռի ազգային մակարդակով կառուցողական քայլեր ձեռնարկելու համար:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Մասնակիցները՝

- Կկառուցեն ատելության հիմքով հանցագործությունների ներպետական համատեքստի համայնապատկերը (օրենսդրություն, տվյալներ, քաղաքականություն, վերապատրաստման կարիքներ և այլն) և բացահայտել առկա բացերը:
- Կբացահայտեն և կպատկերացնեն դասընթացի ընթացքում ներկայացված գործընթացների իրականացման խոչընդոտները և դրանք վերացնելու համար անհրաժեշտ քայլերը:

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 6.1 Առկա խնդիրների քարտեզագրում
- 6.2 Գործնական քայլեր

6.1. ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ

1. Դասընթացից առաջ տպեք ստորև թերթիկի մի քանի օրինակ: Առանձնացրեք ատելության հիմքով հանցագործությունների նկատմամբ համապարփակ մոտեցման համար վերևում նշված կառուցակարգերը և կազմեք դրանց ցանկը:

Իրավական դաշտ
Ուղղորդում և ուղեցույցներ
Ատելության հիմքով հանցագործությունների արձանագրման շրջանակ
Վերապատրաստում
Աջակցության ծառայություններ
Այլ

2. Ֆլիպչարտի էջի վրա պատճենեք օժանդակ նյութ 6.1.-ի աղյուսակը: Յուրաքանչյուր մասնակցի համար պատրաստեք մեկական թղթային պատճեն, որպեսզի նրանք կարողանան դասընթացի ընթացքում նշումներ կատարել:

3. Մասնակիցներին բացատրեք, որ դասընթացի նպատակն է քարտեզագրել ազգային համատեքստը՝ օգտագործելով վերապատրաստման դասընթացի ընթացքում ձեռք բերված գիտելիքները և այլ առկա գիտելիքները:

4. Մասնակիցներին առաջարկեք ընթերցել իրենց թերթիկները և ներկայացնել համապատասխան կառուցակարգի հետ կապված ազգային համատեքստի իրենց գնահատականը: Բացատրեք այդ առաջադրանքը մեկ կառուցակարգի օգնությամբ, օրինակ՝ «Իրավական դաշտ», ներկայացնելով ատելության հիմքով հանցագործությունները կարգավորող իրավական դաշտում առկա բացերի ձեր գնահատականը: Նշեք, որ խմբում մեկից ավելի մասնակից կարող է վերլուծել նույն կառուցակարգը: Այդ դեպքում երկրորդ մասնակիցը առաջին մասնակցի ելույթից հետո ավելացնում է լրացուցիչ մանրամասներ կամ բացակայող տեղեկատվությունը:

5. Անհրաժեշտության դեպքում մեծ խումբը բաժանեք ավելի փոքր խմբերի (այս վարժությունը կարող եք նաև անցկացնել միայն մեծ խմբով): Յուրաքանչյուր մասնակցի տրամադրեք ֆլիպչարտ էջի առանձին մասը (տե՛ս գծապատկեր 1-ը վերևում): Եթե մասնակիցներին բաժանում եք փոքր խմբերի, յուրաքանչյուր խմբին տրամադրեք կառուցակարգերի ամբողջական ցանկը:

6. Մասնակիցների ուշադրությունն ուղղեք մեծ աղյուսակի վրա: Մեկից ավելի խումբ կազմելու դեպքում, վարժության սկզբում նրանք պատրաստում են աղյուսակի իրենց օրինակները): Անդրադարձեք աղյուսակում առկա յուրաքանչյուր կառուցակարգին և բացատրեք այն: Հարցրեք մասնակիցներին, թե արդյոք նրանք կուզենան որևէ այլ կառուցակարգեր ավելացնել և քննարկեք դրանք խմբի հետ:

7. Տեղեկացրեք մասնակիցներին, որ այս վարժությունը նրանց հնարավորություն է տալիս ներկայացնելու, թե ինչ պետք է արվի, որպեսզի իրականացվի այն ամենն, ինչ նրանք սովորել են դասընթացի ընթացքում: Չկա ճիշտ կամ սխալ պատասխան: Նրանք կարող են աղյուսակում նշել այն ինչ սովորել են և այն, ինչ իրենց կարծիքով պետք է դեր կատարվի:

8. Մասնակիցներն այս դասընթացի ընթացքում չեն լրացնում աղյուսակի վերջին սյունակը և այն լրացնում են հաջորդ դասընթացին:

9. Աղյուսակը քննարկելու և լրացնելու համար հատկացրեք 20-25 րոպե:

10. Եթե մասնակիցները բաժանվել են խմբերի, կրկին միավորեք նրանց մեկ խմբում:

11. Խնդրեք յուրաքանչյուր խմբին ներկայացնել, թե ինչ են իրենք գրելու իրենց աղյուսակում: Կազմակերպեք կարճ քննարկում, համաձայնեցրեք խմբային գնահատականը և ավելացրեք ցանկացած լրացուցիչ կետ, որն ի հայտ եկավ խմբային քննարկման ընթացքում: Խմբի հետ համաձայնեցրեք բոլոր նոր կառուցակարգերը, նախքան դրանք աղյուսակում ավելացնելը:

12. Յուրաքանչյուր մասնակից պետք է ունենա աղյուսակը: Նրանք կարող են լուսանկարել այն կամ լրացնել թղթային տարբերակը:

6.2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԱՅԼԵՐ

1. Վեցերորդ մոդուլն երափակվում է այս դասընթացով: Սկզբում բացատրեք, որ դասընթացի նպատակն է նշել այն կոնկրետ և կառուցողական գործողությունները, որոնք անհրաժեշտ են ատելության հիմքով հանցագործությունների նկատմամբ համապարփակ մոտեցման յուրաքանչյուր կառուցակարգը բարելավելու համար: Անշուշտ, որոշ գործողություններ մասնակիցների իրավասության շրջանակից դուրս են, սակայն կատարված աշխատանքը կարող է հետագայում լավ արդյունքների բերել և արժանանալ բարձրագույն ղեկավարության, նախարարությունների և այլ շահակիցների բարձր գնահատականի: Միևնույն ժամանակ, ընդգծեք, որ համապարփակ մոտեցման որևէ կառուցակարգի բացակայությունը (օրինակ՝ ատելության հիմքով հանցագործությունների մասին օրենքների) դեռ չի նշանակում, որ ընդհանրապես որևէ գործողություն հնարավոր չէ ձեռնարկել:

2. Խմբային քննարկման ընթացքում անդրադարձեք յուրաքանչյուր կառուցակարգին: Կախված խմբի չափից, այս աշխատանքը կարող եք կատարել բաժանվելով տարբեր խմբերի, որոնցից յուրաքանչյուրը կուսումնասիրի ընդհանուր թեմայի առանձին կողմը: Փորձեք հնարավորինս արագ կատարել այս վարժությունը, առաջարկելով մասնակիցներին նշել այն գործողությունները, որոնք նրանք անձամբ կարող են կատարել: Եթե ներկա են ավագ ղեկավարության կամ կառավարության ներկայացուցիչներ, խնդրեք նրանց նույնպես մասնակցել և կատարել որոշ առաջադրանքներ:

3. Ավարտեք դասընթացը բացատրելով, որ ներկայացված աղյուսակը կարող է օգտագործվել որպես ազգային մակարդակով գործողությունների ծրագրի հիմք: Խորհուրդ տվեք մասնակիցներին հետագայում միասին անդրադառնալ աղյուսակին՝ առաջընթացը գնահատելու կամ այն վերանայելու և արդիականացնելու համար: Շնորհակալություն հայտնեք մասնակիցներին այս դասընթացին մասնակցելու համար: Ընդգծեք, որ դիտարկված հարցը մարտահրավեր է բազմաթիվ երկրներում ոստիկանության ծառայությունների համար, սակայն նաև էական քայլ է, որը պետք է ձեռնարկվի առաջընթացն երաշխավորելու համար:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ

Օժանդակ նյութ 6.1. Առկա խնդիրների քարտեզագրում

Կառուցակարգ	Գնահատում	Խնդիրներ Որո՞նք են խոչընդոտները:	Գործողություն Ի՞նչ է հնարավոր է անել հիմա: Ում կողմից?
Իրավական դաշտ	Արդյո՞ք ատելության հիմքով հանցագործությունների մասին օրենսդրությունը ներառում է սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը որպես պաշտպանվող կատեգորիաներ:		
Ուղղորդում և ուղեցույցներ	Արդյո՞ք ոստիկանության ծառայողներն ունեն հստակ հրահանգներ, թե ինչպես հետաքննել ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունները, ինչպես ապահովել, որ տուժողները աջակցություն ստանան և ինչպես համագործակցեն դատախազության հետ քննվող գործերի շրջանակում:		
Ատելության հիմքով հանցագործությունների արձանագրման շրջանակ	Արդյո՞ք ոստիկանության արձանագրության ձևերը ներառում են ԼԳԲՏԻ անձանց նկատմամբկողմնակալության ցուցիչները, կողմնակալ շարժառիթի ապացույցները և տուժողների ընկալումը գրանցելու համար անհրաժեշտ դաշտերը:		
Վերապատրաստում	Արդյո՞ք ոստիկանության ծառայողների համար անց են կացվում կանոնավոր վերապատրաստման դասընթացներ ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների հետաքննության վերաբերյալ: Արդյո՞ք դրանք հասանելի են ոստիկանության բոլոր ծառայողներին:		

Տուժողների աջակցության ծառայություններ	Արդյոք ատելության հիմքով հանցագործությունների տուժողների համար նախատեսված են աջակցության ծառայություններ: Արդյո՞ք դրանք սպասարկում են ԼԳԲՏԻ անձանց:		
Այլ			

ԳՆԱՀԱՏՈՒՄ

Մասնակիցների գնահատում վերապատրաստման ծրագրից առաջ և հետո:

Հավելված 1. Մեկօրյա և երկօրյա դասընթացների օրակարգեր (օրինակ)

Սույն հավելվածում ներկայացվում է մեկօրյա և երկօրյա դասընթացների համար օրակարգի օրինակը: Նախատեսված արդյունքներին հասնելու նպատակով բավարար ժամանակ և ակտիվ մասնակցություն ապահովելու համար առավել նպատակահարմար է երկօրյա օրակարգը: Առաջարկվում է նաև, որ նախքան օրակարգը վերջնական տեսքի բերելը դասընթացավարներն ուսումնասիրեն այս ձեռնարկը, համոզվելով, որ ընտրված են իրենց համատեքստում առավել համապատասխան մոդուլներն ու վարժությունները:

Խնդրում ենք ծանոթանալ ձեռնարկի յուրաքանչյուր բաժնում ներկայացված բոլոր նշումներին և ուղեցույցներին: Դրանք օգտակար տեղեկատվություն են պարունակում յուրաքանչյուր դասընթացի նախապատրաստման համար և մանրամասն բացատրություններ են տալիս ակնկալվող վարժությունների վերաբերյալ:

ԼԳԲՏԻ ԱՆՁԱՆՑ ԴԵՄ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՆ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳԻՐ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱՎԱՐԺ ԱՇԽԱՏԱՆՔՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Երկօրյա օրակարգ

9.15-9.30 Դասընթացի ներածություն և ամփոփ ներկայացում

Մասնակիցները ներկայացնում են իրենց և հայտնում դասընթացի հետ կապված իրենց ակնկալիքները: Դասընթացավարը ներկայացնում է վերապատրաստման նպատակները և համառոտ բովանդակությունը:

9.30-11.15 Ի՞նչն է մեզ բերել այստեղ

Այս վարժությունները վերապատրաստման նախադրյալներն են: Առաջին վարժությունը նախատեսում է ոստիկանության ծառայության ավագ ղեկավարի ելույթը, որում նա նշում է դասընթացին մասնակցության և հետագա իրականացման վերաբերյալ ակնկալիքները: Երկրորդ վարժությունը նախատեսում է ԼԳԲՏԻ անձանց դեմ ատելության հիմքով հանցագործությունների տուժողների հարցերով զբաղվող քաղաքացիական հասարակության կազմակերպության ներկայացուցչի ելույթը, որտեղ ներկայացվում է ատելության հիմքով հանցագործությունների բնույթն ու ազդեցությունը:

Վարժությունների հերթականություն

- Վարժություն 1.1 ավագ ղեկավարի ելույթը, որում նշվում են դասընթացին մասնակցության և հետագա իրականացման վերաբերյալ ակնկալիքները:
- Վարժություն 1.2 Քաղաքացիական հասարակության ազգային/տեղական կազմակերպության ներկայացուցչի ելույթը ատելության հողի վրա հանցագործության ազդեցության և համատեքստի վերաբերյալ:
- Վարժություն 1.3 ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հանցագործությունների համատեքստը:

11.15-11.30 Ընդմիջում

11.30-13.00 Հիմնական հասկացություններ. Որո՞նք են լեսբիների, գեյերի, տրանսգենդեր անձանց և ինտերսեքս անձանց համայնքները և ի՞նչ է ատելության հիմքով հանցագործությունը:

Այս թեմայի ընթացքում ներկայացնում են ԼԳԲՏԻ անձանց դեմ ատելության հիմքով հանցագործություններից տուժած խմբերը և ուսումնասիրում ատելության հիմքով հանցագործության հայեցակարգը միջազգային և ազգային համատեքստում:

Վարժությունների հերթականություն.

- Վարժություն 2.1 ԼԳԲՏԻ համայնքին առնչվող հիմնական տերմինաբանության լուսաբանում Դասընթացավարը ներկայացնում է նյութը (30 րոպե)
- Վարժություն 2.5. Ո՞րն է ատելության հիմքով հանցագործությունը: Նյութի ներկայացում և խմբային քննարկում:
- Վարժություն 2.7. Ատելության հիմքով հանցագործությունների ազգային համատեքստը (ազգային համատեքստը քարտեզագրելու ավելի շատ օրինակների համար անդրադարձեք նաև «Հետագա քայլեր» բաժնին):

13.00-13.45 Լանչ

13.45-14.45 Ո՞րն է թերզեկուցումը

Այս վարժությունն օգնում է մասնակիցներին հասկանալ և ուսումնասիրել, թե ինչու ԼԳԲՏԻ անձինք չեն հաղորդում ատելության հիմքով հանցագործությունների մասին:

Վարժությունների հերթականություն.

- Վարժություն 3.2: ԼԳԲՏԻ համայնքների նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների մասին հայտնելուն խանգարող հանգամանքների բացահայտում, ՀԻԳ զեկույցի ընթերցում

14.45-15.45 Մարդու իրավունքները և ոստիկանության ծառայողի դերը

Մասնակիցներն ուսումնսիրում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային վճիռները և կիրառում դրանց սկզբունքները ԼԳԲՏԻ անձանց դեմ ատելության հանցագործությունները հետաքննելիս ոստիկանության ծառայողի ենթադրյալ գործողությունների համատեքստում:

Վարժությունների հերթականություն.

- Վարժություն 3.3: Եռ հիմնական չափանիշների, մարդու իրավունքների և ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների այլ չափանիշների և ազգային չափանիշների ուսումնասիրություն:

15.45-16.00 Ընդմիջում

16.00-17.30 Ատելության հիմքով հանցագործությունների հետաքննություն

Այդ վարժությունները ստիպում են մասնակիցներին մտածել, թե ինչպես արդյունավետ հետաքննել ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունները և թույլ են տալիս պատկերացնել զոհակենտրոն մոտեցման կարևորությունը:

Վարժությունների հերթականություն.

- Վարժություն 4.2ա. ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների հետաքննություն. Զոհակենտրոն մոտեցում (30 րոպե)
- Վարժություն 4.2բ: ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների հետաքննություն. Զոհակենտրոն մոտեցում

Օր երկրորդ

9.00-9.15 Առաջին օրվա ամփոփում և երկրորդ օրվա ծրագիրը

9.15-11.30 (ընդմիջումը ներառյալ) Ապացույցների հավաքում

Այս վարժությունները օգնում են մասնակիցներին բացահայտել ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների ընդհանուր կողմնակալության ցուցիչները և օգտագործել դրանք ատելության հիմքով հանցագործությունների հաջող հետաքննության համար:

Վարժությունների հերթականություն.

- Վարժություն 4.4. Ապացույցների հավաքում. կողմնակալության ցուցիչներ՝ կողմնակալ ընտրության/ շարժառիթների ապացուցում
- Վարժություն 4.5: Ապացույցների հավաքում. կողմնակալության ցուցիչներ՝ ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների բացահայտում

(խորհուրդ է տրվում նաև, որ մասնակիցներին բաժանվի օժանդակ նյութ 5.1-ը)

11.30-12.30 Աջակցություն ԼԳԲՏԻ համայնքներին. ոստիկանության արդյունավետ արձագանք

Այս գործողության ընթացքում դիտարկվում են պրակտի օրինակներ՝ ուսումնասիրելու, թե ինչպես արձագանքել կոնկրետ միջադեպերին ուշադրություն դարձնելով համայնքի կարիքներին: Այն ինտերակտիվ է և հնարավորություն է տալիս գործնականում ուսումնասիրել կարծրատիպերը:

Վարժությունների հերթականություն

- Վարժություն 4.7. Աջակցություն ԼԳԲՏԻ համայնքներին. ոստիկանության արդյունավետ արձագանք

12.30-13.30 Լանչ

13.30-14.45 Աշխատանք քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ

Այս գործողության ընթացքում մասնակիցներն անդրադառնում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային վճռին՝ ուսումնասիրելու, թե ինչպես ոստիկանությունը և ՔՀԿ-ները կարող են համագործակցել՝ բարելավելու ոստիկանական աշխատանքը գեյ-շքերթի անցկացման ժամանակ և աջակցելու առանց խտրականության հավաքների անցկացման իրավունքին:

- Վարժություն 5.1. Ո՞րն է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների դերը, ինչպե՞ս նրանք կարող են օգնել:
- Վարժություն 5.2: Ի՞նչ պետք է անեմ և ի՞նչ կարող էի անել, եթե լինեի նրանց տեղում:

14.45-15.00 Ընդմիջում

15.00-16.30 Աշխատանք քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ (շարունակություն)

Այս վարժությունն աջակցում է մասնակիցներին, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ համատեղ քայլերի շնորհիվ բացահայտել ատելության հիմքով

հանցագործությունները և իրականացնել տուժողներին աջակցելու և հանցագործությունները կանխելու ուղղությամբ կոնկրետ քայլեր:

Վարժությունների հերթականություն.

- Վարժություն 5.3. Համայնքների հետ արդյունավետ հարաբերությունների կառուցում

16.30-17.00 Վերապատրաստման ավարտ և գնահատում

Դասընթացավարը հայտարարում է վերապատրաստման ծրագրի ավարտի մասին և մասնակիցներին խնդրում գնահատել ծրագիրը:

ԼԳԲՏԻ ԱՆՁԱՆՑ ԴԵՄ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՆ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳԻՐ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱՎԱՐԺ ԱՇԽԱՏԱՆՔՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Մեկօրյա օրակարգ

Ի գիտություն դասընթացավարի՝ մեկօրյա աշխատաժողովը կարող է կենտրոնանալ միայն ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների դեմ իրավապահ մարմինների պայքարի հիմնարար հարցերին: Ժամանակի սահմանափակումները նշանակում են, որ տեղեկատվությունն ավելի հավանական է, որ փոխանցվի դասընթացավարի կողմից , ի տարբերություն խմբային աշխատանքի: Դրա պատճառով էապես կսահմանափակվի մասնակցային գործընթացը, որն ուսուցման առավել արդյունավետ եղանակներից մեկն է: Հնարավորության դեպքում ցանկալի է այս նիստն անցկացնել առնվազն երկու օրվա ընթացքում:

9.15-9.30 Դասընթացի ներածություն և ամփոփ ներկայացում

Մասնակիցները ներկայացնում են իրենց և հայտնում դասընթացի հետ կապված իրենց ակնկալիքները: Դասընթացավարը ներկայացնում է վերապատրաստման նպատակները և համառոտ բովանդակությունը:

9.30-11.00 Ի՞նչն է մեզ բերել այստեղ

Այս վարժությունները ստեղծում են վերապատրաստման նախադրյալները: Առաջին վարժությունը նախատեսում է ոստիկանության ծառայության ավագ ղեկավարի ելույթ, որում նշվում են դասընթացին մասնակցության և հետագա իրականացման վերաբերյալ ակնկալիքները: Երկրորդ վարժությունը նախատեսում է ԼԳԲՏԻ անձանց դեմ ատելության հիմքով հանցագործությունների տուժողների հարցերով զբաղվող քաղաքացիական հասարակության կազմակերպության ներկայացուցչի ելույթ, որտեղ ներկայացվում է ատելության հիմքով հանցագործությունների բնույթն ու ազդեցությունը:

Վարժությունների հերթականություն.

- Վարժություն 1.1. Ավագ ղեկավարի ելույթ, որում նշվում են դասընթացին մասնակցության և հետագա իրականացման վերաբերյալ ակնկալիքները:
- Վարժություն 1.2. Քաղաքացիական հասարակության ազգային/տեղական կազմակերպության ներկայացուցչի ելույթ ատելության հողի վրա հանցագործության ազդեցության և համատեքստի վերաբերյալ.

11.00-11.30 Ընդմիջում

11.30-13.00 Հիմնական հասկացություններ. որո՞նք են լեսբիների, գեյերի, տրանսգենդեր անձանց և ինտերսեքս անձանց համայնքները և ի՞նչ է ատելության հիմքով հանցագործությունը:

Այս թեմայի ընթացքում ներկայացնում են ԼԳԲՏԻ անձանց դեմ ատելության հիմքով հանցագործություններից տուժած խմբերը և ուսումնասիրում ատելության հիմքով հանցագործության հայեցակարգը միջազգային և ազգային համատեքստում:

Վարժությունների հերթականություն.

- Վարժություն 2.1 ԼԳԲՏԻ համայնքին առնչվող հիմնական տերմինաբանության լուսաբանում՝ Դասընթացավարը ներկայացնում է նյութը (30 րոպե)
- Վարժություն 2.5. Ո՞րն է ատելության հիմքով հանցագործությունը: Նյութի ներկայացում և խմբային քննարկում:
- Վարժություն 2.7. Ատելության հիմքով հանցագործությունների ազգային համատեքստը (ազգային համատեքստը քարտեզագրելու ավելի շատ օրինակների համար անդրադարձեք նաև «Հետագա քայլեր» բաժնին):

13.00-13.45 Լանչ

13.45-14.45 Մարդու իրավունքները և ոստիկանության ծառայողի դերը

Այս վարժությունն օգնում է մասնակիցներին հասկանալ և ուսումնասիրել, թե ինչու ԼԳԲՏԻ անձինք չեն հաղորդում ատելության հիմքով հանցագործությունների մասին:

Վարժությունների հերթականություն.

- Վարժություն 3.3: ԵԽ հիմնական չափանիշների, մարդու իրավունքների և ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների այլ չափանիշների և ազգային չափանիշների ուսումնասիրություն:

14.45-15.45 Ատելության հիմքով հանցագործությունների հետաքննություն

Այդ վարժությունները ստիպում են մասնակիցներին մտածել, թե ինչպես արդյունավետ հետաքննել ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունները և թույլ են տալիս պատկերացնել զոհակենտրոն մոտեցման կարևորությունը:

Վարժությունների հերթականություն.

- Վարժություն 4.2ա. ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների հետաքննություն. Զոհակենտրոն մոտեցում
- Վարժություն 4.2բ. ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների հետաքննություն. Զոհակենտրոն մոտեցում

15.45-16.00 Ընդմիջում

16.00-17.00 Ապացույցների հավաքում

Այս վարժությունները օգնում են մասնակիցներին բացահայտելու ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների ընդհանուր կողմնակալության ցուցիչները և օգտագործել այդ ապացույցները՝ ատելության հանցագործության հաջող հետաքննություն անցկացնելու համար:

Վարժությունների հերթականություն.

- Վարժություն 4.4. Ապացույցների հավաքում. կողմնակալության ցուցիչներ՝ կողմնակալ ընտրության/ շարժառիթների ապացուցում
- Վարժություն 4.5. Ապացույցների հավաքում. կողմնակալության ցուցիչներ՝ ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների բացահայտում

(խորհուրդ է տրվում նաև, որ մասնակիցներին բաժանվի օժանդակ նյութ 5.1-ը)

17.00-17.15 Վերապատրաստման ավարտ և գնահատում

Դասընթացավարը հայտարարում է վերապատրաստման ծրագրի ավարտի մասին և մասնակիցներին խնդրում գնահատել ծրագիրը:

Ոստիկանությունը քրեական արդարադատության համակարգի առաջնագծում է և հանդիսանում է ատելության հիման վրա հանցագործության բազմաթիվ տուժողների համար առաջին կոնտակտային կառույցը: Սույն ձեռնարկը նախատեսված է Եվրոպայի խորհրդի տարածաշրջանի երկրներում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության հանցագործությունների բացահայտման և հետաքննման հիմնական հմտությունները զարգացնելու ուղղությամբ աշխատող ոստիկան դասընթացավարների, քննիչների, ծրագրերի համակարգողների և ատելության հիման վրա հանցագործության դեմ առաջնագծում պայքարող սպաների և ոստիկանների համար:

HYE

Եվրոպական միության անդամ երկրները որոշել են միավորել իրենց գիտելիքները, ռեսուրսներն ու ճակատագրերը: Նրանք միասին կառուցել են կայունության, ժողովրդավարության և կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային բազմազանությունը, հանդուրժողականությունը և անհատական ազատությունները: Եվրոպական միությունը հավատարիմ է իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից դուրս գտնվող երկրներին և մարդկանց փոխանցելուն:

www.europa.eu

Եվրոպայի խորհուրդը մայրցամաքի առաջատար իրավապաշտպան կազմակերպությունն է: Այն միավորում է 46 անդամ պետություն, որոնցից 27-ը Եվրամիության անդամ են: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները ստորագրել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, որը ծառայում է մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության պաշտպանությանը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի կիրարկումը անդամ պետություններում:

www.coe.int

Թարգմանությունը համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE